

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐԱԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

14

ИНОЯЗЫЧНЫЕ ИСТОЧНИКИ
ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ДРЕВНЕГРЕЧЕСКИЕ ИСТОЧНИКИ

II

ДИОДОР
СИЦИЛИЙСКИЙ

ПЕРЕВОД С ОРИГИНАЛА,
ПРЕДИСЛОВИЕ И ПРИМЕЧАНИЯ
С. М. КРКЯШАРЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1985

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Բ

ԴԻՈՂՈՐՈՍ
ՍԻԿԻԼԻԱՅԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԳՐԻՑ,
ԱՌԱՋԱԲԱՆ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ս. Մ. ԿՐԿՅԱՇՆԱՐՅԱՆԻ

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Մ ա տ Լ Ե ա շ ա ր ի խ մ բ ա զ ր ու թ յ ու Ե

Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ (գլխավոր խմբագիր), [Լ. Ա. ԽԱՉԻԿՅԱՆ], Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ,

Գ. Խ. ՍԱԼՔԻՍՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ), Հ.Գ. ՓԱՓԱՋՅՈՆ,

Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ (գիտական ֆաբրուդար)։

Պատասխանատու խմբագիր՝ Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

Գիրքը հրատարակության են Լեռաշխավորել գրախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր Մ. Կ. ԶՈՒԼԱՅԱՆԸ և պատմական գիտությունների
ընկերակց Հ. Գ. ՄԵԼՔՈՆՅԱՆԸ:

Դիոգորոս Սիկիլիացի

Գ 501

Բնագրեր /Թարգմ. բնագրից, և առաջաբան և ծանոթագր. Ս. Մ. Կրկյաշարյանի, իմբ.՝ Հ. Մ. Բարթիկյան—Եր.։ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985. —203 էջ.—(Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին; 14. Հին Հունական աղբյուրներ, 2/ ՀՍՍՀ ԳԱ, Պատմ. ին-տ)։

Գրքում տրված է մ. թ. ա. I դարի խոշորագույն անտիկ մատենագիր Դիոգորոս Սիկիլիացու Պատմական գրադարանը երկի այն բոլոր հատվածների թարգմանությունը, որոնք վերաբերում են Հայաստանին ու հարևան երկրներին։ Գիրքն ունի առաջաբան, որի մեջ տրված է Դիոգորոսի ամբողջ աշխատության ընդհանուր բնութագիրը։ Հատորն ունի նաև ընդարձակ ծանոթագրություններ։

Գիրքը նախատեսված է հայ ժողովրդի հին շրջանի պատմության մը գրադրող գիտնականների համար։

0505040000

Գ ————— 28—85

703 (02)—85

ԳՄԿ 63.3 (22)

ԳԻՈՂՈՐՈՍ ՍԻԿԻԼԻՇՅԻ

(Կյանքն ու գործը)

Այն քանից հետո, երբ Միջերկրական ծովի արևմտյան ավազանում գերիշխանություն հաստատելու համար Հաննիբալի հայրենիք Կարթագենի և օրըստօրե քարձրացող Հոոմի միջև մղված դաժան ու երկարատև սաղմաքաղաքական պայքարն ավարտվեց հոոմայեցիների հաղթանակով, հոոմեական հանրապետությունն արդեն իր հայացքն ուղղեց դեպի Արևելք, Միջերկրականի արևելյան ավազանում ևս իր քաղաքական տիրապետությունը հաստատելու և ամբողջ Միջերկրականը սեփական ներքին ծով դարձնելու մտադրությամբ: Այս վերջին նպատակը ևս ամբողջությամբ կենսագործվեց մ. թ. ա. I դարում, և Հոոմը դարձավ Միջերկրական ծովի ամբողջ ավազանը եզերող ափերի միահեծան տերը:

Ռազմաքաղաքական իրադարձություններով հարուստ այս ժամանակաշրջանում էլ, բնակիւնաբար, պետք է որ երևան գային և, իսկապես, երևան եկան այնպիսի երկեր, որոնց հեղինակները շարադրում էին ոչ միայն Հոոմի պատմությունը, այլև այս կամ այն կերպ շոշափում էին Հոոմի նվաճողական քաղաքականության ճանապարհին ընկած և այդ քաղաքականության դոճ դարձած երկրների պատմությունը:

Այս երևույթը առաջին անգամ լավագույնս բնորոշել է անտիկ շրջանի իուշորադույն պատմիչ Պոլիբիոսը (210—120 թթ.) իր 40 գրքից բաղկացած «Պատմության» առաջարանում, գրելով. «Նախկինում դեպքերը երկրի վրա տեղի էին ունենում կարծես իրարից անջատ, քանի որ նրանցից ամեն մեկն տուներ իր առանձին տեղը, առանձին նպատակները և վախճանը: Մինչդեռ, սկսած այս ժամանակից (այն է՝ Պունիկյան պատերազմներից— Ս. Կ.) պատմությունն, ասես, դառնում է մի ամբողջություն, Իտալիայի և Հիբիայի իրադարձությունները միահյուսվում են ասիական և հելլենական դեպքերին, և բոլորը հանգում են մեկ վախճանի»¹:

Քանի որ այդ շրջանում հոոմեական գրականությունն ու պատմա-

¹ Polybii Historiae, I.

գրութիւնը դեռևս հազիվ իրենց առաջին քայլերն էին անում, ապա բնական է, որ ժամանակաշրջանը արտացոլող երկերը պետք է գրվեին ոչ թե Հռոմի պաշտոնական լեզվով, այն է՝ լատիներեն, այլ դարձյալ հունարեն, որը ժամանակի lingua franca-ն էր:

Իրենց երկերը հունարեն շարադրած առավել հայտնի հեղինակներից է նաև հելլեն պատմիչ Դիոդորոս Սիկիլիացին (շուրջ 90—20 թթ. մ. թ. ա.): Նրա կենսագրության մանրամասները մեզ քիչ են հայտնի, այն էլ միայն նրա հեղինակած երկի առանձին հատվածներից: Դիոդորոսը ապրել է մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հռոմեական հանրապետության քաղաքական և տնտեսական աճող էքսպանսիայի պայմաններում հոգեվարք ապրող հելլենիստական սոցիալաբնութագրով էր իր գոյության վերջին տարիները: Դիոդորոսը ականատես վկան է եղել հելլենիստական վերջին խոշոր պետության, Պտղոմեոսյան Եգիպտոսի, վերջնական անկմանը (մ. թ. ա. 31 թ.): Եվրոպական Հունաստանն արդեն մ. թ. ա. 146 թ. ի վեր գտնվում էր Հռոմի բացարձակ տիրապետության տակ, իսկ Սելևկյանների երբեմնի հզոր տերութիւնը, երկարատև հոգեվարքից հետո, վերջնականապես նվաճվել էր հռոմի կողմից մ. թ. ա. 64 թ., այն է՝ Դիոդորոսի երիտասարդության ժամանակ:

Հռոմի անկասելի վերելքի պայմաններում, հելլեն մտավորականութիւնը վերջնականապես համոզվեց, որ նոր՝ հռոմեական տիրապետութիւնը լրջորեն և երկար ժամանակով հաստատվեց նվաճված երկրներում: Ուստի և հելլեն փիլիսոփաները, գրողները, պատմիչները (Պոլիբիոս, Պոսիդոնիոս, Դիոդորոս, Ստրաբոն, Պլուտարքոս և ուրիշներ) սկսեցին հարմարվել նվաճողների ճաշակին և պահանջներին:

Իսպախական Հելլադայի ապրած ընդհանուր ճգնաժամից հետո (մ. թ. ա. IV—III դդ.) հելլենական աշխարհի քաղաքական ու տնտեսական կյանքի զարկերակը աստիճանաբար տեղափոխվում է Արևելք, որով և Արևելքի առավել կենսունակ երկրները դառնում են մշակութային կյանքի զարգացող կենտրոններ, հետին պլան մղելով անցյալի ծաղկյալ կենտրոնները: Ուստի պատահական չէ, որ այնուհետև բոլոր հույն խոշոր պատմիչները (բացառութեամբ Պլուտարքոսի) ծնվել ու աճել են բուն Հունաստանից դուրս:

Դիոդորոս Սիկիլիացին նույնպես ծնվել է բուն Հունաստանից Եգիպտոս, Սիկիլիա կղզու ոչ մեծ Արգիրիոն քաղաքում: Նա ակունատես է եղել հռոմեական հզոր տերութիւնը հիմնովին ցնցած ստրուկների ապստամբութեանը՝ Սպարտակի գլխավորութեամբ, և միակ պատմիչն է, որը արժեքավոր տեղեկութիւններ է հաղորդում խոշորադույն այդ ապստամբութեան մասին:

Դիոդորոսի հեղինակած աշխատութիւնը բաղկացած է եղել 40

գրքից: Այն բաղադրական (կոմպիլյատիվ) բնույթի համաշխարհային պատմություն է, որն ինքը՝ հեղինակը, անվանել է «Βιβλιοθήκη ιστορικη» — Պատմական գրադարան: Նրա բովանդակությունը կազմում է Միջերկրածովյան աշխարհի և Մերձավոր արևելքի ժողովուրդների ամբողջ պատմությունը, սկսած հնագույն, նախապատմական ժամանակներից, մինչև Հուլիոս Կեսարի Գալլական պատերազմները (մ. թ. ա. 59 թ.):

«Պատմական գրադարանի» 40 գրքերն, իրենց բովանդակության համեմատ, կարելի է պայմանականորեն բաժանել երեք մասի: Առաջին մասը (1—6 գրքեր) ընդգրկում է անտիկ ժամանակաշրջանին հայտնի աշխարհի՝ օյկումեննեի (οἰκουμένη) առասպելական շրջանի պատմությունը, ընդ որում՝ առաջին երեք գիրքը՝ բարբարոսների, այսինքն՝ ոչ հելլենների, մնացյալ երեքը՝ հելլենների: Երկրորդ մասում (7—17 գրքեր) շարադրված է Տրոյական պատերազմից մինչև Ալեքսանդր Մակեդոնացին ընկած ժամանակամիջոցում կատարված անցքերի պատմությունը: Այս մասում հաճախ առասպելականն ու հավաստի պատմականը խառնված են իրար և շփոթված: Երրորդ մասը (18—40 գրքեր) Մակեդոնացուց մինչև Հուլիոս Կեսարի մղած Գալլական սլատերազմներն ընկած իրադարձությունների պատմությունն է: Պատմական դեպքերը շարադրանքն ընդգրկող այս վերջին մասը, անկասկած, Դիոդորոսի երկի առավել հավաստի հատվածն է:

Դիոդորոսի «Պատմական գրադարանը», դժբախտաբար, ամբողջությամբ չի հասել մեզ: Լրիվ պահպանվել են առաջին հինգ և 11-20 գրքերը, իսկ առավել կամ պակաս ծավալուն հատվածներ՝ 6 և 21—40 գրքերից: Մնացած՝ 7—10-րդ գրքերը ամբողջապես կորել են: Մեծարժեք են առաջին երկու գրքերը, որոնցում կան Շամիրամի, ինչպես նաև Տրոյական պատերազմի մասին այլ հեղինակների մոտ չհանդիպող տեղեկություններ և պատումներ: Դիոդորոսից մեզ հասած հատվածներում հանդիպում են հույժ հետաքրքիր և անկրկնելի տվյալներ Ալեքսանդր Մակեդոնացու ժառանգների միջև մղված պատերազմների, այդ պատերազմներին Հայաստանի սատրապի ունեցած մասնակցության մասին, այդ ժամանակի Հայաստանի մասին, ինչպես նաև կարևոր տեղեկություններ Սելևկյան պետության հատկապես ուշ շրջանի պատմության և այլ հարցերի մասին:

Համաշխարհային պատմություն գրելու իր մտահղացումն իրագործելու նպատակով Դիոդորոսը ևս շատ երկրներ է շրջել. նա բազմիցս եղել է Հռոմում, երեք տարի ապրել է Եգիպտոսում, որտեղ, իր մեծ նախորդի՝ Հերոդոտոսի նման, եղել է տաճարներում, ծանոթացել է քրմերի հետ և գրի է առել նրանցից լսած բազմաթիվ զրույցներ ու ավանդություններ (Diodor., III, 11): Նա ամբողջ 30 տարի անցել է երկրից երկիր և մեծ դժվարություններ ու վտանգներ դիմագրավելով, շրջել է Ասիայի ու Եվրո-

պայի մեծ մասը (*Diodor.*, I, 4), իր ապագա երկի շարադրման համար նյութեր հավաքելու նպատակով:

Պատմական տարբեր շրջանների և տարբեր երկրների պատմութ-
յունը շարադրելիս, Դիոդորոսը դիմել է իրեն նախորդած տարբեր հե-
ղինակների. այսպես՝ աշխարհագրական տվյալների հիմնական աղ-
բյուրներն են Ադաթարքիդեսը և Արտեմիդորոսը (II դ. մ. թ. ա.): Հռոմի
հնագույն պատմությունը շարադրելիս նա օգտվել է Հռոմի ավագ տարե-
գիրների թողած ժամանակագրություններից, աննալներից, որոնք գրված
են եղել հունարեն լեզվով. Եգիպտոսի պատմության համար օգտվել է
Հեկատեոսից (VI—V դդ. մ. թ. ա.), Ասորեստանի և Պարսկաստանի
պատմության համար՝ Հերոդոտոսից, Կտեսիասից (V դ.) և Թեոպոմպո-
սից (IV դ.), Ալեքսանդր Մակեդոնացու և նրա հետնորդների պատմու-
թյունը գրելիս օգտվել է Կլեյտարքոսի (IV դ.), Հիերոնիմոս Կարդիացու
(IV—III դդ.) և Դուրիս Սամոսացու (III դ.) երկերից:

Բնականաբար, դեռևս այդ ժամանակ համաշխարհային ընդհանուր
պատմություն հեղինակելը արտակարգ ծանր գործ էր, կապված բազմա-
թիվ և բազմապիսի դժվարությունների հետ, անչափ դժվար էր անհրա-
ժեշտ նյութեր հավաքելը, դժվար՝ դրանք մշակելը, գտելը, դասակար-
գելը և այլն: Նյութեր հավաքելու հետ կապված բոլոր դժվարությունները
Դիոդորոսը կարողացավ հաջողությամբ հաղթահարել իր ուժեղ կամքի,
անընկճելի համառության և նախանձելի աշխատասիրության շնորհիվ:

Շրջելով բազում երկրներ և ուսումնասիրելով բազմաթիվ գրադա-
րաններում և դիվաններում ցրված նյութերը, ինչպես նաև ծանոթանա-
լով իրեն նախորդած պատմիչների և աշխարհագիրների մեծ մասի գոր-
ծերին և հռոմեական տարեգիրների ժամանակագրություններին, նա ան-
չափ առատ և բազմաբնույթ պիտանի նյութ է հավաքել, որը վերաբե-
րում էր ոչ միայն օյկումեննեի ռազմաքաղաքական անցքերին և տեղի
ունեցած իրադարձություններին, այլև աշխարհագրական բնույթի հարցե-
րին և տարբեր երկրներում բնակվող զանազան ժողովուրդների վարքու-
բարքին, նրանց սովորույթներին, արհեստներին և դրականությանը:

Դիոդորոսը, սակայն, չկարողացավ հաղթահարել մյուս կարգի
դժվարությունները՝ կապված այդ բազմաբնույթ նյութի գտման և ընտ-
րության հետ: Այդ անհաջողությունը պետք է բացատրել նրանով, որ
Դիոդորոսը, շտիրապետելով ռազմաքաղաքական խորր դիտելիքների,
անկարող եղավ դեպքերն ու դեմքերը ճշտորեն և ըստ արժանվույն ղնա-
հատել: Նա օժտված չէր մտքի անհրաժեշտ սրությամբ՝ ճշմարիտը անի-
րականից և պատմականը առասույելականից դատորոշելու համար: Դրան,
հավանաբար, խանգարել էր և այն, որ համաշխարհային ընդհանուր

«Չատմութիւն հեղինակելիս, նա, կանգնած լինելով հոռմեասեր դիրքերում, շկարողացավ մնալ պահանջվող աստիճանի անաշառ:

Առավել մեծ անհաջողութեան պետք է մատնվեր Դիոգորոսը ալդահուելի քանակութեամբ նյութը դասակարգելիս: Իր աշխատութեան մեծագույն մասը շարադրելով ժամանակադրական մեթոդով, ըստ առանձին տարիների, ինչպես հոռմեական տարեգրութիւններն էին՝ աննալները, Դիոգորոսը այն տարաբաժանել է առանձին մանր հատվածների, որոնցից յուրաքանչյուրում նախապես հայտնում է ընթացիկ տարին՝ ըստ օլիմպիականների, հիշատակելով Աթենքի արքունտ-էպոնիմոսին և Հոռմի կոնսուլներին, որոնց պաշտոնավարութեան ժամանակ տեղի էին ունեցել այդ հատվածում նկարագրվող իրադարձութիւնները:

Ժամանակագրական այս սկզբունքը, սակայն, անբավարար է և լիովին սխալ, քանի որ ոչ միայն չէին համընկնում Աթենքի արքունտ-էպոնիմոսների և Հոռմի կոնսուլների պաշտոնավարութեան տարիները, այլև մեկ տարվա ժամանակահատվածը շատ սահմանափակ էր համաշխարհային սլատմութեան դեպքերը տեղագրելու համար: Ալդ իսկ պատճառով հեղինակը, հինգ-վեց գլուխ շարադրելուց հետո, ամեն անգամ ստիպված է լինում ընթերցողին փոխադրելու Հունաստանից՝ Սիկիլիա, այստեղից՝ Մակեդոնիա, վերջինից՝ Հոռմ, ալստեղից էլ Ասիա և այլն: Բնական է, որ այսպիսի խոցելի սկզբունքով կատարված նյութի դասակարգումից մեծասլես պետք է տուժեր ամբողջ աշխատութեան կառուցվածքը, իսկ երկի ծավալը պետք է աճեր բազմաթիվ անտեղի կատարված կրկնութիւնների հաշվին:

Նկատի ունենալով այս ամենը, դժվար կլինի Դիոգորոսի մոտ փրկուել քննադատական վերաբերմունք օգտագործված աղբյուրների և նյութի վերաբերյալ: Նա, առանց ընտրութեան և վերլուծութեան, հաղորդում է այն, ինչ քաղել է իր աղբյուրներից:

Դիոգորոսը իր երկը շարադրել է ատտիկյան բարբառով, հետևելով Քսենոփոնին, Պոլիբիոսին և այլ պատմիչներին: «Պատմական գրադարանի» լեզուն թեպետև շատ է պարզ և հստակ, այդուհանդերձ անգույն է, սինհրապուր, դերազանցապես ծանրաբեռնված լինելով վերացական հասկացութիւններով, այն գրեթե բացարձակապես դուրկ է ճարտասանական ճկուն դարձվածքներից: Այս բոլորով հանդերձ, բյուզանդական ժամանակաշրջանի պատմիչներին դերազանցապես հաճելի էր այդպիսի լեզուն, և նրանք իրենց ժամանակագրութիւնները շարադրել են այդօրինակ ոճով: Դիոգորոսի լեզուն և ոճը հատկապես բարձր է գնահատել բյուզանդական հայազգի մատենագիր, Կոստանդնուպոլսի պատրիարք Փոտը (IX դ.), որը նույնիսկ իր հեղինակած մատյանը, հետևելով Դիոգորոսին, անվանել է «Գրադարան»:

Նորագույն պատմաբաններից Դիոդորոսին խստորեն քննադատեցին՝ գերմանացի գիտնականներ Niebuhr-ը և Ալեքսանդր Մակեդոնացու ու նրա հետնորդների պատմությանը նվիրված եռահատոր դարակազմիկ ուսումնասիրության հեղինակ Droysen-ը. մինչդեռ Հռոմի պատմության խոշորագույն հետազոտող Th. Mommsen-ը համաձայն չէր նրանց քննադատության հետ, հատկապես Հռոմի պատմությանը վերաբերող Դիոդորոսի հաղորդումների առնչությամբ, նկատելով, որ Հռոմի հնագույն շրջանի պատմությանը վերաբերող Դիոդորոսի վերագրումները ամենահինն են և բոլորից արժանահավատը:

Անկասկած, իր արժանահավատության աստիճանով Դիոդորոսի «Պատմական գրադարանը» մեծապես դիջում է Թուկյդիդեսի, Քսենոփոնի, Պոլիբիոսի, Ստրաբոնի երկերին: Սակայն, իր բոլոր թերություններով հանդերձ, այն մեծարժեք երկասիրություն է հին աշխարհի պատմությունն ուսումնասիրող պատմաբանի համար, քանի որ փոխարինում է հնագույն ժամանակներին վերաբերող պատմական կորած աշխատություններին, որոնց մասին մենք իմանում ենք և գաղափար կադմում միայն ու միայն Դիոդորոսի մոտ պահպանված հատվածների ու վկայակոչումների միջոցով:

Դիոդորոսի երկի ուսումնասիրությունը առանձնապես կարևոր է հայագիտության, հատկապես խորենացիագիտության համար, քանի որ Մովսես Խորենացու գլխավոր աղբյուրներից մեկը, անկասկած, Դիոդորոսն է: Ինքը՝ պատմահայրը, իր անմահ երկի երրորդ գիրքն սկսում է այսպիսի խոստովանությամբ. «Ոչ հին տարիների պատմություն է ունեցել մեր աշխարհը, ոչ էլ ժամանակի կարճության պատճառով կարողացանք անցնել բոլոր հունական (աղբյուրները), ոչ նույնիսկ Դիոդորոսի գրվածքները մեր ձեռքի տակ են, որ աչքերս նրա վրա պահելով՝ բոլորն անմոռաց անցնեինք, որպեսզի բաց չթողնեինք որևէ գլխավոր և պիտանի բան, որ արժան է մեր շարադրության մեջ հիշատակվելու» (Մ. Խորենացի, գ. ա.):

Մեր կարծիքով, Խորենացին Տրոյական պատերազմի մասին դիտե ոչ թե ուղղակի Հոմերոսից, այլ Դիոդորոսի միջոցով, քանի որ «Հայոց պատմության» համապատասխան հատվածները առավելապես համերաշի են ոչ թե Հոմերոսի «Իլիականին», այլ Դիոդորոսի պատմածներին: Բացի այդ, Շամիրամի մասին Խորենացու պատմածների հիմքում ընկած են ոչ միայն ժողովրդական բանահյուսությունից պատմահոր քաղած տեղեկությունները, այլև շատ վկայություններ՝ վերցրած Շամիրամի մասին Դիոդորոսի ընդարձակ պատումից: Մեղ թվում է, թե դեռևս Խորենացու ժամանակ արդեն կորել էին Դիոդորոսի երկի շատ հատվածներ: Այսպիսի ենթադրության մեղ մղում է այն հանգամանքը, որ Դիոդորոսի երկը Խո-

րենացու կողմից օգտագործվել է շատ հատվածաբար, թեև, ինչպես տեսանք, պատմահայրը նրան համարում է ճշմարտապատում հեղինակ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ իր Եվհեմերյան փիլիսոփայությամբ, որի համաձայն հեթանոսական աստվածներն սկզբնապես եղել են նշանավոր մարդիկ, որոնք հետագայում, ժողովրդական ավանդությունների և գրույցների մեջ, աստվածացվել են, Դիոդորոսը նույնպես որոշակիորեն ազդել է հորենացու աշխարհայացքի վրա:

Մեղ համար Դիոդորոսի երկը արժեքավոր է նաև այն տեսակետից, որ ղրանում կա մի ընդարձակ հատված, որտեղ համառոտակի պատմվում են նույն դեպքերը, ինչ մանրամասն շարադրված են Քսենոփոնի «Անաբասիսում»: Մանրակրկիտ դիտողությունը մեզ համոզում է, որ այս հատվածում Դիոդորոսի աղբյուրը եղել է ոչ միայն, գուցե և ոչ այնքան, Քսենոփոնի մեզ հայտնի երկը, այլ մեկ ուրիշ հեղինակ, նույնպես հելլենների արշավանքի մասնակից:

Ներկա թարգմանությունը կատարել ենք «Loed Classical Library» շարքով հրապարակված Դիոդորոսի երկի բնագրից, ընտրելով նրա աշխատությունից այն հատվածները միայն, որոնք վերաբերում են պատմական Հայաստանին և հարևան երկրներին, որոնց հետ հայերը հնադույն ժամանակներից ունեցել են քաղաքական, տնտեսական և մշակութային առնչություններ: Մեր թարգմանության մեջ կոր փակագծերում առնված բառերը ավելացված են մեր կողմից, ընթերցվածը առավել հասկանալի դարձնելու նպատակով:

ԴԻՈՂՈՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՅԻ

“ՊԸՏՄԸԿԸՆ ԴՐԸԴԸՐԸՆ”

(Հատվածներ)

Գիրք 1

55,2 Սեսոովսիսը¹ այնուհետև շորս հարյուր նավից տորմիդ ուղարկեց Կարմիր ծով²։ Նա առաջինն էր եգիպտացիներից, որը պատրաստեց երկար ոաղմանավեր, և ոչ միայն այդ վայրերում գտնվող կղզիներին տիրեց, այլև հպատակեցրեց առափնյա երկրները, 3 մինչև Հնդկաստան, իսկ ինքը զորքով հետիոտն ուղևորվելով, հպատակեցրեց ամբողջ Ասիան։ Փաստորեն նա անցավ ոչ միայն հետագայում Ալեքսանդր Մակեդոնացու կողմից նվաճված (ամբողջ) 4 երկիրը, այլև մի քանի ժողովուրդների երկրները, որտեղով նա (Ալեքսանդրը — Ս. Կ.) չէր անցել։ Քանզի նա (Սեսոովսիսը — Ս. Կ.) անցավ Գանգես գետը ու կտրեց ամբողջ Հնդկաստանը, մինչև օվկիանոս, և սկյութական ցեղերի երկիրը, մինչև Տանայիս³, որը բա- 5 ժանում է Եվրոպան Ասիայից։ Այդ ժամանակ էլ, ինչպես պատմում 6 են⁴, եգիպտացիներից ոմանք թողնվեցին Մայոտիս լճի⁵ շուրջը և կազմեցին կոլխերի ցեղը։ Այս ցեղի եգիպտական լինելու ապացույցը այն է, որ այր մարդիկ եգիպտացիների նման թլփատվում են...

Գիրք 2

1,3 Իսկ այս գրքում մենք կներկայացնենք հին ժամանակներում Ասիայում կատարված դեպքերը, սկսելով Ասորեստանցիների տիրապետության շրջանից։ 4 Այսպես, հնագույն ժամանակներս Ասիայում եղել են տեղաբնիկ թագավորներ, որոնց ոչ նշանակալից որևէ մի գործն է հիշատակվում, ոչ էլ անունը։ Առաջինը, որի պատմությունը և հիշատակումը ավանդվել է մեզ, մեծ գործեր կատարած Նինոսն⁶ է՝ Ասորեստանցիների թագավորը։ Նրա մասին էլ մենք կփորձենք պատմել մանրամասնություններ։ Քանզի նա բնականից լինելով ռազմասեր և նախանձախնդիր՝ առաքինության նկատմամբ, զինեց երիտասարդներից ուժեղագույններին և երկար ժամանակ մարզելով նրանց,

5 վարժեցրեց դիմանալու ամեն տեսակ դժվարության և ուղղակի վտանգների: Ու երբ արդեն նա նշանակալից զորք էր հավաքել, դաշնակցեց Արաբիայի թագավոր Արիայոսի հետ. այդ ժամանակներում այն համարվում էր բազմաթիվ քաջարի մարտիկներ ունեցող երկիր: Այս ազգը, ընդհանրապես, ազատասեր է և ոչ մի կերպ չի հանդուրժում օտար տիրակալի: Այս պատճառով էլ ո՛չ Պարսից թագավորները⁷, ո՛չ էլ հետագայում Մակեդոնացիների (թագավորները)⁸, թեպետև առավելագույնս հզորացել էին, չկարողացան ստրկացնել այս ազգին: Քանզի Արաբիան անհաղթահարելի է օտար զորքերի համար, մասամբ անապատ, մասամբ էլ ջրազուրկ լիճներու և միայն տեղ-տեղ թաքնված, այն էլ սոսկ տեղացիներին հայտնի ջրհորեր ունենալու պատճառով: Այնուհանդերձ, Ասորեստանի թագավոր Նինոսը արաբների տիրակալին վերցնելով իր հետ, մեծ զորքով արշավեց բաբելոնացիների վրա, որոնք բնակվում էին իրեն սահմանակից երկրում: Իսկ այդ ժամանակ այժմյան Բաբելոնը դեռևս չէր կառուցվել, բայց (այնտեղ) կային նշանակալից այլ քաղաքներ: Նա հեշտությամբ հպատակեցրեց տեղաբնիկներին, որովհետև նրանք անփորձ էին պատերազմական վտանգներում, և նրանց պարտավորեցրեց ամենամյա որոշակի հարկ վճարել, իսկ պարտությանների թագավորին, նրա որդիների հետ միասին, գերի վերցնելով, սպանեց: Այնուհետև, նա մեծ զորքով ներխուժելով Արմենիա⁹ և մի շարք քաղաքներ ավերելուց հետո կոտորեց տեղի բնակիչներին, ուստի և նրանց թագավոր Բարզանեսը, տեսնելով, որ ինքն ի վիճակի չէ նրա դեմ կռվելու, առատ նվերներով դիմավորեց նրան և ասաց, որ ինքը կկատարի նրա բոլոր հրամանները: Իսկ Նինոսը նրան վերաբերվեց մեծահոգաբար և համաձայնվեց, որ նա տիրի Արմենիային, և մնալով որպես իր բարեկամը, զորք չուղարկի և միջոցներ իր բանակի համար: Եվ նա առավել ևս հզորանալով, արշավեց Մեդիայի դեմ: Եվ այս (երկրի) թագավոր Փառնոսը նշանակալից զորքով դուրս եկավ նրա դեմ, բայց պարտվելով, իր զինվորների մեծ մասին կորցրեց, իսկ ինքը ևս իր յոթը որդիների և կնոջ հետ գերի վերցվելով, խաչը բարձրացվեց:

2,1 Ու քանի որ Նինոսի գործերը հաջող էին, նա խստորեն փափագեց նվաճել ամբողջ Ասիան, որը գտնվում է Տանայիսի և Նեղոսի միջև: Որովհետև, սովորաբար, երբ մարդիկ բարեբախտության մեջ են լինում, հաջողությունների արագ ընթացքը նրանց մեջ առաջացնում է էլ առավելի փափագը: Ուստի և նա իր մերձավոր ընկերներից մեկին կարգեց Մեդիայի սատրապ¹⁰, մինչդեռ ինքը ձեռնամուխ եղավ Ասիայում ապրող ազգերին նվաճելու գործին, և

տասնյոթամյա ժամանակամիջոց վատնելով, նա հնչիկներից ու
2 բակտորիացիներից¹¹ բացի, դարձավ մյուս բոլոր ազգերի տերը-
Արդ՝ հեղինակներից ոչ մեկը չի նկարագրել այդ ազգերից յուրա-
քանչյուրի մղած կոիվները, կամ թեկուզ և նվաճված այդ ազգերի
րնդհանուր թիվը, իսկ այդ ազգերից ամենանշանակալիցների մա-
սին մենք համառոտ կպատմենք, հետևելով Կտեսիաս Կնիդացուն¹²:

3 Սոմափին գտնվող և դրան հարող երկրներից նա նվաճեց
Եգիպտոսը և Փյունիկիան, ինչպես նաև Կոչլե Սիրիան և Կիլիկիան և
Պամփյուլիան և Լյուկիան, զրանցից բացի և Կարիան ու Փոչուգիան և
Լյուդիան, իր նվաճումներին նա միացրեց նաև Տրովադան և Հելլես-
պոնտոսյան Փոչուգիան և Պրոպոնտիսը և Բիթլյունիան և Կապպա-
ղովկիան¹³, և Պոնտոսի ափին ապրող բոլոր ազգերին, մինչև Տա-
նայիս: Նա տիրացավ նաև Կադուսների երկրին, և տաբյուրների,
նաև հյուրկանների և զրանգների, ինչպես և դերբիկների ու կար-
մանների և քորոմնանների, և բորկանների ու պարթևների (երկր-
ներին)¹⁴, մտավ նաև Պերսիս և Սուսիանե¹⁵ և այսպես կոչված Կաս-
պիանե (երկիրը), որտեղ մուտքը բոլորովին նեղ է, որի պատճա-

4 ռով էլ կոչվում է Կասպյան դռներ: Նա հպատակեցրեց նաև բա-
զում այլ փոքր ազգերի, որոնց մասին խոսելը երկար կլիներ: Իսկ
Բակտրիանե (երկիրը), քանի որ դժվարամատուց էր և ուներ մար-
տունակ բազում այրեր, նրան շատ տանջեց, ուստի և նա առանց
հաջողության ետ վերադարձավ, բակտրիացոց դեմ պատերազմելը
հետաձգելով միև այլ ժամանակի, իր զորքերը ետ բերելով Ասորես-
տան, գեղադիր մի վայր ընտրեց խոշոր քաղաքի կառուցման հա-
մար:

3,1 Իր բոլոր նախորդներից առավել երևելի գործեր կատարած
լինելով, նա եռանդագին ձգտում էր իր մեծությամբ այնպիսի քա-
ղաք կառուցել, որը ոչ միայն այդ ժամանակ համայն օյկումե-
նետում¹⁶ հայտնի քաղաքներից խոշորագույնը լիներ, այլ հետագա-

2 յում ևս թագավորներից որևէ մեկը չկարողանար հեշտությամբ
գերազանցել այն: Այսպես, արաբների թագավորին, մեծարժեք
նվերներով և ավարներով պատվելուց հետո, բաց թողեց իր զոր-
քով վերադառնալու իր երկիրը, իսկ ինքը բոլոր կողմերից իր ուժե-
րը և անհրաժեշտ միջոցները հավաքելով, Եփրատ գետի վրա կա-
ռուցեց քաղաք¹⁷, հզոր պարիսպներով, տալով նրան ուղղանկյան
ձև. քաղաքի երկար կողերն ունեին հարյուր հիսուն ասպարեզ¹⁸,

3 իսկ կարճերը՝ իննսուն ասպարեզ երկարություն: Այսպիսով, շրջա-
պարսպի ընդհանուր երկարությունը շորս հարյուր ութսուն ասպա-
րեզ լինելով, նրա հույսերն արդարացան. քանզի նման քաղաք հե-

տագայում ոչ ոք չկառուցեց այդքան երկար և հզոր պարիսպներով: Պարիսպների բարձրութունը հարյուր ոտք էր, իսկ լայնքը հերիք կաներ երեք մարտակառք վարելու: Աշտարակների ընդհանուր 4 թիվը հազար հինգ հարյուր էր, իսկ բարձրութունը՝ երկու հարյուր ոտք: Նա այնտեղ բնակեցրեց մեծ մասամբ ասորեստանցիներին, որոնք և հզորագույններն էին, իսկ մյուս ազգերից՝ ցանկացողներին: Եվ քաղաքն անվանեց իր անունով՝ Նինոս, իսկ այնտեղ բնակվողներին նա հատկացրեց սահմանակից երկրի մեծ մասը:

4,1 Եվ քանի որ այս (քաղաքը) կառուցելուց հետո Նինոսը արշավեց Բակտրիանե (երկրի) վրա, որտեղ նա ամուսնացավ Սեմիրամիսի¹⁹, մեղ հայտնի կանանցից ամենահայտնիի հետ, ուստի անհրաժեշտ է սկզբնապես պատմել, թե ինչպես համեստ վիճակից նա հասավ այդքան մեծ փառքի:

2 Այժմ Սիրիայում կա մի քաղաք՝ Ասկալոն, և նրանից ոչ հեռու գտնվում է մեծ և խորունկ մի լիճ, առատ ձկներով. դրա ափին կա սաճար երևելի դիցուհու, որին սիրիացիներն անվանում են Դերկեսո. այս (դիցուհին) ունի կանացի դեմք, մինչդեռ ամբողջ

3 մարմինը ձկնային է, հետևյալ մի շարք պասաճառներով: Տեղաբնիկներից իմաստնագույնները պատմում են, թե Ափրոդիտեն զայրացած լինելով վերոհիշյալ աստվածուհու վրա, նրա հոգում ուժեղ սեր ներշնչեց իրեն գոհ մատուցող գեղանի մի երիտասարդի հանդեպ. և Դերկեսոն, կենակցելով այս սիրիացու հետ, ծնեց մի աղջիկ, բայց ամաչելով իր մեղապարտ արարքից, ոչնչացրեց երիտասարդին, իսկ երեխային լքեց ամաչի և քարքարոտ ինչ-որ վայրում. ինքն էլ, ամոթից ու վշտից զրդված իրեն նետելով լիճը, մարմնապես կերպարանափոխվեց ձկան. այդ պատճառով էլ սիրիացիները մինչև հիմա էլ ձեռնպահ են մնում այդ կենդանիներից

4 և ձկներին պաշտում են իբրև աստվածների²⁰: Իսկ այն վայրի շուրջը, որտեղ երեխան դրվել էր, մեծ թվով աղավնիներ բույն էին դրել, և նրանց կողմից զարմանալի և հրաշալի ձևով սնվեց ու պահվեց. քանզի նրանց մի մասը մանկանը տաքացրեց թևերով՝ պատելով նրան բոլոր կողմերից, մինչդեռ մյուսները նկատելով, որ մոտակա փարախներից հովիվներն ու մյուս հոտաղները բացակայում են,

5 իրենց կտուցների վրա կաթ բերելով, այն կաթեցնում էին նրա շրթների միջև: Ու երբ երեխան բոլորեց մեկ տարին և կարիք ուներ առավել ուժեղ սննդի, աղավնիները պանիրներից կտցահարելով նրան բավարար սնունդ էին հայթայթում: Հովիվները վերադառնալով, երբ տեսան, որ պանիրները կտցահարված էին, զարմացան

տարօրինակ պատահարի վրա. ուստի և ուշադիր հսկելով, իմացան
6 պատճառը և գտան երեխային, որը արտակարգ գեղեցիկ էր: Նրան
բերելով իրենց փարախը, նվիրեցին արքունի հոտերի վերակա-
ցուին, Սիմմաս անունով. սա էլ, քանի որ անզավակ էր, երեխային
ամենայն հոգատարութեամբ խնամեց իբրև իր աղջնակը և յանունը
դրեց Սեմիրամիս, որը սիրիացիների լեզվով անվանումն է աղավնի-
ների, որոնց այդ ժամանակից ի վեր Սիրիայում բոլոր բնակիչնե-
րը շարունակում են պատվել իբրև աստվածներին:

5,1 Համարյա այսպիսիք են ահա Սեմիրամիսի ծննդյան առթիվ
պատմվող առասպելները: Ու երբ արդեն նա թևակոխել էր ամուս-
նութեան տարիքը և գեղեցկութեամբ շատ էր գերազանցել մյուս կույ-
սերին, թագավորի կողմից մի պաշտոնյա ուղարկվեց արքունի
հոտերն այցելելու: Այս պաշտոնյայի անունն էր Օննես. նա ար-
քունի խորհրդի անդամների մեջ առաջինն էր և նշանակվել էր ամ-
2 բողջ Սիրիայի կառավարիչ²¹: Նա իջևանեց Սիմմասի մոտ և տեսնե-
լով Սեմիրամիսին, գերվեց նրա գեղեցկութեամբ. ուստի և նա Սիմ-
մասից խնդրեց իրեն հանձնել կույսին, օրինական սմուսնութեան
համար. նրան առաջնորդեց Նինոսի մոտ և ամուսնանալով նրա
հետ, ծնեց երկու որդի՝ Հյուսպատեսին և Հյուդասպեսին²²: Ու քանի
որ Սեմիրամիսի մյուս հատկութունները ևս համապատասխան
էին իր տեսքի գեղեցկութեան, այնպես եղավ, որ ամուսինը վերջ-
նականապես դարձավ նրա ստրուկը, և քանի որ ոչինչ չէր անում
առանց նրա կարծիքը հարցնելու, ուստի և ամեն ինչում հաջողու-
թյուն էր ունենում:

3 Ճիշտ այդ ժամանակ էլ, քանի որ թագավորն ավարտել էր իր
անունը կրող քաղաքի կառուցումը, ձեռնարկեց բակտրիացիների
դեմ արշավանքը: Նա ծանոթ լինելով այդ մարդկանց բազմութեանը
և քաջութեանը, ինչպես և (իմանալով), որ այդ երկիրն ունի ամրու-
թեան տեսակետից բազմաթիվ անմատչելի վայրեր, իր տիրապե-
տութեան տակ գտնվող բոլոր ազգերից զինվորների մեծ բազմու-
թյուն հավաքեց. քանի որ իր նախորդ արշավանքը ձախողվել էր,
նա շտապում էր բազմապատիկ ուժերով հայտնվել Բակտրիանե
4 երկրում: Երբ ամեն կողմից զորքը հավաքվել էր, այն համարեցին
և (դուրս եկավ), ինչպես Կտեսիասն է իր պատմութեան մեջ գրում,
հետևակներ՝ հարյուր յոթանասուն բյուր, հեծյալներ՝ քսանմեկ
բյուր, իսկ մանգաղակիր մարտակառքեր²³ տասհազար վեցհարյու-
րից քիչ պակաս:

5 Զորքի այդպիսի բազմութեան մասին լսողները միանգամից
չեն կարող հավատալ, բայց այդ բոլորովին էլ անհնար չի թվա

նրանց համար, ովքեր հաշվի կառնեն Ասիայի մեծութիւնը և այն-
 տեղ բնակվող աղգերի բազմութիւնը: Քանզի եթե մարդ նույնիսկ
 անտեսի Դարեհի⁴ արշավանքը սկյութների դեմ ութսուն բյուր
 դորքով²⁵ և Քսերքսեսի⁶ անցումը Հելլադա անհամար բազմու-
 թյամբ, ալ մտածի հենց Եվրոպայում երեկ կամ փոքր ինչ առաջ
 տեղի ունեցած դեպքերի մասին, ապա շուտով կհամոզվի ասվածի
 6 ճշմարտութեանը: Այսպես, Սիկիլիայում Դիոնիսիոսը²⁷ արշավանքի
 ժամանակ միայն Սիրակուսա քաղաքից դուրս բերեց տասներկու
 բյուր հետևակ, տասներկու հազար հեծյալ և միայն մեկ նավա-
 հանգստից՝ շորս հարյուր ռազմանավ, որոնց մի մասը քառաշար
 7 թիերով էր, մյուս մասը՝ հնգաշար²⁸. հոռմայեցիներն էլ, հաննի-
 բալլան ժամանակներից քիչ առաջ²⁹ կանխատեսելով պատերազմի
 ամբողջ ծավալը, ցուցակագրեցին Իտալիայում բնակվող ռազմու-
 նակ բոլոր քաղաքացիներին և դաշնակիցներին, և նրանց ընդհա-
 նուր թիվը քիչ էր պակաս հարյուր բյուրից. թեպետև մարդկանց
 բազմութեամբ հիրավի ամբողջ Իտալիան շի կարելի համեմատել
 Ասիայում բնակվող թեկուզ և մեկ ազգի հետ: Ահա այս փաստերը
 թող մեր պատասխանը լինեն նրանց, ովքեր քաղաքների այժմյան
 ամայացած վիճակից փորձում են հետևութիւններ անել հնում
 ազգաբնակչութեան մասին:

- 6,1 Արդ, նինոսը այսքան մեծաթիվ զորքով Բակտրիանե արշա-
 վելիս, քանի որ երկիրը դժգարանցանելի էր և նեղ կիրճեր ուներ,
 2 ստիպված էր իր ուժերը տանել մաս առ մաս: Քանզի Բակտրիանե
 երկիրը, թեպետև բնակեցված բազմաթիվ քաղաքներ ուներ, սա-
 կայն դրանցից մեկն էր միայն շատ հայտնի, որտեղ և գտնվում էր
 արքունիքը. այն կոչվում էր Բակտրա և մեծութեամբ և միջնաբերդի
 հզորութեամբ շատ էր գերազանցում մյուս բոլորից: Այնտեղ թա-
 զավորող Սքսյուարտեսը ցուցակագրեց բոլոր նրանց, ովքեր զին-
 վորական տարիք ունեին և նրանց թիվը գումարվեց մինչև քառա-
 3 սուն բյուր: Արդ, վերցնելով իր զորքը և թշնամուն հանդիպելով
 անցումների մոտ, թույլ տվեց նինոսի բանակի մի մասին ներխու-
 ժել (երկիր). երբ նրան թվաց, թե արդեն թշնամու բավականաչափ
 բազմութիւն մտել է դաշտ, իր զորքը դասավորեց: Ու երբ բուն
 ճակատամարտ տեղի ունեցավ, բակտրիացիները ասորեստան-
 ցիներին փախուսաւի մատնեցին և հալածելով նրանց մինչև հան-
 4 դիպակաց լեռները, կոտորեցին շուրջ տասը բյուր թշնամու:
 Բայց դրանից հետո, երբ ամբողջ զորքը մտավ (նրանց երկիրը),
 նրանք պարտվելով (թշնամու) բազմութիւնից, հեռացան դեպի
 քաղաքները, յուրաքանչյուրն իր հայրենին պաշտպանելու համար:

Այսպիսով, Նինոսը հեշտութեամբ տիրացավ բոլոր մյուս քաղաքներին, մինչդեռ անկարող եղավ Բակտրան գրոհով վերցնել, (այդ քաղաքի) անառիկութեան և ուզմական անհրաժեշտ պատրաստութեան պատճառով:

- 5 Քանի որ պաշարումը երկար էր տևում, Սեմիրամիսի ամուսինը, որը սիրահարված էր իր կնոջ վրա և արշավել էր թագավորի հետ միասին, մարգ ուղարկեց կնոջը բերելու: Իսկ սա, օժտված լինելով խելամտութեամբ և համարձակութեամբ և այլ առաքինություններով, որոնք նպաստում են աչքի ընկնելու, հնարավորություն ստացավ իր կարողությունները ցուցադրելու: Արդ, նախ և առաջ, քանի որ նա պես:ք է բազմօրյա ճանապարհ անցներ, ուստի և այնպիսի զգեստ պատրաստեց, որով հնարավոր չէր լինում որոշել, թե հագնողը այդ մարգ է, թե՞ կին: Այն լավ էր հարմարեցրած նրա կարիքներին, թե՛ ճանապարհի տապից նրա մարմնի մաշկը պահպանելու, և թե՛ իր կամեցած ամեն գործողություն կատարելու համար, քանի որ այն շատ ճկուն էր և երիտասարդական և, ընդհանրապես, (այդ զգեստը) այնքան շնորհալի էր, որ հետագայում մեղացիները, որոնք տիրում էին Ասիայում, հանգում էին Սեմիրամիսի հագուստը, նույնն արեցին նրանցից հետո նաև պարսիկները³⁰: Արդ, երբ Սեմիրամիսը ժամանեց Բակտրիանե (երկիրը) և ծանոթացավ պաշարման ընթացքին, նկատեց, որ գրոհները կատարում էին դաշտային մասերում և առավել մատչելի հատվածներում, ոչ մեկը չէր գրոհում միջնաբերդը, դրա ամրության պատճառով, և ներսում եղողները թողնելով այնտեղ իրենց պաշտպանած
- 8 դիրքերը, օգնում էին ներքևի պարիսպների վրա վտանգվածներին: Ուստի և (Սեմիրամիսը) վերցնելով իր հետ ժայռեր մագլցելու սովոր գինվորներին, և նրանց հետ միասին առաջ գնալով դժվարանցանելի մի կիրճի միջով, գրավեց միջնաբերդի մի մասը և ազդանշան տվեց դաշտում պարիսպները պաշարողներին: Այնժամ քաղաքի պաշտպանները, ահաբեկվելով ամրացված բարձունքի գրավումից, լքեցին պարիսպները և կորցրին փրկության հույսը:
- 9 Երբ այս եղանակով քաղաքը գրավվեց, թագավորը, հիանալով կնոջ ընդունակության վրա, սկզբում մեծ պարգևներով պատվեց նրան, իսկ հետագայում, նրա գեղեցկության պատճառով սիրահարվելով նրա վրա, փորձեց համոզել նրա ամուսնուն կամավոր զիջել (կնոջն) իրեն, այդ շնորհքի փոխարեն խոստանալով նրան
- 10 կնություն տալ իր իսկ դստեր՝ Սոսանեին, ու քանի որ այդ մարդը դժկամություն ցուցաբերեց, (Նինոսը) սպառնաց հանել նրա աչքերը, եթե իսկույն չկատարի իր հրամանները: Եվ Օննեսը, մասամբ

վախենալով թագավորի սպառնալիքներից, մասամբ էլ կրքոտ սիրո պատճառով, համակվեց ինչ-որ կատաղությամբ ու մոլեգնությամբ, և (վզին) օղակ անցկացնելով, ինքզինքը կախեց: Անմիրամիսը, ահա, այս պայմաններում հասավ արքունի աստիճանի:

7,1 Եվ Նինոսը ձեռք բերեց Բակտրիայում եղած գանձերը, որոնց թվում շատ արծաթ և ոսկի ու Բակտրիանե (երկրի) հարցերը վճռուց հետո աղատ արձակեց իր զորքերին: Այնուհետև Անմիրամիսից նա ունեցավ Նինվաս³¹ որդուն և վախճանվեց, կնոջը թողնելով իբրև թագուհի: Անմիրամիսը Նինոսին թաղեց արքունի պալատներում և նրա (գերեզմանի) վրա բարձրացրեց շատ խոշոր մի հողաթումբ, որի բարձրությունը, ինչպես Կտեսիասն է սլատմում, ինն ասպարեզ էր, իսկ լայնքը՝ տասը: Այդ իսկ պատճառով, քանի որ քաղաքը գտնվում էր Եփրատի մոտ՝ դաշտավայրում, հողաթումբը երևում էր շատ ասպարեզներ հեռվից, միջնաբերդի նման: Եվ այն, ինչպես ասում են, մինչև այժմ էլ կանգուն է, թեպետև Նինոս (քաղաքը) կործանվել էր մեղացիների կողմից, երբ սրանք նվաճեցին Ասորեստանի թագավորությունը:

Իսկ Անմիրամիսը, բնավորությամբ լինելով մեծադործությունների ծարավ և ձգտելով իր փառքով գերազանցել իրեն նախորդած գահակալին, մտադրվեց Բաբելոնիայում կառուցել քաղաք. և բոլոր վայրերից հավաքելով ճարտարապետներին և արհեստավորներին և այլ անհրաժեշտ պատրաստությունները տեսնելուց հետո, նա ամբողջ թագավորությունից ի մի հավաքեց երկու հարյուր բլուր մարդկանց՝ սոչիատանքները կատարելու համար: Եփրատ գետը առնելով մեջտեղ, նա քաղաքը շրջափակեց բազմախիտ և խոշոր աշտարակներ ունեցող երեք հարյուր ասպարեզ (երկարությամբ) պարսպով, ինչպես պատմում է Կտեսիաս Կնիդացին, իսկ Կլեյտարքոսը³² և հետագայում Ալեքսանդրի հետ Ասիա անցածներից ոմանք գրում են, թե (պարսպի երկարությունը) եղել է երեք հարյուր վաթսուհինգ ասպարեզ³³, և ավելացնում են, թե նա ձգտեց ասպարեզների թիվը համապատասխան և հավասար զարձնել տարվա տերին: Թրժած ազյուսները կուպրով ծեփելով պարիսպ կառուցեց, որի բարձրությունը, ինչպես Կտեսիասն է ասում, հիսուն գրկաչափ³¹ բարձրությամբ, իսկ ինչպես հետագա (հեղինակներից) ոմանք են գրում, հիսուն կանգուն³², իսկ լայնքը ավելի քան պետք էր երկու ռազմակառքի ընթացքի համար, աշտարակների թիվը երկու հարյուր հիսուն էր, իսկ դրանց բարձրությունը և լայնքը համապատասխանում էր պարիսպների հաստահեղույս կառուցվածքին: Պետք

չէ՛ գարմանալ, որ պարսպի այսքան երկարութեան համեմատ փոքրաթիվ աշտարակներ կառուցեց, քանի որ երկար տարածութեան վրա քաղաքը շրջափակված էր ճահիճներով, ուստի այդ վայրերում նա որոշեց աշտարակներ շկառուցել, համարելով, որ ճահիճները անհրաժեշտ բնական ամրութիւն են ընծեռում, իսկ բնակարանների միջև շուրջանակի ճանապարհ թողեց, երկու պլեթրոն³⁶ լայնութեամբ³⁷։

8,1 Այս ամենի շինարարութիւնն արաղ ավարտելու նպատակով, իր բարեկամներից³⁸ յուրաքանչյուրին շափանչեց մեկ ասպարեղ (տարածութիւն), մասնակարարելով դրա համար բավական միջոցներ և հրամայելով գործերն ավարտել մեկ տարվա ընթացքում։ Ուրանի որ նրանք իրենց հանձնարարված գործը կատարեցին մեծ օանասիրութեամբ, նա շնորհակալութեամբ ընդունեց նրանց նախանձախնդրութիւնը, իսկ ինքը գետի ամենանեղ հատվածում կառուցեց կամուրջ³⁹ հինգ ասպարեզ երկարութեամբ, վարպետորեն հատակին ամրացնելով սյուները, որոնք իրարից տասներկու ոտնաչափ⁴⁰ հեռու էին, իսկ իրար հարած քարերը երկաթե կապերով ամրացրեց և դրանց միացումները լցրեց հալած կապարով։ Եվ սյուների այն կողմերի առաջ, որոնք պետք է ընդունեին ջրի հոսանքը, նա անկյուններ կառուցեց կորագիծ կողերով, որոնք աստիճանաբար լայնանում էին, հավասարվելով սյան լայնքին, որպեսզի անկյունների սրութիւնը երկատեր հոսանքի թափը, իսկ կորագիծ կողերը ենթարկվելով հոսանքի ուժին, մեղմացնեին գետի սրընթացութիւնը։ Այս կամուրջը, ծածկված լինելով մայրու և նոճու գերաններով, ինչպես նաև արմավենու հսկայական բներով և ունենալով երեսուն ոտնաչափ լայնք, իր բարձրարվեստ կառուցումով Սեմիրամիսի ոչ մի այլ գործից վատ չէր համարվում։ Եվ գետի յուրաքանչյուր կողմում շքեղ ամբարտակ կառուցեց, մոտավորապես նույն լայնքի, ինչ պարիսպները, հարյուր վաթսուն ասպարեզ երկարութեան վրա։

Նա կառուցեց նաև երկու ապարանք, անմիջապես գետափին, կամրջի յուրաքանչյուր ծայրին, որտեղից նա նպատակ ուներ ամբողջ քաղաքը դիտարկելու և միաժամանակ իր ձեռքում պահելու քաղաքի կարևորագույն հատվածները։ Եվ քանի որ Եփրատը հոսում էր Բաբելոնի մեջտեղով և ընթանում էր դեպի հարավ, ապա ապարանքներից մեկն ուղղված էր դեպի արևելք, մյուսը՝ դեպի արևմուտք, և երկուսն էլ կառուցված էին ամենայն շքեղութեամբ։ Դեպի արևմուտք ուղղված ապարանքի համար նախ կառուցեց արտաքին շրջապատը, վաթսուն ասպարեզ (երկարութեամբ), ամրացված բարձր և մեծաշուք պարիսպներով, թրծված աղյուսներից։

Դրանց ներսում կառուցեց մի երկրորդը՝ շրջանակաձև, որի աղյուս-
ների վրա, երբ դեռ սրանք անթուրծ էին, դրոշմեց բազմապիսի գա-
զանների (պատկերներ), որոնք դույնների ճարտար օգտադորժմամբ
5 վերարտադրում էին իրականությունը: Այս պարսպի երկարություն-
ըն քառասուն ասպարեզ էր, լայնքը կազմված էր երեք հարյուր աղ-
յուսից, իսկ բարձրությունը, ինչպես կտեսիսան է պատմում, հի-
6 սուն գրկաչափ էր. աշտարակների բարձրությունը յոթանասուն
գրկաչափ էր: Ներքնագույնս նա կառուցեց մի երրորդ պարիսպ, որի
մեջ գտնվում էր միջնաբերդը. միջնաբերդի շրջագիծը քսան ասպա-
րեզ էր, իսկ կառույցի բարձրությունը և լայնքը գերազանցում էին
միջին պարսպի կառուցվածքին: Ե՛վ աշտարակների, և՛ պարիսպ-
ների վրա ամեն տեսակ կենդանիներ էին պատկերված, որոնք
մեծ արվեստով էին պատրաստված դույնների օգտադորժմամբ և
տեսակների նմանեցմամբ. այդ ամբողջը ներկայացնում էր տար-
բեր դադանների որսի մի տեսարան՝ ամենայն մանրամասնու-
թյամբ, որտեղ (գազանների) մեծությունը շորս կանգունից ավելի
էր: Դրանց մեջ պատկերված էր նաև Սեմիրամիսը, ձիու վրայից
նիզակահարելիս հովազին, իսկ կողքին նրա ամուսին Նինոսը իր
7 տեգով հարվածում էր առյուծին: Այստեղ նա կանգնեցրեց նաև
եռակի դարբասներ, որոնցից երկուսը բրոնզից էին և բացվում էին
մեքենայի միջոցով:

Այս ապարանքը և՛ իր մեծությամբ, և՛ իր կառույցներով շատ էր
գերազանցում գետի մյուս կողմում գտնվող ապարանքին: Երկու-
հետև այս վերջինիս թրծած աղյուսներից (կառուցված) պարսպի
շրջագիծը երեսուն ասպարեզ էր, իսկ կենդանիների արվեստական
պատկերների փոխարեն այնտեղ կային Նինոսի և Սեմիրամիսի և
նրանց տեղապահների բրոնզե արձանները, ինչպես նաև Ջեսի (ար-
ձանը), որին բաբելոնացիները կոչում են Բելոս⁴¹, այնտեղ պատ-
կերված էին տեսնողներին բազմազան հաճույք պատճառող և ուզ-
մական, և՛ ամեն տեսակ որսի տեսարաններ:

9,1 Այնուհետև ընտրելով Բաբելոնիայի ամենացածրադիր վայրը,
այնտեղ պատրաստեց քառակուսի ջրավաղան, որի յուրաքանչյուր
կողմը երեք հարյուր ասպարեզ էր, այն կառուցված էր թրծած աղ-
2 յուսով և կուպրով, և ուներ երեսունհինգ ոտնաչափ խորություն.
Արդ, գետի (հոսանքը) շեղելով դեպի այնտեղ, երկու ապարանքը
իրար միացնող գետնուղի կառուցեց, այն պատրաստելով թրծած
աղյուսներից. և կամարակապ սենյակները յուրաքանչյուր կողմից
օժեց եռացած կուպրով այնքան, մինչև որ օժման հաստությունը
դարձավ շորս կանգուն: Այս գետնուղու պատերի հաստությունը

կազմված էր քսան աղյուսից, իսկ բարձրութիւնը, առանց կամարի
 3 կորութեան, տասներկու ոտնաչափ էր: Եվ յոթն օրում այն կառու-
 ցելուց հետո զետր նորից բաց թողեց իր նախկին հունով, այնպես.
 որ թեպետև գետի ջրերը հոսում էին գետնուղու վրայով, Սեմիրա-
 միսը կարող էր մեկ ապարանքից մյուսը գնալ, առանց՝ գետով
 անցնելու: Գետնուղու ամեն մի ծայրին նա բրոնզե դարբասներ կա-
 ռուցեց, որոնք կանգուն մնացին մինչև պարսիկների տիրապետու-
 թիւնը:

4 Այնուհետև քաղաքի մեջտեղում նա կառուցեց տաճար Զևսին,
 որին, ինչպես ասացինք, բաբելոնացիները կոչում են Բելոս: Արդ,
 քանի որ դրա վերաբերյալ պատմիչները տարածայն են և կառույցն
 էլ ժամանակի ընթացքում փլուզման էր ենթարկվել, հնարավոր չէ
 դրա մասին ճշգրիտ խոսք ասել: Բայց բոլորը վկայում են, թե այն
 եղել է շափաղանց բարձր, և որ քաղղեացիները նրանում դիտար-
 5 կում էին աստղերը, որոնց ծագելն ու մայրմտնելը ճշտորեն երևում
 էր կառույցի բարձրութեան շնորհիվ⁴²: Ամբողջ շենքը կառուցված
 էր վարպետորեն, մեծ քանակութեամբ աղյուսի և կուպրի օգտա-
 գործմամբ, և վերելքի գագաթին (Սեմիրամիսը) կանգնեցրեց կո-
 փածո ոսկուց երեք արձան՝ Զևսի, Հերայի և Հոեայի⁴³: Սրանցից Զև-
 սի արձանը պատկերում էր նրան կանգնած վիճակում, քայլ արած.
 բարձրութիւնը⁴⁴ քառասուն ոտնաչափ էր և կշռում էր բաբելոնյան
 հազար տաղանդ⁴⁵, իսկ Հոեայի արձանը (պատկերում էր նրան)
 նստած ոսկե գահավորակին և ուներ նույն կշիռը, ինչ վերոհիշյալը,
 նրա ծնկներին կանգնած էին երկու առյուծ, իսկ կողքին կային շատ
 խոշոր արծաթե օձեր, որոնցից յուրաքանչյուրը երեսուն տաղանդ
 6 ծանրութեամբ: Մինչդեռ Հերայի արձանը կանգնած (սիրքում) էր,
 իսկ կշիռը՝ ութ հարյուր տաղանդ, աջ ձեռքում բռնել էր օձը զլխից,
 7 իսկ ձախ ձեռքում ուներ (թանկարժեք) քարերով ընդելուղված մա-
 կան: Այս բոլորի առաջ դրված էր ընդհանուր սեղան, կոփածո ոս-
 կուց պատրաստած, որի երկարութիւնը քառասուն ոտնաչափ էր,
 8 լայնքը՝ տասնհինգ, և կշռում էր հինգ հարյուր տաղանդ: Դրա վրա
 կար երկու գավաթ⁴⁶, որոնց կշիռը երեսուն տաղանդ էր: Կային
 նաև նույն թվով խնկամաններ, որոնցից յուրաքանչյուրը կշռում էր
 երեք հարյուր տաղանդ. նույնպես երեք ոսկե կրատեր⁴⁷, որոնցից
 Զևսին (ձոնվածը) կշռում էր բաբելոնյան հազար երկու հարյուր
 9 տաղանդ, իսկ մյուսներից յուրաքանչյուրը՝ վեց հարյուր: Բայց այս
 սմենը հետագայում հափշտակեցին Պարսից թագավորները⁴⁸, իսկ
 պալատների և մյուս կառույցների մի մասը ժամանակը բոլորովին
 անհետացրեց, մյուս մասը վերածեց ավերակների: Եվ այժմ ահա

իր իսկ Բաբելոնի մի փոքր մասն է բնակեցված, իսկ պարիսայներից ներս գտնվող տարածության մեծ մասը հերկվում է:

- 10,1 Միջնաբերդի մոտ կար նաև կախյալ կոչված պարտեղը, որը կառուցել էր ոչ թե Սեմիրամիսը, այլ հետագայում սիրիացի⁴⁹ թագավորներից մեկը, ի սեր վարձակ կնոջ. քանզի վերջինս. ինչպես պատմում են, ծագումով պարսկուհի⁵⁰ լինելով, և խիստ կարոտելով իր լեռների մարգագետինները, ստիպեց թագավորին արհեստական պարտեղ տնկելով, այն նմանեցնի պարսկական երկրի բնությանը⁵¹:
- Այս պարտեզի յուրաքանչյուր կողմը ձգվում էր մինչև շորս պլեթրոն, իսկ մատուցները բլրանման էին, և կառուցները աստիճանաբար բարձրանում էին մեկը մյուսի վրա, այնպես, որ ամբողջ սեւսարանը թատրոնի ձև էր ընդունում: Բարձրանալու համար, պատրաստված աստիճանների տակ կառուցված էին ստորգետնյա սրահներ, որոնք իրենց վրա էին կրում տնկարանի ամբողջ ծանրությունը և փոքր առ փոքր բարձրանում էին մեկը մյուսի վրա, մատուցի երկարությամբ, և բոլորից վերև գտնվող սրահը, որի բարձրությունը հիսուն կանգուն էր, իր մակերևույթով հասնում էր ամենաբարձր տեղը, հավասարվելով սյարսպի աշտարակների բարձրության: Այնուհետև, շքեղ պատրաստված պատերը ունեին քուանկերկու ոտնաչափ հաստություն, իսկ անցումներից յուրաքանչյուրը սրահ ոտնաչափ լայնություն: Տանիքը ծածկված էր քարե լեծաններով, որոնց երկարությունը շարվածքի հետ տասնևվեց ոտնաչափ էր, իսկ լայնքը՝ շորս: Այս հեծանների վրա կտուրը ծածկված էր եղեգներով՝ ծեփված առատ կուպրով, իսկ դրա վրա երկու շարք թրծած աղյուս՝ կրով իրար ամրացած, մինչդեռ երրորդ շերտը կապարե ծածկույթ էր, որպեսզի հողի խոնավությունը չթափանցեր դեպի խորքը: Այդ ամենի վրա էլ հող էր կիտված այնպիսի շերտով, որ կբավականացներ նույնիսկ ամենամեծ ծառերի արմատներին, իսկ գետինը հարթեցված էր և առատորեն ծածկված ամեն տեսակ ծառերով, որոնք և՛ իրենց մեծությամբ և իրենց գեղեցկությամբ հաճոյացնում էին դիտողներին: Եվ սրահները, որոնք լույսը ստանում էին աստիճանաբար իրար վրա բարձրացող ելուստամասերից, կազմում էին ամեն տեսակի արքունի դահլիճներ: Դրանցից մեկն ուներ ամենաբարձր մակարդակից արված կուրվածքներ և ջուր մատակարարելու հարմարանքներ, որոնց միջոցով գետից մեծ քանակությամբ ջուր էր վերցվում, թեպետև դրսից որևէ մեկը այդ կատարվածից ոչինչ չէր կարող տեսնել: Այս պարտեղը, ինչպես ասել ենք արդեն, կառուցվել է հետագայում:

Սեմիրամիսը Եփրատ և Տիգրիս դետերի երկայնքով ուրիշ քաղաքներ ևս կառուցեց, որոնցում առևտրական կետեր հաստատեց նրանց համար, ովքեր Մեդիայից և Պարստակեններից⁵², ինչպես նաև հարևան բոլոր երկրներից բեռներ էին բերում: Քանզի նեղոսից և Գանգեսից հետո Եփրատը և Տիգրիսը, կարելի է ասել, առավել նշանակալից գետերն են Ասիայում, որոնց ակունքները Հայկական լեռներում են և իրարից գտնվում են երկու հազար հինգ հարյուր ասպարեզ հեռավորության վրա⁵³, այնուհետև նրանք հոսելով Մեդիայի և Պարստակենների միջով, մտնում են Միջագետք, որը ներառնելով իրենց միջև, պատճառ են եղել երկրի այդպիսի անվանման: Այնուհետև ճեղքելով Բաբելոնիան, դուրս են գալիս Կարմիր ծով⁵⁴: Եվ քանի որ նրանք խոշոր գետեր են և անցնում են մի շարք երկրների միջով, ուստի շատ առավելություններ են ընձեռում առևտրական գործերով զբաղվողներին, այդ իսկ պատճառով նրանց մերձափնյա շրջաններում առաջացել են բազմաթիվ բարգավաճ վաճառատեղեր, որոնք մեծապես նպաստել են Բաբելոնիայի հայտնի դառնալուն:

4 Սեմիրամիսը Հայկական լեռներից⁵⁵ մի քար կտրեց, երկարությունը հարյուր երեսուն ոտնաչափ, իսկ լայնքը և հաստությունը՝ քսան և հինգ. նա ջորիների և եզների բազմաթիվ լծերով (այդ քարը) իջեցրեց դեպի գետը և այնտեղ բարձեց լաստի վրա ու դրանով հոսանքն ի վար բերելով մինչև Բաբելոնիա, այն կանգնեցրեց ամենաերևելի ճանապարհի կողքին, որպես զարմանալի տեսարան այնտեղից անցնողներին: Ոմանք այն, իր ձևի պատճառով, անվանում են կոթող⁵⁶, որը և համարում են, այսպես կոչված, յոթ հրաշալիքներից մեկը:

Բաբելոնիայում թեպետև կան բազմաթիվ զարմանալի տեսարաններ, այսուհանդերձ պակաս հրաշալի չի թվում այնտեղ արդյունահանվող կուպրի առատությունը. դա այնքան մեծաքանակ է, որ ոչ միայն բավականացնում է այսքան շատ և այսքան խոշոր կառույցներին, այլև ժողովուրդը խմբվելով այն առատորեն հավաքում է տեղում⁵⁷ և շորացնելով, վառում է փայտի փոխարեն⁵⁸: Ու թեպետ մարդկանց անթիվ բազմություն է զբաղվում այն արդյունահանելով, բայց այն մնում է աննվազ, ասես դուրս է գալիս անսպառ մի աղբյուրից: Այդ աղբյուրին մոտիկ գտնվում է նաև ոչ մեծ չափի օղ արտաշնչող անցք, որն ունի զարմանահրաշ գորություն: Քանզի այն արտաբերում է ծծմբային ծանր գոլորշի, որին մոտեցող ամեն մի կենդանի էակ մեռնում է արագ և տարօրինակ մահով, քանզի որոշ ժամանակ նրա շունչը ենթարկվելով դրան, կոր-

- ծանվում է, կարծես թե նրա արտաշնչումը սրգելվում է շնչառու-
թյունը ճնշող ուժի միջոցով, մարմինը իսկույն ուռչում է և այրուց-
3 քից փքվում, հատկապես թոքերի շուրջ եղած հատվածներում: Գե-
տից այն կողմը կա նաև մի լիճ, որի ափերը հաստատուն ձև ունեն.
և եթե որևէ անփորձ մարդ մտնի այդ լիճը, սկզբում փոքր-ինչ կլո-
ղա, բայց ղեպի մեջտեղն առաջանալիս նա, կարծես ինչ-որ ուժի մի-
օրոցով ղեպի խորքն է քաշվում ու երբ արդեն փորձում է իր ուժերով
նորից վերադառնալ ղեպի ափ և համառորեն մաքառում է փրկվելու
համար, թվում է, թե ինչ-որ մեկը նրան ետ է քաշում. մահացման
են ենթարկվում նախ ոտքերը, այնուհետև սրունքները՝ մինչև ազու-
րերը, և վերջում ամբողջ մարմինը անզգայանալով, տարվում է ղե-
պի հատակը և քիչ անց վեր է նետվում մահացած: Ահա բարելո-
նիայում եղած հրաշալիքների մասին ասվածը թող բավական ինի:
- 13,1 Երբ Աեմիրամիսն արդեն վերջացրել էր իր կառուցողական աշ-
խատանքները, մեծ զորքով արշավանքի ելավ Մեդիայի դեմ: Եվ
երբ նա հասավ այն լեռը, որ կոչվում է Բագիստանոն⁵⁹, այնտեղ էլ
բանակ դրեց և պարտեզ կառուցեց, որի շրջագիծը տասներկու աս-
2 պարեզ էր և, գտնվելով դաշտավայրում, ուներ մի մեծ աղբյուր, որ-
տեղից տնկարանը ոռոգվում էր: Բագիստանոն լեռը Զևսի սրբա-
վայրն է, և պարտեզի կողմը նայող հատվածում կան գահավեժ
ժայռեր, որոնց բարձրությունը հասնում է մինչև տասնյոթ ասպա-
րեզի: Մրա ցածրագույն մասը հղկելով, վրան փորագրեց իր իսկ
պատկերը, իրեն շրջապատող հարյուր նիզակակիրներով: Ժայռի
վրա նա թողեց նաև արձանագրություն սիրիական գրերով⁶⁰, թե
«Աեմիրամիսը իր զորքում եղած բեռնակիր գրաստների թամբերով
դաշտում թումբ բարձրացրեց ու լցրեց այս անդունդը և բարձրա-
ցավ մինչև (ժայռի) գագաթը»⁶¹:
- 3 Այստեղից նա վերսկսեց իր արշավանքը և, հասնելով Մեդիայի
Քավոն քաղաքը, նա մի բարձրադիր դաշտում ժայռ նկատեց, որն
ուներ զարմանալի բարձրություն և մեծություն: Նա այնտեղ նույն-
պես մեկ ուրիշ խոշորագույն պարտեզ կառուցեց, ժայռը թողնելով
դրա մեջտեղում և ժայռի վրա իր հաճույքի համար շքեղ կառույց-
ներ կանգնեցրեց, որտեղից նա դիտում էր և պարտեզի ծառաս-
4 տանները, և՛ դաշտում բանակած ամբողջ զորքը: Այդ վայրում էլ
նա բավական երկար ժամանակ ապրելով և ամեն տեսակ հաճույք-
ներ վայելելով հանդերձ, չկամեցավ օրինավոր կերպով ամուսնա-
նալ, վախենալով, որ կարող է երբևիցե գրկվել իշխանությունից,
ուստի նա, ընտրելով զինվորների միջից գեղեցկությամբ աչքի ընկ-

նողներին, կենակցում էր նրանց հետ և բոլորին, ովքեր իրեն մերձենում էին, ոչնչացնում էր:

5 Այնուհետև, նա շարունակելով իր արշավանքը դեպի Եկբատանա⁶², հասավ Զարկայոս կոչվող լեռ⁶³: Ու քանի որ այն ձգվում էր բազում ասպարեզների վրա և այնտեղ կային մեծ թվով գահավեժ ժայռեր ու ձորեր, ապա նրա շրջանցումը երկար (ճանապարհ) էր: Նա բուռն ցանկութուն ունեցավ իր համար անմահ հուշարձան թողնել, միաժամանակ և կրճատել ճանապարհը: Ուստի և գահավեժ ժայռերը կտրելով և ցածրավայրերը լցնելով, կարճ և մեծ ծախսեր պահանջող ճանապարհ կառուցեց, որը մինչև հիմա կոչ-

6 վում է Սեմիրամիսի (ճանապարհ): Հասնելով Եկբատանա քաղաքը, որն ընկած է դաշտավայրում, այնտեղ կառուցեց շքեղ պալատ և այդ վայրին ամեն տեսակետից առավելագույն ուշադրություն դարձրեց: Քանի որ քաղաքը դրկված էր ջրից և մոտակա ոչ մի վայրում աղբյուր չկար, ապա նա ամբողջ քաղաքը ջրով ապա-

7 հովեց, մեծ դժվարություններով ու ծախսերով առատ և լավագույն ջուր բերելով: Քանզի Եկբատանայից տասներկու ասպարեզ հեռավորությամբ գտնվում է Օրոնտես կոչված լեռը, որն առանձնապես հայտնի է իր անմատչելիությամբ և բարձրակարկառ ժայռերով, այնպես, որ այն ուղիղ ձգվում է մինչև գագաթը քսանհինգ ասպարեզ բարձրությամբ: Ու քանի որ լեռան մյուս կողմում կար մեծ լիճ, որը դետն էր թստվում, կտրեց այդ լեռը ստորոտում: Այդ ջրանցքը տասնհինգ ոտնաչափ լայնություն ունի և քառասուն (ոտչափ) բարձրություն, դրա միջոցով նա գետ բերեց լճից և քաղաքը լիացրեց ջրով: Ահա այս գործերը նա կատարեց Մեդիայում:

14,1 Այնուհետև նա շրջեց Պերսիս⁶⁴ և Ասիայում իր տիրապետության տակ գտնվող բոլոր մյուս երկրները: Եվ ամենուրեք նա լեռներն ու գահավեժ ժայռերը կտրելով, մեծ ծախսեր պահանջող ճանապարհներ կառուցեց, իսկ դաշտերում էլ հողաբլուրներ (բարձրացրեց), մերթ դամբարաններ կառուցելով մահացած առաջնորդների համար, մերթ էլ դրանց գագաթին քաղաքներ հաստատելով: Նա սովորություն ուներ նաև իր բանակած վայրերում փոքր հողաթմբեր կառուցել, որոնց վրա իր վրանը դարկելով, դիտարկում էր ամբողջ ճամբարը: Իբրև հետևանք այդ բոլորի, մինչև հիմա ևս Ասիայում նրա կողմից կառուցվածներից շատ բան մնացել է և այդ ամենը կոչում են Սեմիրամիսի գործեր⁶⁵:

3 Այնուհետև նա շրջեց ամբողջ Եգիպտոսը և Լիբիայի մեծագույն մասը ավերելուց հետո այցելեց այնտեղ գտնվող Ամմոնի⁶⁶ (տաճարը), հարցնելու համար աստծուն իր վախճանի մասին: Ասվում

է, թե նրան պատահամ տրվեց, որ պետք է աներևութանա մարդկանց միջից և Ասիայի մի շարք ժողովուրդների մոտ արժանանա անմահ պատվի, իսկ այդ պետք է տեղի ունենա այն ժամանակ, երբ իր որդին՝ Նինվասը դավ նյութի իր դեմ:

20,1 Որոշ ժամանակ հետո նրա որդին՝ Նինվասը դավ նյութեց նրա դեմ ինչ-որ ներքինու միջոցով. և նա, հիշելով Ամմոնի տված պատգամը, դավադրություն նյութողին շպատեց, այլ, ընդհակառակը, թագավորությունը հանձնելով նրան և կառավարիչներին հրամայելով հնազանդվել նրան, իսկույն աներևույթ եղավ, ասես թե տրված պատգամի համաձայն գնաց փոխարկվելու աստծու: Ոմանք առասպելաբանելով ասում են, թե նա փոխակերպվել է աղավնու և թռել է իր տանը թառած բազմաթիվ հավքերի երամի հետ: Այդ պատճառով էլ ասորեստանցիները իբրև աստված պաշտում են աղավնուն, դրանով էլ անմահացնելով Սեմիրամիսին: Այսպես, ուղեմն, նա թագավորելով ամբողջ Ասիայի վրա, բացի Հնդկաստանից, վախճանվեց վերոհիշյալ կերպ, ապրելով վաթսուն երկու տարի և թագավորելով քառասուներկու (տարի)⁵⁷:

3 Ահա այսպես է պատմում Կտեսիաս Կենդիացին Սեմիրամիսի մասին, իսկ Աթենայոսը⁵⁸ և մի քանի այլ հեղինակներ պատմում են, թե նա եղել է սիրադեմ հեսուերա⁵⁹ և իր գեղեցկության պատճառով սիրվել է Ասորեստանի թագավորի կողմից: Սկզբում նա արքունիքում չափավոր ընդունելության արժանացավ, բայց հետագայում, երբ արդեն հռչակվեց (թագավորի) օրինական կինը, համոզեց արքային հինգ օր թագավորական իշխանությունը դիջել իրեն: Եվ Սեմիրամիսը ստանձնելով դստիստներ և արքայական տարազը, առաջին իսկ օրը տոնախմբություն կազմակերպեց և հոյակապ ընթրիք տվեց, որի ժամանակ համոզեց դորապետներին և բոլոր ականավորագույն մարդկանց գործակցել իրեն: Հաջորդ օրը, քանի դեռ բաղնիքներ և ամենաերևելի մարդիկ նրան մեծարում էին իբրև թագուհու, նա ամուսնուն կալանավորեց ու բանտարկեց. և քանի որ նա բնավորությամբ մեծագործության էր ձգտում և համարձակ էր, իշխանությունը զավթեց և մինչև ծերություն տիրելով իբրև թագուհի, շատ և մեծ գործեր կատարեց: Ահա այսպիսի հակասություններ են հանդիպում այստեղիցների մոտ Սեմիրամիսի գործունեության մասին:

21,1 Նրա մահից հետո Նինվասը, Նինոսի և Սեմիրամիսի որդին, վերցնելով իշխանությունը, խաղաղությամբ կառավարեց և երբեք չհախանձեց իր մոր ուղիքով և արկածախնդիր ոգուն: Քանզի նա, առաջին հերթին, իր ամբողջ ժամանակը անց էր կացնում արքունի-

քում և ոչ որ նրան շէր տեսնում, բացի իր վարձակներից և նրան
 շրջապատող ներքինիներից: Նա իրեն հանձնել էր ցոփության ու
 անհոգության և ձգտում էր մշտապես հեռու մնալ դժվարություն-
 ներից և մտահոգություններից, հուսալով, որ իր թագավորության
 2 վախճանը կլինի ամեն տեսակ հաճույքների ըմբռնումը: Այս
 ամենից բացի, իր իշխանության ապահովության համար և իր
 հպատակներից դղացած վախի պատճառով, նա ամեն տարի
 4 յուրաքանչյուր ազգից պահանջում էր որոշակի թվով զինվոր-
 ներ ու մեկ զորավար, և այդ բոլորից գումարված զորքը պա-
 հում էր (մայրա) քաղաքից դուրս, յուրաքանչյուր ազգի վրա իբրև
 առաջնորդ նշանակելով իր մերձավորներից հավատարմագույնին:
 Տարին լրանալիս նա դարձյալ պահանջում էր ազգերից նույնքան
 5 թվով զինվորներ, իսկ նախկիններին արձակում էր իրենց հայրե-
 նիքը: Նման գործելաձևի հետևանքը այն էր, որ բոլոր իր իշխանու-
 թյան ենթակա եղողները համակվում էին երկյուղով, քանի որ
 մշտապես տեսնում էին բացօթյա բանակած մեծ թվով զորք, որը
 6 պատրաստ էր պաստժելու ապստամբներին կամ անհնազանդներին:
 Ըսկ զինվորների ամենամյա փոփոխումը նա կիրառում էր, որպես-
 ղի նախքան զորավարների և մյուս բոլորի իրար լավ ճանաչելը,
 ամեն մեկը բաժանվելով վերադառնար իր հայրենիքը: Քանզի եր-
 կար ժամանակ զորքում լինելը մի կողմից առաջնորդներին հրմ-
 տացնում է ռազմական արվեստին և բարձրացնում նրանց ինք-
 նավստահությունը, մյուս կողմից, որ ամենակարևորն է, իրենց
 տերերի դեմ ապստամբելու և դավադրություն նյութելու մեծ առիթ-
 7 նեղ է ստեղծում: Ու քանի որ ինքը դրսում գտնվողներից ոչ մեկին
 չէր երևում, ապա բոլորը անգիտանում էին նրա ցոփության մա-
 սին, և ինչպես աներևույթ աստծուց, բոլորը վախենում էին նրանից
 և չէին համարձակվում նույնիսկ խոսքով հայհոյել նրան: Այսպի-
 սով, ամեն մի ազգի համար զորավարներ, սատրապներ ու կառա-
 վարիչներ նշանակելուց և բոլոր դեպքերում ամեն ինչ իր օգուտի
 համաձայն կարգադրելուց հետո, նա իր ամբողջ կյանքի ընթացքում
 ապրեց նինոս (քաղաքում):

8 Նրա օրինակին հետևեցին նաև մնացյալ թագավորները և հո-
 րից որդի ժառանգելով իշխանությունը, երեսուն սերունդ⁷⁰ թագա-
 վորեցին մինչև Սարղանապալոս⁷¹, քանզի նրա ժամանակ ասորես-
 տանցիների ստրությունը, որը, ինչպես պատմում է Կտեսիաս Կնի-
 դացին իր (պատմության) երկրորդ գրքում, գոյություն էր ունեցել
 ավելի քան հազար երեք հարյուր տարի, անցավ մեղացիներին:

23,1 Սարղանապալոսը հանդիսանալով երեսուներորդը տերությանը

- հիմնադիր նինոսից հետո և վերջինը Ասորեստանի թագավորներից, իր բոլոր նախորդներին դերազանցեց իր ցոփությամբ ու ծուլությամբ⁷²: Քանզի նա դրսից ոչ ոքի չէր երևացել և (պալատում) ապրել էր կնոջ կյանքով և իր օրերն անց կացնելով վարձակների հետ, ծիրանի էր գործում և փափկադույն բուրդ մանում, հագնում էր կանացի զգեստ, իսկ դեմքն ու ամբողջ մարմինը խնամում էր սպիտակեցնող շպարներով և հետերանների օգտագործած այլ օծա-
- 2 նելիքներով, և (մաշկը) դառնում էր առավել նուրբ, քան որևէ քնքուշ կնոջ: Նա մեծապես ջանաց նաև իր ձայնը կանացի դարձնել և խրախձանքների ժամանակ ոչ միայն մշտապես անձնատուր էր լինում առավելագույն հաճույք պատճառելու հատկութուն ունեցող խմիչքների և ուտելիքի, այլև հետապնդում և՛ այրի և՛ կնոջ պասսաճառած սիրային հաճույքները վայելել: Քանզի նա անսանձ կերպով կենակցում էր երկու սեռերի հետ, բոլորովին էլ շմտածելով այդ-
- 3 պիսի վարքի անպատվության մասին: Նա այնքան հեռու գնաց իր ցոփության և ստորագույն վայելքների, ինչպես նաև անսանձության մեջ, որ ինքը իր համար դամբանական գրեց և պատվիրեց իր դահի ժառանգներին իր մահից հետո դերեղմանի վրա փորագրեն այդ տողերը, որ հշուսել էր բարբարոսների լեզվով, իսկ հետագայում մի հելլեն այն թարգմանեց (հունարեն) այսպես.

«Քաջ իմանալով, որ դու ծնվել ես լուկ մահկանացու,

Անվերջ քո հոգին խրախձանքների գիրկն է նեավել:

Զէ՛ որ մեռնելը երբեք չի կարող բեղ օգուտ բերել,

Ու ես թնայտեմ զահակալի եմ մեծն նինվեում,

Միայն մոխիր եմ և ուրիշ ոչինչ:

Ինձ մնաց միայն գինարբուքներում կերած-խմածս

Ու ցոփությունը անառակ սիրո, իսկ այն ամենը

Ինչ այլոց համար երջանկություն է, մնաց ետևումս:

- 4 Ահա նա այսպիսի բնավորությամբ ոչ միայն ինքը ամոթալի կերպով խորտակեց իր կյանքը, այլև վերջնականապես կործանեց ասորեստանյան տերությունը, որը (պատմությանը) հայտնիներից ամենաերկարատևն էր եղել:
- 24,1 Քանզի ոմն Արբակես⁷³, ծագումով մեդացի, որը հայտնի էր իր քաջությամբ և հոգու պայծառությամբ, զոբավարն էր այն մեդացիների, որոնք ամեն տարի ուղարկվում էին նինոս (քաղաք): Զորքում նա մտերմացավ բաբելոնացիների զորավարի հետ և նրա կող-
- 2 մից զրդվեց ասորեստանյան տերությունը տապապելու: Նրա անունն էր Բելեսյուս և նա ամենահայտնին էր քրմերից, որոնց բաբելոնացիները կոչում են քաղդեացիներ: Ու քանի որ նա խորապես հմուտ էր աստղագիտության և գուշակության, ուստի և շատերին

- անսխալ կերպով կանխագուշակում էր նրանց ապագան, եվ որովհետև այդ պատճառով նա հարգված էր, իր հետ բարեկամացած մեղացիների զերավարին գուշակեց, որ սա անպայման պետք է
- 3 թագավորի բոլոր այն երկրների վրա, որտեղ սիրում է Սարգանապալոսը: Իսկ Արբակեսը, գովաբանելով այդ մարդուն, խոստացավ նրան Բաբելոնիայի սատրապուլթյունը, երբ դործը հասնի իր ավարտին. մինչդեռ ինքը, ասես ինչ-որ աստծու պատգամից ոգևորված, մյուս ազգերի առաջնորդների հետ դաշնակցում էր և բոլորին ջանասիրաբար հրավիրում էր խնջույքների և հավաքույթների, յուրա-
- 4 քանչյուրի հետ բարեկամուլթյուն հաստատելով: Նա որոշեց նաև երես առ երես տեսնել թագավորին և հետևել նրա ամբողջ ապրելակերպին: Այդ նպատակով ներքինիներից մեկին նա ոսկե բաժակ պարգևելով, առաջնորդվեց Սարգանապալոսի առաջ, ու երբ նա մոտիկից ականատես եղավ նրա ցոփ կյանքին և կանացի զբաղմունքների նկատմամբ նրա սիրուն, արհամարհեց թագավորին, իբրև բո-
- 5 լորովին անարգ մարդու, առավել ևս կառնեց քաղցեացու կողմից իրեն տրված հույսերին: Ի վերջո նա դավադրուլթյուն նյութեց Բելեսյուսի հետ, այն պայմանով, որ ինքը պետք է ոտքի հաներ մեղացիներին և պարսիկներին, մինչդեռ վերջինս պետք է համոզեր բաբելոնացիներին հաղորդակից դառնալ այդ գործին և ստանար իր բարեկամի՝ արաբների առաջնորդի օժանդակուլթյունը, դրանով իսկ ստանձնելով հսկողուլթյունը բոլորի վրա⁷⁴:
- 6 Երբ լրացավ զորքում մնալու մեկ տարվա ժամկետը և արդեն նրանց փոխարինելու եկան նորերը, նախկինները, ընդունված կարգի համաձայն, արձակվեցին իրենց երկրները, այնժամ Արբակեսը համոզեց մեղացիներին հարձակվել (Ասորեստանի) թագավորուլթյան վրա, իսկ պարսիկներին՝ իրենց ազատուլթյան համար հաղորդակից լինել դավադրուլթյանը: Նույն եղանակով Բելեսյուսը ևս համոզեց բաբելոնացիներին պայքարել իրենց ազատուլթյան համար և ղեսպանուլթյուն ուղարկելով Արաբիա, իր կողմը գրավեց տեղաբնակների առաջնորդին, որն իր բարեկամն էր և կապված էր իր հետ փո-
- 7 խադարձ հյուրընկալուլթյամբ, որպեսզի մասնակցի հարձակման: Մեկ տարի լրանալուց հետո այս բոլոր առաջնորդները բազում զորք հավաքեցին և լրիվ կազմով եկան Նինոս, առերևույթ, սովորուլթյան համաձայն, փոխարինողներին բերելով, բայց իրականում ասորեստանցիների տիրապետուլթյունը տապալելու համար: Ու երբ այս
- 8 վերոհիշյալ ազգերը գումարվեցին միևնույն վայրում, նրանց ընդհանուր թիվը հասավ քառասուն բյուր մարդու, նրանք հավաքվե-

լով մեկ զորակայանում, խորհրդակցեցին դործողության լավագույն ծրագրին ի խնդիր:

25.1

- Ուարդանապալոսը, տեղեկանալով ապստամբության մասին, իսկույն նրանց դեմ դուրս բերեց մյուս ազգերից հավաքված գորբերը: Եվ սկզբում, երբ բաց դաշտում ճակատամարտ տեղի ունեցավ, ապստամբները պարտվեցին և, բազում զոհեր սալով, նահանջեցին Նինոսից յոթանասուն ասպարեզ հեռու գտնվող մի լեռ: Այնուհետև, սակայն, երբ նրանք նորից իջան դաշտ և պատրաստվեցին ճակատամարտելու, Ուարդանապալոսն իր զորքը դասավորեց նրանց շարքերի դեմ և քարոզներ ուղարկեց թշնամու զորակայանը (հաղորդելու), թե «Սարդանապալոսը մեղացի Արբակեսին սպանողին կտա երկու հարյուր ոսկե տաղանդ, իսկ նրան կենդանի հանձնողին պարգև կտա կրկնակի այդչափ և միաժամանակ նրան կհաստատի Մեդիայի կառավարիչ»: Եւ այսպիսի պարգևներ խոստանում էր նաև բաբելոնացի Բելեսյուսին սպանողին կամ կենդանի բերողին: Բայց քանի որ ոչ ոք ուշադրություն չդարձրեց նրա ալի հայտարարություններին, նա ճակատամարտ տվեց և սպստամբներից շատերին սպանեց, իսկ մնացած բազմությանը հալածեց դեպի լեռներում գտնվող նրանց զորակայանը:
- Եվ Արբակեսի մերձավորները, որոնք պարտության հետևանքով վհատվել էին, նրա մտերիմունքին հավաքեցին խորհրդի, որոշելու, թե ինչ պետք է անել: Այնժամ նոսանցից շատեոս ասացին, թե պետք է հեռանալ իրենց երկրները և ամրացված կետերը վերցնելով, ինչքան հնառավոտ է պատերազմի համար անհրաժեշտ ամեն ինչ պատրաստել: Բայց Բելեսյուս բաբելոնացին պնդելով, որ աստվածները նշաննեռով հայտնել են, թե իրենք ջանքերով ու դժվարություններով կկարողանան իրենց ձեռնարկածը հաջողությամբ ավարտել և ամեն կերպ քաջալերելով նրանց:
- Բոլորին համոզեց մնալ և դիմագրավել վտանգները: Եվ երբ արդեն տեղի ունեցավ երրորդ ճակատամարտը, դարձյալ թագավորը հաղթեց և հրավեց ապստամբների ոտակայանը և պարտվածներին հալածեց մինչև Բաբելոնիայի սահմանները, ու պատահեց, որ Արբակեսը ևս, որը ամենափայլուն կեռպով կուլել էր և ասորեստանցիներից շատերին սպանել, վիրավորվեց: Ու քանի որ սպստամբները իրար ետևից այդքան շատ վնասներ էին կրել, նրանց առաջնորդները, կողցնելով հաղթանակի ամեն մի հույս, պատրաստվում էին յուրաքանչյուրը մեկնել իր հայրենի երկիրը:
- Բայց Բելեսյուսը, որը գիշերը բացօթյա անքուն էր անցկացրել և զբաղվել էր աստղերը դիտարկելով, դեպքերի նման ընթացքից

հուսահատվածներին ասաց, որ «եթե հինգ օր դիմանաք, ապա օգնութիւնը կհասնի ինքնաբերաբար և ամբողջ իրադրութեան մեջ հսկայական փոփոխութիւն կլինի դեպի հակառակ վիճակը, քանզի աստղերը դիտարկելու իմ հմտութեան հետեանքով ես դրանցում տեսնում եմ աստվածների կողմից ձեզ տրված պատգամները»: Եվ նա կոչ էր անում նրանց սպասել այդ օրերին և փորձել իր հմտութիւնը և աստվածների բարեփորձութիւնը:

26,1

Երբ այդպիսով բոլորը ետ կանչվեցին և սպասեցին պայմանավորված ժամանակը, մի (լրաբեր) ժամանեց հաղորդելով, թե Բակտրիանն (երկրից) թագավորին (օգնութեան) ուղարկված մի զորամաս արդեն մոտեցել է և առաջանում է արտորալով: Ուստի նրանք որոշեցին, որ Արբակեսը ամենակարճ ճանապարհով գնա Կանդիպելու նրանց զորավարներին, իր հետ վերցնելով զինվորներից լավագույններին և առավել ճարպիկներին, որպեսզի եթե խոսքերով չկարողանան համոզել բակտրիացիներին միանալու ապստամբութեան, ապա զենքի ուժով ստիպեն նրանց հաղորդակից լինել իրենց հույսերին: Ի վերջո, (բակտրիացիները) ուրախուլիամբ արձագանքեցին ազատութեան կոչին, նախ առաջնորդները, իսկ նաև ամբողջ զորքը, որից հետո նրանք բոլորը բանակեցին միևնույն վայրում:

4 Այդ ժամանակ պատահեց, որ ասորեստանցիների թագավորը, անգիտանալով բակտրիացիների ապստամբութեան մասին, և ոգևորված իր նախորդ հաջողութիւններից, հանձնվեց հանգստի, իսկ խրախճանքի համար իր զինվորներին բաժանեց մորթելու անասուններ և մեծ քանակութեամբ դինի և ամեն տեսակ այլ մթերքներ: Ուստի և, մինչդեռ ամբողջ զորքը կերուխումի մեջ էր, Արբակեսի մարդիկ ինչ-որ դասալիքներից տեղեկանալով թշնամու զորաբանակում տիրող անհոգութեան և հարբեցողութեան մասին, գիշերը անսպասելի հարձակում գործեցին: Ու քանի որ գրոհում էին կազմակերպված զորամասեր անկազմակերպների, պատրաստ եղողները անպատրաստ գտնվողների վրա, ապա նրանք գրավեցին զորակայանը և զինվորներից շատերին սպանելուց հետո, մնացածներին հալածեցին մինչև քաղաք: Այնուհետև թագավորը Գալայմենեսին, իր կնոջ եղբորը, զորավար կարգեց, իսկ ինքը ուշադրութիւնը կենտրոնացրեց քաղաքի դրութեան վրա: Ինչպես աստամբները իրենց ուժերը դաշտում գումարելով քաղաքի առաջ, երկու ճակատամարտերում հաղթեցին ասորեստանցիներին և ոչ միայն սպանեցին Գալայմենեսին, այլև փախուստի մատնված հակառակորդ զինվորների մի մասին կոտորեցին, իսկ մյուսներ-

րին, որոնք, զրկված լինելով քաղաք վերադառնալու հնարավորու-
7 թյունից, ստիպված էին իրենց նետել Եփրատ դետր, բացի քչերից
բոլորին սպանեցին: Այնքան մեծ էր սպանվածների բաղմությունը,
որ հոսող ջուրը արյամբ խառնվելով, բավական մեծ տուրածության
վրա փոխել էր իր գույնը: Այնուհետև, երբ արդեն թագավորը փակ-
ված էր քաղաքում և պաշարված, աղգերից շատերը ապստամբե-
ցին, ամեն մեկը ձգտելով աղատության հասնել:

8 Սարդանապալոսը տեսնելով, որ ամբողջ թագավորությունը
մեծագույն վտանգների մեջ է, իր ուստրերին, որոնք երեքն էին, և
երկու դուստրերին բազում գանձերով ուղարկեց Պափլագոնիա⁷²,
Եպարքոս Կոտտասի մոտ, որն իր ենթականերից ամենահաջատա-
րիմն էր, իսկ ինքը սուրհանդակներ ուղարկեց բոլոր իրեն հպատակ
(կառավարիչներին), պատվիրելով զորքեր ուղարկել, իսկ ինքն

9 սկսեց պատրաստվել պաշարման: Դեռևս նախնիներից իրեն մար-
դարեություն էր հասել, թե «ոչ ոք չի կարողանալու Նինոսը գրոհով
վերցնել, մինչև գետը շղառնա քաղաքին թշնամի»: Ոստի ենթադ-
րելով, որ այդպիսի բան երբեք տեղի չի ունենա, նա շէր վատվում,
այլ մտածում էր դիմանալ պաշարման և սպասել իր հպատակների
ուղարկելիք զորքերին:

27,1 Ապստամբները, ոգևորված իրենց հաջողություններից, սաստ-
կացրին պաշարումը, բայց պարիսպների ամրության պատճա-
ռով քաղաքում գտնվողներին ոչնչով չէին կարողանում վնասել,
որովհետև պարիսպները քանդելու համար օգտագործվող քարանես:
մեքենաները կամ ականափորներին պաշտպանող ծածկույթները⁷³
կամ էլ հարվածող խոյերը⁷⁴ դեռևս այդ ժամանակ չէին հնարված⁷⁵:
Իսկ քաղաքում փակվածները ամեն տեսակ սլարենի մեծ առատու-
թյուն ունեին, քանի որ թագավորը նախօրոք հոգացել էր այդ մա-
սին: Այդ պատճառով էլ պաշարումը ձգձգվում էր արդեն երկու տա-
րի, և նրանք շարունակում էին իրենց հարձակումները սլարիսպների
վրա, միաժամանակ խոչընդոտում քաղաքից դուրս եկողների ելքը:
Բայց երրորդ տարում, երկարատև և ուժեղ անձրևներ տեղալու
պատճառով, Եփրատը բարձրանալով ողողեց քաղաքի մի մասը և

2 քսան ասպարեզ տարածության վրա տապալեց պարիսպները: Այն-
ժամ ահա թագավորը, կառծելով, թե պատգամը կատարվեց և դետր
բացահայտ կերպով դարձել է քաղաքին թշնամի, կորցրեց փրկու-
թյան հույսը: Իվ որպեսզի ինքը թշնամիների ձեռքը չընկնի, պա-
լատում հսկայական մի խարույկ պատրաստեց և ամբողջ ոսկին ու
արծաթը, ինչպես նաև արքայական բոլոր հանդերձները, կիտեց
դրա վրա, իսկ հարձերին ու ներքինիներին հավաքելով փակեց խա-

- րույկի մեջտեղում պատրաստված սենյակում և ալդ ամենը և
- 3 ինքն իրեն, ինչպես նաև պալատները, հանձնեց կրակին: Ապրստամբները, իմանալով Սարդանապալոսի մահվան մասին, պարսպի քանդված հատվածի կողմից գողհեղուկ, դրավեցին քաղաքը և Արբակեսին հագցնելով արքայական զոհաստ, նրան թագավոր հռչակեցին և ամբողջ իշխանությունը հանձնեցին նրան⁷⁹:
- 28,1 Այնժամ էլ, երբ թագավորն իր հետ միասին կոիվ մղած զորավարներին պառզևներ էր բաժանում յուրաքանչյուրի արժանիքի հասածայն և սատրապներ նշանակում ազգերի վրա, Բելեսյուս բարեխոնացին, որը գուշակել էր, թե նա պետք է դառնա Ասիայի խաղաղորդ, գալով նրա մոտ, հիշեցրեց իր մատուցած ծառայությունները և պահանջեց իրեն տալ Բաբելոնի իշխանությունը,
- 2 ինչպես նախկինում խոստացել էր: Նա հայտնեց նաև, որ երբ (իրենք) վտանդների մեջ էին, ինքը ուխտել էր Բելոսին, որ եթե Սարդանապալոսը պարտվի և նրա պալատները կրակի տրվեն, սպա դրա մոխիրը նա պետք է բերի Բաբելոն և այն կիտելով ասս:ձո սրբարանի և գետի մոտ, պետք է հողաթումբ բարձրացնի, որը նվիրատի հոսանքով նսվողներին պետք է մշտապես հիշեցնի այն մարդուն, ով տապալեց ասորեստանյան տերությունը:
- 3 Նա այդպես էր պահանջում, քանի որ ոսկու և արծաթի մասին խնայել էր ինչ-որ ներքինուց, որը փախելով ապաստանել էր իր մոտ և որին ինքը պատսպարել էր⁸⁰: Իսկ Արբակեսը այդ մասին ոչինչ չիմանալով, քանզի պալատում գտնվողները բոլորը թագավորի հետ միասին կիզվել էին, թույլ տվեց նրան մոխիրը փոխադրել և Բաբելոնում տիրել առանց հարկեր վճարելու: Եվ այսպիսով, Բելեսյուսը նավեր պատրաստելով, մոխրի հետ միասին ոսկու և արծաթի մեծ մասը ուղարկեց Բաբելոն, իսկ թագավորը, երբ նրան հաղորդեցին բացահայտված այդ դործի մասին, դատավորներ նշանակեց իր հետ միասին կոիվ մղած զորավարներին: Երբ մեղադրյալը խոստովանեց իր հանցանքը, ատյանը նրան դատապարտեց մահվան, իսկ թագավորը, լինելով մեծահոգի և ցանկանալով իր իշխանության սկզբում երևալ գթասիրտ, Բելեսյուսին ազատեց վտանգից և թույլ տվեց պահել իր տարած արծաթն ու ոսկին, նույնպես նրան շորկեց նաև նախապես նրան տրված Բաբելոնի իշխանությունից, ասելով, որ նրա մատուցած նախորդ ծառայությունները առավել խոշոր են, քան հետագա հանցանքները: Երբ նրա այս ներողամտությունը թմբկահարվեց, նա նվաճեց ոչ միայն ազգերի սովորական բարյացակամությունը, այլև նրանց մոտ փառ-

քի արժանացավ, քանզի բոլորը գտնում էին, թե իր գեմ անարդարութիւն գործողի հանդեպ այդպես վարվողը արժանի է թագա-
7 վորելու: Այսպես էլ Արբակեսը քաղաքի բնակիչների հանդեպ մեղմութիւամբ վերաբերվելով, նրանց բնակեցրեց գլուղերում, ամեն մեկին վերադարձնելով իր տիրույթը, բայց քաղաքը հիմնահասակ քանդեց: Այնուհետև խարույկից մնացած արժաթն ու ոսկին, որը բազում տաղանդ էր կաղմում, իր հետ տարավ Մեդիայի Եկբատանա (քաղաքը):

8 Այսպիսով, ասորեստանյան տերութիւնը, որը Նինոսից հետո հարատևել էր երեսուն սերունդ՝ ավելի քան հազար երեք հարյուր տարի, կործանվեց մեղացիների կողմից վերոհիշյալ եղանակով:

29,1 Մենք անպատշաճ շենք համարում կարճառոտ պատմել Բաբելոնի քաղղեացիների⁸¹ և նրանց հնախոսութեան մասին, այնպես,

2 որ հիշատակութեան արժանի ոչինչ բաց չթողնենք: Այժմ քաղղեացիները, լինելով Բաբելոնիայի հնագույն բնակիչներից, տերութեան մեջ ունեն գրեթե նույն կարգը, ինչ քրմերը Եգիպտոսում: Քանզի նրանք, նվիրված լինելով աստվածների պաշտամունքին, իրենց ամբողջ կյանքում իմաստասիրում են, մեծ գիտելիքներ ունենալով աստղաբանութեան ասպարեղում: Նրանք շատ զբաղվում են նաև գուշակութեամբ, պատգամներ տալով ապագայում կատարվելիքի մասին, և աշխատում են մերթ քավութեան արարողութիւններով, մերթ դուրս մատուցելով, մերթ էլ այլ հմայութիւններով խափանել շարիքը և նպաստել բարիքի կատարման: Նրանք հմտութիւն ունեն նաև հավքերի թռիչքի հիման վրա պատգամներ տալու և երազներն ու հրաշքները բացատրելու: Նրանք անարվեստ շեն նաև ողջակեզների փորոտիքների վրա գուշակելու գործում և կարծում են, թե այդ ասպարեզում մեծ հաջողութեան են հասել:

Այս ամենը նրանք սովորում են ոչ ինչպես Հունաստանում այդ գործերով զբաղվողները: Քանզի քաղղեացիների մոտ այդ ամենի ուսումնասիրութիւնը սերնդից սերունդ է հաղորդվում և որդին այն ընդունում է հորից, աղատ լինելով ամեն տեսակ այլ ծառայութիւնից: Այսպիսով, քանի որ նրանց ուսուցիչները հայրերն են, ամեն ինչ սովորում են անտրտունջ. միաժամանակ և հետևում են (ուսուցչի) հանձնարարութիւններին առավել վստահ և հավատով: Ինչպէս, քանի որ նրանք երեխա հասակից այդպես են սովորում և դաստիարակվում, ուստի հասնում են մեծ վարպետութեան, որովհետև այդ տարիքում հեշտ է սովորել և երկար ժամանակ են տրամադրում այդ սովորելուն:

- Քաղղեացիներն ասում են, թե աշխարհն իր բնույթով հավիտենական է և ոչ սկզբնապես ստեղծվել է, ոչ էլ հետագայում պետք է կործանվի, իսկ ամբողջ կարգն ու դասավորությունը կատարվել է ինչ-որ աստվածային նախախնամությամբ, որով և այժմ երկնքում կատարվող ամեն ինչ ոչ պատահական է տեղի ունենում, ոչ էլ ինքնահոս եղանակով, այլ ինչ-որ հաստատապես որոշված աստվածային կարգադրությամբ համեմատ: Նրանք երկար ժամանակ դիտարկելով աստղերը և նրանցից յուրաքանչյուրի շարժումն ու ազդեցությունը առավել ճշտորեն իմանալով, քան մյուս մարդիկ, կանխագուշակում են մարդկանց համար ապագայում կատարվելիք շատ
- 3 դեպքեր: Այսուհանդերձ, նրանք ասում են, թե ամենակարևորը մոլորակներ կոչված հինգ աստղերի դիտարկումն է և դրանց ազդեցության ուսումնասիրությունը, որոնց նրանք պարզապես անվանում են «թարգմաններ», կարևոր է հատկապես (ուսումնասիրել) հելլենների կողմից Կրոնոս⁸² կոչվածը, որը ամենապայծառն է և կատարվելիք շատ ավելի դեպքերի մասին է կանխահայտնում (և որը) կոչում են Արևի⁸³ (սուտղ), մյուս չորսին, մեր աստղաբանների նման, նրանք
- 4 անվանում են՝ Արեսի, Ափրոդիտեի, Հերմեսի, Զևսի (աստղեր)⁸⁴: Նրանց «թարգմաններ» անվանելու պատճառն այն է, որ մինչդեռ մյուս աստղերը չեն թափառում և հաստատապես ընթանում են միայն մեկ շրջագծով, սրանք իրենց առանձին ընթացքով շարժվելիս ցույց են տալիս ապագայում կատարվելիքները, մարդկանց համար թարգմանելով աստվածների մտադրությունը: Քանզի նրանք, ինչպես ասում են քաղղեացիք, մերթ իրենց ծագելով, մերթ մայր մտնելով, մերթ էլ իրենց գույներով կատարվելիք դեպքերի մասին
- 5 դժուշացնում են դրանք ուշադիր դիտել կամեցողներին: Որովհետև նրանք երբեմն նշում են ուժեղ հողմերը, երբեմն սաստիկ անձրևները կամ երաշտը, երբեմն գիսավոր աստղերի հայտնվելը, ինչպես նաև արևի ու լուսնի խավարումները, երկրաշարժները և, ընդհանրապես, այն բոլոր երևույթները, որոնց առաջացումը պայմանավորված է մթնոլորտի գոյությամբ, և օգնում են կամ վնասում ոչ միայն աղգերին կամ երկրներին, այլև թագավորներին ու մինչև իսկ հասարակ մարդկանց:
- 6 Սրանց շարժման շառավիղում դասավորված են, ինչպես ասում են (քաղղեացիները), երեսուն աստղեր, որոնց նրանք անվանում են աստվածների խորհրդատուներ: Սրանց կեսը վերևից հետևում են երկրի վրա կատարվող դեպքերին, մյուս կեսը՝ երկրից ներքև կատարվող դեպքերին, դիտելով մարդկանց դործերը միաժամա-

նակ և երկնային երևույթները, և ամեն տասը օրը մեկ վերևի աստղերից մեկը որպես սուրհանդակ ուղարկվում է ներքևի աստղերի մոտ, նույնպես նաև ներքևի աստղերից մեկը ուղարկվում է վերև, և նրանց այս շարժումը որոշակի է և հաստատված համարվում է միայնակի համար: Նրանք ասում են, թե այս աստվածներից դիտավորները թվով տասներկու են և սրանցից յուրաքանչյուրին քաղղեացիները վերադրել են ամիսներից և այսպես կոչված տասներկու կենդանակերպերից⁸⁵ մեկը: Սրանց միջով էլ, ասում են, իրենց ընթացքը կատարում են և՛ արևը, և՛ լուսինը, և՛ հինգ մոլորակ աստղերը, արևն իր շրջանը բոլորում է մեկ տարում, իսկ լուսինը նույն շրջանը կատարում է մեկ ամսում:

31,1 Մոլորակներից յուրաքանչյուրն ունի իր ուրույն ընթացքը և տարբեր են նրանց արագությունն ու շրջապտույտի տևողությունը: Այս աստղերն են, որ մեծապես ազդում են մարդկանց բարի կամ վատ ծնվելու վրա: Առավելապես այս աստղերի բնույթից և դրանց ուսումնասիրությունից էլ նրանք իմանում են, թե ինչ է կատարվելու մարդկանց հետ: Ասում են նաև, թե նրանք դուշակել են ոչ միայն բազում այլ թաղավորների, այլև Դարեհին⁸⁶ ջախջախած Ալեքսանդրի⁸⁷ և հետագայում թագավորած Անտիոնոսի⁸⁸ և Սելևկոս Նիկատորի⁸⁹ մասին և իրենց բոլոր դուշակությունների մեջ նրանք չեն վրիպել: Այդ ամենի մասին մենք մանրամասն կխոսենք առավել պատշաճ առիթով: Նրանք կանխագուշակում են նաև հասարակ մարդկանց ապագան և այնքան ճշգրիտ, որ իրենց փորձել ցանկացողներին հիացնում են կատարված հրաշքով և համոզում, որ այն գերադանցում է մարդկային հնարավորությունը:

4 Կենդանակերպի շրջանակից հետո նրանք տարորոշել են քսանչորս ուրիշ աստղեր ևս, որոնցից, իրենց ասելով, կեսը գտնվում է հյուսիսային կողմերում, իսկ մյուս կեսը՝ հարավային, և դրանցից ասեսանելիներին նրանք համարում են կենդանի աշխարհին վերաբերող, իսկ անտեսանելիներին հատկացված են համարում մահացածներին, ուստի և նրանց անվանել են «ընդհանուրի դատավորներ»: Եվ բոլոր վերոհիշյալ աստղերից ներքև, ասում են նրանք, ընթանում է լուսինը, որն իր ծանրության պատճառով բոլորից առավել մոտ է երկրին և իր ընթացքը կատարում է նվազագույն ժամանակում ոչ թե իր շարժման արագության, այլ կատարած շրջանի կարճության պատճառով: Նրանք ևս, հելլենների նման, ասում են, թե նրա լույսը այլ աղբյուրից է և նրա խավարումներն առաջանում են երկրի ստվերից: Ինչ վերաբերում է արեղակի խավարումներին, ապա նրանք թույլ բացատրություններ են տալիս և

- չեն համարձակվում ճշտութեամբ նկարագրել այդ երևույթը կամ
- 7 կանխորոշել դրա ժամանակը: Իսկ երկրի մասին նրանք յուրահատուկ կարծիք են հայտնում, ասելով, որ այն մակույկաձև է և սնամեջ, նրանք բազմաթիվ հավանական փաստարկներ են հորինում երկրի և տիեզերքում գտնվող այլ մարմինների վերաբերյալ, որոնց մանրամասն շարադրանքը, կարծում ենք, օտարոտի կլիներ մեր
- 8 ներկա պատմությանը: Այսուհանդերձ, պատշաճը հատուցելով, պետք է հավաստել, որ քաղղեացիները բոլոր մարդկանցից առավել շատ դիտելիքներ ունեն աստղաբանության մեջ և մեծ աշխատանք են կատարել այդ տեսությունն ուսումնասիրելու համար: Ինչ վերաբերում է տարիների այն թվին, որոնց ընթացքում, ինչպես նրանք պնդում են, քաղղեացիների դասը⁹⁰ ուսումնասիրել է տիեզերքի մարմինները, մարդ դժվար թե հավատա. քանզի նրանք հաշվում են, թե Ալեքսանդրի արշավանքներից⁹¹ դեռևս քառասունյոթ բյուր և երեք հազար սարի առաջ նրանք հնում սկսել են դիտարկել աստղերը:
- 10 Քաղղեացիների մասին մենք բավարարվում ենք այսքան խոսելով, որպեսզի ավելի չհեռանանք մեր պատմության բուն նյութից: Այժմ, մեղացիների կողմից Ասորեստանի թագավորության կործանման մասին վերևում պատմած լինելով, վերադառնանք մեր շեղված կետին:
- 32,1 Բայց քանի որ հնագույն հեղինակները տարածայն են մեղացիների տերության հզորության մասին, մեր գործն ենք համարում, ղեպքերը ճշմարտասիրաբար պատմել ցանկացողների համար, իրար կողքի շարադրել պատմագիրների տարբեր հաղորդումները:
- 2 Այսպես, Հերոդոտոսը⁹², որն ապրել է Քսերքսեսի⁹³ ժամանակ, պատմում է, թե հնում ասորեստանցիները հինգ հարյուր տարի⁹⁴ տիրելով Ասիայում, նվաճվեցին մեղացիներից, որից հետո շատ սերունդների ընթացքում ոչ մի թագավոր հանդես չեկավ վիճարկելու նրանց գերագույն իշխանությունը, բայց քաղաքները⁹⁵, որոնք ինքնավար էին եղել, կառավարվում էին դեմոկրատական կարգերով, ի վերջո, սակայն, շատ տարիներ անց մեղացիները իրենց թագավոր ընտրեցին արդարադատությամբ աչքի ընկած մի մարդու՝
- 3 Կյուաքսարես անունով: Սա առաջինն էր, որ ձեռնարկեց հարևան երկրները նվաճելու գործին և դարձավ բոլորի վրա մեղացիների իշխանության հաստատման հիմնադիրը⁹⁶: Այնուհետև նրա հետևորդներն աստիճանաբար նվաճեցին հարևան երկրների մեծ մասը և ընդարձակեցին թագավորությունը, մինչև Աստյուագեսի⁹⁷ (գահակալումը), որը հաղթվեց Կյուրոսի⁹⁸ և պարսիկների կողմից:

Մենք ցարդ խոսել ենք կատարված դեպքերից միայն կարևորների մասին, բայց հետագայում, երբ արդեն հասնենք ամեն մի դեպքի կատարված ժամանակին, այնժամ մանրամասն կնկարագրենք ամեն ինչ: Այսպես, տասնյոթերորդ օլիմպիադայի երկրորդ տարում, ըստ Հերոդոտոսի, Կյուսքսարեսն ընտրվեց մեդացիների թագավոր⁹⁹:

- 4 Իսկ Կտեսիաս Կնիդացին ապրել է Արտաքսերքսեսի¹⁰⁰ դեմ սրա եղբոր՝ Կյուրոսի¹⁰¹ արշավանքի ժամանակ. նա գերի էր ընկել, բայց իր բժշկական գիտելիքների համար ընդունվեց (պարսից) թագավորի մոտ և այնտեղ ապրեց սամնյոթ տարի, արժանանալով նրան հարգանքին: Սա, ուրեմն, իր ասելով, արքունի մատյաններից¹⁰², որոնցում պարսիկները, ինչ-որ օրենքի համաձայն, դրանցել էին հնադույն իրադարձությունները, նա մանրամասն ուսումնասիրել է յուրաքանչյուր (թագավորի) գործերը և իր պատմությունը շարադրելով, այն մատուցել է հելլեններին: Ահա նա սլատմում է, թե Ասորեստանի թագավորության անկումից հետո մեդացիները, ինչպես արդեն ասել ենք, Սարդանապալոսին հաղթած Արբակեսի թագավորության ժամանակ դարձան գլխավոր ուժը Ասիայում: Սա քսանևութ տարի թագավորել էր, որից հետո թագավորությունը ժառանգեց նրա որդին՝ Մոդակեսը, որը տիրեց Ասիայում հիստոն տարի: Նրանից հետո երեսուն տարի թագավորեց Սուլսարմոսը, հիստոն տարի՝ Արտյուկեսը, քսաներկու տարի՝ Աբրիանոս անունով (թագավորը) և քառասուն տարի՝ Արտայոսը¹⁰³:

- 33,1 Սրա ժամանակ մեծ պատերազմ տեղի ունեցավ մեդացիների և կադուսիների¹⁰⁴ միջև հետևյալ պատճառներով: Պարսիկ Պարսոնդիսը, որը հայտնի էր իր քաջությամբ, ողջամտությամբ և այլ առաքինություններով, թագավորի ընկերն էր և արքունի խորհրդի անդամներից ամենաազդեցիկը: Սա ինչ-որ ատյանում իրեն վիրավորված զգաց թագավորից և երեք հազար հետևակ զինվորներով ու հազար հեծյալներով փախավ կադուսիների մոտ, որոնցից մեկին, որն այս վայրերում ամենաազդեցիկն էր, նա կնության էր տվել իր քրոջ:
- 3 Եվ ահա, դառնալով ապստամբ, նա ամբողջ ժողովրդին համոզեց պաշտպանելու ադատությունը և իր քաջության պատճառով ընտրվեց զորավար: Այնուհետև, տեղեկանալով, որ իր դեմ մեծ զորք է գումարվում, նա համայն կադուսիներին դիմեց և բանակեց դեպի երկիրը բերող անցումների առաջ, իր հետ ունենալով ընդամենը քսան
- 4 բյուրից ոչ պակաս զորք: Այսուհանդերձ, երբ թագավոր Արտայոսը արշավեց իր վրա ութսուն բյուր զորքով, ճակատամարտում ինքի

հաղթեց (թագավորին) և (նրա զորքից) ավելի քան հինգ բյուր մարդ կոտորեց, իսկ մնացած բոլորին գուրս մղեց կաղուսիների երկրից: Այդ պատճառով էլ նա հիացրեց տեղաբնիկներին և թագավոր ընտրվելով, նա մշտապես ավարի ենթարկեց Մեղիան, և ամբողջ նրկիրը ավերածության մատնեց: Ու երբ նա մեծ փառք վաստակեց և ծերության պատճառով արդեն մահամերձ էր, իր մոտ կանչելով իշխանության ժառանգորդին, նրանից պահանջեց երգվել, որ կաղուսիների թշնամանքը մեղացիների դեմ երբեք չի վերանալու և ավելացրեց, որ եթե խաղաղություն հաստատեն, ապա վերջնականապես կբնաջնջվեն և իր սերունդը, և համայն կաղուսիները:

5 Ահա այս պատճառներով էլ կաղուսները մշտական թշնամանք են ունեցել մեղացիների հանդեպ և երբեք չեն հպատակվել նրանց թագավորներին, մինչև որ Կյուրոսը իշխանությունը շփոխանցեց պարսիկներին:

34,1 Արտաշոսի մահից հետո մեղացիների վրա թագավորեց Արտյունեսը՝ քսաներկու տարի, իսկ Աստիբարասը՝ քառասուն: Սրա ժամանակ պարթևներն ապստամբեցին մեղացիների դեմ և երկիրն ու քաղաքը հանձնեցին սակերին¹⁰⁵: Այդ պատճառով էլ պատերազմ ծագեց սակերի և մեղացիների միջև, որը տևեց շատ տարիներ և ոչ քիչ ճակատամարտերից ու երկուստեք շատ զոհեր տալուց հետո, վերջապես նրանք խաղաղություն հաստատեցին հետևյալ պայմաններով. պարթևները պետք է հպատակվեն մեղացիներին, բայց նրանցից յուրաքանչյուրը պետք է պահպանի իր նախկին տիրույթները և առհավետ նրանք պետք է մնան բարեկամներ և դաշնակիցներ:

3 Այդ ժամանակ սակերի վրա թագավորում էր մի կին՝ Չարինա անունով. սա, առավել քան որևէ մի այլ կին սակերի մեջ, աչքի էր ընկնում իր ռազմասիրտությամբ և համարձակությամբ ու գործերով: Այս աղգի կանայք ընդհանրապես կտրիճ են և իրենց ամուսինների հետ հաղորդակից են դառնում պատերազմական վտանգներին, բայց այս կինը, ինչպես ասում են, ամենանկատելին էր իր գեղեցկությամբ և բոլորին հիացնում իր մտածելակերպով և ձեռնարկած գործերով: Քանզի նա հպատակեցրեց մերձակայքում ապրող բարբարոսներին, որոնք պարծենում էին իրենց անվախությամբ և փորձում էին ստրկացնել սակերի ազգը, իսկ իր երկրի մեծ մասը նա բարեկրթեց և ոչ միայն շատ քաղաքներ հիմնեց, այլև իր ամբողջ ցեղակիցների կյանքը դարձրեց ավելի երջանիկ: Այդ պատճառով էլ իր երկրի մարդիկ, նրա մահից հետո իբրև երախտագիտություն նրա կատարած բարեգործությունների համար և ի հիշա-

տակ նրա առաքինութեան, դամբարան կառուցեցին, որն իրենց մոտ բուրբ եղածներից դերաղանց էր: Նրանք եռանկյունի բուրդ կտնգնեցրին, որի յուրաքանչյուր կողմը երեք ասպարեղ երկարություն ուներ, իսկ բարձրությունը մեկ ասպարեղ էր ու վերջանում էր սրածալր գագաթով: Նրա դամբարանի վրա կանգնեցրին նաև հսկայական ոսկե արձան և մատուցեցին հերոսներին հատուկ հարգանք և ամեն տեսակ ծեսեր կատարեցին ավելի մեծ շուքով, քան մինչ այդ մատուցել էին նրա նախնիներից որևէ մեկին:

6 Երբ Աստիբարասը, մեղացիների թագավորը, ծերունի հասակում մեռավ Եկբատանայում, իշխանությունը ժառանգեց նրա որդին՝ Ասպանդասը՝ որին հելլենները անվանում են Աստյուագես: Սակործանվեց պարսիկ Կյուրոսի կողմից, և թագավորությունն անցավ պարսիկներին, այդ ամենի մասին մենք մանրամասն և ճշգրիտ կպատմենք իրենց տեղում:

7 Ահա ասորեստանցիների և մեղացիների թագավորության, ինչպես նաև նրանց վերաբերյալ հեղինակների տարակարծության մասին, մեր կարծիքով, բավական խոսեցինք:

43,1 Այժմ կխոսենք սկյութների մասին, որոնք ապրում են (Հընդկաստանին) սահմանակից երկրում: Սրանք սկզբնապես բնակվելիս են եղել փոքր տարածության վրա, բայց հետագայում, աստիճանաբար աճելով, իրենց հզորությամբ ու քաջությամբ ընդարձակ երկրներ նվաճեցին և իրենց ազդը բարձրացրին մեծ իշխանության
2 և փառքի: Այսպես, նրանք սկզբում ընդհանրապես փոքր թվով բնակվում էին Արաքսես գետի մոտ և արհամարհված էին իրենց աննշան լինելու պատճառով, բայց քանի որ նրանց վաղագույն թագավորներից մեկը ռազմասեր էր և աչքի ընկնող ռազմավար, նրանք կարողացան նվաճել մինչև Կովկասյան լեռնային երկիրը, ինչպես նաև դաշտերը օվկիանոսի և Մայոտիա լճի երկայնքով և մնացած երկիրը մինչև Տանայիս գետը¹⁰⁶,

3 Հետագայում, ինչպես պատմում են սկյութական առասպելները, նրանց մոտ հայտնվեց հողից ծնված մի կույս, որի մարմնի վերին մասերը մինչև գոտկատեղը կանացի էին, իսկ ստորին մասերը՝ օձակերպ: Սրա հետևի կենակցելուց ծնվեց մի տղա, Սկյութես անունով: Ու քանի որ սա առավել հայտնի դարձավ, քան իր նախորդները, ապա ժողովուրդները նրա անունով կոչվեցին սկյութներ: Այս թագավորի հետնորդներից իրենց առաքինությամբ առավել հռչակվեցին երկու եղբայր, մեկի անունը Պալոս, մյուսինը՝

4 Նապես¹⁰⁷, Սրանք աչքի ընկնող գործեր կատարեցին և թագավորությունը բաժանեցին իրար միջև, որից հետո ժողովրդի մի մասը:

կոչվեց պալեր, մյուս մասը՝ նապեր: Ինչ-որ ժամանակ անց այս
թագավորների հետնորդներն իրենց արտակարգ քաջության և ուզ-
մավարության շնորհիվ ընդարձակ երկիր նվաճեցին Տանայիս գե-
տից այն կողմ, մինչև Թրակիա և իրենց զորքով արշավելով նաև
մյուս կողմը¹⁰⁸, իրենց հզորությունը տարածեցին մինչև Նեղոս
5 գետը՝ Եգիպտոսում¹⁰⁹: Եվ ահա, (Թրակիայի և Եգիպտոսի) միջև
ընկած շատ հզոր ժողովուրդների ստրկացնելով, նրանք սկյութների
տիրապետությունը տարածեցին արևելքում մինչև օվկիանոսը¹¹⁰:
Իսկ մյուս կողմում՝ մինչև Կասպից ծովն ու Մայոտիս լիճը: Քանզի
այս ազգը շատ հղորացավ և անվանի թագավորներ ունեցավ, որոնց
անունից էլ (ժողովրդի) մեկ մասը կոչվեց սակեր, մեկ մասը՝ մաս-
սադեթներ¹¹¹, մեկ մասը՝ արիմասպներ և այսպես շատ ուրիշ (ցե-
6 դեր): Այս թագավորների կողմից էր, որ նվաճված ժողովուրդներից
շատերը վերարևակեցվեցին և սրանցից երկուսը դարձան իոռնոր
գաղութներ: Սեկը կաղամված էր ասսիրիացիներից¹¹², որոնք քշվել
էին Պափլագոնիայի և Պոնտոսի միջև ընկած երկիրը, իսկ մյուսը
կաղամված էր Մեդիայից քշվելուց հետո Տանայիսի մոտ հաստատ-
7 վածներից, որոնք կոչվեցին սավրոմատներ: Սրանք շատ տարիներ
անց, հզորանալով, ավերեցին Սկյութիայի մեծ մասը և բոլոր դեր-
վածներին ոչնչացնելով, երկրի մեծագույն մասը ամայացրին:

44,1 Այնուհետև Սկյութիայում անիշխանություն ծագեց ու թագավո-
րեցին իրենց արիությամբ աչքի ընկած կանայք: Քանզի այդ ազգերի
մոտ կանայք պատերսուզմելու համար մարզվում են սղամարգկանց
և ման և քաջությամբ շեն զիջում նրանց: Ուստի և ականավոր կա-
նայք շատ մեծագործություններ կատարեցին ոչ միայն Սկյութիա-
2 յում, այլև սահմանակից երկրներում: Այսպես, երբ պարսից թա-
գավոր Կյուրոսը, իր ժամանակի ամենահզոր տիրակալը, նշանա-
կալից ուժերով արշավեց Սկյութիա, սկյութների թագուհին ոչ
միայն կոտորեց պարսից զորքը, այլև Կյուրոսին գերի վերցրեց և
խաչը հանեց¹¹³: Ամազոնների¹¹⁴ ազգը ևս, երբ արգեն կաղամավոր-
վել էր, իր արիությամբ այնքան աչքի ընկավ, որ նրանք ոչ միայն
սահմանակից շատ երկրներ արշավեցին, այլև Եվրոպայի և Ասիայի
3 մի մեծ մասը ավերեցին: Արդ, քանի որ մենք հրշատակեցինք ամա-
զոններին, ուստի անպատշաճ չենք համարում պատմել նրանց մա-
սին, թեպետև մեր ասելիքը իր անսովորության պատճառով կարող
է թվալ առասպելանման:

45,1 Արդ, Թերմոզոնտ¹¹⁵ գետի մոտ տիրում էր մի ազգ, որտեղ իշ-
խանությունը կանանց ձեռքին էր և կանայք նույնպես զբաղվում էին
ուղամական զործով, ինչպես տղամարդիկ: Պատմում են, որ նրան-

- ցից մեկը, որը թագավորական իշխանութիւնն ունէր, առանձնապէս հռչակվեց իր արիութեամբ և զորութեամբ: Նա կանանցից բանակ կազմակերպեց և նրանց վարժեցնելով, հարևան մի շարք ժողովուրդներին նվաճեց: Ու քանի որ նրա առաքինութիւնը և հռչակը հետզհետեւ ավելանում էր, նա արշավեց մոտիկ երկրներում ապրող ազգերի վրա, ու քանի դեռ բախտը նրա համար բարենպաստ էր ընթանում, նա այնքան հպարտացավ, որ իրեն անվանեց Արեսի¹¹⁶ դուստր: Նա տգամարդկանց հատկացրեց բուրգ մանելու և տնային կանացի աշխատանքները: Նա օրենքներ հաստատեց, որոնց համաձայն կանայք պետք է զբաղվեին պատերազմական գործերով, իսկ տղամարդիկ ենթարկվում էին ստորացման և ստրկացման:
- 3 Ծնված երեխաներից արունների սրունքները և բազուկները այլանդակում էին և նրանց ոչ պիտանի դարձնում ռազմական գործերի համար, իսկ էգերի աջ ստինքը կիզում էին, որպէսզի մարմնի գարգացման ժամանակ չաճի ու շխանգարի (նետ արձակելիս), այդ
- 4 պատճառով էլ ամազոնների ազգը ստացավ այդ անունը¹¹⁷: Ընդհանրապէս այդ կինը երևելի էր իր իմաստութեամբ և ռազմավարական կարողութեամբ, նա մի խոշոր քաղաք հիմնեց Թերմոզոնտի գետաբերանին, այն կոչեց Թեմիսկլուրա և այնտեղ կառուցեց հռչակավոր պալատներ, իսկ իր արշավանքների ժամանակ մեծ ուշադրութիւն դարձրեց ռազմական կարգապահութեան վրա և նվաճեց
- 5 սահմանակից բոլոր երկրները, մինչև Տանայիս գետը: Եվ պատմում են, որ նա այսպիսի գործերից հետո, երբ ինչ-որ պատերազմի ժամանակ փայլուն կերպով կովում էր, սպանվեց:

- 46,1 Իշխանութիւնը ժառանգեց սրա դուստրը, որը նախանձախնդիր եղավ իր մոր առաքինութեան և իր մի շարք գործերով գերազանցեց մորը: Նա աղջիկներին դեռևս վաղ հասակից վարժեցնում էր որսորդութեան և ամեն օր մարզում էր ռազմական վարժութիւններով, նաև մեծասքանչ տոնախմբութիւններ հաստատեց Արեսին և
- 2 Տավրոպոլոս մականվանյալ Արտեմիսին¹¹⁸: Արդ, նա, արշավելով Տանայիս գետից այն կողմն ընկած երկիրը, նվաճեց բոլոր աղղերին, մինչև Թրակիա, վերադառնալով իր երկիրը հարուստ ավարով, նա վերոհիշյալ աստվածների պատվին հոյակապ տաճարներ կառուցեց և իր հպատակների հանդէպ ցուցաբերած մեղմաբարո վերաբերմունքի շնորհիվ արժանացավ մեծադույն հավանութեան: Նա արշավեց նաև մյուս ուղղութեամբ և նվաճեց Ասիայի մեծ մասն ու իր զորքը հասցրեց մինչև Սիրիա:

58,1

Ավանդութիւնը պատմում է նաև, թե այդ աստվածուհին¹¹⁹ ծնվել է Փոյուգիայում: Տեղաբնիկների մի զրույցի համաձայն, հնում Մեյոնը եղել է Փոյուգիայի և Լյուգիայի թագավոր: Սա, ամուսնանալով Դինդյումեի հետ, ծնում է աղջիկ զավակ, բայց, շկամենալով նրան պահել ու դաստիարակել, լքեց (երեսային) Կյուբելոն կոչված լեռան վրա: Այստեղ էլ, ինչ-որ աստվածային նախախընամությամբ, ընծառյուծներն ու իրենց ուժով առավել հայտնի այլ քաղաններ իրենց պտուկը հրամցրին երեսային ու կերակրեցին, 2 իսկ ինչ-որ կանայք, որոնք հոտերն էին արածում այդ վայրում, նկատեցին սեղի ունեցածը և, զարմանալով այդ տարօրինակ երեվույթով, վերցրին երեսային և նրան, վայրի անունով, կոչեցին Կյուբելե: Եվ երեսան քանի մեծանում, այնքան գերազանցում էր դեղեցկությամբ և ողջամտությամբ, ինչպես նաև հիացնում էր իր իմաստությամբ, քանզի նա առաջինն էր, որ ստեղծեց բազմափող սրինդր՝ և խաղերին ու պարերին նվագակցելու համար հնարեց ծնծղաններն ու թմբուկը և, դրանից բացի, նա սովորեցրեց քավության միջոցով բուժել հիվանդ անասուններին և փոքր երեսաներին: 3 Ու քանի որ երեսաները փրկվել էին նրան ուղղված մաղթանքների միջոցով և, մեծ մասամբ, եղել էին նրա գրկում, ինչպես նաև նրանց հանդեպ ցույց տված իր խնամքի և հոգատարության շնորհիվ, բուրրի կողմից անվանվեց լեռնային մայր:

45,1

Քանի որ (մեր) պատմության ընթացքը թելադրում է անդրադառնալ օտարասպանության¹²⁰ պատճառներին, ուստի անհրաժեշտ ենք համարում կարճառոտ պատմել այդ մասին, առավել ևս, որ այդպիսի շեղումը միանգամայն տեղին է Արգոնավորդների գործերի մասին պատմելու համար: Այսպես, պատմում են, թե Հելիոսը¹²¹ ունենում է երկու որդի՝ Այետես և Պերսես. սրանցից Այետեսը թագավորում է Կոլխիսում¹²², իսկ մյուսը՝ Տավրիկե (երկրում)¹²³: 2 Երկուսն էլ հատկապես աչքի էին ընկնում իրենց դաժանությամբ: Պերսեսին ծնվեց դուստր՝ Հեկատեն, որն իր համարձակությամբ և անօրեննությամբ գերազանցեց հորը: Նա որսորդության սիրահար

էր և անհաջողութեան դեպքում գազանների փոխարեն մարդկանց էր նետահարում: Նա, հմուտ լինելով նաև դեղերի մահացու խառնուրդներ պատրաստելու գործին, ինքն էր հնարել ակոնիտոն¹²⁴ կոչված թույնը և փորձելով յուրաքանչյուր դեղի զորութիւնը, դրանք խառնում էր օտար հյուրերին մատուցվող ճաշերին: Այս գործերում մեծ փորձ կուտակելով, նա բոլորից առաջ թունավորեց իր հորը և այդպիսով ժառանգեց նրա թագավորութիւնը, այնուհետև Արտեմիսին տաճար հիմնեց և կարգադրեց, որ իրենց մոտ ափ ելնող օտարներին պետք է զոհաբերել աստվածուհուն, դրանով իսկ նա

3 հռչակվեց իր դաժանութեան համար: Այնուհետև ամուսնանալով Ալեքսանդր հետ, ծնեց դուստր՝ Կիրկե¹²⁵ և Մեդեա, ինչպես նաև մի տղա՝ էգալևս:

Ասում են, Կիրկեն ևս իրեն նվիրելով ամեն տեսակ դեղեր հնարելու գործին, ինքը նույնպես հայտնաբերել է բաղամզան բնույթի և անհավատալի գորութեան արմատներ. քանզի նա իր մորից՝ Հեկատեից քիչ բան չէր սովորել, իսկ ինքը ևս իր ջանքերով հայտնաբերեց շատ ավելին, այնպես, որ նա ոչ մի ուրիշ կնոջ համար իրեն

4 գերազանցելու հույս չթողեց դեղեր հնարելու գործում: Նա կնութեան տրվեց սարմաթների թագավորին, որոնց ոմանք անվանում են սկյութներ: Եվ նա սկզբում ամուսնուն թունավորելով սպանեց, իսկ այնուհետև ժառանգելով թագավորութիւնը, իր հպատակները նկատմամբ բազում դաժանութիւններ և բռնութիւններ գործադ-

5 րեց: Այդ պատճառով էլ նա հեռացվել է իշխանութիւնից և, զրուցագիրներից ոմանց պատմելով, փախել է օվկիանոս և անբնակ մի կղզի¹²⁵ գտնելով, հաստասովել է այնտեղ իրեն փախստակից կանանց հետ, իսկ պատմիչներից ոմանց համաձայն, նա լքել է Պոնտոսը և բնակվել է Իտալիայի մի հրվանդանում, որը մինչև այսօր էլ նրա անունով կոչվում է Կիրկենոն¹²⁷:

46,1 Իսկ Մեդեայի մասին պատմում են, թե նա իր մորից և քրոջից սովորել էր բոլոր դեղերի հատկութիւնները, բայց դրանք օգտագործում էր բոլորովին հակառակ նպատակներով: Քանզի նա իրենց մոտ ափ դուրս եկող օտարականներին ամեն կերպ աշխատում էր փրկել վտանգներից, մերթ թախանձագին պաղատելով խնդրում էր հորը՝ փրկելու կործանման դատապարտվածներին, մերթ էլ նրանց ազատելով բանտից, դրանով իսկ աղետի ենթարկվածներին փրկելու հնար ստեղծում: Քանզի Ալեքսանդր, մասամբ իր իսկ դաժանութեան պատճառով, մասամբ էլ իր կնոջ՝ Հեկատեի դրդմամբ, համաձայն-

2 վել էր օտարասպանութեան սովորութիւն: Բայց քանի որ Մեդեան ամեն անգամ ավելի ու ավելի էր դիմադրում իր ծնողների մտադ-

րություններին, Այետեսը, ինչպես պատմում են, կասկածելով իր աղջկան զավաղրության մեջ, նրան դատապարտել է ազատ բանտարկության: Մեղեան, սակայն, փախչելով ապաստանում է ծովափին գտնվող Հելիոսի մի սրբարանում: Այդ ժամանակ էլ Արգոնավորդները¹²⁸, որոնք մեկնել էին Տավրիկե (Քերակղզուց), ղիշերով հասան Կոլխիս, ճիշտ այս վերոհիշյալ սրբարանը: Այստեղ էլ պատահելով Մեղեային ծովափին թափառելիս, և նրանից իմանալով օտարասպանության սովորութի մասին, նրանք զնահատեցին կույսի բարեհողությունը և նրան հայտնելով իրենց մտադրությունը, դարձյալ նրանից իմացան օտարների հանդեպ իր ցուցաբերած հարգանքի համար հոր կողմից իրեն սպառնացող վտանգի մասին: Ուրանի որ նրանց թվաց, թե շահերն համրնկնում են, Մեղեան խոստացավ նրանց գործակցել, մինչև ի կատար ածեն իրենց առաջադրված գործը, իսկ Յասոնը¹²⁹ երզվելով հավաստիացրեց նրան, թե ամուսնանալով նրա հետ, նրան կդարձնի իր կենակիդր ամբողջ կյանքում: Այնուհետև Արգոնավորդները նավի մոտ պահակներ թողնելով, գիշերը Մեղեայի հետ ճանապարհ ընկան՝ ձեռք բերելու ոսկեգեղմ մորթին, որի մասին անհրաժեշտ է այժմ պատմել, որպեսզի այս պատմության վերաբերող ոչինչ անհայտ չմնա:

47,1

Առասպելները պատմում են, թե Փրիկսոսը, Աթսիմասի¹³⁰ որդին, իր խորթ մոր դավերի պատճառով, վերցնում է իր քույր Հելլենին և փախչում Հելլադայից: Ու երբ սրանք, ինչ-որ աստվածային նախախնամությամբ Եվրոպայից անցնում էին Ասիա, ոսկեգեղմ խոյին հեծած, աղջիկն ընկնում է ծովը, որը նրա անունից կոչվել է Հելլենսպոնտոս¹³¹, իսկ Փրիկսոսը շարունակելով իր ճանապարհը Պոնտոսում¹³², տարվում է դեպի Կոլխիս, որտեղ էլ, նախապես իրեն տրված ինչ-որ պատգամի հետևելով, զոհում է խոյը և նրա մորթին 2 նվիրաբերում Արեսի սրբարանին: Այնուհետև, երբ Կոլխիսում թագավորում էր Այետեսը, գուշակություն հայտնեց, որ սրա կյանքի վախճանը կլինի այն ժամանակ, երբ օտարականներ նավից ափ դուրս գալով, տանեն ոսկեգեղմ մորթին: Այս պատճառով էլ, ինչպես նաև իր դաժանությունից մղված, Այետեսը կարգ հաստատեց, որի համաձայն պետք է օտարներին զոհաբերել, որպեսզի կոլխերի դաժանության համբավը տարածվի բոլոր երկրներում և օտարներից ոչ ոք չհամարձակվի ոտք դնել այդ երկիրը: Այնուհետև սրբարանը ևս պատեց պարսպով և բազմաթիվ պահակներ հաստատեց, որոնք բերված էին Տավրիկե երկրից, քանզի նրանց մասին հելլենները հրեշավոր առասպելներ էին հորինել: Այսպես, զրույց էր տարածված, թե հրաշունչ ցուլեր կան սրբարանի շուրջ և թե անքուն մի

վիշապ պահպանում է մորթին, դա ստաշացել է անունների նմա-
 նությունից և տավրյանների անունը փոխանցվել է եզներին¹³⁰,
 նրանց գորության պատճառով, իսկ դաժան օտարասպանությունը
 պատճառ է դարձել առասպելաբանելու, թե ցուլերը հուր են արտա-
 շնչում, նույնպես և սրբարանին հսկողի Ռրակոն անունը պոետ-
 ների կողմից վերադրվել է հրեշային և ահարկու դադանին¹³¹:

4 նույնպիսի առասպելներից է դալիս նաև Փրիկսոսին վերաբերող
 պրուլցր: Որովհետև, ինչպես ոմանք ասում են, նա ճանապարհորդել
 է նավի վրա, որի ցուլին ամրացված է եղել խոյակերսյ սրձան,
 իսկ Հելլեն տառապել է ծովախտից և այդ պատճառով էլ նավակո-

5 դից դեպի դուրս կոացած լինելով, ընկել է ծովը: Ուրիշները դար-
 ձյալ պատմում են, թե սկյութների թագավորը, որը Այետեսի փե-
 սան էր, պատահաբար այդ նույն ժամտնակ, երբ Փրիկսոսը և նրան
 ուղեկցող ստրուկը գերի էին վերցվել, այցելության եկած լինելով
 կոլխերին, կրքով է լցվում տղայի հանդեպ, նրան իբրև պարզև ստա-
 նում է Այետեսից և սիրելով հարստացած որդու ուման, նրան է թող-
 նում թագավորությունը: Իսկ ուղեկցող ստրուկին, որի անունը
 Կրիոս¹³⁵ էր, դոհաբերեցին աստվածներին և մարմինը մաշկազեր-
 ծելուց հետո, մորթր, իրենց ինչ-որ սովորույթի համաձայն, գամե-

6 լով կախեցին տաճարում: Երբ արդեն հետադալում Այետեսը գու-
 շակություն ստացավ, ինչ որ կյանքի վախճանը կլինի այն ժամա-
 նակ, երբ օտարականները ափ դուրս դալով տանեն Կրիոսի մորթր,
 թագավորը, ինչպես պատմում են, պարսպով պատեց սրբարանը
 և պահակներ հաստատեց, ինչպես նաև ոսկով սլատեց մորթր, որ-
 պեսդի այն իր փայլի պատճառով պինդորների կողմից արժանա-
 նա առավել ուշադիր պահպանման: Այս բոլորի համար ընթերցող-
 ներն իրենք պետք է դատողություններ անեն, յուրաքանչյուրն իր
 նախընտրության համաձայն:

48,1 Պատմում են, թե Մեդեան Արգոնավորդներին առաջնորդեց դե-
 պի Արեսի սրբարանը, որը դստնվում էր քաղաքից յոթանասուն աս-
 պարեղ հեռավորության վրա. քաղաքն այդ կոչվում էր Սյուբարիս,
 որտեղ և գտնվում էին կոլխերի (թագավորի) պալատները, նա մո-
 տենալով դարբասներին, որոնք գիշեր ժամանակ փակվում էին.

2 տավրիկյան լեզվով ձայնեց պահակներին: Ու երբ դինվորները հո-
 ժարությամբ բաց արին դարբասները նրա առաջ որպես թագավորի
 դուստր, Արգոնավորդները, ինչպես պատմում են, մերկացրած սրե-
 բով ներխուժեցին և բարբարոսներից շատերին սպանեցին, իսկ
 մյուսներին, որոնք ահաբեկվել էին անսպասելի դեպքից, դուրս քշե-

3 ցին սրբարանից և, վերցնելով մորթին, շտապեցին վերադառնալ

դեպի նավը: Մեղեան ևս, որը օգնում էր նրանց, իր դեղերով սպանեց վիշապին, որը, առասպելի համաձայն, անքուն հսկում էր մորթու շուրջը, և Յասոնի հետ իջավ դեպի ծովը: Փրկվելու համար փախուստի դիմած տավրյանները կատարված հարձակման մասին հաղորդում են թագավորին և Այետեսը, ինչպես զրույցն է ասում, իր թիկնապահ զինվորների հետ դուրս եկավ հալածելու հելլեններին և նրանց պատահեց ծովափին: Անմիջապես կովի բռնվելով նրանց հետ, Արգոնավորողներից մեկին՝ Իփիթոսին, Եվրիսթեսի եղբորը, սպանեց. Եվրիսթեսը նա էր, ով կարգադրել էր Հերակլեսին¹³⁶ կատարելու իր սխրագործությունները, բայց երբ իր զինվորների բազմությամբ մյուսներին շրջապատեց և առավել բուռն կովի բռնվեց, նա սպանվեց Մելեսգրոսի կողմից: Այնժամ էլ, երբ թագավորն ընկավ, հելլեններն ավելի ևս ոգևորվեցին և կոլխերին փախուստի մասնելով, նրանց հալածեցին ու մեծ մասին սպանեցին:

56,1 Ընդհանրապես, ողբերգակների հնարած առասպելների շնորհիվ, Մեղեայի անվան շուրջ տարբեր բնույթի ղանաղան պատումներ են առաջացել, ոմանք, օրինակ, աթենացիներին հաճոյանալու նպատակով, ասում են, թե նա իր հետ վերցնելով էգեսից¹³⁷ ծնած որդուն՝ Մեղոսին, փրկություն է գտել Կոլխիսում, այդ ժամանակ էլ Այետեսը, որն իր եղբոր՝ Պերսեսի ձեռքով զահրնկեց էր արվել, վերանվաճել է իր իշխանությունը այն բանից հետո, երբ Մեղոսը, Մեղեայի որդին, սպանել է Պերսեսին: Այնուհետև Մեղոսը, մեծ զորքի գլուխ անցած, արշավել է Պոնտոսից այն կողմ ընկած Ասիա

2 և նվաճել է այն երկիրը, որն իր անունով կոչվել է Մեղիա: Բայց քանի որ, մեր կարծիքով, երկար կլիներ Մեղեայի մասին եղած բոլոր առասպելները շարադրել և ոչ իսկ այդ բանն անելու անհրաժեշտությունը կա, ուստի մենք կպատմենք սոսկ այն դեպքերի մասին, որոնք վերաբերում են իրենց՝ Արգոնավորողներին:

Գիրք 9 (հատվածներ)¹³⁸

2,1 Կրեսոսը¹³⁹, լյուդացոց¹⁴⁰ թագավորը, մեծ զորք ստեղծեց և խոշոր քանակությամբ արծաթ ու ոսկի կուտակած լինելով, իր մոտ հրավիրում էր հելլեններից իմաստնազույններին և նրանց հետ որոշ ժամանակ անցկացնելուց հետո, հարուստ ընծաներով ճանապարհ էր դնում նրանց, մեծապես օգտվելով նրանց առաքինություններից: Մի անգամ էլ Սոլոնին¹⁴¹ հրավիրելով իր մոտ և նրան ցույց տալով

2 իր զորքն ու հարստությունը, հարցրեց, թե արդյո՞ք նա որևէ մեկին

առավել երանելի է համարում իրենից: Իսկ Սուլոնը, իմաստասեր-
ներին բնորոշ անկեղծությամբ, պատասխանեց նրան, թե կենդանի
մարդկանցից և ոչ մեկին, քանզի նա, ով իր երջանկության պատճա-
ռով մեծամտանում է և կարծում, թե բախտը իր գործակիցն է, չգի-
տե, թե այն արդյո՞ք մինչև վերջ հավատարիմ է մնալու իրեն: Այդ
իսկ պատճառով, ասաց նա, պետք է սպասել կյանքի վախճանին
և եթե այդ ժամանակ նույնպես նա բարեբախտ լինի, ապա այդ
դեպքում միայն կարելի է նրան երանելի համարել: Եվ հետա-
3 գալում, երբ Կրեսոսը գերվել է Կյուրոսից¹⁴² և պետք է մեծ իա-
րույկի վրա այրվեր, նա հիշեց Սուլոնի կողմից իրեն ուղղված
խոսքերը: Եվ ահա, երբ արդեն կրակը բոցավառվում էր իր շուրջ,
4 նա շարունակ տալիս էր Սուլոնի անունը: Եվ Կյուրոսը մարդ
ուղարկեց իմանալու, թե ո՞րն է Սուլոնի անունը շարունակ վկա-
յակոչելու պատճառը և երբ իմացավ իրականությունը, փոփոցեց իր
մտադրությունը և Սուլոնի պատասխանը ճշմարիտ համարելով,
վերջ տվեց իր արհամարհանքին: ու խարույկը հանգցնելով, փրկեց
Կրեսոսին և այնուհետև նրան համարեց իր ընկերներից մեկը¹⁴³:

22 Կյուրոսը, Կամբյուսեսի և Մանդանեի՝ մեղացիների թագավոր
Աստյուագեսի դստեր, որդին, քաջությամբ և խելամտությամբ և
այլ առաքինություններով գերազանցում էր իր ժամանակի բոլոր
մարդկանց. քանզի հայրը նրան դաստիարակում էր արքայավայել,
ներշնչելով նրա մեջ ձգտում դեպի լավագույնը: Եվ ակնհայտ դար-
ձավ, որ նա պետք է ձեռնամուխ լիներ մեծագործությունների, քա-
նի որ նա իր (երիտասարդ) տարիքի համեմատ դրսևորում էր ավե-
լի բարձր առաքինություններ:

23 Աստյուագեսը, մեղացիների թագավորը, պարտված և ամոթալի
կերպով փախած լինելով, զայրույթով էր լցված զինվորների հան-
դեպ և բոլոր նրանց, որոնք հրամանատարակսին պաշտոնների էին
նշանակված, հեռացնելով, փոխարենը ուրիշներին հստատեց.
իսկ փախուստի համար պատասխանատու եղողներին բոլորին ընտ-
րեց, և սպանեց, կարծելով, թե նրանց պատժելու միջոցով նա կըս-
տիպի մյուսներին վտանգի պահին քաջություն ցուցաբերել. քանզի
նա բնավորությամբ դաժան էր և խիստ: Սակայն, բազմությունը
չահաբեկվեց նրա խստությունից, այլ, ընդհակառակը, ամեն մեկը
ատելով նրա բռնությունը և գործերի անօրենությունը, ցանկանում
էր դրության փոփոխություն: Այդ իսկ պատճառով խումբ-խումբ
դումարվում էին և խռովարար ճառեր ասում, մեծ մասամբ իրար
կոչ անելով պատժել նրան:

24 Կյուրոսը, ինչպես պատմում են, ոչ միայն քաջաբար էր պատերազմում, այլև իր հպատակների նկատմամբ հարգալից էր և մարդասեր: Այդ իսկ պատճառով պարսիկները նրան անվանեցին հայր:

31,1 Երբ Կրեսոսը պատրաստվում էր արշավանքի պարսիկ Կյուրոսի դեմ, հարցում կատարեց պատգամատանը¹⁴⁴: Տրված պատգամն այսպիսին էր. «Կրեսոսը Ալյուսն¹⁴⁵ անցնելով մեծ տերութուն կկործանի»: Նա երկիմաստ պատգամը իր նախրնս:րած ձևով ընկալեց և դժբախտության մատնվեց:

2 Երկրորդ անգամ նա դարձյալ դիմեց հարցումով, թե արդյո՞ք երկար ժամանակ ինքր պետք է վայելի իր իշխանությունը և պատռամախոսն ասպես ասաց.

«Այն օրը, երբ ջորին դառնա Խապավորը մեղացոց
Ով լյուդացի դեղասրունք, պետք է փախչես անհապաղ
Խճառսուտ ափր Հերմոսի¹⁴⁶ առանց վախ ու ամոթի»:

Նա «ջորի» ասելով նկատի ունեց Կյուրոսին, քանզի սրա մայրը մեղացի էր, իսկ հայրը՝ պարսիկ:

3 Կյուրոսը, պարսից թագավորը, իր ամբողջ զորքերով հայտնչվելով Կապպադովկիայի կիրճում, քարոզներ ուղարկեց Կրեսոսին, մի կողմից նրա տերությունը լրտեսելու համար, մյուս կողմից նրան հաղորդելու, թե Կյուրոսը ներում է նրա նախկին մեղանշումները և կարգում է նրան Լյուդիայի սատրապ, եթե նա դալով Կյուրոսի դուռը, մյուսների նման խոստովանի, թե նրա ստրուկն է: Բայց Կրեսոսը պատասխանեց նրանց, որ առավել պատշաճ կլինի, եթե Կյուրոսը և պարսիկներն իրենք ենթարկվեն և ստրկանան Կրեսոսին, քանի որ նրանք անցյալ ժամանակներում եղել են մեղացիների ստրկության տակ, մինչդեռ ինքր երբեկից այլոց հրամանները չի կատարել:

33,2 Ասում են, թե Կրեսոսը Կյուրոսի դեմ պատերազմելուց առաջ պատգամավորներ ուղարկեց Դելփի¹⁴⁷ հարցնելու, թե ինչպե՞ս իր որդին պետք է խոսել կաբողանար¹⁴⁸: Եվ Պյութիան¹⁴⁹ պատասխանեց.

«Ով լյուդական ծնունդ. թեև լազում մադդկանց թագավոր,
Բայց դեռ մանուկ ես դու Կրեսոս. լավ է երբեք չուզենաս
Քո պալատում լսել որդուդ բարբարելը ցանկալի:
Ավելի լավ է քեզ համար, թե նա մնա անհաղորդ,
Քանզի նա խոսքն իր առաջին դժբախտ մի օր պիտ ասի»¹⁵⁰:

34,1 Կյուրոսը ենթադրելով, որ Կրեսոսը բարեպաշտ մարդ է, քանի որ տեղատարափ եղավ և մարեց (խարույկի) բոցը, ինչպես նաև մտաբերելով Սոլոնի պատասխանը, Կրեսոսին պահեց իր մոտ։ պատվավոր դրութիւն մեջ։ Միաժամանակ Կյուրոսը նրան տեղ հատկացրեց նաև ատյանում, համողված, որ նա, ըրաղմաթիվ կրթված և իմաստուն մարդկանց հետ հարաբերութիւն ունեցած լինելով, խելամիտ մարդ էր¹⁵¹։

Գիրք 10 (հատվածներ)

10,2 Պատմում են, որ Մեգաբյուզոսը, նույն ինքը՝ Առաքիլոսը, որը Դարեհ թագավորի բարեկամն էր, խարաղանել էր ինքն իրեն և ղեմքի վրա եղած բոլոր ցցվածքները կտրատել էր այն պատճառով, որ ինքն ապստամբ դառնալով Բաբելոնը հանձնել էր պարսիկներին։ Դարեհն այդ լսելով մեծապես տրտմել էր և ասել, որ եթե հնարավոր լիներ, ապա կցանկանար ավելի շատ Մեգաբյուզոսին դարձյալ անվնաս տեսնել, քան տասը Բաբելոն ենթարկել իր իշխանութիւն, թեպետև իր այս ցանկութիւնը չէր կարող կատարվել։

5 Դարեհը համարյա ամբողջ Ասիային տիրելով, փափագեց նվաճել նաև Եվրոպան։ Ու քանի որ նա առավել խոշոր նվաճումների անսահման ցանկութիւն ուներ և վստահ էր սլարսկական գորքերի հզորութիւն վրա, ապա մտադրվեց նվաճել օյկումենեն¹⁵², քանոի կարծում էր, թե ամոթալի է, երբ իրեն նախորդած թագավորները, առավել քիչ հնարավորութիւններ ունենալով հանդերձ պատերաղմով հպատակեցրել են մեծագույն աղգերի, մինչդեռ ինքը մեծ զորք ունենալով, ինչքան ոչ մի թագավոր իրենից առաջ, ղեռևս արժանահիշատակ ոչ մի գործ չի կատարել։

Գիրք 11

69,1 Այդ տարին¹⁵³ Աթենքում արքոն էր Լյուսիթեսոսը, իսկ Հռոմում յյուպատոսներ ընտրվեցին Լուկիոս Վալերիոս Պոպլիկոլասը և Տիտոս Էմիլիոս Մամերկոսը։ Սրանց ժամանակ Ասիայում Արտաբանոսը, որը ծնունդով հյուրկանացի էր և թագավոր Քսերքսեսի արքունիքում մեծ հեղինակութիւն ուներ ու նրա թիկնապահների առաջնորդն էր, որոշել էր սպանել Քսերքսեսին և իշխանութիւնը

վերջնել իր ձեռքր: Նա իր դավադրութեան մասին հայտնեց ներքինի Միթրիդատեսին, որը թագավորի սենեկապետն էր և վայելում էր նրա ամենաբարձր վստահութիւնը, միաժամանակ, սակայն, Արտաբանոսի ազգականն ու բարեկամը լինելով, համաձայնվեց
2 դավադրութեան: Եվ Արտաբանոսը գիշեր ժամանակ սրա՝ կողմից (թագավորի) ննջարանը մտցվելով, սպանեց Քսերքսեսին ու շտապեց թագավորի որդիների դեմ: Սրանք թվով երեքն էին, Դարեհ՝ ավագ որդին և Արտաքսերքսեսը պալատում էին ապրում, իսկ երրորդը՝ Հյուստասպեսը այդ ժամանակ սինից հեռու էր գտնվում,
3 քանզի կառավարում էր Բակտրիայի սատրապութիւնը: Ուստի Արտաբանոսը, քանի դեռ գիշեր էր, գալով Արտաքսերքսեսի մոտ, հաջորդեց, թե նրա եղբայրը՝ Դարեհը, սպանել է հորը և իշխանութիւնը վերցրել է իր ձեռքր: Ուստի և խորհուրդ տվեց նրան, նախ-
4 քան եղբայրը կնստեր գահին, միջոցներ մտածի, որպեսզի իր անտաքսերութեան պատճառով ստրուկ չդառնա, այլ պատժելով իր
5 հորը սպանողին, ինքը թագավորի. և նա խոստացավ արքայի թիկնապահներին բերել օգնութեան: Արտաքսերքսեսը համոզվեց և թիկնապահների օգնութեամբ անմիջապես սպանեց իր Դարեհ եղբորը: Իսկ (Արտաբանոսը) տեսնելով, որ իր դավադրութիւնը հաջողվում է, իր որդիներին վերցնելով իր հետ և գոչելով, թե այժմ իր ժամանակն է թագավորութիւնը վերցնելու, իր սրով հարվածեց
6 Արտաքսերքսեսին: Իսկ սա, վիրավորվելով, բայց չսպանվելով հարվածից, հարձակվեց Արտաբանոսի վրա և նրան մահացու հարված հասցնելով, սպանեց: Այսպես անսպասելի փրկվելով և իր հորը սպանողին պատժելով, Արտաքսերքսեսը¹⁵¹ ստացավ պարսից թագավորութիւնը: Քսերքսեսն, ահա, այս եղանակով վախճանվեց, պարսից վրա ավելի քան քսան տարի թագավորելուց հետո, իսկ Արտաքսերքսեսը ժողովելով իշխանութիւնը, թագավորեց քառասուն տարի:

71.1 Այդ ժամանակ, երբ դեռ պարսից Արտաքսերքսես արքան նոր էր վերցրել թագավորութիւնը, նախ և առաջ պատժեց իր հոր սպանութեան մասնակիցներին և ապա թագավորութիւնը կարգավորեց իր շահերին համապատասխան: Այսպես, նա իր հանդեպ թշնամարար տրամադրված սատրապներին հեռացրեց և փոխարենը իր ընկերներից հարմարագույններին ընտրելով, սատրապութիւնները հանձնեց նրանց: Նա գբաղվեց նաև (պետութեան) եկամուտների, ինչպես և զորքերի կազմակերպման հարցերով և ընդհանրապես,

ամբողջ թագավորութիւնը մեղմությամբ կառավարելով, պարսիկների կողմից մեծ գովեստների արժանացավ:

Գիրք 12

- 64,1 Արտաքսերքսեսը, պարսից թագավորը, մահացավ քառասուն տարի գահակալելուց հետո, իսկ իշխանութիւնը ժառանգած Քսերքսեսը թագավորեց մեկ տարի:
- 71,1 Ասիայում թագավոր Քսերքսեսը մահացավ մեկ տարի կամ, ինչպես ոմանք գրում են, երկու ամիս թագավորելուց հետո, իշխանութիւնը ժառանգած նրա եղբայր Սոգդիանոսը իշխեց յոթը ամիս: Սրան սպանելով, Դարեհը¹⁵⁵ թագավորեց տասնինը տարի:

Գիրք 13

- 108,1 Խաղաղութիւնից քիչ անց¹⁵⁶ մահացավ Դարեհը, Ասիայի թագավորը, իշխելով տասնինը տարի և թագավորութիւնը ժառանգեց նրա ավագ որդին՝ Արտաքսերքսեսը¹⁵⁷:

Գիրք 14¹⁵⁸

- 19,2 Այդ ժամանակ¹⁵⁹ Կյուրոսը¹⁶⁰, որը կառավարում էր ծովամերձ սատրապութիւնները¹⁶¹, վաղուց մտադիր էր արշավել իր եղբոր՝ Արտաքսերքսեսի դեմ: Քանզի երիտասարդը տոգորված էր փառասիրությամբ և բուռն, անօրինակ ձգտում ուներ դեպի ռազմական
- 3 ընդհարումները: Երբ արդեն այդ նպատակով նա վարձկանների բավականին բազմութիւն գումարեց և արշավանքի համար անհրաժեշտ պատրաստութիւն տեսավ, ղորքերին շահատենց ճշմարտութիւնը, այլ ասաց, թե նա գորքը ստանում է Կիլիկիա, արքայից
- 4 ապստամբած իշխանավորների դեմ: Միաժամանակ նա դեսպաններ ուղարկեց լակեդեմոնացիներին, նրանց հիշեցնելու այն ծառայութիւնները, որ ինքը մատուցել էր աթենացիների դեմ սրանց մղած պատերազմի¹⁶² ժամանակ և կոչ անելու նրանց դաշնակցել իր հետ: Եվ լակեդեմոնացիները կարծելով, որ պատերազմը իրենց

համար օգտավետ կլինի, որոշեցին օգնել Կյուրոսին և անմիջապես դեսպաններ ուղարկեցին իրենց նավարքոսին¹⁶³, որի անունը Սամոս էր, որպեսզի սա կատարի այն, ինչ Կյուրոսը հրամայի: Իսկ Սամոսն ուներ քսանհինգ տրիերա¹⁶⁴, որոնցով նավեց դեպի Եփեսոս¹⁶⁵, Կյուրոսի նավարքոսի մոտ, պատրաստ նրան ամեն ինչում գործակցելու: Ուղարկեցին նաև ութ հարյուր հետևակ զինվոր¹⁶⁶, հրամանատար նշանակելով Խեյրիսոփոսին: Բարբարոսների նավատորմն առաջնորդում էր Տամոսը, որն ուներ հիսուն տրիերա, մեծարժեք սարքավորված, ու երբ լակեդեմոնացիները ժամանեցին, (երկու) նավատորմիղները մեկնեցին, նավելով դեպի Կիլիկիա:

6 Կյուրոսը Ասիայից հավաքած զորքը և տասներեք հազար վարձկաններին¹⁶⁷ գումարելով Սարդեսում¹⁶⁸, Լյուդիայի և Փոյուգիայի կառավարիչներ նշանակեց իր ազգական պարսիկների, իսկ Հոնիայի, էոլիսի և մերձակա երկրների կառավարիչ՝ իր հավատարիմ ընկերոջ՝ Տամոսին, որը ծնունդով Մեմփիսից¹⁶⁹ էր, մինչդեռ ինքը իր զորքով շարժվեց դեպի Կիլիկիա և Պիսիդիա¹⁷⁰, լուր տարածելով, թե այնտեղ բնակվող ցեղերից ոմանք ապստամբել են:

7 Ասիայից հավաքած նրա ամբողջ զորքը յոթը բյուր էր, որից երեք հազարը հեծյալ, իսկ Պելոպոննեսոսից և մնացյալ Հելլադայից՝

8 տասներեք հազար վարձկան: Պելոպոննեսոսից եկածներին, բացառելով աքայացոց, առաջնորդում էր Կլեարքոս լակեդեմոնացին, Բեոլտիայից եկածներին՝ Պրոքսենոս թեբեացին, աքայացիներին՝ Սոկրատես աքայացին, Բեսսալիայից եկածներին՝ Մենոն լարիսացին:

9 Ինչ վերաբերում է բարբարոսներին, ապա ստորաբաժանումների հրամանատարները պարսիկներ էին, իսկ բոլորին առաջնորդում էր ինքը՝ Կյուրոսը, որը հրամանատարներին հայտնել էր, թե արշավում է իր եղբոր դեմ, մինչդեռ բազմությունից թաքցնում էր այն, երկյուղ կրելով, որ (զինվորները) իր արշավանքի մեծ նպատակներն իմանալու դեպքում կհրաժարվեն իր այդ ձեռնարկումից: Այդ պատճառով էլ ամբողջ ուղևորության ընթացքում, կանխատեսելով հետագայի դեպքերը, նա հաճոյանում էր զինվորներին իր սիրալիր վերաբերմունքով և առատորեն մթերքներ տրամադրելով:

20,1

Լյուդիան և Փոյուգիան, ինչպես նաև Կապպադովկիային սահմանամերձ մարզերը անցնելուց հետո, (Կյուրոսը) հասավ Կիլիկիայի սահմանները և Կիլիկյան դարբասների մոտաքր: Այս կիրճը նեղ է և գահավեժ ու ձգվում է քսան ասպարեզ երկարության վրա, իսկ երկու կողմերից բարձրանում են հսկա և դժվարամատույց լեռներ, և յուրաքանչյուր կողմի վրա լեռներից ցած ձգվում են պարխսպ-

- ներ մինչև ճանապարհի վրա, որտեղ էլ դարբասներն են կառուցված:
- 2 Իր դորքն անցկացնելով այդ դարբասների միջով, նա մտավ մի դաշտավայր¹⁷¹, որն իր գեղեցկությամբ շէր գիջում Ասիայի և ոչ մեկ այլ դաշտին. այնուհետև այս դաշտի միջով առաջ գնալով, հասավ Տաոսոն, Կիլիկիայի խոշորագույն քաղաքը, որին և շուտով տիրացավ: Երբ Սյուեննեսիսը, Կիլիկիայի տիրակալը¹⁷², լսեց թրշնամու մեծաքանակ զորքի մասին, մեծապես շվարեց, քանզի ինքը
- 3 նրա դեմ կռվելու ուժ չուներ: Երբ Կյուրոսը նրան հրավիրեց իր մոտ, հավատարմության երաշխիքներ տալով, (Սյուեննեսիսը) գնաց նրա մոտ: և, պատերազմի նպատակի մասին իրականությունն իմանալուց հետո, համաձայնվեց դաշնակցել (Կյուրոսին) Արտաքսերքսեսի դեմ և Կյուրոսի հետ միասին ուղարկեց իր որդիներից մեկին, տրամադրելով նրան նաև կիլիկեցիներից կազմված բավական քանակությամբ մի զորամաս: Մյուս կողմից, Սյուեննեսիսը, լինելով բնավորությամբ խորամանկ և բախուժի անորոշություններին հարմարվող, իր մյուս որդուն գաղտնաբար ուղարկեց արքայի¹⁷³ մոտ, հայտնելու նրա դեմ գումարված զորքերի մասին, միաժամանակ հավաստիացնելու, թե ինքը թեպետև հարկադրված է եղել միանալու Կյուրոսին, այսուհանդերձ հավատարիմ է մնում իրեն. իսկ չթեպատես առիթ ներկայանա, լքելով նրան կմիանա արքայի զորքերին:
- 4 Կյուրոսը Տարսոնում իր զորքերին քսան օր հանգիստ տվեց: Այնուհետև, երբ վերսկսեց արշավանքը շարունակելու իր պատրաստությունները, զորքերի բազմությունը արդեն կասկածեց, թե արշավանքը կատարվում է Արտաքսերքսեսի դեմ: Եվ ամեն մեկը, սպասկերացնելով ամբողջ ճանապարհի երկարությունը և այն, որ իրենք պետք է անհրաժեշտորեն անցնեն բազմաթիվ թշնամի ազգերի երկրների միջով, խորապես տագնապեց: Քանզի յուր էր տարածվել, թե զորքի ճանապարհը մինչև Բակտրիա կտևեր չորս ամիս, իսկ արքայի գումարած զորքը քառասուն րյուրից ավելի էր
- 5 Այդ պատճառով էլ նրանք առավել ահաբեկվելով դժգոհեցին ու զայրանալով իրենց հրամանատարների վրա, փորձեցին ոչնչացնել նրանց իբրև դավաճանների: Բայց երբ Կյուրոսը խնդրեց բոլորին և հավաստիացրեց, թե ինքը զորքը տանում է ոչ թե Արտաքսերքսեսի, այլ Սիրիայի մի սասրապի դեմ, զինվորները համոզվեցին և, հավելյալ ոռճիկ ստանալուց հետո, նրանք դարձյալ հնազանդություն հայտնեցին նրան:

21,1 Կյուրոսն արդեն անցնելով Կիլիկիան, հասավ Իսսոս¹⁷⁴ քաղաքը, որը ծովափին է և Կիլիկիայի վերջին քաղաքը: Նույն այդ ժա-

մանակ այնտեղ ժամանեց նաև լակեղեմոնացիների նավատորմը
և հրամանատարները ափ դուրս դալով, հանդիպեցին Կյուրոսին և
նրան հաղորդեցին սպարտացիների ընդհանուր իր հանդեպ
և խնդրիստոփոսի հրամանատարության տակ գտնվող ութ հարյուր
2 հետևակներին ափ հանելով, հանձնեցին նրան: Նրանք այնպես էին
ձևացնում, որ իբր այդ վարձկաններին առաքել են Կյուրոսի ըն-
կերները, մինչդեռ, իրականում, այդ ամենը կատարվում էր էֆո-
րոսների¹⁷⁵ որոշմամբ: Լակեղեմոնացիները դեռևս բացահայտ
պատերազմի չէին դուրս դալիս, թաքցնելով իրենց մտադրությունը,
այլ սպասում էին պատերազմի ելքին:

Կյուրոսն իր զորքով ճանապարհ ընկավ և ուղղություն վերցնե-
լով դեպի Սիրիա, նավարքոսներին կարգադրեց ծովից իրեն ուղեկ-
3 ցել բոլոր նավերով հանդերձ: Երբ նա հասավ այսպես կոչված
Պյուլայ¹⁷⁶ և վայրը դաավ պահակներից բոլորովին դատարկ, մեծա-
պես ուրախացավ: Քանզի նա խիստ տագնապում էր, որ չինի ար-
դեն ոմանք նախապես գրաված լինեն այն: Տեղանքի բնությունը նեղ
է ու գահավեժ, այնպես, որ սակավ մարդկանցով հեշտությամբ է
4 պահպանվում: Որովհետև իրար մոտիկ են լեռները ձգվում, մեկը
վերձիգ և անդնդախոր, իսկ մյուսը սկիզբ է առնում հենց ճանա-
պարհից և այդ երկրում խոշորագույն լեռն է ու կոչվում է Ամանոս
և ձգվում է մինչև Փյունիկիա, իսկ լեռների միջև գտնվող վայրը,
որի լայնքը մոտ երեք ասպարեզ է, ամբողջապես պարսպապատ է
5 և վերջանում է դարբասներով, որոնք նեղ կիրճ են կազմում: Արդ,
Կյուրոսն այդ դարբասներն անվտանգ անցնելուց հետո իր հետ
մնացած նավատորմը ետ ուղարկեց, որպեսզի այն վերադառնա
Եփեսոս, քանզի այն իրեն այլևս պետք չէր լինելու, քանի որ իր
ճանապարհը պետք է շարունակեր միջերկրայքով: Քսան օր ճա-
նապարհ գնալուց հետո, հասավ Թափսակոս քաղաքը, որը գտնվում
6 է Եփրատ գետի վրա: Այստեղ նա մնաց հինգ օր, որի ընթացքում
պարենի առատությամբ և անասնակեր հայթայթելով իր կողմը
գրավեց զորքը և ընդհանուր զորածողով հրավիրելով, հայտնեց
ճշմարտությունը արշավանքի մասին: Բայց քանի որ զինվորները
տհաճությամբ ընդունեցին նրա խոսքերը, նա խնդրեց բոլորին շքել
իրեն, խոստանալով, այլ խոշոր պարզևներից բացի, Բաբելոն հաս-
նելուց հետո յուրաքանչյուր ռազմիկին տալ հինգ արծաթ մինա¹⁷⁷:
7 Եվ այսպես, զինվորները այդ հույսերով ոգևորված, համողվեցին
շարունակել (ճանապարհը): Իսկ Կյուրոսը զորքի հետ անցնելով
Եփրատը, շտապեցնում էր անդադար արշավելու, մինչև որ հաս-
նելով Բաբելոնիայի սահմանները, հանգիստ տվեց զորքին:

- 22,1 Թագավոր Արտաքսերքսեսը (իր հերթին) դեռ նախապես Փառնաբազոսի միջոցով իմացել էր, թե Կյուրոսն իր դեմ գաղտնաբար զորք է գումարում, իսկ այժմ դարձյալ տեղեկանալով նրա արշավանքի մասին, բոլոր կողմերից իր զորքերը կանչեց Սեդիա՝ Եկբատանա: Բայց քանի որ հնդիկների և մի քանի այլ ազգերի մոտից երկրների հեռավորության պատճառով, զորքերն ուշանում էին, նա արդեն դումարված դորամասերի հետ շարժվեց՝ հանդիպելու Կյուրոսին: Նրա զորքերի ընդհանուր թիվը, ներառյալ նաև հեծյալներին, ոչ պակաս քան քառասուն բյուր էր, ինչպես պատմում է
- 3 Եփորոսը¹⁷⁸: Երբ նա հասավ Բաբելոնիայի դաշտը, բանակեց Եփրատի մոտ, մտածելով այնտեղ թողնել իր դումակը. քանզի նա իմացել էր, որ թշնամին հեռու չէր և վախենում էր նրանց համար-
- 4 ձակ խիզախությունից: Ուստի և նա վաթսուն ոտնաչափ լայնությամբ և տասը ոտնաչափ խորությամբ խրամատ փորեց և իրեն ուղեկցող ռազմակառքերը դասավորեց շուրջանակի, պարսպի նման: Գումակը և անասնոցնակ ամբոխին թողնելով ճամբարում, այն պաշտպանելու համար բավական պահակազոր կարգեց, իսկ ինքը անձամբ առաջնորդեց ռազմական պատրաստության մեջ գտնվող զորքը և հանդիպեց մոտիկում գտնվող թշնամուն:
- 5 Կյուրոսը, երբ տեսավ արքայի մոտեցող ուժերը, իսկույն իր զորքը դիրքավորեց մարտական դասավորությամբ: Աջ թևը, որն սկսում էր Եփրատի ափից, բաղկացած էր լակեդեմոնացի հետևակներից և վարձկանների մի մասից, որոնց առաջնորդում էր Կլեարքոս լակեդեմոնացին, կովի ժամանակ նրանց օգնում էին Պափլագոնիայից հավաքված հեծյալները, որոնք հազարից ավելի էին, ձախ թևը պահում էին Փոյուզիայից և Լյուդիայից հավաքված զորքերը և շուրջ
- 6 հազար հեծյալներ, որոնց առաջնորդում էր Արիդալոսը¹⁷⁹: Ինքը՝ Կյուրոսը ռազմաճակատի մեծտեղն էր կանգնած, իր հետ ունենալով պարսիկներից լավագույններին և մոտ մեկ բյուր այլ բարբարոսների, իսկ նրանից առաջ շարժվում էին լավագույնս զինավառված հազար ձիավոր, որոնք զինված էին հելլենական դրահներով ու դաշույններով: Իսկ Արտաքսերքսեսը ամբողջ դորամյան առաջ դասավորեց ոչ քիչ թվով մանգաղակիր¹⁸⁰ ռազմակառքեր, թների առաջնորդներ նա կարգեց պարսիկների, մինչդեռ կենսորոնն ինքը՝ վերջրեց, ունենալով ոչ պակաս քան հինգ բյուր զինվոր¹⁸¹:
- 23,1 Երբ (հակառակորդ) զորքերն իրարից շուրջ երեք ասպարեզ հեռավորության վրա էին, հելլենները սլեան¹⁸² երգելուց հետո, նախ սկսեցին հանգիստ առաջ շարժվել, բայց երբ արդեն հասան նետա-

- հարման տարածության վրա, սկսեցին մեծ արագությամբ վազել: Այդպես անել նրանց պատվիրել էր Կլեարքոս լակեդեմոնացին, քանզի նա մտածում էր, թե ոչ հեռու տարածությունից վազելով ոաղմիկները մարմնապես չէին հոգնի և իրենց ուժերը կխնայեին կովի համար, միաժամանակ, եթե նրանք ընդհուպ մոտենալուց հետո վաղրով սուաջ գնան, ապա աղեղներից և այլ միջոցներից ար-
- 2 ձակված նետերը կթռչին նրանց գլխավերևով: Երբ Կյուրոսի հետ եղող գորբերը մոտեցան արքայի բանակին, այնքան մեծ քանակու-
- 3 թյամբ սլաքներ թափվեցին նրանց վրա, ինչքան կարելի էր սպասել: քառասուն բյուր զինվորներից բաղկացած զորքի նեոահառումից: Այսուհանդերձ, կարճ ժամանակ ամբողջապես սեգերով կովելույ հետո, նրանք մնացած ժամանակ ձեռնամարտ մղեցին:
- 4 Լակեդեմոնացիները և մյուս վարձկանները առաջին իսկ ընդ- հարման ընթացքում իսկույն ահաբեկեցին իրենց գեմ կանգնած բարբարոսներին իրենց գեներալի փայլատակումով և (ուղմական)
- 5 վարպետությամբ: Քանզի բարբարոսները պաշտպանվում էին փոքր վահաններով և նրանց զորագնդերի մեծ մասը թեթևազեն էր և միև- նույն ատեն անփորձ ուղմական ղեկավարություններին. մինչդեռ հելլենները երկարատև Պելոպոնեսյան պատերազմի ընթացքում մշտական կռիվների մեջ գտնվելով, մեծապես գերազանցում էին իրենց փորձով: Ուստի և նրանք իրենց հակառակորդներին փա-
- 6 խուստի մատնելով հալածեցին և բարբարոսներից շատերին սպա-
- 7 նեցին: Ռաղմաշարքերի դասավորության մեջտեղում պատահամբ երկուստեք կանգնած էին թագավորության համար պայքարողները: Սրանք էլ ըմբռնելով կատարվածի ամբողջ իմաստը, նետվեցին իրար վրա, իրենց իսկ ձեռքերով պատերասմի ելքը վճռելու բուռն ցանկությամբ: Ինչպես երևում է, հանուն իշխանության իրար միջև կռիվ մղող եղբայրներին բախտը հանեց մենամարտի, ասես նման Խեոկլեսի և Պոլիսիկեսի հանդուգն կռիվին, որը հնում նրբվել է ող-
- 8 բերգության մեջ¹⁸³: Այսպես, Կյուրոսը (նետման) տարածության հասնելով, իր նիզակը նետեց ու հարվածելով արքային, նրան գե-
- 9 տին տապալեց: Թագավորի մոտ կանգնածները նրան իսկույն վերց- նելով մարտից դուրս բերեցին: Իբրև հրամանատար թագավորին փոխարինեց Տիսսափեոնեսը, պարսիկ մի այր, որը ոչ միայն ոգե-
- 10 վորում էր բաղմության, այլև ինքը նույնպես փայլուն կռվում էր: Սա թագավորի վիրավորվելուց առաջացած շփոթը վերացնելուց հետո, իր ընտրյալ զինվորների հետ հայտնվում էր ամենուրեք և հա-
- 11 կառակորդներից շատերին սպանում, այնպես, որ նրա հայտնվելը
- 12 դեռևս հեռվից նկատելի էր դառնում: Իսկ Կյուրոսը, իր զորամասի

հաջողութիւններով ոգևորված. թափով մխրճվեց թշնամու շարքերի մեջ և սկզբում, շխնայելով իր համարձակութիւնը, շատերին սպանեց, բայց վերջում, երբ նա առավել անզգույշ էր կռվում, պատահաբար հարված ստացավ ինչ-որ պարսիկի կողմից և ընկավ մահացու վիրավորված: Սրա սպանութեամբ արքայի զինվորները դոտեպնդվեցին ու, վերջին հաշվով, իրենց բազմութեամբ և համարձակութեամբ ջլատեցին հակառակորդներին:

- 24,1 Մյուս թևում Արիդայոսը, որը Կյուրոսի կողմից զորքերի վրա սատրապ էր կարգվել, սկզբում քաջաբար դիմագրում էր հարձակվող բարբարոսներին, բայց հետո, երբ թշնամու շատ առավել ձրգված զորասյան կողմից շրջապատվեց և իմացավ Կյուրոսի մահը, իր զինվորներով փախուստի գիմեց գեպի իր կայաններից մեկը,
- 2 որը հարմարավետ ապաստան էր: Իսկ Կլեարքոսը տեսնելով, որ իր դաշնակիցների կենտրոնը, ինչպես նաև մյուս հատվածները ետ էին շարտվել, դադարեցրեց իր հետապնդումը և զինվորներին ետ կանչելով, նրանց կարգի բերեց, քանզի նա վախենում էր, որ եթե ամբողջ զորքը շրջվեր հելլենների դեմ, ապա իրենք կշրջապատվեն ու բոլորով կկորչեն: Արքայի զորքերը, երբ արդեն իրենց հակառակորդին մատնել էին փախուստի, նախ հափշտակեցին Կյուրոսի իրերը, այնուհետև, երբ արդեն գիշերն իջել էր, հավաքվելով հարձակվեցին հելլենների վրա, բայց երբ նրանք հարձակումն ընդունեցին քաջաբար, բարբարոսները միայն կարճ ժամանակով կարողացան դիմանալ ու քիչ անց, պարտվելով (հելլենների) խիզախութիւնից և (ուզմական) վարսետութիւնից, փախուստի գիմեցին: Իսկ Կլեարքոսի զորքերը բարբարոսներից շատերին սպանելուց հետո, երբ արդեն գիշեր էր, վերադարձան (իրենց գիրքերը) և հաղթութեան նշան կանգնեցրին, որից հետո պահակութեան երկրորդ պահին¹⁸⁴ հասան իրենց զորակայանը: Այսպես վերջացավ այդ ճակատամարտը. արքայի զորքից սպանվեցին ավելի քան մեկ բյուր և հինգ հազար մարդ, որոնցից մեծագույն մասին սպանեցին Կլեարքոսի հրամանատարութեան սակ գտնվող լակեդեմոնացիներն ու վարձկանները: Իսկ մյուս կողմից, Կյուրոսի բանակից (մարտում) ընկան շուրջ երեք հազար, մինչդեռ հույներից, ինչպես գրում են, ոչ մեկը չի սպանվել, այլ քչերը վիրավորվել են:
- 2 Երբ գիշերն անցավ, Արիդայոսը, որը փախել էր իր կայանը, ումանց ուղարկեց Կլեարքոսի մոտ, խնդրելով նրան իր զինվորներին ևս բերել իր մոտ, որպեսզի միասին կարողանան ապահով վերադառնալ ծովափնյա վայրերը. քանզի երբ արդեն Կյուրոսը սպանվել էր և արքայի զորքերը գերակշռում էին, Արտաքսերքսեսին թա-

գավորութունից զրկելու համար արշավանքին մասնակցել համար-
ձակվածներին մեծ տագնապ էր համակել:

25,1

Կլեարքոսն իր մոտ հրավիրելով զորավարներին և մյուս հրա-
մանատարներին, խորհուրդ գումարեց ստեղծված իրադրութեան
մասին: Խորհրդակցութեան ժամանակ իսկ իրենց մոտ ժամանեցին
արքայի կողմից ուղարկված պատգամավորները, որոնց գլխավոր-
րում էր հելլեն մի այր, անունը Փալինոս, ծնունդով Ջաքինթոսից¹⁸⁵,
Սրանք առաջնորդվելով ժողովականների մոտ, հաղորդեցին, թե
Արտաքսերքսես արքան այսպես է ասում. «Քանի որ ես արդեն
հաղթել եմ և սպանել Կյուրոսին, դուք կհանձնեք ձեր զենքերը և
գալով իմ զոները, կփորձեք, թե ինչպե՞ս ինձ ծառայելով արժա-
2 նանաք իմ ողորմածութեան»: Ասված այս խոսքերին զորավարնե-
րից յուրաքանչյուրը այնպիսի պատասխան տվեց, ինչպիսին Լեո-
նիգեսը, երբ սա պաշտպանում էր Թերմոպիլիի կիրճը¹⁸⁶ և Քսեր-
քսեսը նրա մոտ: պատգամավորներ ուղարկելով, հրամայել էր
3 հանձնել զենքերը: Քանզի Լեոնիգեսն այդ ժամանակ պատվիրել էր
պատգամավորներին արքային հագորդել այսպես. «Մենք համոզ-
ված ենք, որ եթե Քսերքսեսի բարեկամները դառնանք, մենք առա-
վել լավ դաշնակիցներ կլինենք մեր զենքերը պահելու դեպքում,
իսկ եթե ստիպվենք նրա դեմ պատերազմել, ապա առավել լավ
4 կկռվենք այդ զենքերով»: Երբ Կլեարքոսը նման պատասխան տվեց
զեսպաններին, Պրոքսեսնու Թերեացին ասաց, որ այժմ արդեն, երբ
համարյա ամեն մի այլ հնարավորութունից հրաժարվել ենք, մեզ
մնում են միայն մեր քաջութիւնն ու զենքերը: Իմ կարծիքով, եթե
զենքերը պահենք, ապա մեր քաջութիւնը ևս մեզ պիտանի կլինի,
իսկ եթե դրանք հանձնենք, ապա նույնիսկ մեր քաջութիւնը չի կա-
րող մեզ օգնել: Ուստի և նա պատվիրեց ասել արքային, որ եթե նա
մեր գեմ որևէ շարիք է նյութում, մենք մեր զենքերով կկռվենք նրա
5 զեմ, նրա ունեցած բարիքների համար: Պատմում են, որ Սոփիլո-
սը¹⁸⁷ ևս, որը նույնպես զորահրամանատար էր, ասել է, թե զարմա-
նում է արքայի խոսքերի վրա, քանզի եթե նա կարծում է, թե հելլեն-
ներից առավել հզոր է, ապա իր զորքերով թող գա և վերցնի մեր
զենքերը: Իսկ եթե ցանկանում է մեզ համոզել, ապա թող հայտնի.
թե այդ ամենի փոխարեն նա ի՞նչ համարժեք շնորհք պետք է մեզ
6 պարգևի: Սրանցից հետո Սոկրատես արքայացին ասաց, որ արքան
մեզ հանգես շատ զարմանալի կերպով է վարվում, քանզի նա այն
ամենը, ինչ ցանկանում է ստանալ մեզից, պահանջում է անհա-
պաղ, իսկ գրա փոխարեն մեզ տրվելիքի մասին նա պատվիրում է
հետագայում խնդրել: Ընդհանրապես, եթե նա չգիտի թե ովքեր են

հաղթել և մեղ պարտված համարելով կարգադրում է իր հրամանները կատարել, ապա նա իր մնժաթիվ գորքերով թող գա և իմանա, թե հաղթանակը ու՞մ կողմն է: Բայց եթե հաստատ իմանալով հանդերձ, որ մենք ենք հաղթել ու դարձյալ ստում է, ապա ինչպե՞ս մենք հավատանք նրա հետագայի խոստումներին:

7 Այսպիսի պատասխաններ ստանալով, հրեշտակները մեկնեցին, իսկ Կլեարքոսը իր ղորամասով ճանապարհ ընկավ դեպի կայան, ուր արդեն մեկնել էին ճակատամարտից փրկված գորքերը: Երբ ամբողջ ղորաբանակը ի մի հավաքվեց, բոլորը համատեղ խորհուրդ գումարեցին, թե ինչպե՞ս և ի՞նչ երթուղիով իրենք վերադառնան դեպի ծով: Արդ, որոշեցին շվերադառնալ այն նույն ճանապարհով, ինչ եկել էին, քանզի այդ երկրի մեծ մասն ամայի էր, որտեղ նրանք չէին կարող պարեն հայթայթել թշնամի ղորքերի հետապնդման պայմաններում: Ուստի նրանք որոշեցին անցնել Պափլագոնիայի վրայով և մեկնեցին ամբողջ գորքով դեպի Պափլագոնիա. նրանք դանդաղ էին առաջ շարժվում, քանզի ճանապարհին հոգ էին տանում պարեն հայթայթելու մասին:

26.1 Արքան արդեն ապաքինվում էր վերքից և երբ իմացավ թշնամիների նահանջի մասին, կարծեց, թե նրանք փախչում են, իր ղորքով շտապ ընկավ նրանց ետևից: Ու նա, հասնելով նրանց, որոնք դանդաղ էին ճանապարհ գնում, քանի որ արդեն գիշեր էր, նրանց մոտ ճամբար դրեց, իսկ երբ օրը բացվեց և հելլենները իրենց դասավորեցին ի մարտ, հրեշտակներ ուղարկեց նրանց մոտ և առայժմ երեք օրվա համար ղինադադար կնքեց: Այդ ընթացքում նրանք համաձայնվեցին, որ արքան պետք է հոգ տանի, որ (իր) երկիրը բարեկամաբար վերաբերվի նրանց, միաժամանակ դեպի ծով ճանապարհը ցույց տվող առաջնորդներ հատկացնի և ուղևորության ընթացքում պարենամթերք տրամադրի, իսկ Կլեարքոսի հետ եղող վարձկաններն ու Արիդայոսի հրամանատարության տակ գտնվող բոլոր զորամասերը պետք է երկրի միջով ընթանան առանց որևէ վնաս պատճառելու: Այնուհետև նրանք սկսեցին իրենց ուղևորությունը, իսկ արքան իր զորքը տարավ Բաբելոն: Այստեղ նա պատերազմում քաջագործություն ցուցաբերած յուրսփանչյուր ռադմիկին ըստ արժանվույն սլուստվեց և բոլորից գերազանց գնահատեց Տիսսափեոնեսին: Այդ պատճառով էլ նրան հարուստ ընծաներով պատվեց և իր դստեր տվեց նրան կնություն և այնուհետև նրա հետ վարվում էր իրրև իր հավատարմադույն բարեկամի. նրան շնորհեց նաև ծովամերձ այն սատրապությունների իշխանությունը, որտեղ տիրել էր Կյուրոսը:

5 Տիսսափեռնեսը տեսնելով, որ արքան զայրացած է հելլենների վրա, խոստացավ նրանց բոլորին կործանել, եթե արքան իրեն զորքեր տա և համաձայնության դա Արիդայոսի հետ, քանզի սա ուղեվորության ընթացքում կարող էր հելլեններին մատնել (իր ձեռքը)։ Արքան այդ խոսքերն ուրախությամբ ընդունեց և թույլատրեց նրան ամբողջ զորքից ընտրելու լավագույններին, ինչքան ինքը ցանկանար։ [Երբ Տիսսափեռնեսը հասավ հելլեններին, պատգամ ուղարկեց Կլեարքոսին և] ¹⁸⁸ մյուս առաջնորդներին, գալ իր մոտ և անձամբ լսել իր խոսքերը։ Ուստի և գրեթե բոլոր զորավարները Կլեարքոսի և մոտ քսան վաշտապետների հետ եկան Տիսսափեռնեսի մոտ, նրանց ուղեկցեցին նաև շուրջ երկու հարյուր զինվոր, որոնք ցանկացել էին շուկա ¹⁸⁹ գնալ։ Տիսսափեռնեսը զորավարներին հրավիրեց իր վրանը, իսկ վաշտապետները սպասում էին մուտքի մոտ։ Եվ քիչ անց, երբ Տիսսափեռնեսի վրանից ծիրանագույն գրոշ թափահարվեց, սա ձերբակալեց ներսում գտնվող զորավարներին, իսկ հատուկ պատրաստված խմբեր հարձակվելով սպանեցին վաշտապետներին, մինչգեո ուրիշներ սպանեցին շուկա եկած զինվորներին։ Սրանցից լոկ մեկը փախչելով հասավ իր ճամբարը և հայտնեց աղետի մասին։

27,1 Զինվորներն իմանալով կատարվածը, նույն պահին ահաբեկվեցին և բոլորը, մեծ անկարգությամբ, վաղեցին գեպի դենքերը, որովհետև ոչ մի հրամանատար չկար։ Այնուհետև, սակայն, քանի որ ոչ ոք նրանց չէր անհանգստացնում, նրանք մի խումբ զորավարներ ընտրեցին, իսկ նրանցից մեկին՝ Խեյրիսոփոս լակեզեմոնացուն, հանձնեցին ընդհանուր հրամանատարությունը։ Այս զորավարները զորքը արշավի համար կարգի բերելուց հետո, իրենց իսկ ընտրած ճանապարհով առաջ շարժվեցին գեպի Պափլագոնիա։ Մինչդեռ Տիսսափեռնեսը (ձերբակալված) զորավարներին շղթայելով ուղարկեց Արտաքսերքսեսին. սա բոլորին սպանեց, խնայելով միայն Մենոնին. քանզի (արքան) կարծում էր, որ միայն սա, իր զինակիցների հետ ունեցած անհամաձայնությունների պատճառով, կռավաճանի հելլեններին։ Տիսսափեռնեսը իր զորքերով հետևելով հելլեններին, ընդհուպ մոտեցավ նրանց, բայց չհամարձակվեց դեմառդեմ մարտի բռնվել, վախենալով հուսահատության մատնելված մարդկանց խիզախությունից և անմտածված քայլերից, ուստի և նա հարմար վայրերում անհանգստացնելով նրանց, անկարող եղավ որևէ մեծ վնաս հասցնել. բայց ոչ մեծ զժվարություններ հարուցելով, հեաապնդեց նրանց մինչև կարդուխներ ¹⁹⁰ կոչված ժողովրդի (երկիրը)։

4 Արդ, Տիսսափեռնեսն այլևս ոչինչ անել չկարողանալով, իր
 զենքերով մեկնեց Հոնիա¹⁹¹: Իսկ հելլենները յոթ օրվա բնթացքում
 անցան կարդուխների լեռները բազում շարիքների ենթարկվելով
 տեղաբնիկների կողմից, որոնք ռազմասեր էին և վայրերին քաջա-
 5 ծանոթ: Արանք (պարսից) արքային թշնամի էին ու աղատ և զբաղ-
 վում էին ռազմական արվեստով. նրանք առանձնապես մարդվում
 էին պարսատիկներով խոշորագույն քարեր արձակելու և հույժ խո-
 շոր նետեր օգտագործելու մեջ, որոնցով էլ նրանք հարմարավես
 դիրքերից հելլեններին հարվածներ հասցնելով, շատերին սպանե-
 6 ցին և ոչ քեբրին էլ յուրջ վնասներ պատճառեցին: Քանզի նրանց
 նետերը երկու կանգունից ավելի երկար էին ու ծակում էին թե՛
 վահանները և թև լանջապանները, այնպես, որ ոչ մի զրահ չէր գի-
 մանում դրանց ուժգնութան: Պատմում են, որ նրանք այնպիսի
 խոշոր նետեր էին օգտագործում, որ հելլենները նրանց արձակած
 նետերին կաշվե բռնակ ամրացնելով, դրանք իբրև սեգ էին օգտա-
 7 գործում և շարտում: Արդ, մեծ դժվարություններ ճեղքել-անցնելով
 վերոհիշյալ երկիրը, նրանք հասան Կեստրիտես¹⁹² գետը և այն
 անցնելով մտան Արմենիա: Այս երկրի սատրապն էր Տիրիբա-
 գոսը¹⁹³, որի հետ դաշինք կնքեցին և երկրի միջով անցան իբրև բա-
 րեկամներ:

28,1 Արմենիայի լեռների միջով ուղևորվելիս, նրանք առատ ձյան
 հանդիպեցին և բոլորը կործանման վտանգի տակ դտնվեցին: Քան-
 զի սկզբում, երբ քամի բարձրացավ, երկնքից սկսեց բարակ ձյուն
 տեղալ այնպես, որ ճանապարհով գնացողներին չէր արգելում առաջ
 ընթանալիս. բայց հետո, երբ քամին աստիճանաբար ուժեղացավ,
 այնպես ձյուն էր տեղում և երկիրը ծածկում, որ ոչ ճանապարհն էր
 2 երևում, ոչ էլ հնարավոր էր տեղանքի ընույթը տեսնել: Իսկ իսկ
 պատճառով հուսահատությունը և սարսափը համակեց գինվորնե-
 րին, քանզի կործանումից վախենալով, չէին կամենում ետ վերա-
 գառնալ, մինչդեռ ձյան առատության պատճառով չէին կարողա-
 նում առաջ շարժվել: Քանի զեռ փոթորիկը հետզհետե սաստեանում
 էր, ուժեղ բուք բարձրացավ ու շատ կարկուտ տեղաց, որը թափով
 խփում էր նրանց զեմքին. ուստի ամբողջ յորքը ստիպված եղավ
 կանգ առնել: Քանզի նրանցից յուրաքանչյուրը, անկարող լինելով
 դիմանալու ուղևորության այդ տանջանքներին, ստիպված էր լի-
 3 նում մնալ այնտեղ, ուր պատահեց: Չունենալով որևէ անհրաժեշտ
 պիտույք, նրանք այդ օրը և ամբողջ գիշերը մնացին բաց հրկնքի
 տակ, շատ զրկանքներ կրելով. շարունակաբար տեղացող առատ
 ձյան պատճառով նրանց բոլոր յենքերը ծածկվեցին (ձյունով),

իսկ մարմինները ամբողջովին սառեցին ցուրտ եղանակից: Այս
 ծանր դժվարությունների սլատճառով նրանք ամբողջ գիշերը մնա-
 ցին անքուն, և ոմանք կրակ վառելով, սկսեցին դրանից օգտվել,
 իսկ ոմանք էլ, որոնց մարմիններն ամբողջապես ցրտահարված էին,
 կորցրել էին սգնություն ստանալու որևէ հույս, քանի որ նրանց
 համարյա բոլոր վերջավորությունները մահացման էին ենթարկ-
 4 վում: Այսպիսով, երբ գիշերն անցավ, պարզ դարձավ, որ բեռնա-
 տար անասունների մեծ մասը արդեն սատակել է և շատ մարդիկ
 մահացել են, իսկ ոչ քչերն էլ, թեպետև գիտակցությունը չէին կորց-
 րել, բայց սառած լինելու պատճառով անկարող էին իրենց մար-
 մինը շարժել, ոմանց էլ աչքերը կուրացել էին ցրտից և ձյան ար-
 5 տացուքից: Եվ բոլորն էլ կատարելապես կոշնչանային, եթե կարձ
 (Տանապարհ) անցնելուց հետո չպատահեին պարենաշատ գյու-
 ղերի: Այս գյուղերում բեռնատար անասունների մոտքը գետնափոր
 էր, իսկ մարդիկ իջնում էին աստիճաններով...¹⁹⁴ և բնակարաննե-
 րում անասունները սնվում էին խոտով, իսկ մարդիկ վայելում էին
 ձյանքի համար անհրաժեշտ բարիքների առատություն:

29,1 Այս գյուղերում ութ օր մնալուց հետո, (հելլեններն) ուղևորվե-
 ցին դեպի Փասիս գետը¹⁹⁵: Այստեղ շորս օր անցկացնելուց հետո
 իրենց ճանապարհը շարունակեցին խայոյների¹⁹⁶ և փասիանների¹⁹⁷
 երկրի միջով: Երբ տեղաբնիկները հարձակվեցին հելլենների վրա,
 սրանք կովում հաղթելով, նրանցից շատերին սպանեցին և, գրա-
 վելով տեղաբնիկների տները, որոնք լեցուն էին բարիքներով, այն-
 2 տեղ մնացին տասնհինգ օր: Այստեղից դուրս գալով, յոթ օրվա ըն-
 թացքում անցան խալդայներ¹⁹⁸ կոչված (ցեղերի) երկրով և հասան
 Հարպագոս¹⁹⁹ գետը, որի լայնությունը շորս պլեթրոն էր: Այստեղից
 էլ սկյուտիներ²⁰⁰ երկրի միջով առաջանալիս նրանց ճանապարհն
 անցնում էր դաշտով, որտեղ նրանք երեք օր հանգստացան ամեն
 տեսակ բարիքների առատության մեջ: Այնուհետև ճանապարհ
 ղնկնելով, շորրորդ օրը հասան մի խոշոր քաղաք, որը կոչվում էր
 3 Գյումնասիա²⁰¹: Այստեղ, այս վայրերի կառավարիչը դաշն կնքեց
 նրանց հետ և ուղեցույցներ տրամադրեց, որոնք պետք է (հելլեննե-
 րին) ծով առաջնորդեին: Տասնհինգ օրում հասնելով Քենիոն²⁰² լեռը,
 երբ առջևից ընթացողները տեսան ծովը, մեծապես հրճվեցին և
 այնպիսի աղաղակ բարձրացրին, որ շարասյան վերջում գտնվող
 ները կարծելով, թե թշնամիներ են հարձակվել, դենքի դիմեցին:
 4 Բայց երբ բոլորը բարձրացան այն վայրը, որտեղից կարելի էր ծովը
 տեսնել, թևերը պարզելով աստվածներին, շնորհակալություն էին

հայտնում, հավատալով, թե արդեն փրկված են, ուստի բազմաշաքարեր կուտակելով մի վայրում, դրանցով խոշոր քարաթմբեր ստեղծեցին և դրանց վրա, որպես նվիրաբերում, դրեցին բարբարոսներից խլած ավարներ, դրանով իսկ ցանկանալով իրենց արշավանքը անմահացնող հուշարձան թողնել: Իրենց առաջնորդած ուղեցույցին նրանք պարզեցին արծաթե բաժակ և պարսկական համադղեստ. սա, ցույց տալով նրանց ղեպի մակրոնները տանող

5 ճանապարհը, ետ վերադարձավ: Արդ, հելլենները մտնելով մակրոնների²⁰³ երկիրը, նրանց հետ դաշն կնքեցին և իբրև երաշխիք նրանցից ստացան բարբարոսական մի նիղակ, իսկ փոխարենը տվեցին հելլենական (նիղակ), քանդի բարբարոսներն ասացին, թե իրենց նախնիների ավանդության համաձայն, այսպիսի փոսանկումը

6 կումը հավատարմության ամենահաստատուն երաշխիքն է: Երբ հելլեններն անցան սրանց սահմաններից, հասան կոլխերի երկիրը: Այստեղ, երբ տեղաբնիկները դումարվեցին իրենց դեմ, հելլենները կովում հաղթելով նրանց, շատերին սպանեցին, որից հետո գրավելով ամրադիր մի բլուր, ավերում էին երկիրը և կողոպուտը այնտեղ հավաքելով, առատորեն վայելում էին դրանք:

30,1 Այդ վայրերում նրանք գտան նաև մեծ քանակությամբ մեղվափեթակներ, որոնցից ստացվում էր թանկարժեք խորիսխ: Բայց դրանից ճաշակողները բռնվում էին ինչ-որ տարօրինակ ախտով. քանզի այդ մեղրից ուտողները կորցնում էին իրենց բանականությունը և ընկնելով ղետին, նմանվում էին մեռյալների: Ու քանի որ դրա քաղցր բավականության պատճառով շատերն էին դրանից կերել, ապա այնքան մեծ բազմություն էր գետին ընկել, ասես պատերազմում ջախջախվել էին: Ուստի այդ օրը զորքը վհատվել էր, ահաբեկված տարօրինակ պատահարից և ղժբախտության մեջ ընկածների բազմությունից: Սակայն հաջորդ օրը, գրեթե նույն ժամին, բոլորն ուշքի էին գալիս և աստիճանաբար վերագտնելով իրենց ղստողությունը, վեր կացան. նրանց մարմնական վիճակն այնպիսին էր, ասես թունավորումից էին փրկվել²⁰⁴:

3 Նրանք երեք օր կազդուրվելուց հետո ուղևորվեցին ղեպի հելլենական Տրապեզունտ քաղաքը²⁰⁵, որը սինոպեցիների գաղութն էր և գտնվում էր կոլխերի երկրում: Այստեղ նրանք երեսուն օր անցկացնելով, տեղացիների կողմից փայլուն կերպով հյուրասիրվեցին. այստեղ էլ զոհեր մատուցեցին շերակլեսին և Ջևս-փրկչին ու կալմակերպեցին մարգական մրցումներ նույն այն վայրում, որտեղ, ինչպես պատմում են, խարիսխ է նետել Արգո²⁰⁶ նավը և Յասոնն

4 իր մարդկանցով ավելի ղուրս եկել: Այստեղից էլ խելրիսոփոսին,

որն իրենց առաջնորդն էր, ուղարկեցին Բյուզանդիոն, նավեր ու
 սրիներաներ ձեռք բերելու համար. քանզի նա ասում էր, թե բյու-
 ղանդացիների նավարքոս Անաքսիբիոսի բարեկամն էր: Հելլենները
 նրան ուղարկեցին արագրնթաց նավով, իսկ իրենք տրապեղունա-
 ցիներից երկու փոքր թիանավ ստանալով, կողոտտում էին հարևան
 5 բարբարոսներին թե՛ ծովում և թե՛ ցամաքի վրա: Արդ, նրանք երե-
 սուն օր սպասում էին խեյրիսոփոսին, բայց քանի որ նա ուշանում
 էր և ղորքերը պարենի պակաս էին դղում, նրանք մեկնեցին Տրա-
 պեղունացից և երրորդ օրը հասան հելլենական Կերասունս: քաղա-
 քը²⁰⁷, որը սինոպեցիների գաղութն էր: Այստեղ մի քանի օր մնալուց
 6 հետո, նրանք հասան մոսինոլիները²⁰⁸ աղգին: Երբ բարբարոսները
 հավաքվելով հարձակվեցին իրենց վրա, (հելլենները) հաղթեցին
 մարտում և շատերին սպանեցին: Երբ թշնամիները փախան ապաս-
 տանելու ինչ-որ սմբացված վայրում, որտեղ նրանք ապրում էին,
 պատելով այն յոթնահարկ փայտե աշտարակներով, հելլենները
 սներնդ հատ հարձակվելուց հետո գրոհով այն վերցրին: Այս ամ-
 րավարը բոլոր մյուս ամրությունների գլխավոր կենտրոնն էր, որի
 7 ն ամենաբարձր տեղում ապրում էր նրանց բասիլևսը: Նրանց հալ-
 րենի սովորությունն է, որ նա ամբողջ կյանքում մնա այդ վայրում
 և այնտեղից արձակի ամբոխին ուղղված իր հրամանները: Զինվոր-
 ները պատմում են, թե սրանք ամենաբարբարոս աղգն են այն բո-
 լորից, ում երկրների միջով իրենք անցել են, տղամարդիկ կանանց
 հետ մոտ են լինում ի տես բոլորի, ամենաունևորների երեխաները
 սնվում են խաշած շագանակներով²⁰⁹ և բոլորը գեռ մանկութ իրենց
 թիկունքն ու կուրծքը դաջելով նկարագարգել են: Ահա այս երկիրը
 նրանք անցան ութ օրում, իսկ հաջորդ երկիրը, որը կոչում էին
 Տիբարենե²¹⁰ երեք օրում:

31,1 Այստեղից էլ նրանք հասան հելլենական Կոտյուորա²¹¹: քաղաքը,
 որը սինոպեցիների գաղութն էր: Այստեղ նրանք անցկացրին հիսուն
 օր, կողոպտելով Պափլագոնիայի հարևանությամբ բնակվող ժողո-
 վուրդներին և այլ բարբարոսների: Հերակլեսացիները և սինոպեցիները²¹²
 նրանց նավեր ուղարկեցին, որոնցով իրենք և բեռնատար անա-
 2 սունները վտխաղրվեցին (Սինոպե): Սինոպեն միլետացիների գա-
 ղութն էր և գտնվելով Պափլագոնիայում, մեծ հեղինակություն ուներ
 շրջակա երկրների վրա: Եվ այս քաղաքում էին գտնվում մեր ժա-
 մանակ հռոմեացիների դեմ պատերազմած Միթրիդատեսի²¹³ խո-
 3 շորագույն արքայանիստ պալատները: Այստեղ էլ, առանց որևէ
 հաջողության հասնելու, եկավ խեյրիսոփոսը, որն ուղարկված էր

տրիերաներ ձեռք բերելու: Այսուհանդերձ սինոպեցիները նրանց սիրալիր հյուրասիրելով, ծովով ճանապարհեցին Հերակլեա, որը մեղարացիների դադութն էր. ամբողջ նավատորմը խարխսխ նետեց Աքերուսիաս թերակղզու մոտ, որտեղ, ինչպես պատմում են, Հե-
 4 րակլեսը Հադեսից Կերբերոսին վեր բերեց²¹⁴: Այստեղից Բիթյունիայի միջով հետիոտն ուղևորվելիս վտանգների մեջ ընկան, քանի որ տեղաբնիկները ճանապարհին հարձակվում էին նրանց վրա: Արդ, երբ նրանք հազիվ փրկվելով, հասան Քաղկեդոնիայի Քրյուսոպո-
 լիսը²¹⁵, բյուրից մնացել էր ընդամենը ութ հազար երեք հարյուր այր:
 5 Այստեղից, արդեն առանց դժվարության, ոմանք ապահով վերադարձան իրենց հայրենիք, իսկ մնացյալը, հավաքվելով Քերսոնեսում, ավարի էին ենթարկում թրակիացիներին հարևան երկրները: Ահա այսպիսի վախճան ունեցավ Կյուրոսի արշավանքը Արտաքսերքսեսի դեմ:

80,6 Արտաքսերքսեսը, Ասիայի արքան, իմանալով պարտությունների մասին²¹⁶ և ահաբեկվելով հելլենների դեմ մղված պատերազմից, զայրացել էր Տիսսափեոնեսի վրա, քանզի սրան էր համարում պատերազմի պատասխանատուն. նրան մալրը ևս, Պարիսատիսը, խնդրում էր պատժել Տիսսափեոնեսին, քանզի Պարիսատիսը ատում էր Տիսսափեոնեսին այն պատճառով, որ սա մեղադրել էր իր որ-
 7 դուն, Կյուրոսին, երբ վերջինս արշավում էր եղբոր դեմ: Եվ ահա Տիթրաուստեսին կառավարիչ նշանակելով, (Արտաքսերքսեսը) պատվիրեց նրան ձերբակալել Տիսսափեոնեսին, իսկ քաղաքներին ու սատրապներին թղթեր ուղարկեց, որպեսզի բոլորը կատարեն
 8 նրա հրամանները: Արդ, Տիթրաուստեսը հասնելով Փոյուզիայի Կոլոսսոս (քաղաքը), ոմն սատրապ Արիայոսի միջոցով ձերբակալեց Տիսսափեոնեսին, մինչ սա բաղնիքում էր, և նրա զլուխը կտրելով, ուղարկեց արքային: Իսկ ինքը Ադեսիլաոսին²¹⁷ համոզեց բանակցություններ վարել և վեց ամսով հաշտություն կնքեց:

Գիրք 15

2.1 ...Այդ տարին²¹⁸ Արտաքսերքսեսը, պարսից արքան, պատերազմ սկսեց Կիպրոսի թագավորի՝ Եվագորասի դեմ. նա ևրկուր ժամանակ զբաղվելով ռազմական պատրաստություններ էր տեսել ու հավաքել էր մեծ ռազմական ուժ՝ ծովային և ցամաքային: Ցամաքային զորքը երեսուն բյուր էր՝ հեծյալների հետ միասին, իսկ նրա

պատրաստած տրիբրանները՝ երեք հարյուրից ավելի: Նա զորահրամանատարներ կարգեց ցամաքային ուժերի վրա՝ իր փեսա Օրոնտեսին²¹⁹, իսկ ծովային ուժերի վրա՝ Տիրիբազոսին²²⁰, մի մարդու, որը պարսիկների մոտ մեծ հեղինակություն էր վայելում: Սրանք զորքերի հրամանատարությունը ստանձնելով Փոկայայում և Կյումեում²²¹, եկան Կիլիկիա և, անցնելով Կիպրոս, եռանդուն կերպով պատերազմ վարեցին:

3 Եվ ազորասր դաշինք կնքեց Եգիպտոսի թագավոր Ակորիսի հետ, որը պարսիկներին թշնամի էր և նրանից ստացավ նշանակալից քանակությամբ զորք, իսկ Հեկատոմնոսից, Կարիայի²²² սիրակալից, որը գաղտնաբար գործակցում էր իր հետ, ստացավ մեծ քանակությամբ դրամ՝ վարձկան զորքերին պահելու համար: Նույնպես նաև բոլոր մյուսներին, որոնք թշնամանք ունեին պարսիկների հանդեպ, ոմանց գաղտնաբար, այլոց՝ բացահայտ, համո-

4 ղեց մասնակցել պարսիկների դեմ պատերազմի: Նա տիրում էր Կիպրոսի համարյա բոլոր քաղաքներին, ինչպես նաև Փյունիկիայում Տյուրոսին և մի շարք այլ քաղաքների: Նա ուներ նաև իննսուս տրիբրա, որից քսանը՝ տյուրոսյան, իսկ յոթանասունը՝ կիպրուկան, նրա զինվորները վեց հազար էին, իսկ դաշնակից զորքերը՝ դրանից շատ ավելի: Այս ամենից բացի նա դրսից վարձկաններ հավաքագրեց, քանի որ առատ դրամ ուներ: Նրան ոչ քիչ զորք ուղարկեցին արաբների թագավորը, ինչպես և ուրիշներ, որոնք տարակարծիք էին պարսից արքային:

3,1 Արդ, սա այսքան միջոցներ ունենալուց հետո, համարձակությամբ ձեռնամուխ եղավ պատերազմին: Սկզբում նա, ծովահենության համար ոչ քիչ թվով նավեր ունենալով, դարանակալում էր թշնամու պարենի փոխադրումները և դրանց մի մասը ոչնչացնում էր ծովում, մյուս մասի փոխադրումն էր խոչընդոտում, իսկ մի մասն էլ կարողանում էր ձեռք գցել: Այդ պատճառով էլ վաճառականները չէին համարձակվում ցորեն բերել Կիպրոս, և քանի որ կղզում մեծ քանակությամբ զորք էր հավաքվել, ապա շուտով պարսկական զորքերում հացի պակաս զգացվեց, որը և հանգեց-

2 րեց ապստամբության. պարսիկների վարձկանները, հարձակվելով հրամանատարների վրա, սպանեցին նրանցից ոմանց և զորաբանակում առաջացրին խռովություն և ապստամբություն: Պարսից զորավարները և նավատորմի հրամանատարը, որի անունը Վլոս

3 էր, դժվարությամբ վերջ տվին խռովության: Նրանք իրենց ամբողջ նավատորմով նավեցին և Կիլիկիայից մեծ քանակությամբ ցորեն բերելով պարենի խիստ առատություն ստեղծեցին: Իսկ Եվագո-

րասին թագավոր Ակորիսը Եգիպտոսից առատ ցորեն ուղարկեց և
4 մեծ քանակութեամբ դրամ և այլ հանդերձանք տրամադրեց: Եվա-
գորասը տեսնելով, որ իր նավատորմը շատ ավելի թույլ է, այն
համարեց ևս վաթսուն այլ նավերով, հիսուն նավ էլ Եգիպտոսի
թագավոր Ակորիսից խնդրեց, այնպես, որ ընդամենը կունենար
երկու հարյուր տրիերա: Այս նավատորմը մարտականորեն հան-
դերձավորելով, նա ահաբեկման և մշտական փորձերի և մարզում-
ների միջոցով պատրաստվում էր նավամարտի....:

4,1 Պարսիկները նավամարտում հաղթելուց հետո, իրենց ցամա-
քային ու ծովային ուժերը գումարեցին Կիտիոն²²³ քաղաքում: Այս-
տեղից էլ նրանք շարժվեցին դեպի Աալամիս²²⁴ և քաղաքը պաշար-
2 ման ենթարկեցին ցամաքից ու ծովից: Մինչ այդ, Տիրիբագոսը նա-
վամարտից հետո անցել էր Կիլիկիա և այնտեղից մեկնելով ար-
քայի մոտ, նրան ավետել էր հաղթանակը և երկու հազար տաղանդ
բերել պատերազմը շարունակելու համար: Եվագորասը նավամար-
տից առաջ ծովափին ցամաքային դորքերով հարձակվել էր (թշնա-
մու) դորքերի մի մասի վրա և հաղթելով նրան, հուսադրվել էր
ապագայի նկատմամբ, բայց նավամարտում պարտվելուց և պա-
3 շարման ենթարկվելուց հետո արդեն անտրամադիր էր: Այսուհան-
դերձ, որոշելով շարունակել պատերազմը, իր որդուն, Պնիտագո-
րասին, թողեց Կիպրոսում իբրև բոլորի հրամանատար, իսկ ինքը
տասը տրիերա վերցրեց ու գիշերով, թշնամուց գաղտնի, փախավ
Աալամիսից: Ժամանելով Եգիպտոս, նա հանդիպեց թագավորին և
խնդրեց նրան պատերազմը շարունակել վճռականորեն և պարսից
դեմ այս պատերազմը համարել ընդհանուր գործ:

8,2 Տիրիբագոսը ընդհանուր հրամանատարութունը վերցնելուց
հետո հայտարարեց, թե ինքը կհամաձայնվի հաշտութուն կնքել,
եթե Եվագորասը հրաժարվի Կիպրոսի բոլոր քաղաքներից և, թա-
գավորելով միայն Աալամիսում, ամենամյա որոշակի հարկ վճարի
պարսից արքային և կատարի նրա բոլոր հրամանները, ինչպես
3 ծառան՝ տիրոջ: Եվագորասը, թեպետև պալմանները շատ ծանր
էին, սակայն բոլորն ընդունեց, բացի այն, որ իբրև ծառա պար-
տավոր է կատարել տիրոջ բոլոր հրամանները, հակաճառելով, թե
ինքը կհպատակվի իբրև թագավորը թագավորին: Բայց քանի որ
Տիրիբագոսը չէր համաձայնվում, Օրոնտեսը, մյուս դորավարը, նա-
խանձելով Տիրիբագոսի փառքին, գաղտնարար նամակ ուղարկեց
4 Արտաքսերքսեսին Տիրիբագոսի դեմ: Սրան մեղադրում էր, որ նախ
ի վիճակի լինելով գրավել Աալամիսը, այդ չի կատարում, ալ ընդու-
նելով Եվագորասի դեսպաններին, բանակցութուններ է վարում

նրանց հետ գործակցելու համար. այնուհետև՝ որ նա առանձին դաշինք է կնքում լակեդեմոնացիների հետ, քանի որ նրանց հետ բարեկամ է. որ նա մարդ է ուղարկել Պյութոյի²²⁵ մոտ, հարցնելու դիցուհուն իր ծրագրած ապստամբության մասին, իսկ ամենագլխավորը, որ նա գորահրամանատարների բարեհաճությունն է շահում պատիվներով և ընծաներով, ինչպես նաև այլ խոստումներով: Արքան, կարգալով նամակը և հավատալով զրպարտանքին, Օրոնտեսին կարգադրեց ձերբակալել Տիրիբաղոսին և ուղարկել իր մոտ: Երբ Օրոնտեսը կատարեց հրամանը, Տիրիբաղոսը բերվելով արքայի առաջ, խնդրեց քննություն կատարել և առայժմ պահվեց կալանքի սակ: Սակայն, այնուհետև, քանի որ արքան զբաղված էր կադուսիների դեմ պատերազմելով, քննությունը հետաձգվում էր և վճիռը ձգձգվում:

9,1 Արդ՝ Օրոնտեսը ստանձնեց Կիպրոսում զորքերի հրամանատարությունը. սակայն, երբ տեսավ, որ Եվագորասը գարձյալ սրբապանդվելով շարունակում է դիմադրությունը, մյուս կողմից էլ զինվորները զայրացել էին Տիրիբաղոսի ձերբակալության համար և այդ պատճառով անհնազանդ դարձել ու հրաժարվել էին պաշարումից, Օրոնտեսը տագնապեց իրադրության այդպիսի փոփոխությանմբ և մարդկանց ուղարկեց Եվագորասի մոտ, որպեսզի բանակցություններ վարեն հաշտություն կնքելու այն պայմաններով, ինչ
2 (Եվագորասը) առաջարկել էր Տիրիբաղոսին: Եվագորասը զարմանալի կերպով կարող էր արդեն ապահով լինել գերվելու վտանգից և դաշինք կնքեց այն պայմանով, որ ինքը Սալամիսում թագավորի և վճարի տարեկան որոշակի հարկ և իբրև թագավոր՝ հպատակվի թագավորի հրամաններին: Կիպրոսի պատերազմն ահա այսպես վերջացավ. այն տևեց մոտավորապես տաս տարի: Այդ ժամանակի մեծագույն մասը, սակայն, անցավ նախապատրաստություններով և միայն երկու տարին անցավ տևական պատերազմների մեջ:

10,1 Արտաքսերքեսը կադուսիների դեմ պատերազմը վերջացնելուց հետո, նշանակեց Տիրիբաղոսի դատը և պարսից ամենաանվանի մարդկանցից երեքին դատավոր կարգեց: Այդ ժամանակներում էր, որ այլ դատավորներ, մեղադրվելով վատ դատելու մեջ, կենդանի մաշկադերձ արվեցին և նրանց մորթերը փոված լինելով դատավորական աթոռներին, դատավորները դատում էին դրանց վրա նրստած, աչքի առաջ ունենալով վատ դատելու դեպքում սպառնացող
2 պատժի օրինակը: Արդ՝ մեղադրողները ընթերցելով Օրոնտեսի կողմից ուղարկված նամակը, այն բավական համարեցին մեղադրանքի համար: Իսկ Տիրիբաղոսը, պատասխանելով Եվագորասի հետ ունե-

ցած հարաբերությունների հարցին, ասաց, թե Օրոնտեսը հաշտու-
թյուն է կնքել Եվագորասի հետ պայմանով, որ սա սխտք է հպա-
տակվի արքային իբրև թագավոր, մինչդեռ ինքը հաշտության հա-
մար պայման էր գրել, որ Եվագորասը պետք է հպատակվի արքա-
յին ինչպես ստրուկը տիրոջ: Ինչ վերաբերում է պատգամախոսի
մոտ իր գնալուն, ապա նա պատասխանեց, թե աստիճան երբեք
մահվան պատգամ չի տալիս²²⁶. Իր այս խոսքերի ճշմարտությունը
հաստատելու համար նա վկայակոչեց բոլոր ներկա գտնվող հելլեն-
ներին, իսկ լակեզեմոնացիների հետ իր բարեկամության մասին
արդարացավ, ասելով, թե իր օգտի համար չի հաստատել այդ բա-
րեկամությունը, այլ արքայի շահերի: Իր պաշտպանականի վերջում
նա դատավորներին հիշեցրեց այն ծառայությունները, զոր ինքը
նախկինում մատուցել էր արքային:

- 3 Պատմում են, թե Տիրիբուզոսը այլ բաղում ծառայություններ
և մատուցել է արքային, բայց մեկը մեծագույնն էր, որի համար էլ
նա հիացմունք էր պատճառել և դարձել արքայի մերձավորագույն
ընկերը: Քանզի մեկ անգամ, որսորդության ժամանակ, երբ արքան
արշավում էր կառքի վրա, երկու առյուծ հայտնվում են նրա առաջ
և քառածի կառքին լծած ձիերից երկուսին բզկատելուց հետո, հար-
ձակվում են իր իսկ արքայի վրա. այդ սյահին էլ Տիրիբուզոսը հայտ-
4 նըվելով սպանում է առյուծներին և արքային փրկում վտանգից:
Պատմում են, թե պատերազմներում նույնպես նա աչքի է ընկել իր
արիությանը և ատյաններում այնպիսի հարմար խորհուրդներ է
տվել, որ արքան, զրանց հետևելով, երբեք չի սխալվել: Այսպիսի
պաշտպանականից հետո Տիրիբուզոսը, բոլոր դատավորների հա-
մաձայնությամբ, մեղադրանքներից անպարտ համարվեց:

- 11,1 Արքան իր մոտ կանչելով դատավորներին, յուրաքանչյուրին
առանձին հարցրեց, թե արդարության ի՞նչ սկզբունքներ ընդունե-
լով նրանցից ամեն մեկն անպարտ ճանաչեց մեղադրյալին: Արդ,
առաջինն ասաց, թե ինքը այդ մեղադրանքները համարում է կաս-
կածելի, մինչդեռ (Տիրիբուզոսի) ծառայությունները վկայված են
բոլորի կողմից. իսկ երկրորդն ասաց, որ եթե նույնիսկ ճիշտ լինեն
մեղադրանքները, այսուհանդերձ նրա մատուցած ծառայություններն
առավել են, քան մեղանշումները: Երրորդն ասաց, թե ինքը հաշվի չի
առնում նրա մատուցած ծառայությունները, քանզի Տիրիբուզոսը
փոխարենը արքայից ստացել է բազմապատիկ շնորհներ և պա-
տիվներ: Բայց երբ մեղադրանքները առանձին էլ դիտում, ապա
թվում է, թե մեղադրյալը ոչ մի մասնակցություն չունի այդ ամե-
2 նին: Արքան գովեց դատավորներին նրանց արդար վճռի համար և

Տիրիբագոսին շնորհեց բարձրագույն պարգևներ, ինչպես ընդունված կարգն էր: Մինչդեռ Օրոնտեսին համարելով ստահող մեղադրանքներ հորինող, վտարեց իր բարեկամների շարքերից և ենթարկեց ծայրահեղ ստորացումների:

- 90,1 Այդ ժամանակ²²⁷ պարսիկների (իշխանության) դեմ ապստամբեցին ասիական ծովափի բնակիչները և սատրապներից ու զորավարներից ոմանք նույնպես խոռվություն բարձրացնելով պատերազմ սկսեցին Արտաքսերքսեսի դեմ: Նույն ժամանակ Տաքոսը ևս, Եդիպտոսի թագավորը, որոշելով պատերազմ սկսել պարսիկների դեմ, նավեր կառուցեց և հետևակ զորք գումարեց: Նա հելլենական քաղաքներից վարձկաններ հավաքողրեց ու համոզեց լակեդեմոնացիներին ևս մասնակցել պատերազմին: ...Երբ այսպիսի միացյալ արշավանք սկսվեց պարսիկների դեմ, արքան ևս սկսեց պատերազմի պատրաստություն տեսնել: Քանզի միաժամանակ պետք էր պատերազմել թե՛ եդիպտական թագավորի դեմ, թե՛ Ասիայի հելլենական քաղաքների և թե՛ լակեդեմոնացիների՝ ու սրանց զինակիցների՝ սատրապների ու զորավարների դեմ, որոնք տիրում էին ծովափնյա վայրերին ու պայմանավորվել էին համագործակցելու Սրանցից ամենահայտնիներն էին Արիոբարդանեսը, Փոյուգիայի սատրապը, որը Միթրիդատեսի մահից հետո տիրացել էր սրա իշխանությանը, Մավսոլոսը²²⁸, Կարիայի իշխանավորը, որը տիրում էր բազում ամրությունների և կարևոր քաղաքների, որոնց կենտրոնն ու քաղաքամայրը Հալիկաոնասոսոսն էր իր հայտնի միջնաբերդով ու կարիական արքունիքով: Սրանց միացան նաև Օրոնտեսը²²⁹, Մյուսիայի սատրապը և Ավտոփրագատեսը, Լյուդիայի սատրապը: Բացի հոնիացիներից (ապստամբության) հարել էին նաև լյուկիացիները և պիսիդիացիները և պամփյուլիացիները և կիլիկեցիները, ինչպես նաև սիրիացիները և փյունիկեցիները և գրեթե բոլոր մերձափնյա բնակիչները: Այսպիսի խոշոր ապստամբության պատճառով արքայի եկամուտների կեսը կրճատվել էր և մնացածը բավական չէր ապահովելու պատերազմի կարիքները:

- 91,1 Արքայի դեմ ապստամբություն բարձրացրածները ընդհանուր հրամանատարության համար զորավար ընտրեցին Օրոնտեսին: Սա, ստանձնելով հրամանատարությունը, ինչպես նաև օտար վարձկաններ հավաքագրելու համար դրամ՝ քսան հազար մարդու մեջ տարի ոռճիկ տալու քանակությամբ, դավաճանեց այդ վստահության: Քանզի նա ենթադրելով, որ արքայից կստանա ոչ միայն մեծ պարգևներ, այլև առափնյա բոլոր վայրերի սատրապությունը, եթե ինքը

պարսիկների ձեռքը հանձնի ասլտամբներին, նախ ձերբակալելը
 դրամը բերողներին և նրանց ուղարկեց Արտաքսերքսեսին, այնու-
 հետև նա քաղաքների մեծ մասը և վարձկան զինվորներից շատերին
 հանձնեց արքայի կողմից ուղարկված հրամանատարների ձեռքը:

2 Նույն եղանակով Կապպադովկիայում ևս դավաճանություն տեղի
 ունեցավ, որտեղ զարմանալի և անսպասելի մի բան պատահեց:
 Քանզի Արտաքաղոսը²³⁰, արքայի զորավարը, մեծ զորքով ներ-
 խուժել էր Կապպադովկիա, իսկ այդ երկրի սատրապ Դատամեսը
 դուրս եկավ նրա դեմ, քանի որ նա հավաքել էր մեծաքանակ հեծե-
 լազոր և իր ծառայության տակ ունեռ երկու բյուր վարձկան հե-

3 տակազոր: Բայց Դատամեսի աները, որն առաջնորդում էր հեծելա-
 զորը, շնորհքի արժանանալու ցանկությունամբ, ինչպես նաև մտածելով
 իր անձնական ապահովության մասին, զիջերով հնոացավ ու փա-
 վսաձ իր զինվորների հետ դեպի թշնամին, քանի որ դեռևս նախորդ
 օրը նա Արտաքաղոսի հետ պայմանավորվել էր դավաճանություն

4 մասին: Այնժամ Դատամեսը, կանչելով իր վարձկաններին և նրանց
 սլարդներ խոստանալով, արշավեց իր մոտից դասալիք եղածների
 դեմ: Նրանց պատահելով արդեն թշնամու հետ միանալու պահին,
 ինքը հարձակվեց Արտաքաղոսի զորամասի և հեծյալների վրա,

5 սպանեց բոլոր ձեռնամարտի բռնվածներին: Իսկ Արտաքաղոսը,
 սկզբում անգիտանալով իրականությունը և կասկածելով, թե Դա-
 տամեսից հեռացած դասալիքները նորից դավաճանում են, ուստի
 վիրեց իր զինվորներին սպանել մոռացող բոլոր ձիավորներին: Եվ
 Միթրոբարզանսը²³¹ փակված գտնվելով երկու կողմերի միջև, քանի
 որ մի կողմը կռվում էր նրա դեմ որպես դավաճանի, իսկ մյուս
 կողմն ուզում էր նրան պատժել իբրև կրկնադավաճանի, դժվարին
 կացության մատնվեց: Ու քանի որ դրությունը մտածելու ժամանակ
 չէր թողնում, նա ապավինեց իր արիության և երկու կողմերի դեմ
 կռվելով, մեծ կոտորած պատճառեց: Երբ, վերջապես, ավելի քան
 տասը հազար մարդ էր կոտորվել, Դատամեսը Միթրոբարզանսի
 մնացած զորքը փախուստի մատնելուց և շատերին սպանելուց հե-

6 տո, շեփորով ետ կանչեց իր հալածող զինվորներին: Կենդանի մնա-
 ցած հեծյալներից ոմանք վերադառնալով Դատամեսի մոտ, խնդրե-
 ցին նրա ներողամտությունը, մյուսները ոչինչ չարեցին և փախչելու
 ոչ մի տեղ չունենալով, վերջապես մոտ հինգ հարյուր մարդ շրջա-

7 պատվեցին Դատամեսի զորքերի կողմից ու կոտորվեցին: Այսպիսով,
 Դատամեսը, որը դեռ նախապես հիացրել էր զորավարման իր հրա-
 տությունամբ, այժմ առավել ևս հուշակվեց իր արիության և ուղիմա-
 վարությունամբ: Բայց Արտաքսերքսես արքան իմանալով Դատամեսի

ուազմական հաջողութեան մասին, շտապեց աղատվել նրանից ու դավադրութեամբ սպանեց:

93,1

Քիչ անց պարսից արքան մահացավ, քառասուններէ տարի տիրելուց հետո, և թագավորութիւնը ժառանգեց Օքոսը, որը վերանվանվեց Արտաքսերքսես. սա ևս թագավորեց քսաներեք տարի: Քանի որ (նախորդ) Արտաքսերքսեսը լավ էր թագավորել և եղել էր շատ խաղաղասեր և բարեբախտ, պարսիկները նրանից հետո թագավոր դարձողներին վերանվանում էին և սահմանում, որպէսզի կոչվեն նրա անունով:

Գիրք 16

34,1

Այս ընթացքում²³² Առտաբագոսը, որն ապստամբել էր սրբալի դեմ, շարունակում էր պատերազմել արքայի կողմից այդ պատճառով ուղարկված սատրապների դեմ: Սկզբում, երբ աթենացիների զորավար Քարեսը նրա հետ ղաշնակցել էր, նա ուժգին դիմադրում էր սատրապներին. բայց երբ Քարեսը հեռացավ և ինքը մենակ մնաց, համույեց թեբեացիներին, որպէսզի օժանդակ զորք ուղարկեն իրեն: Սրանք Պամմենեսին զորավար ընտրելով, նրան հանձնեցին հինգ հազար զինվոր և ուղարկեցին Ասիա: Արդ, Պամմենեսը, օգնելով Արտաբագոսին և երկու խոշոր ճակատամարտերում հաղթելով սատրապներին, մեծ փառք ձեռք բերեց թե՛ իր և թե՛ բեովտիացիների համար:

90,2

Այդ տարին էլ²³³ Արիոբարզանեսը մահացավ քսանվեց տարի թագավորելուց հետո, այնուհետև թագավորութիւնն անցավ Միթրիդատեսին, որը գահակալեց երեսունհինգ տարի:

91,2

Այդ ժամանակ էլ²³⁴ Փիլիպպոս թագավորը²³⁵, հելլենների կողմից առաջնորդ հռչակվելով, պատերազմ ձեռնարկեց պարսիկների դեմ. նա Ասիա ուղարկեց Ատտալոսին և Պարմենիոնին²³⁶, նրանց տալով իր զորքերի մի մասը և հրամայելով աղատագրել (Ասիայի) հելլենական քաղաքները²³⁷, մինչդեռ ինքը, ցանկանալով պատերազմն սկսել աստվածների կարծիքն իմանալուց հետո, հարցում արեց Պյութիային, թե արդյո՞ք ինքը կհաղթի պարսից արքային: Գուշակը նրան տվեց հետևյալ պատգամը. «Պսակված է ցուր²³⁸, արդեն վախճանն է. առկա է նաև ողջակիզողը»:

- 5,3 Քանի որ մենք այժմ պետք է նորից՝ գրենք պարսից թագավորության մասին, ապա անհրաժեշտ է փոքր-ինչ վերադառնալ նախորդ դեպքերի պատմության: Երբ դեռևս Փիլիպպոսը թագավոր էր, Պարսկաստանում սփրում էր Օքոսը, որն իր հպատակների նկատմամբ վերաբերվում էր դաժանաբար ու բանությամբ: Քանի որ նա իր խիստ վարվեցողությամբ ատելի էր դարձել, հազարապետ²³⁹ Բագոասը, որը թեպետև իր հատկություններով ներքինի էր, բայց իր էությամբ խորամանկ ու ռազմասեր, ինչ-որ բժշկի օգնությամբ թունավորելու միջոցով սպանեց Օքոսին և թագավորությունը հանձնեց արքայի ամենակրտսեր որդուն՝ Արսեսին: Եւ միաժամանակ ոչնչացրեց նաև (նոր) թագավորի եղբայրներին, որոնք բոլորովին երիտասարդ էին, որպեսզի պատանի (թագավորը) մեկուսացված լինելով, իրեն լուռ ևս հպատակվի: Բայց պատանին իր բացահայտ դժգոհությունը հայտնեց կատարված անօրեննությունների մասին և արդեն ակնհայտ էր, որ պատրաստվում է պատժել ոճիրների հեղինակին. ուստի և Բագոասը, լսելով նրա մտադրությունը, սպանեց Արսեսին և նրա որդիներին, երբ արդեն թագավորել էր 5 երեք տարի: Այսպիսով, քանի որ առքունի տոհմը ոչնչացվել էր և ուղիղ գծով ոչ ոք չէր մնացել իշխանությունը ժառանգելու համար, Բագոասը նախրնտրեց արքունիքին մոտիկ մարդկանցից մեկին, Դարեհ անունով և նրան դարձրեց թագավոր²⁴⁰: Սա որդին էր Արսանեսի և թոռ Օստանեսի, որը սլարսից Արտաքսերքսես արքայի ²⁴¹ եղբայրն էր: Ըսկ Բագոասի հետ կատարվեց այսպիսի հիշարժան դեպք: Նա իր ոճրագործ սովորության համաձայն փորձեց թունավորելով վերացնել Դարեհին: Բայց արքան տեղեկանալով դավադրության մասին, Բագոասին հրավիրեց իր մոտ և ուրախության պահին բաժակը նրան տալով, ստիպեց խմել թույնը:
- 6,1 Դարեհը դահին արժանացավ այն պատճառով, որ նրան իր քաջությամբ մյուս սլարսիկներից առավել գերազանց էին համարում: Քանզի մի անգամ, երբ Արտաքսերքսես արքան²⁴² սլատնորաղմ էր մղում կաղուսիների դեմ, սրանց միջից մեկը, որը մեծապես հռչակված էր իր ուժով և արիությամբ, մարտակոչ նետեց պարսիկներից ցանկացած մարդուն, որպեսզի մենամարտի նրա հետ. այնժամ ոչ ոք չհամարձակվեց (մարտահրավերն) ընդունել, այլ միայն Դարեհը վտանգին ընդառաջ գնալով, սպանեց կովի հրավիրողին և արքայից մեծ պարգևներ ստացավ, իսկ պարսիկները նրան տվեցին քաջության առաջնությունը: Ահա այս սխրա-

գործուիջան համար էր, որ նրան արժանի համարեցին զահն ստանալու նույն այն տարին, երբ Փիլիպպոսը վախճանված լինելով, թագավորութունը ժառանգեց Ալեքսանդրը:

3 Բախտն այսպիսի այրին ընտրեց իբրև հակառակորդ Ալեքսանդրի հզորութեան, ուստի և նրանք առաջնութեան շուրջ իրար միջև շատ: և մեծ մարտեր մղեցին: Սակայն բոլոր գործերի մասին մենք ամեն ինչ իր տեղում կպատմենք: Այժմ դարձյալ կվերադառնանք մեր պատմութեան շարունակութեանը:

7,1 Արդ, Դարեհը ստանձնելով թագավորութունը նախքան Փիլիպպոսի վախճանվելը, մտահոգված էր Մակեդոնիայի հետ վերահաս պատերազմը կանխելու, բայց երբ սա վախճանվեց, (Դարեհը) ար-

2 համարհելով Ալեքսանդրի երիտասարդ տարիքը, ազատվեց տագնապից: Եվ երբ Ալեքսանդրի գործունեութեան հզորութունը և շեշտակիութունը պարտագրեց համայն հելլեններին նրան առաջնորդ ճանաչել, այնժամ Դարեհը նորից տագնապեց և մեծ ջանասիրու-

թյամբ սկսեց իր ուժերը նախապատրաստել: Նա կառուցեց բազմա-

3 թիվ տրիերաներ և կազմակերպեց մեծ քանակությամբ զորքեր: Իսկ հրամանատարներ նշանակեց իր լավագույն զորականներին, որոնց

8 քիչում էր նաև Մեմնոն Հոռոսցին, որն առանձնապես աչքի էր ընկնում իր արիությամբ և ռազմական գործի իմացությամբ: Ահա սրան արքան, հինգ հազար վարձկան տալով, հրամայեց քայլել Կյուզիկոս քաղաքի²⁴³ վրա և փորձել գրավել այն: Ուստի և սա այդ զորքերով

8 առաջ շարժվեց Իդա լեռան²⁴⁴ վրայով: ...Արդ, Մեմնոն անցնելով

այս լեռը, հանկարծակի հարձակվեց կիզիկեցիների քաղաքի վրա և քիչ էր մնացել գրավել այն: Բայց ձախողվելով իր մտադրության մեջ, ավերեց նրանց երկիրը և ձեռք բերեց մեծ ավար:

18,2 Այնժամ էլ պարսկական սատրապները և զորավարները դանդաղեցին խանգարելու մակեդոնացիների անցումը, բայց ի մի գումարվելով խորհրդակցեցին, թե ինչպե՞ս դիմադրեն Ալեքսանդրին: Այսպես, Մեմնոն Հոռոսցին, որը հռչակված էր իր ռազմական գիտելիքներով, խորհուրդ էր տալիս չկռվել դեմառդեմ, այլ երկիրը ավերել և, պարենի պակասութուն պատճառելով, խոչընդո-

3 տել մակեդոնացիներին²⁴⁵ առաջխաղացումը, մյուս կողմից էլ ծովային ու ցամաքային ուժեր ուղարկել Մակեդոնիա և ամբողջ պատերազմը փոխադրել Եվրոպա: Այս մարդը, ինչպես ականհայտ դարձավ հետևանքներից, տվել էր լավագույն խորհուրդը, բայց չկարողացավ համոզել մյուս առաջնորդներին, որոնց թվում էր, թե այդ

4 խորհուրդները արժանի չեն պարսիկների մեծագործության: Այսպիսով, քանի որ հաղթանակեց ճակատամարտելու տեսակետը,

նրանք բոլոր կողմերից զորքերը կանչեցին և մակեդոնացիների զորքերից բազմապատիկ դառնալով, արշավեցին դեպի հելլենս-պոնտյան Փոյուդիա: Այստեղ էլ նրանք բանակեցին Գրանիկոս դե-աի ափին, իրենց համար պաշտպանական զիծ դարձնելով այդ գե-տի հունը:

- 19,1 Իսկ Ալեքսանդրը, տեղեկանալով բարբարոսական զորքերի գումարվելը, արագորեն առաջ շարժվեց ու բանակեց թշնամու դեմ հանդիման, այնպես, որ Գրանիկոսը հոսում էր (թշնամի) բանակնե-
2 ըրի միջև: Բարբարոսները, դրաված լինելով բարձրադիր ափը, հան-գիստ էին մնում. նրանք որոշել էին հարձակվել թշնամու վրա, երբ սա կփորձեր դետն անցնել, քանզի նրանք կարծում էին, թե կկարողանան կռվում հեշտությամբ գերազանցել մակեդոնացիների
3 փաղանգին, երբ սա կոտորակված լինի: Բայց Ալեքսանդրը լուսա-բացին իր ուժերը քաջաբար անցկացրեց գետով և, նախքան թշնա-մին կկարողանար խանգարել, իր զորքերը դասավորեց ճակատա-մարտի համար հարմար ձևով²⁴⁶: Իրենց հերթին բարբարոսները մակեդոնացիների զորաշարի հանդեպ դասավորեցին իրենց ամ-բողջ հեծելագորայիններին, որոշած լինելով նրանց միջոցով վճռել
4 ճակատամարտի ելքը: Մեմնոն Հոդոսցին և սատրապ Արսամե-նեսը²⁴⁷, յուրաքանչյուրն իր հեծելագորով, գրավել էին ձախ թևը, հաջորդաբար դասավորվել էր Արսիտեսը²⁴⁸ սլափլագոնացի հեծյալ-ներով, այնուհետև հոնիացի սատրապ Սպիթրոբատեսը հյուրկա-նացի հեծյալներով: Աջ թևը զբաղեցրել էին հազար մեդացիներ, Հոնոմիթրեսի երկու հազար ձիավորները և նույնքան էլ բակտրիա-ցի հեծյալներ. կենսարոնը գրավել էին մյուս ազգերի հեծյալները, որոնք մեծաթիվ էին և ընտիր իրենց արիությանբ: Ամբողջ հեծ-
5 յալների թիվը տասը հազարից ավելի էր: Պարսից հետևակը տասը բյուր մարդուց ավելի էր²⁴⁹, բայց նրանք (հեծյալներից) ետև դա-սավորված լինելով, մնում էին հանգիստ, քանզի (ենթադրում էին, թե) հեծյալները կկարողանան նեղել մակեդոնացիներին:
6 Երբ երկու կողմերի հեծյալները ոգևորությանբ մարտի նետ-վեցին, թեսասլական հեծելագորը, որը դիրքավորվել էր ձախ թևում, Պարմենիոնի գլխավորությանբ քաջաբար ընդունեց իր դիմաց կանգնած թշնամու հարձակումը, իսկ Ալեքսանդրը, որը լավագույն հեծյալներով զիրք էր գրավել աջ թևում, ինքն առաջինը նետվեց պարսիկների վրա և ձեռնամարտի մտնելով, թշնամուն մեծ կոտորած պատճառեց:

20,1 Բայց քանի որ բարբարոսները դիմադրում էին արիաբար և իրենց ոգևորությունը հակադրում էին մակեդոնացիների քաջարիու-

թյան, բախտը միևնույն վայրում ի մի բերեց լավագույններին,
2 հաղթանակը վիճարկելու համար: Քանզի Հոնիայի սատրապ Սպիթ-
րոբատեսը, որը ծագումով պարսիկ էր և Դարեհ՝ արքայի փեսան և
իր քաջությամբ անվանի, հեծյալների մեծ զորամասի հետ նետովեց
մակեդոնացիների վրա, իրեն զինակից ունենալով արքունի տոհ-
մից²⁵⁰ քառասուն մարդ, որոնք առանձնապես քաջարի էին, սլացավ
գիմադրողների վրա և անվեհեր կռվելով նրանցից ոմանց սպանեց,
3 ուրիշներին էլ վիրավորեց: Ու քանի որ նրա հարձակումը դարձել էր
վտանգավոր, Ալեքսանդրը իր ձիուն շուռ տվեց գեպի սատրապը և
ձիավարեց բարբարոսի վրա:

Արդ, պարսիկը կարծելով, որ մենամարտելու այս պատեհ
առիթը աստվածներն են իրեն շնորհել, հուսադրվեց, որ իր իսկ քա-
ջագործությամբ Ասիան պետք է ազատվի վտանգներից և Ալեք-
սանդրի հուշակված խիզախությունը պետք է սանձահարվի իր սե-
փական ձեռքերով և պարսիկների փառքը պետք է ալգպիսով փրկ-
վի: Նախ իր տեղը շարտեց Ալեքսանդրի վրա այնպիսի հուժկու
թափով, որ նրա նիզակը ծակելով Ալեքսանդրի վահանը և աջ ուսա-
4 ծածկը, թափանցեց զրահի մեջ: Իսկ (Ալեքսանդր) արքան քաշեց
հանեց իր բազուկից կախ ընկած տեղը և դեն նետեց այն և աս-
պանդակներով իր ձիուն խթանելով և օգտագործելով իր սլացքի
համար թափը, իր նիզակը մխրճեց սատրապի կրծքի ուղիղ մեջ-
5 տեղը: Այս որ կատարվեց, երկու կողմից էլ մոտիկ գտնվող շար-
քերը, ի տես այդ քաջագործության, բարձր ճշացին, այնուհանդերձ,
լանջապանակի վրա նիզակի ծայրը ջարդվեց և ջարդված բեկորը
ետ թռավ, այնժամ պարսիկը սուրը մերկացրեց և ինտվեց Ալեք-
սանդրի վրա, իսկ թագավորը ճիշտ ժամանակին ծայրը նորից ամ-
րացնելով իր նիզակին, կարողացավ հարված հասցնել ուղիղ նրա
6 դեմքին: Նույն այդ պահին Հոոսակեսը, ընկածի եղբայրը, հեծյալի
վրա հասնելով, իր թրով Ալեքսանդրի գլխին այնպիսի վտանգավոր
հարված հասցրեց, որ պատռեց նրա սաղավարտը և թեթևակի քեր-
7 ծեց մաշկը: Երբ Հոոսակեսը պատրաստվում էր նորից հարված
իջեցնելու նույն այդ կետին, Կլեյտոսը²⁵¹, որը «սև» մականունն էր
ստացել, իր ձիով մոտիկ սլացավ ու կտրեց բարբարոսի բազուկը:
21,1 Տոհմակիցները համախմբվելով շրջափակեցին երկու ընկած-
ներին²⁵². նրանք նախ իրենց նիզակները նետեցին Ալեքսանդրի
վրա, այնուհետև համախումբ կռվելով, ամեն տեսակ վտանգները
4 դիմագրավեցին ու խոյացան թագավորին սպանելու: Թեպետև սա
բազում և մեծ վտանգների ենթարկվեց, բայց չպարտվեց թշնամի-
ների բազմությունից, այլ հակառակ այն բանին, որ կրծքին երկու

հարված էր ստացել, մեկ հարված էլ սաղավարտին և երեք հարված էլ այն զրահի վրա, որ վերցրել էր Աթենասի տաճարից²⁵³, նա շլիչեց, ասլ լիցքավորված ոգու արիությամբ, նա հաղթահարեց

3 բոլոր դժվարությունները: Այս ամենից հետո իր ղեմ կռված մյուս պարսիկ առաջնորդներից (ոմանք) նույնպես ընկան, որոնցից ամենաերևելիներն էին Ատիդուեսը և Փառնակեսը, Դարեհի կնոջ եղբայրները, ինչպես նաև Միթրոբուղանեսը, որն առաջնորդում էր կապապաղովկիացիներին²⁵⁴:

4 Այսպիսով, երբ արդեն զորահրամանատարներից շատերն սպանվել էին և սլարսկական բոլոր զորամասերը պարտվել էին մակեդոնացիների կողմից, առաջինը ստիպվեցին փախուսալի դիմել Ալեքսանդրին հանդիման կովողները, իսկ հետո նաև մյուսները, զրանով իսկ թաղավորը, բոլորի վկայությամբ, իր քաջագործությամբ առաջնությունը նվաճեց և համարվեց ձեռքբերված հաղթանակի գլխավոր պատճառը: Հաջորդաբար թեսսալացիների հեծյալներն իրենց ջոկատները լավագույնս օգտագործելով և աննման

5 կռվելով, քաջության մեծ համբավ ձեռք բերեցին: Երբ արդեն (պարսկական) հեծելազորը փախուստի էր դիմել, հետևակները մտան մարտի, բայց երկար շկոպեցին, քանզի բարբարոսները, ահաբեկված հեծելազորի նահանջից, հոգեպես ընկճվեցին և շուտով

6 փախուստի մատնվեցին: Պարսկական հետևակից սպանվեցին ավելի քան տասը հազար, իսկ հեծյալներից՝ ոչ պակաս քան երկու հազար, մինչդեռ գերի վերցվածները քսան հազարից ավելի էին: Մարտից հետո թաղավորը սպանվածներին թաղեց մեծ շուքով²⁵⁵. այդպիսի հարզանք մատուցելով, նա ձգտում էր իր ղինվորներին ավելի ողևորություն ներշնչել ճակատամարտի ժամանակ վտանգներին գիմագրավելու համար:

7 Վերականգնելով իր ուժերը, Ալեքսանդրը զորքը շարժեց Լյուդիայի միջով և վերցրեց Սարդես քաղաքն իր միջնաբերդով և զրանցում պահվող բոլոր գանձերով, քանզի սատրապ Միթրիները քաղաքը հոժարակամ հանձնել էր նրան²⁵⁶:

27,6 Սրանք²⁵⁷ եռանդագին պատերազմելով, ամբողջ երկիրը, մինչև Լեծն Փոյուզիա²⁵⁸. նվաճեցին, իրենց զորքերը պահելով թշնամու

7 նվաճված երկրի հաշվին: Իսկ Ալեքսանդրը նվաճեց ամբողջ ծովափը, մինչև Կիլիկիա շատ քաղաքներ գրավեց և ամրացրած բերդերը մեծ վճռականությամբ պաշարելով, բոնի ենթարկեց իրեն:

31,1 Ուստի և նա²⁵⁹ բոլոր կողմերից իր զորքերը կանչեց, հրամա-

յելով գումարվել Բաբելոնում: Նա հարցուփորձեց իր ընկերներին և տոհմակիցներին և նրանց միջից ընտրեց հարմարագույններին, նրանցից ոմանց ըստ արժանվույն հրամանատարութիւն հանձնարարելով, իսկ մյուսներին հրամայելով կռվել իր կողքին: Երբ գորագումարի համար սահմանված ժամանակը հասավ, բոլորը հավաքվեցին / Բաբելոնում: Գումարված զինվորների ամբողջ թիվը կազմեց՝ հետևակը ավելի քան քառասուն բյուր²⁶⁰, իսկ հեծելազորը ոչ պակաս տասը բյուրից:

Արդ, այսքան զորքով Դարեհը ղուրս եկավ Բաբելոնից և առաջացավ դեպի Կիլիկիա, իր հետ վերցնելով իր կնոջը և զավակներին՝ տղա և երկու աղջիկ, ինչպես նաև իր մորը:

32,2 Ալեքսանդրը տեղեկանալով, որ Դարեհը գտնվում է մի քանի օրվա ճանապարհի հեռավորութեան վրա, Պարմենիոնին զորքով ուղարկեց նախապես գրավելու անցումները, որ կոչվում էին Պյուլայ²⁶¹: Պարմենիոնը հասնելով այդ վայրերը, բարբարոսներին, որոնք նախապես գրավել էին դժվարամատույց անցումները, գրեհով ղուրս
3 շարտեց և տիրացավ դրանց: Դարեհը ցանկանալով իր զորքը դարձրնել դյուրաշարժ, գումակը և ավելորդ ամբոխին թողեց Սիրիայի Դամասկոսում, իսկ այժմ, երբ լսեց, թե Ալեքսանդրը արդեն նախապես գրավել է անցումները և կարծելով, թե նա չի համարձակվի կռվել դաշտում, իր ընթացքը արագացրեց, շտապելով հանդիպել
4 նրան: Տեղի բնակիչները արհամարհելով մակեդոնացիներին, որոնց փոքրաթիվ լինելու պատճառով, և առավել զարմացած պարսիկների բազմութեամբ, լքեցին Ալեքսանդրին և միացան Դարեհի զորքերին, նրանք մեծ հոժարութեամբ պարսիկներին հայթայթում էին պարեն և անհրաժեշտ ամեն ինչ և իրենց մտքում կանխանշում էին բարբարոսների հաղթանակը: Իսկ Ալեքսանդրը երկյուղ ազդելով գրավեց իսսոսը, որը նշանակալից քաղաք էր:

33,1 Երբ հետախույզները հաղորդեցին նրան, թե Դարեհը գտնվում է երեսուն ասպարեզ հեռավորութեան վրա և զարմանալի արագութեամբ առաջ է շարժվում իր զորքերով, որոնք ընդունել են ահեղազուրու ռազմական դասավորութիւն, Ալեքսանդրը կռահեց, թե սա աստվածների կողմից իրեն շնորհված հարմար առիթ էր, որպեսզի մեկ ճակատամարտում հաղթելով, կործանի պարսկական տերութիւնը. ուստի և նա համապատասխան խոսքերով ոգևորեց իր զինվորներին վճռական ճակատամարտի համար, զինվորների գնդերը և հեծյալների ջոկատները դասավորեց տեղանքի հարմարութեան համեմատ. հեծյալներին կարգեց ամբողջ զորքի առաջ, իսկ հետե-
2 վակի փաղանգին հրամայեց մնալ պահեստում, հեծյալներից ետև:

ինքր, վերցնելով հեծյալներից լավագույններին, աչ թևով առաջ
շարժվեց, հանդիպելու թշնամուն, իսկ ձախ թևը դբաղեցնում էին
3 թևսսալացիների հեծյալները, որոնք առանձնապես աչքի էին ընկ-
նում իրենց արիությամբ և հմտությամբ: Երբ զորքերը արդեն մո-
տեցան իրար մինչև նետընկեց, պարսիկները Ալեքսանդրի զեմ նե-
տերի այնպիսի քանակ արձակեցին, որ դրանք օդում իրար բախ-
4 վելով, մեծապես թուլացնում էին հարվածները: Երբ երկու կողմերի
շեփորահարները հարձակում ազդարարեցին, առաջինը մակեդո-
նացիները միաբերան աղաղակելով, աննախընթաց ազմուկ բարձ-
րացրին, իսկ երբ նրանց սպատասխանեցին բարբարոսները, մոտա-
կա բոլոր լեռները արձագանքեցին, և այս վերջին գոռոցը գերա-
զանցեց մակեդոնացիների աղաղակին, քանի որ հիսուն բյուր մարդ
գոռում էր միաբերան:

5 Ալեքսանդրը իր հայացքը ուղղելով բոլոր կողմերը, անհամբե-
րությամբ փնտրում էր Դարեհին, և երբ նկատեց նրան, անմիջապես
իր հեծյալների հետ նետվեց իր իսկ արքայի կողմը, նպատակադրվե-
լով ոչ այնքան ջախջախել պարսիկներին, որքան նվաճել հաղթա-
6 նակը իր իսկ ձեռքով: Այդ նույն ընթացքում մնացած բոլոր հեծ-
յալները ևս նետվել էին իրար վրա և շատերն արդեն սպանվել էին և
կովողների քաջարիության պատճառով բոլորի համար կսվի հաղ-
թվում էր անորոշ. քանդի հաղթանակի նժարը տատանվում էր այս
և այն կողմ, քանի որ շարքերը մերթ նահանջում էին, մերթ էլ նո-
7 րից առաջ գալիս: Արդ, նիզակը նետելիս կամ թրով հարվածելիս
ոչ մեկը չէր վրիպում, քանի որ շարքերի խտությունը հարմար թի-
րայս էր: Ուստի և շատերը փոխադարձ վերքեր ստանալով ընկնում
էին, մինչև վերջին շունչը կատաղորեն կովելով, այնպես, որ կյան-
քը նրանց ավելի շուտ էր լքում, քան արիությունը:

34.1 Յուրաքանչյուր զորամասի հրամանատար կովելով իր ենթա-
կանների զուխն անցած, իր արիությամբ շատերին մղում էր քաջա-
գործության: Ուստի և կարելի էր տեսնել բազմաթիվ և բազմապիսի
վիրավորների և շատ մուկեզին մենամատենո, հաղթանակի հասնելու
2 մղումով: Այսպես, պարսիկ Օքսաթրեսը, որը Դարեհի եղբայրն էր և
մեծ զովեստների էր արժանացել իր քաջության համար, տեսնելով,
որ Ալեքսանդրը անկասելի թափով սլանում է Դարեհի վրա, բռ-
նրկվեց իր եղբոր բազդին հաղորդակից դառնալու ցանկությամբ:
3 Արդ, վերցնելով իր ջոկատի լավագույն հեծյալներին, նրանց ուղեկ-
ցությամբ սլացավ Ալեքսանդրի զեմ և կարծելով, թե եղբայրասի-
րության այդ ցուցադրումը պարսիկների մեջ իր անվանը մեծ համ-
բավ կրերի, սկսեց կովել Դարեհի քառածի ուղմակառքի առաջ և

4 Թշնամու հետ ձեռնամարտի բռնվելով, իր արիությամբ և ուղիղ-
կան հմտությամբ շատերին սպանեց: Բայց քանի որ Ալեքսանդրի
զորագնդի մարտիկները գերազանցում էին իրենց արիությամբ,
Պարեհի քառածի ուղիղակառքի շուրջ սպանվածների բազում դիակ-
ներ կիտվեցին, քանզի բոլոր (մակեդոնացիները) մտածելով միայն
հարվածել (պարսից) արքային, այս նպատակով եռանդագին մըր-
ցում էին իրար հետ: շխնայելով նույնիսկ իրենց կյանքը²⁶²:

5 Այս ճակատամարտում ընկան պարսից հայտնի առաջնորդ-
ներն էլ շատերը, որոնց թվում էին Անտիքսյուեսը և Հոեոմիթրեսը և
Սեփատոսի սատրապ Տասիակեսը²⁶³, Մակեդոնացիների բանակից
նույնպես շատերն ընկան և ինքը Ալեքսանդրը ևս վիրավորվեց աղ-

6 դըլից, երբ թշնամին շրջապատել էր նրան: Պարեհի ուղիղակառքին
լծված ձիերը ծածկված լինելով վերքերով և սարսափած իրենց
շուրջը կիտված դիակներից, չէին ենթարկվում իրենց սանձերին և
ոխշ էր մնացել նույնիսկ Պարեհին քշելն թշնամիների մեջ: Ուստի
և (պարսից) արքան այս ծայրագույն վտանգի առաջ ինքը խլեց
Լրասանները, ստիպված լինելով հրաժարվել իր (արքայական) դիր-
քը բարձր պատկառանքից և ոտնահարել պարսից արքաների հինա-

7 վառց սովորույթը: Պարեհի սպասավորները մոտիկ բերեցին մի
երկրորդ քառածի և նրա վրա փոխադրվելիս տեղի ունեցած անկար-
գութան ժամանակ Պարեհը, տեսնելով վրա հասնող թշնամուն, ա-
ռու սարսափով համակվեց:

Տեսնելով իրենց արքայի խռովյալ վիճակը, պարսից մեծերը
փախուստի դիմեցին, երբ մոտիկ գտնվող հեծյալները ևս նույնն

8 արեցին, շուտով ամբողջ հեծելազորը փախուստի մատնվեց: Ու քա-
նի որ փախուստը տեղի էր ունենում նեղ ճանապարհով և դաժան
վայրերով, ապա նրանք իրար վրա ընկնելով իրար էին կոխրտում
և շատերը սպանվեցին առանց պատերազմում վերք ստանալու:
Քանզի ուղիղակները կուտակվել էին իրար վրա, ոմանք արդեն
առանց դենքի, մյուսներն իրենց ամբողջ զրահով, ոմանք էլ իրենց
թրերը մերկացրած, ջած էին տապալում նրանց, ովքեր ընկնում էին
իրենց վրա: Այսուհանդերձ, հեծյալների մեծ մասը հասնելով դաշ-

9 տան գտնել դաշնակից քաղաքներում: Իսկ մակեդոնացիների փա-
ղանգը և պարսից հետևակ զորքերը կարճատև մարտի բռնվեցին,
քանզի հեծելազորի արդեն ողջ հաղթանակի նախամարտն էր եղել:
Շուտով բարբարոսների ամբողջ բանակը փախուստի մատնվեց և
քանի որ այսքան բյուրավոր մարդիկ նեղ վայրերով էին փախչում,
ապա ամբողջ վայրը ծածկվեց դիակներով:

35,1 Գիշերը վրա հասած լինելով, պարսիկները կարողացան հեշտոթյամբ ցրվել տարբեր ուղղություններով, մինչդեռ մակեդոնացիները թողնելով նրանց հետապնդելը, ընկան կողոպուտի ետևից, նետվելով հատկապես դեպի արքունի վրանները, վերջիններում
2 եղած մեծ հարստության պատճառով: Այստեղից նրանք վերցրին շատ արծաթ, ոչ քիչ ոսկի և մեծ քանակությամբ թանկարժեք զգեստներ արքունի գանձերից: Նմանապես արքայի ընկերներից և տոհմակիցներից և մյուս հրամանատարներից ոչ քիչ քանակու-
3 թյամբ հարստություն խլեցին: Քանզի պարսկական հայրենի մեկ սովորության համաձայն, ոչ միայն արքայի տան, այլև նրա ընկերների և տոհմակիցների կանայք ևս ոսկեզօծ կառքերի մեջ ուղև-
4 ցում էին (զորքին): Իսկ այգ կանանցից յուրաքանչյուրն իր հետ կրում էր խոշոր քանակությամբ թանկարժեք սպասք և կանացի զարդեր, իրենց ունեցած մեծ հարստության և շքեղության համապատասխան:

5 Գերի վերցված այս կանանց վիճակը ծանրագույն եղավ: Քանզի նրանք, որոնք նախկինում իբրև վայելք հագիվ էին հանդուրժում փոխադրվել շքեղ կառքերով և որոնց մարմնի որևէ մասը մերկ չէր երևացել, այժմ միայն մեկ խիտոն²⁶⁴ հագած, իրենց զգեստները պատառոտելով, ողբաձայն դուրս էին նետվում իրենց վրաններից և, աստվածներին կոչելով, փարվում էին նվաճողների ծնկներին:
6 Նրանք դողողացող ձեռքերով պոկում էին իրենց մարմնի զարդերը և ճերարձակ փախչում էին քարքարոտ վայրերով և, իրար զլխի հավաքվելով, օգնություն հայցում նրանցից, որոնք իրենք ուրիշի
7 օգնության կարիքն ունեին: (Գերեվարողներից) ոմանք այս դժբախտների մագերից բռնած քշում ստանում էին, մյուսները պատառոտում էին նրանց զգեստները և նրանց մերկ մարմինները ձեռքի կամ նիզակի կոթի հարվածներով առաջ էին հրում, դրանով իսկ, բախտի շնորհիվ, անարգում էին բարբարոսների ունեցածներից ամենաթանկը և աղնվագույնը:

36,1 Արդ, մակեդոնացիներից առավել գթասիրտները, տեսնելով բախտի շրջվելը, կարեկցում էին նրանց և ողորմաժություն զգում այդ դժբախտներին հասած աղետի համար. քանզի այդ կանանց բարձր ծագման հատուկ ամեն ինչ խլվել էր նրանցից և նրանք շրջապատվել էին այն ամենով, ինչ նրանց համար օտար էր և թշնամական: [Այսուհանդերձ, այս կարեկից վերարբերմունքը բնորոշ չէր զինվորների մեծ մասին]²⁶⁵, ուստի և կանայք քշվեցին դժբախտ և ողբալի գերություն:

2 Ներկաների արտասովալից կարեկցանքը շարժեցին հատկա-

պես Դարեհի մայրը և կինը և ամուսնական հասակի երկու դստրերը
3 և Կոքրահասակ սղան: Քանզի սրանց նկատմամբ բախտի փոփո-
խութիւնը և անսպասելի աղետների մեծութիւնը այնպիսի տեսա-
րան էին պարզում, որ ղիտողը կարեկցանք էր դրում այդ դժբախ-
4 տութիւնների հանդէպ: Որովհետև նրանք ոչինչ չգիտեին Դարեհի
մասին, արդյոք նա կենդանի՞ էր և ապահով, թե՞ նա ևս ընդհանուր
կոտորածի ժամանակ սպանվել էր. այլ տեսնում էին, թե իրենց
վրանը կողոպտում էին զինված թշնամիները, որոնք անգիտանում
էին գերված կանանց ինքնութիւնը և այդ անգիտութեան պատճա-
ռով անվայել արարքներ գործում: Նրանք տեսնում էին, թե ինչպես
ամբողջ Ասիան իրենց հետ: զերի է դառնում և թե ինչպես սատրապ-
ների կանայք ընկնում էին իրենց ոտքերին, օգնութիւն հայցելով,
բայց իրենք անկարող էին որևէ մեկին օգնել, քանի որ իրենց այդ
դժբախտութեան մեջ իրենք ուրիշների օգնութեան կարիքն ունեին:

5 Արդ, (Ալեքսանդր) արքայի սպասյակները²⁶⁶ զբաղեցնելով
Դարեհի վրանը, Ալեքսանդրի համար լոգանք և ընթրիք պատրաս-
տեցին և շահերի ուժեղ բոց վառելով, սպասում էին, որպեսզի սա,
վերադառնալով հետապնդումից, իր համար պատրաստ գտնի Դա-
րեհի բոլոր հարմարութիւնները, իբրև ապացույց այն բանի, որ
տիրել է համայն Ասիային:

6 Այս ճակատամարտում բարբարոսներից սպանվեցին ավելի
քան տասը բյուր հետևակ և ոչ պակաս քան մեկ բյուր հեծյալ, իսկ
մակեդոնացիներից՝ երեք հարյուր հետևակ և շուրջ հարյուր հիսուն
հեծյալ: Այդպիսին էր Կիլիկիայի Իսսոսում տեղի ունեցած ճակա-
տամարտի ելքը:

Արքաներից Դարեհը շարաշար սարսուղեւուց հետո շտապեց
37,1 փախուստի գիմել, նա հաջորդաբար իր ձիերից լավագույններին
փախնիփոխ վերցնելով, արագորեն սուրում էր, ամեն կերպ աշխա-
տելով խուսափել Ալեքսանդրի ձեռքն ընկնելուց և շտապում էր հաս-
2 նել վերին սատրապութիւնները: Իսկ Ալեքսանդրը հետալրների
հեծելազորի²⁶⁷ և մյուս հեծյալներից լավագույնների ուղեկցութեամբ
հետապնդում էր նրան, շտապելով ձեռք գցել իրեն՝ Դարեհին: Երկու
հարյուր ասպարեզ անցնելուց հետո նա գիշերվա կեսին ետ վերա-
դարձավ իր բանակատեղին և ճանապարհի իր հոգնութիւնը լոգան-
քով փարատելուց հետո, հանգստացավ և ընթրեց:

3 Ինչ-որ մեկը գալով Դարեհի կնոջ և մոր մոտ, հայտնեց, թե
Ալեքսանդրը վերադարձել է հետապնդումից, Դարեհին զինաթա-
փած լինելով: Այնժամ կանայք ուժեղ ճշացին և ողբ ու կական բարձ-
րացրին, իսկ զերի վերցվածները լսելով այդ հաղորդումը, միացան

նրանց վշտին և բարձրաձայն սգացին: Արքան, լսելով կանանց տա-
ռապանքը, իր ընկերներից մեկին՝ Լեոննատոսին, ուղարկեց (նրանց
մոտ), որպեսզի դադարեցնի հուզմունքը և հանգստացնի Սիսյուն-
գամբրիսին²⁶⁸, հաղորդելով, որ Դարեհը դեռևս կենդանի է և որ
Ալեքսանդրը նրանց հանդեպ պատշաճ վերաբերմունք կցուցադրի,
(հայտնի նաև), թե Ալեքսանդրը ցանկանում է առավտյան խոսել
4 նրանց հետ և գործով ապացուցել իր բարեհոգությունը: Այսպիսով,
գերի ընկած կանալք այս անակնկալից և, ընդհանրապես, անսպա-
սելի բարեբախտությունից (սրտապնդված), Ալեքսանդրին ողջու-
նեցին իբրև աստված և դադարեցրին իրենց ողբը:

5 Իսկ արքան լուսաբացին իր հետ վերցնելով իր առավել պատ-
վավոր ընկերներից²⁶⁹ Հեփեստիոնին, եկավ այդ կանանց մոտ:
Որովհետև նրանք երկուսն էլ իրար նման էին հագնվել, իսկ Հեփես-
տիոնը առավել բարձրահասակ էր ու գեղեցիկ, Սիսյունգամբրիսը
կարծելով, որ սա է արքան, երկրպագեց սրան: Բայց երբ ներկա-
ները նրան նշան արեցին և ձեռքերով ցույց տվեցին Ալեքսանդրին,
Սիսյունգամբրիսը շփոթվեց իր անգիտության համար և դարձյալ
սկսեց երկրպագել Ալեքսանդրին, իսկ արքան ընդհատելով նրան,
6 ասաց. «Հոգ մի արա, ով մայր, քանզի սա նույնպես Ալեքսանդր է»:
Երբ արքան պառավ կնոջ «մայր» անվանեռ, այդպիսի ազնվագույն
արտահայտությամբ ասես կանխավ խոստացավ բարեսիրտ լինել
նրանց հանդեպ, որոնք քիչ առաջ դժբախտացել էին: Հավաստիաց-
նելով այդ կնոջը, թե նա կլինի իր երկրորդ մայրը, իսկույն իր
արարքներով հաստատեց իր բանավոր խոստումները:

38,1 Ալեքսանդրը նորից հագցրեց նրան արքայական զարդերը և
վերականգնեց նրա նախկին դիրքը պատշաճ պատիվներով. քանզի
վերադարձրեց նրան սպասավորների այն շքախումբը, որ Դարեհն
էր շնորհել, միաժամանակ իր կողմից ևս պարգևեց նախկինում
եղածից ոչ պակաս թվով սպասավորների և խոստացավ (Դարեհի)
աղջիկների ամուսնությունն ավելի առատությամբ ապահովել, քան
որոշել էր Դարեհը, իսկ տղային մեծացնել իբրև իր որդին և մատու-
2 ցել թագավորական պատիվ: Այնուհետև իր մոտ կանչելով տղային,
համբուրեց նրան և տեսնելով նրա անվախ հայացքը, որը ոչնչից
չէր երկյուղել, ասաց Հեփեստիոնին և նրա հետ եղողներին, թե այս
տղան թեպետ վեց տարեկան է, բայց իր տարիքի համեմատ ավելի
արիություն է դրսևորում, որով և շատ ավելի քաջ է հորից: Ինչ վե-
րաբերում է Դարեհի կնոջ, ապա ասաց, որ նրա վեհ դիրքը կպահ-
պանի այնպես, որ իր նախկին բարեբախտության համեմատ անար-
ժան ոչինչ չի զգալու:

3 Ալեքսանդրը ողորմածութեան և բարեգթութեան բազում այլ խոստումներ ևս տվեց, որով կանայք, անսպասելի ուրախութեան մեծութիւնից, շկարողացան իրենց արցունքը դսպել: Այս բոլորից հետո իր աջը տալով, ոչ միայն բարեգործութիւն ստացածների, գովասանքին արժանացավ, այլև իր արշավակից բոլոր զինվորների մոտ դերադանց բարեհոգութեան համբավ նվաճեց: Ես, ընդհանրապէս, կարծում եմ, թէ Ալեքսանդրի կատարած գործերից և ոչ մեկը արձանագրվելու և պատմութեան մեջ հիշատակվելու այնքան ար-

5 ժանի չէ, ինչքան այս: Քանզի քաղաքներ պաշարելը և ճակատամարտելը, ինչպէս նաև պատերազմներում հաղթանակ տանելը առավելապէս հնարավոր են դառնում բախտի և քաջութեան շնորհիվ, մինչդեռ երբ մարդ իշխանութիւն ունենալով հանդերձ գթութիւն է ցուցաբերում անկյալների հանդեպ, ասլա այդ մեկը իմաս-

6 տութեան արդյունք է: Քանզի շատերը բախտի շնորհած հաջողութիւններից մեծամասնում են և բարեբախտութեան մեջ գոռոզանալով, մոռանում են մարդկային բնութեանը հատուկ թուլութիւնները, ուստի և կարելի է տեսնել թէ ինչպէս շատ շատեր անկարող են լինում տանել բառեբախտութիւնը, ասես այն ծանր մի բեռ լի-

7 ներ: Ահա թէ ինչու Ալեքսանդրը, թեպէտև ապրել է մեղանից շատ սերունդներ առաջ, իր անձնական առաքինութիւնների պատճառով պետք է հետագա ժամանակներում ևս արժանանա իրավացի և պատշաճ գովասանքի:

39,1 Դարեհը շտապ հասավ Բաբելոն և Իսսոսի ճակատամարտից փրկվածներին ի մի հավաքեց. նա հոգեպէս շէր ընկճվել, թեև խոշոր աղետի մեջ էր ընկել, այլ նամակ գրեց Ալեքսանդրին, (առաջարկելով) մարդկայնորեն տանել իր բարեբախտութիւնը և գերվածներին ազատ արձակել, փոխարենը խոշոր գումար ստանալով: Նա միաժամանակ ավելացնում էր, թէ ինքը կղիջի Ալլուս գետից արևմուտք ընկած երկիրը և քաղաքները, եթէ (Ալեքսանդրը) ցան-

2 կանա դառնալ իր բարեկամը: Ալեքսանդրը ընկերներին դումարելով խորհրդի, թաքցրեց նրանցից իսկական նամակը և գրելով մեկ ուրիշը, որը սուրբ և համապատասխանում էր իր շահերին, այն աներկայացրեց ժողովականներին և (Դարեհի) դեսպաններին ձեռ-

3 նունայն ետ ուղարկեց²⁷⁰, Ուստի և Դարեհը նամակների միջոցով Ալեքսանդրի հետ համաձայնութեան գալու փորձերից հույսը կտրած, սկսեց պատերազմական մեծ պատրաստութիւններ տեսնել: Նա նորից սպառուզիներ նրանց, որոնք փախուստի ժամանակ իրենց զենքերը կորցրել էին և միաժամանակ ուրիշներին ևս զինվորագրելով, դասեց զորամասերում. իր մոտ կանչեց նաև վերին սատ-

րապություններում²⁷¹ գտնվող գործերը, որոնց նախապես թողել
4 էր այնտեղ, երբ ստիպված էր շտապ առշավել: Վերջապես, նա
այնքան շատ քանք թափեց գործը կաղմակերպելու համար, որ այն
դարձավ կրկնակի, քան Իսսոսի ճակատամարտում էր: Հավաքվե-
ցին ութսուն բյուր հետևակ և քսան բյուր հեծյալ, շհաշված մեծ
քանակությամբ մանգաղակիր ռազմակառուցողները:

52,7 Արդ, Ալեքսանդր արքան Ալեքսանդրիայի կառուցումը իր ըն-
կերներից ոմանց հանձնարարելով, եգիպտական բոլոր գործերը
կարգավորվելուց հետո, իր զորքերով վերադարձավ Սիրիա:

53,1 Իսկ Դարեհը, լսելով նրա ժամանումը, բոլոր կողմերից իր զոր-
քերը գումարեց և ճակատամարտի համար նախապատրաստեց
ամեն ինչ: Նա թրերն ու նիզակները ավելի երկար պատրաստեց,
քան նախկինում էր. քանզի կարծում էին, թե Կիլիկիայում տեղի
ունեցած ճակատամարտում Ալեքսանդրը այդ պատճառով հասավ
մեծ առավելության: Նա պատրաստեց նաև վարպետորեն մտածված
երկու հարյուր մանգաղակիր կառքեր թշնամուն ապշեցնելու և ահա-
2 բեկելու նպատակով: Այդ կառքերի լծին ամրացված էին քերիչներ,
որոնք երեք թիզ երկարությամբ դուրս էին ցցվում արտաքին ձիերի
կողքերից և որոնց հատող սայրերը շրջված էին հանդիսակաց կող-
մը. իսկ սննու թեթության վրա ուղիղ դրությամբ ամրացված էին
ևս երկու քերիչ, որոնց սայրերը նույնպես, նախորդների նման,
շրջված էին հանդիպակաց կողմը, բայց սրանք ավելի երկար էին
և ավելի լայն: Սրանց ծալրերից ամրացված էին մանգաղներ:

2 Իր ամբողջ զորքը շողշողուն դնքերով և քաջարի հրամանա-
տարներով ապահովելուց հետո (Դարեհը) դուրս եկավ Բաբելոնից,
ունենալով շուրջ ութսուն բյուր հետևակ և ոչ պակաս քան քսան
բյուր հեծյալ²⁷²: Նրա ընթացքի աջ կողմում գտնվում էր Տիգրիսը,
իսկ ձախ կողմում՝ Եփրատը, և նա անցնում էր հարուստ երկրի մի-
ջով, որը կարող էր անասուններին առատ խոտ հալթալթել և զոր-

4 քի բազմությունը ապահովել բավարար պարենամթերքով: Եւ ձրդ-
տում էր ճակատամարտ մղել նինվեի շոջակայքում, քանի որ այն-
տեղ դաշտերը շատ հարմար էին իր նպատակի համար և սրա գու-
մարած մեծաթիվ զորքերին շարժվելու լայն հնարավորություն էին
ընձեռում: Նա բանակ դնելով Աորելյա կոչված գյուղի մոտ, արտեղ
ամեն օր մարդում էր իր զորքը և մշտական ուսուցման ու վարժու-
թյունների միջոցով պիտոյներին դարձրեց կարգապահ. քանզի նա
շատ էր մտահոգված, որ չլինի թե ճակատամարտի ընթացքում
որևէ անկարգություն առաջանա այն բանի պատճառով, որ տարբեր
լեզուներով խոսող բազմաթիվ ժողովուրդներ էին դումարվել:

54,1

Միաժամանակ նա, ինչպես նախկինում, դարձյալ դեսպաններ ուղարկեց Ալեքսանդրի մոտ հաշտութեան համար, նրան դիջելով Ալյուս դետից արևմուտք ընկած երկիրը և խոստանալով նրան տալ երկու բյուր տաղանդ արծաթ²⁷³, Բայց քանի որ Ալեքսանդրը ուշադրութիւն չդարձրեց դրան, նորից ուրիշ դեսպաններ ուղարկեց, գովելով Ալեքսանդրին այն բանի համար, որ ազնվութեամբ է վերաբերվել իր մոր և մյուս գերիների հետ, միաժամանակ առաջարկելով նրան դառնալ իր բարեկամը և ստանալ Եփրատից արևմուտք ընկած երկիրը և երեք բյուր տաղանդ արծաթ²⁷⁴ և ամուսնանալ իւ աղջիկներից մեկի հետ ու դրանով իսկ ընդհանրապես դառնալով իւ փեսան և գրավելով իր որդու դիրքը, հաղորդակից դառնալ ամբողջ թագավորութեան կառավարման²⁷⁵, Ալեքսանդրը խորհրդի հրավիրեց բոլոր ընկերներին և հայտնելով ստացված առաջարկութիւնները, պահանջեց, որ յուրաքանչյուրն իր կարծիքը ազասորեն արտահայտի: Այսուհանդերձ, մյուսներից և ոչ մեկը չհամարձակվեց որևէ խորհուրդ տալ, նկատի ունենալով քննարկվող հարցի մեծ կարևորութիւնը, առաջինը Պարմենիոնն ասաց. «Եթե ես Ալեքսանդրը լինեի, մատուցվածները կրնդունեի և հաշտութիւն կկնքեի»: Իսկ Ալեքսանդրը նրան պատասխանեց. «Եթե ես էլ Պարմենիոնը լինեի, նույնպես կընդունեի»:

5 Շարունակելով իր ասելիքը, նա մեծահոգի խոսքերով մերժեց պարսիկներին առաջարկները, բայց միաժամանակ գովաբանելով մատուցված ընծաները, դեսպաններին պատասխան տվեց ասելով, թե երկիրը չէր կարող իր կարգ ու կանոնը պահպանել, եթե գոյութիւն ունենային երկու արև և ոչ էլ օյկումներն²⁷⁶ երկու թագավորի իշխանութեան տակ գտնվելիս: Կարող է հանգիստ և խաղաղ մնալ:

6 Ուստի և պատվիրեց դեսպաններին հաղորդել Դարեսին, որ եթե ձգտում է առաջնութեան, ապա ինքը կոհիվ կմղի նրա դեմ բոլորի վրա միանձնյա իշխելու համար: Իսկ եթե նա, արհամարհելով փառքը, գերադասում է շահն ու հեշտասեր կյանքը, ապա խող կատարի Ալեքսանդրի հրամանները. թող նա թագավորի ուրիշների վրա, քանի որ այդ իշխանութիւնը նրան շնորհվում է Ալեքսանդրի մեծահոգութեամբ:

7 Այնուհետև նա, արձակելով խորհուրդը, վերցրեց զորքը և առաջ շարժվեց դեպի թշնամու բանակատեղի: Այս ընթացքում Դարեսի նիւր մահացել էր, և Ալեքսանդրը նրան թաղեց մեծ շուքով:

55,1

Դարեսը լսելով (Ալեքսանդրի) պատասխանները, հրաժարվեց բանակցութիւնների միջոցով հաշտութեան հասնելու մտքից: Ուստի և նա շարունակում էր իր զորքերի ամենօրյա մարտումները և

պատրաստում էր նրանց պատերազմական կարգապահութիւն: Նա իր ընկերներէից Մազալոսին ընտիր գործատու ուղարկեց հսկելու ղետի անցումը և նախապես զրավելու անցահունը. իսկ ուրիշներին ուղարկեց հրոճարակ անելու այն երկիրը, որով պետք է անցնէր թշնամու գորքը. քանզի նա մտադիր էր (Տիգրիս) ղետի հունը օգտագործել իբրև պաշտպանական գիծ մակեղոնացիների հարձակ-

2 ման ղեմ: Սակայն, Մազալոսը ենթադրելով, որ գետն անանցանելի է հունի խորութեան և հոսանքի ուժգնութեան պատճառով, հոգ շտարաւ անցահունը պահպանելու: Դրա փոխարեն գործակցելով սոյն զորամասերի հետ, որոնք կրակի էին մատնում երկիրը, մեծ ավերածութիւններ պատճառեց, կարծելով, թէ պարենի պակասութեան պատճառով երկիրը անանցանելի կդառնա թշնամու համար:

3 Մինչդեռ Ալեքսանդրը հասնելով Տիգրիսի գետանցը և տեղացիներից իմանալով, թէ ո՞րտեղ է անցահունը, նա իր գորքը անցկացրեց (մլուս ափը). անցումը կատարվեց ոչ առանց դժվարութեան և

4 ոչ էլ ամբողջապես անվստանգ: Քանզի ղետանցում ջրի խորութիւնը հասնում էր կրծքից վերև, իսկ հոսանքի ուժգնութիւնը հունով անցնողներից շատերին բշեց և զրկեց նրանց քայլ անելու հնարավորութիւնից, մինչդեռ հոսանքն էլ հարվածելով նրանց վահաններին,

5 շատերին շեղում էր և ենթարկում ծալրագույն վտանգներու: Բայց Ալեքսանդրը հոսանքի թափը կասեցնելու նպատակով պատվիրեց բոլորին միահօլուսել իրենց ձեռքերը և, իրենց մարմինները ի մի

6 խտացնելով, ստեղծել մի տեսակ կամուրջ: Քանի որ անցումը մեծ համարձակութիւն էր և մակեղոնացիները հազիվ կաշողացել էին ապահով փրկվել, (Ալեքսանդրը) այդ օրը զորքերին հանգիստ տվեց, իսկ հաջորդ օրը մարտական շարքերով առաջնորդէց նոանց թշնամու ղեմ և ընդհուպ մոտենալով պարսիկներին, բանակէց այնտեղ:

56,1 Հաշվի առնելով պարսկական զորքերի բազմութիւնը և անխուսափելի ճակատամարտի վճռական բնույթը, քանի որ ամեն ինչ կարող էր որոշվել իրենց ձեռքով, (Ալեքսանդրը) ամբողջ գիշերը անքուն անցկացրեց, զբաղված հաջորդ օրվա հոդսերով: Առավոտյան հերթափոխի պահին նրա քունը տարավ և նա այնքան խորը

2 քնեց, որ ցերեկը շկարողացավ զարթնել ու վեր կենալ: Սկզբում ընկերները այդ տեսնելով ուրախացան, կարծելով, թէ արքան, այսպես լավ հանգստանալուց հետո, ավելի կայտառ կլինի վերահաս ճակատամարտի ընթացքում: Բայց քանի որ ժամանակն անցնում էր, իսկ արքան դեռ քնած էր մնում, Պարմենիոնը, ավագադույնը ընկերներից, իր պատասխանատուութեամբ հրաման արձակէց զին-

3 վորներին, պատրաստվել ճակատամարտին: Սակայն Ալեքսանդրը
 դեռևս չէր վեր կենում, ուստի և ընկերները, մոտիկ գալով, հազիվ
 կարողացան նրան զարթնեցնել: Քանի որ բոլորը դարձանում էին
 կատարվածի վրա և ցանկանում էին դրա պատճառն իմանալ, Ալեք-
 սանդրը ասաց, որ Դարեհն իր ուժերը մեկ վայրում հավաքելով,
 ազատել է իրեն բոլոր տագնապներից. քանզի մեկ օրում ամեն ինչ
 կվճռվի և իոենք կազատվեն տանջանքներից ու երկարասու վտանգ-
 4 ներից: Այնուհանդերձ, Ալեքսանդրը իր մոտ կանչելով հրամանա-
 տարներին, պատշաճ խոսքերով դիմեց նրանց և, քաջալերելով վե-
 րահաս կռիվների համար, ամբողջ դորքը ռազմաշարքերով տարավ
 բարբարոսների դեմ, հեծյալ ջոկատները հետևակ փաղանգների՝
 առաջ դասավորելով:

57,1 Աջ թևում (Ալեքսանդրը) դասավորեց արքունի հեծելագունդը.
 որի հրամանատարն էր «Սև» մականվանյալ Կլեյտոսը և սրանց
 կողքին մյուս ընկերները, որոնց առաջնորդում էր Փիլոտասը, Պար-
 մենիոնի որդին. այնուհետև դասավորվեցին ևս լոթ հեծելագունդ,
 2 նույնի հրամանատարությամբ: Սրանց թիկունքում դասավորված
 էր արդիրասպիդներ²⁷⁷ հետևակ գունդը, որը տարբերվում էր մյուս-
 ներից իր զենքերի փայլով և մարդկանց արիությամբ. սրանց
 առաջնորդում էր Նիկանովրը, Պարմենիոնի որդին: Հաջորդը նա
 կանգնեցրեց Նիմիոտիս կոչված զորամասը²⁷⁸, որը առաջնորդում
 էր Կոյնոսը, այնուհետև կանգնեցրեց Որեստների և Էյունկեստների
 գնդերը, որոնց հրամանատարն էր Պերդիկկասը: Հաջորդ զորա-
 գունդը Մելեագրոսինն էր, իսկ սրա կողքին կանգնած էր Պոլյու-
 պերքոնը, իր հրամանատարության տակ ունենալով այսպես կոչ-
 3 ված ստյումփայներին: Իսկ Փիլիպպոսը, Բալակոսի որդին, առաջ-
 նորդում էր հաջորդ զորագունդը և նրանից հետո Կրատերոսի առաջ-
 նորդած զորագունդն էր: Վերոհիշյալ հեծյալ գնդերի շարքերը լրաց-
 նում էին Պելոպոննեսոսից և Աքայայից նրանց հետ արշավին մաս-
 նակցող հեծյալները, այնուհետև ձիավորները Փթիոտիսից²⁷⁹ և
 Մալիսից²⁸⁰, ինչպես նաև լոկրիսցիներ և փոկիսցիներ²⁸¹, որոնց
 4 առաջնորդում էր Երիզյուոս միտիլենացին: Այնուհետև կանգնած
 էին թեսսալացիները, առաջնորդ ունենալով Փիլիպպոսին, սրանք
 ձիավարությամբ և քաջությամբ գերազանցում էին մյուսներին:
 Սրանցից հետո (Ալեքսանդրը) կանգնեցրեց կրետացի աղեղնավոր-
 ներին և արայացի վարձկաններին:

5 Իր զորաբանակի թևերից յուրաքանչյուրին Ալեքսանդրը անկ-
 յան ձև տվեց, որպեսզի թշնամու զորքերի բազմությունը չկարողա-
 6 նա շրջապատել մակեդոնացիների փոքրաթիվ զորքերին: Մանգա-

ղակիր ռազմակառքերի հարձակման դեմն առնելու նպատակով արքան հրամայեց փաղանգի հեսուակներին, որ երբ քառաձի կառքերը մոտենալիս լինեն, ապա բոլորն իրենց վահանները միացնեն իրար և իրենց սարիսաներով²⁸² հարվածեն վահաններին, որպեսզի բարձրացած աղմուկից (ձիերը) վախենան և ես: փախչեն, իսկ եթե (ձիերը) համառեն, ապա նրանց ճանտպարհը բացեն շարքերի միջով, ալնպես, որ նրանք անցնեն առանց վտանգելու մակեդոնացիներին. Ինքը, Ալեքսանդրը, աջ թևի հրամանատարությունը վերցրեց իր վրա և շարքերը շեղակի դասավորելով, որոշեց ճակատամարտի ամբողջ ելքը անձամբ վճռել:

- 58.1 Դարեհն իր զորքերը ըստ ազգերի ճակատելուց հետո, ինքը ևս անցավ Ալեքսանդրի դիմաց և բանակը շարժեց թշնամու դեմ: Հակառակորդ շարքերը, երբ մոտեցան իրար, շեփորահարները երկուստեք հարձակում ազդարարեցին և այրերը մեծ աղմուկով հարձակվեցին իրար վրա: Սկզբում մանգաղակիր կառքերը ուժեղ թափով սուրացին և մեծապես ահաբեկեցին մակեդոնացիներին, քանզի Մազայոսը, հեծյալների հրամանատարը, խիտ շարքերով արշավում էր մանգաղակիր կառքերի հետ, վերջիններիս հարձակումը դարձնելով առավել ահռելի: Ու երբ փաղանգի ռազմիկները համախմբվելով միացրին իրենց վահանները և թագավորի հրամանի համաձայն բոլորն սկսեցին իրենց սարիսաներով հարվածել վահաններին, մեծ աղմուկ բարձրացավ: Այդ բանից էլ ձիերը խրտնեցին և ռազմակառքերի մեծ մասը ետ շրջվեց և անկասելի թափով նեսովեց յուրայինների շարքերի վրա: Մնացած կառքերը հարձակվեցին փաղանգի վրա, բայց երբ մակեդոնացիները լայն տարածություններ բացեցին (իրենց շարքերի միջով), կառքերը նետվեցին այնտեղ և մի մասը ցած գլորվեց նիդակների հարվածներից, մի մասը կարողացավ խուսափել, մի մասն էլ մեծ թափով առաջ ընթացավ և երկաթե սայրերի օղնությամբ մակեդոնացիների շարքերում բազմազան ձևերով մահ պատճառեց: Կործանարար այս դենքերը այնքան հուժկու էին և հատու, որ շատերի բաղուկները կտրեցին վահաններով հանդերձ, շատ դեպքերում էլ կտրեցին մարդկանց պարանոցը, որով դլուխները, դեռևս բաց աչքերով և դեմքի արտահայտությունը պահած, թավալվում էին գետնին, ոմանց էլ կողերը մահացու կտրատելով, շուտափույթ մահ էին պատճառում:

- 59.1 Երբ արդեն զորքերն ընդհուպ մոսուեցան իրար և սկսեցին օգտագործել իրենց աղեղներն ու պարսատիկները և սպառվեցին նրանց նետած տեգերն ու նետասլաքները, նրանք ձեռնամարտի բռնվեցին: Սկզբում մարսի մտան հեծյալները, և քանի որ մակե-

դոնացիները կովում էին աջ թևում, Դարեհը, որն առաջնորդում էր (իր գորբերի) ձախ թևը, իր հետ վերցրել էր տոհմակից հեծյալներին, սրանք ընտրված էին իրենց քաջության և նվիրվածության 3 պատճառով և հազար հողով ընդգրկված էին մեկ գնդի մեջ²⁸³։ Քանի որ սրանց քաջագործության ականատեսը ինքր արքան էր, ապա սրանք հոժարաբար ընդունում էին նրա վրա արձակված բոլոր նետերը։ Սրանց հետ էին նաև խնձորակիրները²⁸⁴, որոնք մեծաթիվ էին և աչրի էին ընկնում իրենց քաջությամբ. սրանցից բացի նաև մարդերը²⁸⁵ և կոսսայները²⁸⁶, որոնք հիանալի էին իրենց մարմնական ուժով և հոգեկան արհուրթյամբ։ Սրանց կողքին կովում էին նաև սլալատին մոտ կանգնած արքունի զորամասերը և հնդիկներից արիագույնները։ Ահա սրանք մեծ աղմուկով նետավելով թշնամու վրա, րաջաբար կովում էին և իրենց բազմությամբ նեղում մակեդոնացիներին։

5 Մաղայոսը, որը ղեկավարում էր աջ թևը և (իր հրամանատարության տակ) ուներ գերազանց հեծյալներ, առաջին իսկ հարձակման ժամանակ իր դեմ կանգնածներից շատերին ոչնչացրեց, իսկ կադուսիներից երկու հազար և սկյութներից հազար ընտրյալ ձիավորների ուղարկեց, հրամայելով ձիավարել թշնամու թևի շուրջ և 6 մոտենալով ճամբարին, գրավել հանդերձանքը։ Սրանք հրամայվածը իսկույն կատարեցին և երբ արդեն մտան մակեդոնացիներին բանակատեղին, գերի ընկածներից ոմանք իլելով ղենքերը, սկսեցին օգնել սկյութներին և հափշտակել հանդերձանքը։ Այս անսպասելի պատահարի հետևանքով ամբողջ ճամբարով մեկ աղաղակ և 7 շփոթ առաջացալ։ Գերի ընկած կանանցից շատերը գնացին ղեպի բարբարոսները, բաց Դարեհի մայրը, Սիսյունգամբրիսը, ուշ չդարձրեց իրեն կանչող գերի կանանց, այլ մնաց հանգիստ և անհուռով, քանզի շէր վստահում բախտի անակնկալ փոփոխության և շէր ուզում արատավորել Ալեքսանդրի հանդեպ իր երախտապարտութունը։ 8 Վերջապես, սկյութները հանդերձանքի մեծ մասը հափրշտակելուց հետո մեկնեցին Մաղայոսի մոտ և հաղորդեցին իրենց հաջողությունը։ Նույնպես և Դարեհի կողքին կովող հեծյալների մի մասը իրենց բազմության պատճառով նեղեցին իրենց դեմ կանգնած մակեդոնացիներին և ստիպեցին փախուստի դիմել։

60,1 Երբ արդեն պարսիկներն այս երկրորդ հաջողությունն ունեցան, անժամ Ալեքսանդրը շտապեց յուրայինների պարտությունը կանխել իր միջամտությամբ և վերցնելով արքունի հեծելազունը և ձիավորներից ամենաերևելիներին, սուրաց իրեն՝ Դարեհի վրա 2 Պարսից արքան ընդունելով թշնամու հարձակումը, ինքն իսկ կուլե-

լով ուղղակիորէ վրայից, նիղակահարում էր իր վրա հարձակվողներին և շատերը զորավիգ էին լինում նրա կովին: Եվ երբ արքաները մոտեցան իրար, Ալեքսանդրը աշտեն շարսէնց Դարեհի վրա, բայց վրիպեց և հարվածը պատահեց արքայի ձիավարին ու գետին:

3 ս:ապալեց: Երբ Դարեհի շուրջ եղողները բարձրաձայն աղաղակեցին, ավելի հեռու գտնվողները կարծեցին, թէ ընկել է ինքը արքան: Ու քանի որ սրանք սկսեցին փախուստի դիմել և ուրիշները ևս հաօորդաբար հետևեցին նրանց, Դարեհի զորագնդի խիտ շարքերն աստիճանաբար սկսեցին քայքայվել: Հետևաբար, երբ երկու թևերը մերկացան կովողներից, ինքը (Դարեհը) ևս ահաբեկվեց ու դիմեց

4 փախուստի: Երբ բոլորը այդպես փախուստի դիմեցին, հեծյալների (ընթացքից) փոշին վեր բարձրացավ և քանի որ Ալեքսանդրի զորքը նրանց կրնկակոխ հալածում էր, բազմության և փոշու խտության պատճառով հնարավոր չէր նկատել, թէ Դարեհը ո՞ր կողմն էր փախչում, մինչդեռ շրջապատը լցվել էր վայր ընկնող այրերի տրոփոցով և հեծյալների դղրդյունով, ինչպես նաև մտրակների անրնդհատ շառաչով:

5 Մինչ այս դեպքերը կատարվում էին, Մազայոսը, որն առաջնորդում էր աջ թևը, բազմաթիվ և լավագույն հեծյալներով մեծապես ճնշում էր իրեն հանդիման ճակատածներին, բայց Պարմենիոնը թեսսալացի հեծյալների և իր մյուս զորքերի օգնությամբ համա-

6 ոորեն դիմադրում էր թշնամուն: Սկզբում նա փալլուն կովելով, թեսսալացիների արհուլթյան շնորհիվ նույնիսկ առավելության հասավ, բայց Մազայոսի զորքերի բազմությունն ու զորությունը մեծապես

7 վտանգեց մակեդոնացիներին հեծելազորայիններին: Ու քանի որ մեծ կոտորած եղավ և արդեն դժվարացավ բարբարոսների ուժին դիմադրելը, Պարմենիոնը իր հեծյալներից ոմանց ուղարկեց Ալեքսանդրի մոտ, խնդրելու, որ նա շուտափույթ հասնի օգնության: Սրանք իսկույն հրամանը կատարեցին, բայց տեսնելով, որ Ալեքսանդրը (Դարեհին) հալածելիս շատ է հեռացել ուղղադարձից, ձեռնունայն

8 վերադարձան, այսուհանդերձ, Պարմենիոնը մեծ հմտությամբ օդտադործելով թեսսալացի հեծելազորայիններին և (թշնամուց) շատերին կործանելով, ի վերջո փախուստի մատնեց բարբարոսներին, մանավանդ, որ սրանք վհատվել էին Դարեհի փախուստի պատճառով²⁸⁷:

61.7 Դարեհը լինելով հմուտ ուղղադար և օգտվելով (բարձրացած) փոշու թանձրությունից, իր փախուստը շկազմակերպեց մյուս բարբարոսների նման, այլ սուրաց հակառակ ուղղությամբ և ընթացքը քողարկելով բարձրացած փոշու թանձրությամբ, ինքը անվստահ

խուսափեց և իր հետ եղած բոլոր ղորամասերը ապահով հասցրեց
2 մակեդոնացիների թիկունքում գտնվող դյուղերը: Երբ ի վերջո բո-
լոր բարբարոսները փախուստի դիմեցին և մակեդոնացիները մնա-
ցածներին մինչև վերջինը սպանեցին, շուտով մոտակա ամբողջ
3 դաշտը լցվեց դիակներով: Այս ճակատամարտում բարբարոսներից
սպանվեցին հեծյալ և հետևակ ընդամենը ավելի քան ինը բլուր
մարդ²⁸⁸, իսկ մակեդոնացիներից սպանվեցին շուրջ հինգ հարյուր
մարդ և շատ շատերն էլ վիրավորվեցին²⁸⁹, որոնց թվում նաև ամե-
նահայտնի հրամանատարներից Հեփեստիոնը նիզակի հարվածով
վիրավորվեց բազուկից. սա թիկնապահների հրամանատարն էր, իսկ
զորավարներից (վիրավորվեցին) Պերզիկկասը և Կոլոնոսը, ինչ-
պես նաև Մենիգասը և հայտնի հրամանատարներից ոմանք:

Ահա այսպիսի վախճան ունեցավ Արբելայի մոտ տեղի ունե-
ցած ճակատամարտը:

64,1 Դարեհը Արբելայի մոտ ճակատամարտում պարտվելուց հետո
փախչելով դիմեց դեպի վերին սատրապուլյունները, նա շտապում
էր տարածույթուն ստեղծել իր և Ալեքսանդրի միջև, որպեսզի ան-
հրաժեշտ ժամանակ և հնարավորություն ունենա զորքեր պատրաս-
տելու: Նա սկզբում անցավ Մեդիայի Եկբատանան և մնաց այնտեղ,
հավաքելով պատերազմից փախչելով փրկվածներին և զինելով ան-
2 զններին: Մոտակայքում բնակվող ցեղերից նա զինվորներ պահան-
ջեց և Բուկտրիայի և վերին սատրապուլյունների սատրապների և
զորավարների մոտ հրեշտակներ ուղարկեց, կոչ անելով նրանց հա-
վատարիմ մնալ իրեն:

3 Իսկ Ալեքսանդրը հաղթանակից հետո թաղեց (իր) սպանյալ-
ներին և մտավ Արբելա, որտեղ էլ գտավ բազմադան և առատ պա-
րեն, ոչ քիչ քանակությամբ բարբարոսական զգեստներ և գանձեր և
երեք հազար արծաթ տաղանդ: Մտածելով, որ դիակների բազմու-
թյան պատճառով այնտեղ օդը կարող է ապականվել, նա իսկույն
4 ճանասյարհ ընկավ և ամբողջ ղորքով հասավ Բաբելոն: Տեղաբնակ-
ները նրան սիրահոժար ընդունեցին և օթևաններում մակեդոնա-
ցիներին շքեղորեն հյուրընկալեցին, ուստի և (Ալեքսանդրը) Բար-
մացրեց իր զորքերը անցած շարշարանքներից հետո: Նա քաղաքում
մնաց ավելի քան երեսուն օր, պարենի առատության և բնակիչների
հուրասիրության պատճառով:

5 Այնուհետև նա Ագաթոն պյուղնացուն հանձնեց միջնաբերդի
պաշտպանությունը, տրամադրելով նրան յոթ հարյուր մակեդոնացի
զինվոր. Ապոլլոդորոս ամփիպոլսեցուն և Մենես պելլացուն զորա-
վարներ նշանակեց Բաբելոնի և մինչև Կիլիկիա ընկած սատրապու-

թյունների վրա, տալով նրանց հաղար արծաթ տաղանդ և հրամա-
6 յելով զորքեր հավաքագրել ինչքան հնարավոր է: Իսկ Միթրինեսին,
որը իրեն հանձնել էր Սարդեսի միջնաբերդը, տվեց Արմենիան²⁹⁰,
Ալվար վերցրած գումարներից նա յուրաքանչյուր հեծյալին պար-
գևեց վեց մինա²⁹¹, յուրաքանչյուր դաշնակից հեծյալին՝ հինգ, մա-
կեդոնական փաղանգի զինվորին՝ երկու մինա և բոլոր օտար վարձ-
կաններին երկու ամսվա վարձ:

65,1 Երբ արքան մեկնեց Բաբելոնից և դեռևս ճանապարհին էր, նրա
մոտ ժամանեցին Անտիպատրոսի կողմից ուղարկված մակեդոնացի
հինգ հարյուր հեծյալ և վեց հազար հետևակ, Թրակիայից վեց հար-
յուր հեծյալ, երեք հազար տրալլացիներ, Պելոսյոննեսոսից չորս
հազար հետևակ և հաղարից քիչ պակաս հեծյալ, իսկ Մակեդոնիայից
ժամանեցին արքայի ընկերների հինգ հարյուր որդիներ: որոնք
2 ուղարկված էին որպես (արքայի) թիկնապահներ: Արքան ընդու-
նելով այս բոլորին, շարունակեց իր առաջընթացը և վեցերորդ օրը
հասավ Սիտտակենե գավառը²⁹²:

Քանի որ այս երկիրը հարուստ էր ամեն տեսակ պարենի առա-
տույթյամբ, ուստի և նա այստեղ մնաց բուվական ժամանակ, մինչ-
նույն ատեն հոգ տանելով ճանապարհի հոգնությունից հետո զոր-
քերի հանգստության մասին, ինչպես նաև մտածելով վեոադասու-
վորել իր բանակի շարքերը: Եւ ուզում էր բարձրացնել մի շարք
հրամանատարների և բանակն ուժեղացնել հրամանատարների
3 թվով ու կարողություններով: Իր որոշածը նա կատարեց. մեծ ուշադ-
րությամբ նա քննեց գերագանց արարքները և շատերին. որոնք
բարձր հրամանատարներ էին, առավել մեծ պաշտոնի բարձրաց-
րեց, այնպես, որ բոլոր հրամանատարներին առավել բարձրացնե-
4 լով, նրանց տվելի մեծ սիրով կսուպեց իրեն: Նա հոգ տարավ նաև
բուն իսկ զինվորների դրության մասին և շատ բարենորոգումներ
կիրառելով, նրանց վիճակը բարելավեց: Նա ամբողջ զորքին ար-
տակարգ նվիրվածություն ներշնչեց իր առաջնորդի նկատմամբ,
որսլեսդի կատարեն բոլոր հրամանները և գերագանցեն իրենց բա-
ջագործությամբ, այս բոլորից հետո նա առաջ նետվեց հետագա
պայքարի համար:

5 Եւ առանց դիմադրության հանդիպելու մտավ Սուսիանե (եր-
կիրը) և տիրացավ Սուսայի հռչակավոր պալատներին, որովհետև
սատրապ Արուլևտեսը, ինչպես ոմանք պատմում են, հոժարակամ
հանձնեց իրեն քաղաքը. քանի որ Դարեհը ինքն էր այդպես հրա-
մայել իր հավաստարիմ հրամանատարներին: Պարսից արքան ալդ-
պես էր վարվում, որպեսզի Ալեքսանդրը, հրապուրվելով շացնող

շեղումներով և ընկնելով խոշորագույն քաղաքներ գրավելու և մեծ գանձերի տիրանալու ետևից, ղբաղված լինի, իսկ ինքը, Դարեհը, փախչելով ժամանակ շահի պատերազմին նախապատրաստվելու համար:

66,1 Ալեքսանդրը գրավելով քաղաքը և պալատի գանձատունը, այնտեղ գտավ ավելի քան չորս բյուր տաղանգ շերտձած²⁹³ ոսկի և արծաթ: Արքաներն այս ամենը շատ տարիներ պահել են անձեռնմխելի, որպես ապավեն բախտի քմահաճույքների ղեմ: Դրանից բացի այնտեղ կար նաև ինը հազար ոսկի տաղանդ դահեկանի²⁹⁴ տեսքով:

3 Հետաքրքիր մի դեպք պատահեց արքային գանձերի գրավման ժամանակ: Նրբ նա բազմեց արքունի գահի վրա, որը շատ ավելի խոշոր էր, քան մարմնի չափերը, մանկլավիկներից²⁹⁵ մեկը տեսնելով, որ նրա ոտքերը շատ են բարձր մնացել գահի պատվանդանից, վերցնելով Դարեհի սեղանը, այն դրեց (արքայի) օրորվող ոտքերի տակ: Սեղանը լավ հարմարվեց և արքային հաճույացրեց այդ արարքի դիպուկութունը, բայց գահին մոտիկ կանգնածներից մի ներքինի բախտի այդպիսի փոփոխութունից սրտում հուզվեց և 5 արտասվեց: Ալեքսանդրը նրան նկատելով հարցրեց. «Ի՞նչ վատ բան ես տեսել ու լաց ես լինում»: Ներքինին պատասխանեց. «Այժմ ես քո ստրուկն եմ, մինչդեռ նախկինում Դարեհինն էի, և քանի որ բնավորությամբ տիրասեր եմ, վշտացա տեսնելով, որ նրա կողմից առավել հարգված կահույքը այժմ դարձել է անպատիվ իր»:

6 Արքան այս պատասխանից ըմբռնեց այն ամբողջ փոփոխութունը, որ տեղի է ունեցել պարսկական թագավորության մեջ: Նա զգաց, թե մեծամիտ արարք գործեց, որը բոլորովին հակադիր էր 7 գերի վերցված կանանց հանդեպ իր ցուցաբերած աղնվության: Ուստի և կանչելով սեղանը (իր ոտքերի տակ) դնողին, հրամայեց այն ետ վերցնել: Փիլոտասը²⁹⁶, որը այնտեղ ներկա էր, ասաց. «Բայց սա անարգանք չէ, քանի որ ղու ինքդ շես հրամայել, այլ դեպքը կատարվել է ինչ-որ բարի ոգու նախախնամությամբ և կամքով»: Այսպիսով, արքան այդ խոսքերը իբրև բարի նշան ընդունելով, հրամայեց, որ սեղանը մնա գահի տակ իբրև պատվանդան:

67,1 Այնուհետև նա Դարեհի մորը և դստերին և որդուն թողեց Ուսայում, տրամադրելով նրանց հունարեն լեզուն սովորեցնողների, իսկ ինքը ղորքը վերցնելով ճանապարհ ընկավ և շորրորդ օրը հասավ Տիգրիս ղետը²⁹⁷: Սա հոսելով Ուքսիանեի լեռներից, նախ հազար ասպարեպ տարածության վրա անցնում է դաժան երկրով, որը կտրտված է մեծ ձորերով, այնուհետև հոսում է դաշտավայրի մի-

9ով, հետդհետե դառնում մեղմահոս և, վեց հարյուր ասպարեւի
3 անցնելուց հետո, թափվում է Պարսից ծովը: Անցնելով Տիգրիսը,
(Ալեքսանդրը) մտավ ուքսիացիների երկիրը, որը ամենաբեր է և
ոռոգվում է առատ ջրերով և արտադրում է առատ և բազմադան
մրգեր: Երբ հասած մրգերը շորացվում են, Տիգրիսն ի վառ նավուղ
վաճառականները Բարելոնիա բերում են բավականության համար
ամեն տեսակ բարիք:

4 Ալեքսանդրը (սուաջ ընթանալիս), անցումների պաշտպան-
ված տեսավ Մադետեսի²⁹⁸ կողմից, որը Դարեհի ազգականն էր և
նշանակալից ուժեր ուներ: (Արքան) նկատեց, թե վայրը խիստ ամ-
րացված է: Գուհավեժ ժայռերը անանցանելի էին, բայց տեղացի-
ներից մեկը, ծագումով ուքսիացի, որը քաջ գիտեր այդ վայրերը,
արքային խոստացավ նեղ ու վտանգավոր մի արահետով ղինվոր-
5 ներին հասցնել թշնամուց ավելի բարձր ղտնվող դիրքերը: Ալեք-
սանդրը ընդունեց նրա առաջարկները և նրա հետ ուղարկեց բավա-
կան ղինվորներ, իսկ ինքը, շարունակելով իր առաջընթացը բնօրին
հնարավոր էր, հաջորդաբար հարձակվեց անցումների պաշտպա-
նողների վրա: Քանի որ հարձակումը եռանդուն էր և բարբարոս-
ների ուշադրությունը այստեղ էր շեղված, (Ալեքսանդրի կողմից)
ուղարկվածները անսպասելի հայտնվեցին անցումը պահպանող-
ների ղխավերևում: Քանի որ բարբարոսները ահաբեկվեցին և
փախուստի ղիմեցին, ապա (Ալեքսանդրը) տիրացավ անցմանը և
շուտով նաև Ուքսիանե երկրի բոլոր քաղաքներին:

68,1 Այստեղից ճանապարհ ընկնելով (Ալեքսանդրը) առաջ ընթա-
ցավ դեպի Պերսիս²⁹⁹ և հինգերորդ օրը հասավ Սուսիական կոչված
ժայռերին: Այստեղ անցումները նախապես վերցրել էր Արիոբար-
դանեսը³⁰⁰ ևրկու բյուր և հինգ հազար հետևակ ղինվորներով և երեք
2 հարյուր հեծյալներով: Արքան որոշեց հարձակվել և գրավել ան-
ցումները, ուստի և նեղ ու դաժան վայրերով շառժվեց առաջ, բայց
ղիմադրության շհանղիպեց: Մինչդեռ բարբարոսները թույլ տվեցին
նրան կիրճի միջով առաջանալ մինչև ինչ-որ տեղ, բայց երբ նա
արդեն հասել էր կես ճանապարհին, ղժվարանցանելի մի վայր, հսուն-
կարծ հարձակվեցին, վերևից գլորելով սայլաբեռ մեծությամբ քա-
րեր, որոնք հանկարծակի ընկնելով մակեդոնացիների վրա, շատ
շատներին կործանեցին. (բարբարոսներից) շատերն էլ գահավեժ
ժայռերի ղլխից տեղեր էին շարտում խտացած (մակեդոնացիների)
մրա և ոչ մի ղեպքում շէին վրիպում, որիշներն էլ ձեռքերով քարեր
էին նետում հարձակվող մակեդոնացիների վրա: Նեղ կիրճը մեծա-

պես նպաստեց պարսիկներին, որոնք և շատերին սպանեցին, ոչ քչերին էլ վիրավորեցին:

3 Ալեքսանդրը արդեն անգոր էր օգնելու իր աղետյալ զինվորներին և տեսնելով, որ թշնամիներից ոչ ոք ոչ սպանվել է, ոչ իսկ վիրավորվել, մինչդեռ իր զինվորներից շատերը կործանվել են և զրեթե բոլոր հարձակվողները վիրավորվել, շեփորով զինվորներին

4 սզդարարեց վերադարձ ուղևորից: Անցումներից ետ քաշվելով երեք հարյուր ասպարեզ, նա բանակ դրեց և փորձեց տեղացիներից իմանալ, թե կա՞րդյոք որևէ մեկ ուրիշ անցում: Երբ բոլորը հաստատեցին, թե ոչ մեկ այլ անցում չկա, սակայն կարելի է շատ օրերի ճանապարհով շրջանցել այդ ամենը, Ալեքսանդրը անվալել համարեց սպանվածներին անթաղ լքելը, բայց և միաժամանակ անհարմար սեպեց իր մեռյալներին պահանջելը, այդ բանում տեսնելով իր սլարտուսթյան խոստովանանքը, նա հրամայեց բոլոր գերված-

5 ներին բերել իր առաջ: Սրանց հետ իր մոտ առաջնորդվեց նաև երկու լեզվով խոսող մի մարդ, որը գիտեր պարսկերեն:

Նա ասաց, որ ինքը ծագումով լյուկիացի է, բայց գերի ընկնելուց հետո երկար տարիներ այս լեռնային վայրերում այժեր է արածում, այդ սլատճառով էլ ինքը լավ ծանոթ է այդ երկրին և կարող է զորքը ճառախիտ արահետով առաջնորդել անցումները պահպանողներին

6 թիկունքը: Արքան խոստացավ նրան պատվել առատ պարգևներով և այդ մարդու առաջնորդութամբ գիշեր ժամանակ մեծ դժվարութամբ առատ ձյան միջով անցավ այդ լեռը. ճանապարհն ընկած էր գահավեժ երկրով, որը կտրատված էր խորը ձորերով և բազում անդունդներով: Հայտնվելով թշնամու պահակակետերի դեմ, առաջիններին կոտորեց, երկրորդ դիրքերում գտնվողներին գերի վերցրեց, իսկ երրորդ դիրքերում գտնվողներին փախուստի մատնելով, տիրացավ անցումներին և Արիոբարզանեսի զորքերի մեծ մասին կոտորեց:

69,1 Այնուհետև երբ նա առաջ էր ընթանում դեպի Պերսեպոլիս, ճանապարհին նրան նամակ բերեցին քաղաքի կառավարիչ Տիրիդատեսից: Նամակում գրված էր, որ եթե նա ժամանի ավելի շուտ քան նրանք, որոնց հանձնարարված է Պերսեպոլիսը պահել Դարեսի համար, ապա ինքը քաղաքը կհանձնի նրա սիրության: Բուստի և Ալեքսանդրը իր զորքը շտապ տարավ առաջ և կամրջելով Արաքսես գետը³⁰¹, զինվորներին անց կացրեց (մյուս ափը):

Այստեղ էլ, մինչ արքան առաջ էր ընթանում, տարօրինակ և ահավոր մի տեսարան տեղի ունեցավ, որը զայրույթ առաջացրեց այն կատարողների դեմ, իսկ անխղճորեն տուժածների հանդեպ

համակրանք հարուցեց: Այսպես, արքային ձիթենու ճյուղերով³⁰² դիմավորեցին հելլեններ, որոնք իրենց երկրից տեղահանվելով այստեղ էին բերվել պարսից նախորդ արքաների կողմից, թվով մոտավորապես ութ հարյուր մարդ, որոնց մեծ մասն արդեն ծերացել էր և բոլորը խեղանդամվել էին, ոմանք զրկվել էին ձեռքերից, ոմանք 4 ոտքերից, ուրիշներ ականջներից ու քթերից. նրանց, ովքեր ծանոթ էին զիստության և արհեստներին ու առաջադիմել էին ուսման մեջ, բոլոր մյուս վերջավորությունները հաշմել էին և թողել միայն այն, ինչը անհրաժեշտ էր իրենց արհեստին: Բոլոր զինվորները, տեսնելով նրանց պատկառելի տարիքը և կրած մարմնական աղետները, կարեկցում էին այդ դժբախտների վիճակի վրա: Բոլորից առավել այդ դժբախտներին կարեկցում էր ինքը՝ Ալեքսանդրը և շէր կարողանում զսպել արտասուքը:

5 Քանի որ բոլորը միաբերան ձայն բարձրացրին և խնդրեցին Ալեքսանդրին, որպեսզի պաշտպան կանդնի իրենց այդ դժբախտությունների մեջ, ուստի և արքան իր մոտ հրավիրելով նրանց մեծավորներին, իր մեծահոգության համեմատ պատվեց նրանց և խոստացավ ամեն կերպ օժանդակել, որպեսզի կարողանան 6 իրենց տները վերադառնալ: Բայց նրանք, հավաքվելով խորհրդի, այնտեղ մնալը դերադասեցին տուն վերադառնալուց: Քանզի նրանք մտածեցին, որ եթե ազատվեն և փոքր խմբերով ցրվեն ու թափառեն իրենց բաղաճներում, ապա բախտի հարվածներին դժվարությամբ կդիմանան. մինչդեռ, քանի որ նույն աղետին են ենթարկված, ապա իրար հետ ապրելով, նրանք մխիթարություն 7 կգտնեն միմյանց դժբախտության նույնության մեջ: Այսպիսով, նրանք դարձյալ գալով արքայի մոտ, իրենց որոշումը հայտնեցին 8 և խնդրեցին նրա օգնությունը իրենց այս մտադրությունը՝ իրականացնելու համար: Ալեքսանդրը հավանություն տվեց նրանց որոշման և նրանցից յուրաքանչյուրին պարգևեց երեք հազար դրաքմե, տղամարդու հինգ ղգեստ, նույնքան և կանացի երկու ղույգ եզներ, հիսուն ոչխար և հիսուն մեղիմնոս³⁰³ ցորեն: Միաժամանակ նրանց աղատ հայտարարեց ամեն տեսակ արքունի հարկերից և իր վերակացուններին կարգադրեց, որպեսզի հող սփանեն, որ նրանք ոչ ոքից վնաս չկրեն³⁰⁴:

9 Ալեքսանդրը, ահա, իլ մեղմության հատուկ այսպիսի բարեգործություններով թեթևացրեց այդ տառապյալների դժբախտությունը:

70.1 Իսկ Պերսեպոլիսը, որը պարսից թագավորության մայրաքաղաքն էր, Ալեքսանդրը մակեդոնացիներին ներկայացրեց իբրև

Ասիայում գտնվող քաղաքներից ամենաթշնամին և այն հանձնեց
2 իր ղինվորներին կողոպտելու, բացի արքունի պալատներից: Այն
ամենահարուստ քաղաքն էր արևի տակ և անձնական տներն իսկ
շատ տարիների ընթացքում լցված էին ամեն տեսակ բարիքնե-
րով: Մակեդոնացիները, ներխուժելով քաղաք, սպանեցին բոլոր
այրերին և հափշտակեցին (նրանց) ունեցվածքը. (տներից) շա-
տերը պատկանում էին բազմության և լիքն էին ամեն տեսակ
կահավորանքով ու զարդերով: Այսստեղից տարվեց մեծ քանա-
կությամբ արծաթ և հափշտակվեց ոչ քիչ ոսկի, ինչպես նաև հաղ-
թողների ավարը դարձան շատ և թանկարժեք զդեստներ, մի մասը
ծովի ծիրանագույն, մյուս մասը ասեղնագործած ոսկե զարդե-
րով: Իսկ մեծ և ամբողջ աշխարհով մեկ հռչակված արքունի
պալատները մատնվեցին անարգանքի և լիակասար ավերման:

4 Մակեդոնացիները, թեպետև ամբողջ օրը ընկել էին կողո-
պուտի ետևից, դարձյալ շկարողացան հանգեցնել առավելի հա-
5 մար իրենց ունեցած ցանկությունը: Կողոպուտի ընթացքում այն-
քան մեծ էր նրանց ընչաքաղցությունը, որ նրանք նույնիսկ սկը-
սեցին կռվել իրար միջև և շատերը, որոնք կողոպուտից առավել
մեծ բաժին էին յուրացրել, սպանվեցին: Մինչև իսկ ոմանք գրտ-
նրված իրերից ամենաթանկարժեքները դաշույններով կտրատում
էին և վերցնում իրենց համապատասխան բաժինը. ուրիշներ էլ
տարված իրենց գայրույթով, վեճի առարկա կողոպուտը յուրաց-
6 նողների ձեռքերն էին կտրում: Իսկ կանանց, ամբողջ զարգերով հան-
դերձ, բոնի տանում էին և բոլոր դերի վերցվածներին ստրկացնում:

Այսպիսով, Պերսեպոլիսը ինչքան որ իր հարստությամբ գե-
րառանցում էր մյուս քաղաքներին, այժմ այնքան գերազանցեց
բոլորին իր դժբախտություններով:

71,1 Ալեքսանդրը, բարձրանալով միջնաբերդ, ձեռք գցեց այնտեղ
գտնվող գանձերը: Այդ գանձերը կուտակվել էին պետության եկա-
մուտներից, սկսած դեռևս Կյուրոսից, պարսից առաջին թագավորից
մինչև այդ ժամանակները և լիքն էին արծաթով ու ոսկով: Այնստեղ
գտնվեցին տասներկու բյուր տաղանդ, ամբողջ ոսկին ևս արծաթի
2 արժեքի վերածած³⁰⁵: Ցանկանալով այդ գանձերի մի մասը տանել
իր հետ, պատերազմի կարիքները հոգալու նպատակով, իսկ մյուս
մասը կուտակել Սուսայում և պահպանել այդ քաղաքում, նա Բա-
բելոնից և Միջագետքից, ինչպես նաև Սուսայից մեծ թվով ջորի-
ներ ուղարկեց մի մասը բեռնատար, մի մասը սայլերին լծած,
դրանց գումարած նաև երեք հազար բեռնատար ուղտ. դրանց մի-
ջոցով էլ ամեն ինչ տեղափոխեց առավել նախընտրելի վայրեր:

3 Քանզի նա խիստ թշնամանք ունենալով տեղաբնիկների հանդեպ, չէր վստահում նրանց և մտածում էր վերջնականապես կործանել Պերսեպոլիսը:

Կարծում ենք, որ անտեղի շիլինի, եթե համառոտակի խոսենք ալդ քաղաքում գտնվող (արքունի) պալատների մասին, սրանց
4 շքեղության պատճառով: Միջնաբերդը նշանակալից է և առնված եռակի պարսպի մեջ: Առաջինը կառուցված էր մեծ հմտությամբ պատրաստված հիմքերի վրա և ուներ վաթսուն կանգուն բարձ-
5 րություն և վերջանում էր աշտարակներով: Երկրորդը իր կառուց- վածքով նման էր առաջինին, բայց ուներ կրկնակի բարձրություն, իսկ երրորդ պարիսպը ձևով քառակող էր և ուներ վաթսուն կանգուն բարձրություն, այն կառուցված էր կարծր և բնականից հավերժ
6 դիմացկուն քարից: Կողերից յուրաքանչյուրն ուներ պղնձե դռներ, որոնց կողքին քսան կանգուն բարձրությամբ պղնձե ձողեր. սրանք նախատեսված էին դիտողին գարմացնելու, իսկ դռները՝ ապա- հովության համար:

7 Միջնաբերդի արևելյան կողմում, շորս պլեթրոն հեռավորու- թյան վրա գտնվում է թագավորական կոչված բլուրը, որտեղ արքաների գերեզմաններն էին: Սա հարթած ժալո էր և ուներ բաղ- մաթիվ սենյակներ, որոնցում գտնվում էին մահացած (թագա- վորների) շիրիմները: Այն գուրկ էր ձեռակերտ որևէ մաստույցից և մահացածների դագաղներն ընդունում էր հատուկ ձեռսկերտ
8 վերամբարձ սարքերի միջոցով: Այս միջնաբերդի շուրջը կային արքունի, ինչպես նաև գորավարների օթևաններ, բոլորը շքեղա- շատ, ինչպես նաև կառույցներ, որոնք հատկապես պատրաստած էին գանձերը պահելու համար:

72,1 Ալեքսանդրը իր հաջողությունների առթիվ հաղթահանդեսներ կաղմակերպեց, մեծաշուք գոհեր մատուցեց աստվածներին և իր ընկերներին փայլուն ճաշկերույթներ տվեց: Ու երբ նրա զինա- կիցները խրախճում էին և խնջույքը արդեն բորբոքվել էր ու գի- նարբուքը սաստկանում էր, բոլորը հարբեցին և խմողների հո-
2 դին լցվեց ահեղ կատաղությամբ: Այնժամ ներկա եղող կանանցից մեկը, որի անունը Թախ էր և ծագումով Ատսիկայից³⁰⁶, ասաց, թե Ասիայում Ալեքսանդրի կատարած բոլոր գործերից լավագույնը կլինի այն, որ իրենց հետ հանդիսավոր ուրախ երթի դուրս դալով, պալատները հրի մատնի, և կանանց ձեռքերը կարճ ժամանակում
3 ոչնչացնեն պարսկական հռչակավոր կառույցները: Քանի որ այս խոսքերն սուսված էին երիտասարդ այրերի, որոնք հարբելուց անրան կերպով դրգոված էին, ուստի և, ինչպես կարելի էր սույա-

սել, ինչ-որ մեկը գոռաց՝ դուրս դալ երթի և ջահեր վառել ու վրեժ
4 լուծել հելլենական սրբավայրերի պղծման համար³⁰⁷, Ուրիշներ
նույնպես ձայնակցեցին նրան և ասացին, թե այդ արարքը վայել
է միայն Ալեքսանդրին: Ու երբ արքան ևս ողևորվեց նրանց խոս-
քերից բոլորը վեր թռան իրենց տեղերից և առաջարկեցին ռսկր-
սել հաղթական երթը ի պատիվ Դիոնիսոսի³⁰⁸, նրբ շուտով բազ-
մաթիվ ջահեր հավաքվեցին և արդեն երաժիշտ կանայք ևս ներկա
էին խրախճանքին, այնժամ արքան նրանց առաջնորդեց երգերով
ու ֆլեյտաներով ու սրինգներով, իսկ ամբողջ գործողությունը
6 ղեկավարում էր հետերա Թախսը: Սա արքայից հետո առաջինը իր
վառված ջահը նետեց պալատի մեջ, ու երբ բոլորը ևս նույնը արե-
ցին, հրդեհի մեծություն պատճառով պալատի շրջապատը արագ
կերպով բոցավառվեց: Ամենազարմանալին այն էր, որ պարսից
արքա Քսերքսեսի՝ Աթենքի ակրոպոլիսի նկատմամբ գործադրած
սրբապղծությունը տարիներ հետո նույն եղանակով խրախճանքի
պահին փոխհատուցեց տուժածների համաքաղաքացի մի կին:

73.1 Այս ամենից հետո Ալեքսանդրը շրջագայեց Պերսիսի քա-
ղաքները և դրանց մի մասը ուժով նվաճեց, մյուս մասն էլ իր
սիրալիր վերաբերմունքով գրավեց իր կողմը և այնուհետև ընկալվ
2 Դարեհի ետևից: Սա մտածում էր գումարել Բակտրիանե (երկրում)
և մյուս սատրապություններում գտնվող զորքերը, սակայն հա-
լածվելով (Ալեքսանդրից), նա երեք բյուր պարսիկների և հելլեն
վարձկանների հետ շտապեց փախչել Բակտրիայի վրայով, բայց
այստեղից հեռանալիս ձերբակալվեց Բակտրիայի սատրապ Բես-
3 սոսի կողմից և սպանվեց: Նա նոր էր վախճանվել, երբ Ալեք-
սանդրը իր հեծյալներով նրան հալածելիս, մահացած գտավ և ար-
ժանացրեց արքայական թաղման: Մինչդեռ ուրիշները գրել են, թե
Ալեքսանդրը նրան գտավ դեռևս շնչելիս և կարեկցեց նրան կրած
դժբախտությունների համար, և քանի որ Դարեհը խնդրել է նրան
վրեժ լուծել իր սպանության համար, Ալեքսանդրը համաձայնվե-
լով հալածել է Բեսսոսին: Բայց որովհետև սա շուտ էր մեկնել և
շատ հեռացել Բակտրիանեում, ուստի (Ալեքսանդրը) հրաժարվեց
թշնամուն հալածելուց և ետ վերադարձավ:

Այսպիսին էր իրավիճակը Ասիայում:

74.1 ... Այդ տարին³⁰⁹, Դարեհի վախճանվելուց հետո, Բեսսոսը
Նաբառնեսի և Բարքսասի և շատ այլոց հետ աղատվելով Ալեք-
սանդրի ձեռքից, հասավ Բակտրիանե: Նա Դարեհի կողմից կարգվել
էր այդ երկրի սատրապ և քանի որ իբրև կառավարիչ ճանաչված
էր ժողովրդի կողմից, ուստի խնդրեց բնակիչներից պաշտպանել:

2 Իրենց ազատութիւնը: Նա մասնանշում էր, որ իրենց երկիրը դրժ-
վարամատուց լինելով և ունենալով ռազմունակ այրերի բավարար
բազմութիւն, մեծապես կնպաստի իրենց անկախութիւնը հաս-
տատելու համար: Նա խոստացավ գլխավորել պատերազմը և
բազմութեանը համոզելով, ինքն իրեն հայտարարեց թագաւոր:
Այսպիսով, նա զինվորներ հավաքագրեց և մեծ քանակութեամբ
զենքեր շինեց և ամեն ինչ ջանասիրութեամբ նախապատրաստեց
հետագա կարիքների համար:

3 Մինչգեռ Ալեքսանդրը տեսնելով, որ մակեդոնացիները 'Դա-
րեհի մահով արշավանքը համարում էին ավարտված և ցանկա-
նում էին վերադառնալ հայրենիք, նրանց գումարեց համաժողո-
վի¹¹ և համոզի: Խոսքերով դիմելով նրանց, նախասլատրաստեց
հետագա արշավանքի համար, միաժամանակ, սակայն, դումա-
րելով իր հետ դաշնակցած հելլենական քաղաքներից հավաքված
զորքերին և գովելով նրանց մատուցած ծառայութիւնները, ազատ
արձակեց բանակից, յուրաքանչյուր հեծյալին պարգևելով մեկ

4 տաղանդ, իսկ հետևակներին՝ տասը մինա: Բացի այդ նա վճա-
րեց նրանց մնացած ամբողջ ռոճիկը, ինչպես նաև այն ամբողջ
ծախսը, որ անհրաժեշտ էր մինչև նրանց հայրենիք վերադառնալը,
իսկ նրանց, ովքեր նախընտրեցին մնալ արքայի զորքում, յուրա-
քանչյուրին շնորհեց երեք տաղանդ: Նա առատ պարգևներով
պատվեց զինվորներին մասամբ իր մեծահոգի բնավորութեան սլատ-
ճառով, մասամբ էլ այն պատահառով, որ 'Դարեհին հետապնդելիս նա
5 ձեռք էր բերել մեծ քանակութեամբ հարստութիւն: Նա (արքայի)
գանձապահներից ստացել էր ութ հազար տաղանդ. դրանից բացի
այն ամենը, ինչ բաժանեց զինվորներին, ներսոյալ նաև ամբողջ
զարդերը և ըմպանակները կազմում էին տասներեք հազար տա-
ղանդ, իսկ կողոպուտը և հափշտակված իրերը դրանից էլ ավելի:
էին հաշվվում:

75,1 Ալեքսանդրը մեկնեց դեպի Հյուրկանիա³¹² և երրորդ օրը բա-
նակ դրեց Հեկատոնտապոլիս³¹³ կոչված քաղաքի մոտ: Որովհետև
այս քաղաքը բարգավաճ էր և վայելքի համար ամեն ինչի մեծ
առատութիւն ուներ, ուստի այստեղ նա իր զորքին մի քանի օրով

2 դադար տվեց: Այնուհետև հարյուր հիսուն ասպարեկ առաջ գնա-
լով, բանակ դրեց մի խոշոր ժայռի մոտ: 'Դրա ստորոտում կար
դարմանահրաշ մի քարայր, որից խոշոր մի դետ էր արտաբխում,
անունը Ոտիբոյտես³¹⁴: Սա երեք ասպարեկ կատաղի թափով հո-
սելուց հետո, երկու թևի է բաժանվում կրծքանման մի ժայռի մոտ,
որի տակին կար գետնի հսկայական մի բացվածք, այդ անդունդի

մեջ մեծ աղմուկով զահավիժելով և ժայռին զարնվելուց փրփրալից դառնալով, գետը երկրի տակով հոսում է երեք հարյուր ասպարեզ, որից հետո նորից հայտնվում է նրա հոսանքը:

3 Ալեքսանդրը իր զորքով մտավ Հյուրկանիա և նվաճեց երկրի բոլոր քաղաքները, մինչև Կասպյան կոչված ծովը, որը ոմանք կոչում են Հյուրկանիայի (ծով): Պատմում են, թե դրանում խոշոր օձեր են լինում, ինչպես նաև բազմապիսի ձկներ, որոնք շատ

4 են տարբերվում մեզ հայտնիներից: Անցնելով Հյուրկանիան, նա հասավ Բարեբախտ (կոչվող) գյուղերը, որոնք հիրավի այդպիսիք էին. քանզի այստեղ երկիրը ավելի բերքատու է, քան մեկ այլ

5 վայրում: Ինչպես պատմում են, յուրաքանչյուր որթատունկ (այստեղ) տալիս է մեկ մետրետե³¹⁵ դինի, իսկ թզենիները երբեմն տալիս են տասր մեդիմնոս³¹⁶ չորացրած թուզ: Հնձելու ժամանակ լքված ցորենը հողին ընկնելիս, առանց ցանված լինելու, ծլում

6 է և հասցնում առատ բերք: Տեղաբնիկներին հայտնի է նաև մի ծառ, արտաքինով կաղնու նման, որի տերևներից մեղր է կաթում³¹⁷, ոմանք այն հավաքում են և առատորեն օգտագործում իրենց կարիքների համար: Այնտեղ կա նաև թռչող մի կենդանի, որը կոչում են անթրեդոն³¹⁸, սա մեղվից փոքր է, բայց մեծագույնս օգտավետ: Այն թափառում է սարերում և բազմապիսի ծաղիկներից (նեկտար) հավաքում ու բնակվելով ժայռերի խոռոչների և շանթահարված ծառերի փշակների մեջ, այնտեղ խորիսխ է պատրաստում և արտադրում այնպիսի մի հեղուկ, որն իր քաղցրությամբ մեր մեղրին շատ չի գիշում³¹⁹:

76,1 Այսպես, Ալեքսանդրը ձեռք բերեց Հյուրկանիան և այդ երկրի հարևանությամբ ապրող ժողովուրդներին և Դարեհի հետ փախած (պարսիկ) առաջնորդներից շատերը իրենց հանձնեցին (Ալեքսանդրին): Սրանց նա ընդունեց ողորմածաբար, որով և արդար

2 լինելու լայն համբավ ձեռք բերեց: Այսպիսով, Դարեհի հետ արշավանքի մասնակցած շուրջ հազար հինգ հարյուր հելլեններ, որոնք առանձնապես քաջարի էին, իրենց հանձնեցին Ալեքսանդրին և ներման արժանանալով, ընդունվեցին նրա բանակի շարքերը, մյուս վարձկաններին հավասար իրավունքներով:

3 Ալեքսանդրը, առաջանալով Հյուրկանիայի առափնյա մասով, մտավ Մարդեր³²⁰ կոչված (ցեղերի) երկիրը: Քանի որ սրանք հատկապես աչքի էին ընկնում իրենց արիությամբ, արհամարհեցին Ալեքսանդրի զորությունը և հարգանքի ոչ մի տուրք չմատուցեցին

4 նրան, այլ ութ հազար զինվորներով երկրի մատույցները նախապես գրավելով, անվախ կերպով դիմագրավեցին մակեդոնացի-

ների արշավանքը: Իսկ արքան, հարձակվելով նրանց վրա, կովի բռնվեց և մեծ մասին կոտորեց, իսկ մնացյալին քշեց անմատույց վայրերը:

- 5 Մինչ նա հրկիզում էր երկիրը, և արքունի ձյերին տանող սպասու-
վորները փոքր ինչ հեռացել էին առքայից, բարբարոսներից ոմանք
6 հարձակվեցին և խլեցին ձիերից լավագույնին³²: Այն նվիրել էր Դև-
մարատոս Կորթնացին. ձին մասնակցել էր Ասիայում արքայի մղած
բոլոր կռիվներին: Երբ այն ղեռ անթամբ էր, հանդուրժում էր իր վրա
միայն ձիասպահին, բայց երբ արժանացավ թագավորական հանդեր-
ձանքին, սրան ևս չէր հանդուրժում, այլ և ենթարկվում էր միայն
7 Ալեքսանդրին և խոնարհում մարմինը, որպեսզի (արքան) հեծնի:
Այս կենդանու բարեմասնությունների պատճառով արքան դայրա-
ցավ նրա կորստի համար և հրամայեց երկիրը անտառահատել,
միաժամանակ համալեղու մարդկանց միջոցով տեղաբնիկներին
հալստարարեց, որ եթե չհանձնեն ձին, ապա իրենց ամբողջ երկիրը
ալեքսանդրի կտեսնեն, իսկ բնակիչներին՝ դլխովին սրի քաշված:
8 Քանի որ սպառնալիքները սկսեցին իստորեն յորադործել, ուստի
բարբարոսները, ահաբեկված վերադարձրին ձին, մյաժամանակ
թանկարժեք ընծաներ ուղարկեցին, ինչպես նաև հիսուն մարդ,
խնդրելով ներման արժանանալ: Ալեքսանդրը այդ մարդկանցից
ամենահայտնիներին պատանդ վերցրեց:

- 77,1 Երբ նա դարձյալ վերադարձավ Հյուրկանիա, նրա մոտ ժամա-
նեց ամազոնների թաղուհին, որի անունն էր Թալլեստրիս և թա-
գավորում էր Փասիս և Թերմոդոնս: գետերի միջև գտնված երկրում.
Սա հայտնի էր դարձել իր գեղեցկությամբ ու մարմնի ուժով և իր
ցեղակիցների միջավայրում հիացմունքի էր արժանացել իր քա-
ջության համար: Սա իր զորքի բաղմությունը թողնելով Հյուրկա-
նիայի սահմանների վրա, ժամանեց Ալեքսանդրի մոտ երեք հար-
յուր ամազոնուհիների հետ, զարդարված իրենց բոլոր զենքերով:
2 Արքան դարձացավ կանանց հանկարծակի հայտնվելու և նրանց
չքեղության վրա. ու երբ հարցրեց Թալլեստրիսին, թե ինչու՞ է սա
ներկայացել, վերջինս պատասխանեց, թե եկել է երեխա ունե-
2 նալու նպատակով: Քանի որ արքան իր կատարած սխրանքներով
դարձել էր լավագույնը բոլոր մարդկանց մեջ, իսկ ինքն իր քաջու-
թյամբ և կորովով գերադանցում էր բոլոր կանանց, հետևաբար և
առաջնակարգ երկու ծնողից ծնվածն էլ իր առաքինություններով
պետք է գերադանցի մյուս մարդկանց: Արքան շատ հաճույացավ
և, նրա առաջարկն ընդունելով, տասներեք օր հաղորդվեց նրա հետ,

որից հետո նրան թանկարժեք նվերներով պատվեց և ուղարկեց նրա հայրենի երկիրը:

4 Այս բոլորից հետո Ալեքսանդրը համոզված, որ արդեն հասել է իր նպատակին և ինքը իշխանության անբաժան տերն է, սկսեց հետևել պարսկական շքեղության և Ասիայի արքաների պերճանքին: Նախ, նա արքունիքում ասիածին մականակիրներ կարգեց, այնուհետև հրամայեց, որ իրեն թիկնապահություն անեն այրերից ամենաերևելիները, որոնց թվում նաև Դարեհի եղբայր Օքսաթրեսը:

5 Ապա գլխին դրեց պարսկական դիադեման և հագավ ճերմակ խիտոն³²², կապեց պարսկական գոտին և մնացած մյուս բաները, բացի անաքսիրիդից³²³ և կանդիսից³²⁴: Իր ընկերներին ևս բաժանեց ծիրանի եզրակարերով համազգեստներ, իսկ ձիերին հագցրեց պարսկական հանդերձանք: Այս ամենից բացի նա Դարեհի նման իրեն հարճեր վերցրեց, որոնց թիվը տարվա օրերից պակաս չէր և որոնք, ընտրված լինելով Ասիայի բոլոր կանանց միջից, իրենց գեղեցկու-

7 թյամբ գերազանց էին: Սրանք ամեն գիշեր անցնում էին արքայի մահճի մոտով, որպեսզի սա կարողանար ընտրել նրան, ում հետ կցանկանար գիշերը կենակցել: Սակայն, փաստորեն Ալեքսանդրը այդ սովորություններից հազվադեպ էր օգտվում և սահմանափակվում էր առավելապես նախորդ բարքերով, վախենալով մակեդոնացիներին նախատած լինելուց:

78,1 Բայց քանի որ շատերը դժգոհում էին այս ամենից, ուստի և սրանց նվերներով սիրաշահեց, իսկ ինքը տեղեկանալով, որ Արեյայի³²⁵ սաստրապ Սատիբարզանեսը³²⁶ ոչնչացրել է իր հետ թողնելով զինվորներին և համաձայնության գալով Բեսսոսի հետ, որոշել է միասին կռվել մակեդոնացիների դեմ, արշավեց նրա վրա: Սատիբարզանեսը իր զորքը հավաքեց Քորտականայում³²⁷, որը այդ երկրում նշանակալից քաղաք էր և ուներ բնականից շատ

2 ամուր դիրք: Բայց երբ արքան մոտեցավ, (Սատիբարզանեսը) ահաբեկվեց զորքերի բազմությունից և մակեդոնացիների կատարած քաջագործությունների համբավից: Ուստի և երկու հազար հեծյալներով սուրաց Բեսսոսի մոտ, շտապ օգնություն խնդրելու, իսկ մնացյալին պատվիրեց ապաստանել...³²⁸ կոչված լեռը, որը դժվարամատույց է և ապահով ապաստարաններ ունի նրանց հա-

3 մար, ովքեր չեն համարձակվում դեմ առ դեմ կռվել: Երբ նրանք այս պատվերը կատարել էին, արքան իր խիզախ բնավորության համաձայն հարձակվեց նրանց վրա և ամրացված ինչ-որ խոշոր ժայռաբլրում ապաստանածներին պաշարելով, ստիպեց նրանց

4 անձնատուր լինել: Այնուհետև երեսուն օրվա ընթացքում նվաճեց

այդ սատրապութեան սահմաններում գտնվող բոլոր քաղաքները և դուրս գալով Հյուրկանիայից, առաջ շարժվեց դեպի Դրանդինեի³²⁹ մայրաքաղաքը և այստեղ կանգ առավ ու դադար տվեց իր զորքերին:

81,1 Այս ամենը կատարելուց և Դրանդինեում գործերը կարգավորելուց հետո, (Ալեքսանդրը) իր զորքով արշավեց նախկինում արիմասպներ կոչված ժողովրդի վրա, որոնք այժմ կոչվում են եվերգետներ³³⁰, հետևյալ պատճառով: Կյուրոսը, որը մեղացիներից իշխանութունը փոխանցեց պարսիկներին, արշավանքներից մեկի ժամանակ անապատ մի վայր ընկնելով, պարենի պակասութեան պատճառով գտնվեց մեծ վտանգի մեջ, այնպես, որ սնունդ չհայթայթելով դինվորները ստիպված էին իրար միս ուտել, այնժամ արիմասպները գալով իրենց հետ բերում են երեք բյուր սալ ուտելիք և (Կյուրոսը) անսպասելիորեն փրկվելով, նրանց ապահարկ հայտարարեց և այլ պարգևներով պատվելով, ժողովրդի նախկին 2 անունը վերացնելով նրանց կոչեց եվերգետներ: Այժմ, Ալեքսանդրը արշավելով նրանց երկիրը, սիրահոժար ընդունելութուն գտավ, ուստի և այդ ժողովրդին պատվեց սլատշաճ նվերներով:

Այսպես վարվեցին նաև կեդրոսիներ կոչվող նրանց հարևանները, ուստի նրանց ևս պատշաճ շնորհներ պարգևեց: Այս երկու 3 ժողովուրդների կառավարումը հանձնեց Տիրիդատեսին³³¹: Մինչ (Ալեքսանդրը) զբաղված էր այստեղ, ոմանք գալով հաղորդեցին, թե Սատիբարդանեսը հեծյալների մեծ զորքով Բակտրիանեից վերադարձել է Արեյա և տեղաբնիկներին ապստամբութեան մղել Ալեքսանդրի դեմ: Արքան լսելով կատարվածի մասին, իր զորքի մի մասը Երիզյուոսի և Ստասանորի հրամանատարութեամբ ուղարկեց նրա դեմ, իսկ ինքը նվաճելով Արաքոսիան, մի քանի օրվա ընթացքում այն հպատակեցրեց իրեն:

Գիրք 18

3,1 Պերդիկասը վերցնելով գերագույն հրամանատարութունը և խորհրդի նստելով մյուս հրամանատարների հետ³³², Լագոսի որդի Պտղոմեոսին տվեց Եգիպտոսը, Լաոմեդոն միտիլենացուն՝ Սիրիան, Փիլոտասին՝ Կիլիկիան և Պիթոնին՝ Մեդիան, իսկ եվմենեսին՝ Պափլագոնիան և Կապպադովկիան և սրանց սահմանակից բոլոր երկրները, որոնցով Ալեքսանդրը ժամանակի բացառման պատճառով չկարողացավ անցնել Դարեհի դեմ պատերազմելիս. Անտիգոնոսին տվեց Պամփյուլիան և Լյուկիան և մեծ կոչված Փոյուգիան, այնուհետև, Ասանդրոսին տվեց Կարիան, Մենանդրոսին՝ Լյուդիան,

լեննաստուսին՝ Հելլեսպոնտյան Փոյուզիան: Այս սատրապություն-
2 ներն, ահա, այսպես բաշխվեցին: Իսկ Եվրոպայում Լյուսիմաքոսին
տրվեց Խրակիան և սրան սահմանակից ցեղերը, որոնք ապրում
էին Պոնտական ծովի ափին, իսկ Մակեդոնիան և սրան սահմանա-
կից ցեղերը հանձնվեցին Անտիպատրոսին: Նույնպես որոշվեց
Ասիայի մյուս սատրապություններին ձեռք չտալ, այլ դրանք թող-
նել իրենց նախկին կառավարիչների իշխանության տակ, նույնպես
թույլ տվեց, որ Տաքսիլեսը և Պորոսը տեր մնան իրենց թագավո-
րություններում, ինչպես կարգադրել էր դեռևս Ալեքսանդրը:

3 Պիթոնին նա տվեց Տաքսիլեսի և մյուս թագավորների (տի-
րույթներին) սահմանակից սատրապությունը, իսկ Կովկասի³³³ եր-
կարությամբ ընկած երկիրը, որը կոչվում է Պարոպանիսաղե, հանձ-
նեց Օքսյուարտես բակտրիացուն, որի դստեր՝ Հոռքսանեի հետ
ամուսնացել էր Ալեքսանդրը: Սիբյուրտիոսին տվեց Արաքոսիան և
Կեդրոսիան, Ստասանոր սոլիացուն՝ Արիան և Դրանգինեն, Փի-
լիպպոսին հանձնարարեց Բակտրիանեն և Սոգդիանեն, Փրատա-
պեռնեսին՝ Պարթյունեան և Հյուրկանիան, Պեկեստեսին՝ Պերսիսը,
Նլեպոլեմոսին՝ Կարմանիսն, Ատրոպատեսին՝ Մեդիան³³⁴, Ար-
քոնին՝ Բաբելոնիան, Արկեսիլաոսին՝ Միջագետքը³³⁵:

5,2 Այսպես, Կիլիկյան Տավրոսից անընդմեջ լեռը ամբողջ Ասիայի
միջով ձգվում է մինչև Կովկաս և Արևելյան օվկիանոս³³⁶: Այս (լեռ-
նաշղթան) բաժանվում է բազմապիսի բարձր գագաթների, որոնցից

3 յուրաքանչյուրն ունի իր առանձին անունը: Այս ձևով Ասիան բա-
ժանվել է երկու մասի, որից մեկը ձգվում է դեպի հյուսիս, մյուսը՝
դեպի հարավ: Այս թեքություններին համապատասխան էլ գետերի
մի մասը հոսելով թափվում է Կասպից ծով, մյուսները՝ Եվքսինյան
Պոնտոս, մի քանիսն էլ դուրս են գալիս Հյուսիսային օվկիանոս:
Սրանց հակառակ ուղղությամբ հոսող գետերի մի մասը թափվում
է Հնդկաց ծով, մյուսները՝ այդ երկրամասին հարող օվկիանոս.

4 մի քանիսն էլ դուրս են գալիս Կարմիր կոչված ծով: Սատրապու-
թյունները ևս նույն ձևով բաժանված լինելով, մի մասը հարում է
դեպի հյուսիս, մյուս մասը դեպի հարավ: Դեպի հյուսիս նայող
սատրապություններից առաջինը գտնվում է Տանաիս գետի³³⁷ եր-
կայնքով, հետո՝ Սոգդիանեն և Բակտրիանեն. սրանց հաջորդում են
Արիան, Պարթյունեան և Հյուրկանիան, որով շրջափակված է Հյուր-
կանյան ծովն ինքն իր մեջ: Այնուհետև՝ Մեդիան, որն ընդգրկում է
տարբեր անուններով շատ երկրներ և որը բոլոր սատրապություն-
ներից խոշորագույնն է: Այնուհետև՝ Արմենիան, Լյուկաոնիան և

Կապպաղովկիան, որոնք բոլորն էլ ունեն դաժան կլիմա. սրանց ուղղակի սահմանակից են և Մեծ Փոյուղիան և Հելլեսպոնտոսյան Փոյուղիան, ծայրամասայիններից են Լյուղիան և Կարիան, Փոյուղիայից վերև և սրան գուգահեո՝ Պիսիդիան, իսկ սրանից հետո՝ Լյուկիան:

16,1 Մին այս դեսլքերը կատարվում էին, Պերդիկկասը, վերցնելով իր հետ արքա Փիլիպպոսին և թագավորի զորքերին, արշավեց Կապպաղովկիայի տիրակալ Արիարաթեսի դեմ: Քանզի սա չէր հնազանդվել մակեդոնացիներին, իսկ Ալեքսանդրը անուշադրության էր մատնել նրան, Դարեհի դեմ մղած պատերազմի և զբաղվածության պատճառով, ուստի և սա հնարավորություն ունեցավ 2 երկար ժամանակ իշխել Կապպաղովկիայում³³⁸: Այդ պատճառով էլ եկամուտներից նա մեծ քանակությամբ դրամ կուտակեց և մեծաթիվ զորք կազմեց տեղաբնիկներից և օտար վարձկաններից, այսպիսով իր թագավորությունը պաշտպանելու համար նա պատրաստ էր պատերազմելու Պերդիկկասի դեմ, ունենալով երեք բյուր հետևակ և մեկ բյուր ու հինգ հազար հեծյալ զորք: Պերդիկկասը ճակատամարտ տալով և կովում հաղթելով նրան, մոտ շորո՞ հազար մարդու սպանեց, ավելի քան հինգ հազարին գերի 3 վերցրեց, որոնց թվում էր նաև ինքը՝ Արիարաթեսը: Մոաս ս սրա բոլոր ազգականներին (Պերդիկկասը) շարշարելով ցցահան արեց³³⁹, իսկ պարսվածներին ներելով ապահով յողեց և կտրգավորելով Կապպաղովկիայի գործերը, սատրապությունը հանձնեց Լվմենես Կարդիացուն, ինչպես որ սկզբից արդեն որոշվել էր:

39,5 Այս ամենից հետո Անտիպատրոսը³⁴⁰ նորից վերաբաժանեց սատրապությունները և Պտղոմեոսին հատկացրեց նախկինում արդեն նրա ունեցածը. քանզի անկարելի էր նրան տեղաշարժել, քանի որ համարվում էր, թե Լիդիատոսը նա իր քաջությամբ ձեռք է 6 բերել որպես իր իսկ նիղակով նվաճված երկիր: Լաոմեդոն միտիլենացուն տվեց Սիրիան, Փիլոքսենոսին՝ Կիլիկիան. իսկ վերին սատրապություններից Միջագետքը և Արբելիտիսը³⁴¹ տվեց Ամփիմաքոսին, Բաբելոնիան՝ Սելևկոսին, Սուսիանեն՝ Անտիգենեսին, որովհետև սա էր առաջինը հարձակվել Պերդիկկասի վրա, Պակեստեսին՝ Պերսիսը, Տլեպոլեմոսին՝ Կարմանիան, Պիթոնին՝ Մեդիան, Փիլիպպոսին՝ Պարթյունեան, իսկ Արիան և Դրանգիանեն՝ Ստասանդրոս կիպրացուն, Բակտրիանեն և Սոդդիանեն՝ Ստասանդր սոլիացուն, որը նույնպես (Կիպրոս) կղզուց էր: Պարոպանիսադեն կցեց Ալենքսանդրի կին Հոռքսանեի հոր՝ Օքսյուարտեսի (տի-

րույթներին), իսկ Հնդկաստանի՝ Պարուպանիսագետին սահմանակից մասերը տվեց Ագենորի որդի Պիթոնին. հաջորդ թագավորութուններից այն, որ ընկած էր Ինդոս գետի երկայնքով, տվեց Պորոսին, իսկ այն, որ ընկած էր Հյուդասպեսի երկայնքով, (տվեց) Տաքսիլեսին, քանզի հնարավոր չէր սրանց տեղաշարժել առանց թագավորական զորքերի և ականավոր առաջնորդի: Դեպի հուսիս հարող սատրապութուններից Կապպադովկիան (տվեց) նիկանորին, Մեծ Փոյուղիան և Լյուկիան, ինչպես առաջ, տվեց Անտիգոնոսին, Կարիան՝ Ասանդրոսին, Լյուդիան՝ Կլեյտոսին և Հելեսպոնտյան Փոյուղիան՝ Արրիդայոսին: Թագավորական զորքերի զորավար նա նշանակեց Անտիգոնոսին, որին հանձնարարված էր ավարտել պատերազմը Եվմենեսի և Ալկեստասի դեմ: Նա իր որդուն՝ Կասսանդրոսին հազարապետ կարգեց Անտիգոնոսի մոտ, որպեսզի սրա ինքնագլուխ գործողութունները աննկատ շմանան: Իսկ ինքը, վերցնելով թագավորներին և իր սեփական զորքը՝ մեկնեց Մակեդոնիա, թագավորներին իրենց հայրենի երկիրը վերադարձնելու համար:

- 40,1 Անտիգոնոսը, որը նշանակվել էր Ասիայի զորավար Եվմենեսի դեմ պատերազմն ավարտելու համար, իր զորքերը գումարեց իրենց ձմեռանոցներից: Պատերազմի համար պատրաստութուններ տեսնելուց հետո, նա առաջ շարժվեց Եվմենեսի վրա, որը դեռևս
- 2 Կապպադովկիայում էր: Իսկ Եվմենեսը, քանի որ նրա դեմ ապրստամբել էր իր հայտնի հրամանատարներից մեկը, Պերդիկկաս անունով և երեք օրվա ճանապարհի հեռավորության վրա բանակել էր ապստամբության հարած երեք հազար հետևակայիններով և հինգ հարյուր հեծյալներով, ապստամբների դեմ ուղարկեց Փոյնիքս տենեդոսցուն երեք հազար հետևակայիններով և հազար հեծյալներով: Սա գիշերային արագ ընթացքից հետո, գիշերվա երկրորդ պահին անսպասելի հարձակվեց ապստամբների վրա և, մինչ սրանք քնած էին, Պերդիկկասին կենդանի գերի վերցրեց և
- 4 տիրացավ ամբողջ զորքին: Եվմենեսը ապստամբության պատճառ եղող հրամանատարներին մահվան ենթարկեց, իսկ զինվորներին խառնելով մնացած զորքի շարքերին և նրանց հետ մարդասիրաբար վերաբերվելով, իր հանդեպ բարյացակամությանմբ համակեց:
- 5 Այս դեպքերից հետո Անտիգոնոսը սուրհանդակ ուղարկեց ոմն Ապոլլոնիդեսի մոտ, որը Եվմենեսի զորքում հեծելազորի հրամանատարն էր, և գաղտնաբար նրան մեծ խոստումներ տալով,
- 6 համոզեց դավաճանել և կովի ժամանակ անցնել իր կողմը: Մինչ Եվմենեսը բանակել էր Կապպադովկիայի դաշտերից մեկում, որը

հարմար էր հեծելագորային կովի համար, Անտիգոնոսը իր ամբողջ գործով վրա հասավ ու գրավեց դաշտի վրա իշխող բարձունքները: Այդ ժամանակ Անտիգոնոսն ուներ ավելի քան մեկ բյուր հետևակ, որոնց կեսը մակեդոնացիներ էին, հայտնի իրենց քաղաքործություններով, երկու հազար հեծյալ և երեսուն փիղ, իսկ եվմենեսը ոչ պակաս քան երկու բյուր հետևակ և հինգ հազար հեծյալ: Տեղի ունեցավ մեծ ճակատամարտ և երբ Ապոլլոնիդեսը իր հեծելագորով անսպասելի անցավ թշնամու կողմը, Անտիգոնոսը հաղթեց և թշնամուց կոտորեց մոտ ութ հազար մարդու: Նրա ձեռքն ընկավ նաև ամբողջ գումակը, այնպես, որ եվմենեսի դինվորները մի կողմից գարհուրեցին պարտությունից և մյուս կողմից բարոյալքվեցին գումակի կորստի պատճառով:

Այս դեպքերից հետո եվմենեսը մտածեց փախչել Արմենիա և այնտեղի բնակիչներից ոմանց դաշնակցությունում գրավել իր կողմը: Բայց քանի որ հետապնդվում էր և միաժամանակ տեսնելով, որ դինվորներն անցնում են Անտիգոնոսի կողմը, նա վերցրեց ամբողջ ամրացված մի փոքր վայր, որը կոչվում էր Նորա²⁴²: Այս բերդը շատ էր փոքր և պարսպի շրջագիծը երկու ասպարեղից ավելի չէր, բայց իր ամուր դիրքով՝ հրաշալի, քանզի տներն իրար կողքի կառուցված էին բարձր ժայռի վրա և գարմանալի կերպով ամրացված էին մասամբ բնությունից, մասամբ էլ ձևակերտ կառույցներով: Այստեղ կուտակված էր նաև մեծ քանակությամբ հացահատիկ և վառելիքայտ և աղ. այնպես, որ շատ տարիներ կարող էր ամեն ինչով ապահովել այնտեղ ապաստանածներին: Եվմենեսի հետ այստեղ ապաստանեցին նաև նրա ընկերներից նրանք, որոնք առանձնապես համակրում էին նրան և որոշել էին հետին վտանգների ժամանակ նրա հետ միասին մեռնել: Իսկ ընդամենը, հեծյալներն ու հետևակները միասին, շուրջ վեց հարյուր էին:

Անտիգոնոսն, ահա, վերցնելով եվմենեսի դորքը և տիրանալով նրա սատրապություններին և դրանց եկամուտներին, միաժամանակ նաև ձեռք բերելով մեծ քանակությամբ զրամ, սկսեց ձրգտել առավել մեծ բաների: Քանզի Ասիայում գտնվող զորահամանատարներից և ոչ մեկն արդեն առաջնությունը վիճարկելու համար իր հետ կովելու արժանի զորք չուներ: Ուստի և նա առայժմ ձևացնում էր, թե բարեկամաբար է տրամադրված Անտիպատրոսի հանդեպ, բայց որոշել էր իր գործերը ապահովելուց հետո այլևս չանսալ ոչ արքաներին, ոչ ևս Անտիպատրոսին: Ուստի և նա բերդում ապաստանածներին նախ շրջափակեց կրկնակի պարիսպներով և փոսերով և զարմանալի խրամատներով: Այնուհետև բա-

նակցութիւններ վարելով եվմենեսի հետ, վերականգնեց իր նախկին բարեկամութիւնը և աշխատեց համոզել նրան համագործակցելու իր հետ: Իսկ սա, իմանալով, որ բախտը կտրուկ փոփոխվում է, առավել մարդասիրութիւն էր պահանջում, քան 7 կարելի էր իր գտնված հանգամանքներում: Նա պահանջում էր ետ վերադարձնել նախկինում իրեն տրված սատրապութիւնները և իրեն անպարտ ճանաչել բոլոր մեղադրանքներից: Իսկ Անտիգոնոսը այդ ամենի մասին հաղորդեց Անտիպատրոսին և այդ ամբողջան առաջ ուժեղ պահակազոր թողնելով, արշավեց թշնամու այն հրամանատարների վրա, որոնք փրկվել էին և զորքեր ունեին, դրանք էին Ալկետասը, Պերդիկկասի եղբայրը, և Ատտալոսը, որը ամբողջ նավատորմի հրամանատարն էր:

42,1 Այնուհետև եվմենեսը բանակցութիւնների համար Անտիպատրոսի մոտ դեսպաններ ուղարկեց, որոնց գլխավորում էր Հիերոնիմոսը³⁴³, որը գրել է դիադոխների³⁴⁴ պատմութիւնը: Իսկ ինքը կյանքում բազմաթիվ և բազմապիսի փոփոխութիւնների առաջ կանգնած լինելով, հոգեպես շրնկճվեց, քանզի քաջ գիտակցում էր, թե բախտը երկուստեք կտրուկ շրջադարձներ է կատարում: Նա մի կողմից տեսնում էր, որ մակեդոնացիների թագավորները արքայական դատարկ ձեականութիւն էին միայն, մյուս կողմից, որ մեծ ձգտումներ ունեցող շատ մարդիկ իրար էին հաջորդում իբրև հրամանատարներ և նրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր գործել իր շահերին համապատասխան: Ուստի և նա հուսով էր, իրականում այդպես էր վիճակը, թե շատերը իր կարիքը կունենային իր խելքի և ռազմական գործերում ունեցած հմտութիւն, ինչպես նաև իր պարտավորութիւններին շահագանց հավատարիմ լինելու պատճառով:

3 Տեսնելով, որ տեղի նեղվածութիւն և ժայռոտ լինելու պատճառով ձիերը չեն կարողանում մարզվել և դրանով իսկ կարող էին հեծելամարտի համար անպետքանալ, (Եվմենեսը) ձիերի մարզման համար տարօրինակ և արտակարգ մի հնար մտածեց:

4 Նա ձիերի գլուխները հերթականութամբ պարանով գերաններից կամ ցցերից կապելով և երկու կամ երեք կրկնաթիզ բարձրացնելով նրանց, բոլոր ձիերին ստիպում էր կանգնել ետևի ոտների վրա, իսկ առջևի ոտքերը հագիվ էին դիպչում գետնին: Այսպիսով, ձին երբ որ փորձում էր հենվել առջևի վրա, ամբողջ մարմինն ու սրունքները ցավում էին և նրա բոլոր անդամները հավասարապես լարվում էին: Այսպիսի շարժման պատճառով ամբողջ մարմնից 5 քրտինքը առատորեն ծորում էր և ձիերին կանգնած վիճակում պա-

հում էր շափազանց աշխատանքի մեջ: Իսկ բոլոր զինվորներին տալիս էր նույն սնունդը, ինքը ևս մասնակից լինելով սակավապետության և բոլորի հանդեպ ունեցած իր միատեսակ վերաբերմունքով մեծ համակրանք շահեց և իր հետ այնտեղ ապաստանածների մեջ համերաշխություն հաստատեց: Այսպիսին էր Եվմենեսի և նրա հետ այդ ժայռի վրա ապաստանածների զրույթյունը:

50,1

- Ասիայում, Անտիպատրոսի մահվան լուրը տարածվելուց հետո, անմիջապես խռովություններ ծագեցին, քանի որ իշխանություն ունեցողներից յուրաքանչյուրն սկսեց մտածել իր շահերի մասին: Անտիգոնոսը, որը գլխավորն էր սրանց մեջ, արդեն հաղթել էր Եվմենեսին Կապպադոկիայում և նրա զորքերին գրավել էր իր կողմը, այնուհետև վերջնականապես ջախջախել էր Ալկեստասին և Ատտալոսին Պիսիդիայում ու նրանց զորքերը ևս զրավել էր իր կողմը: Դրանից բացի նա Անտիպատրոսի կողմից ընտրվել էր Ասիայի գերագույն զորահրամանատար և միաժամանակ հայտարարվել էր մեծաթիվ զորքերի առաջնորդ, այդ պատճառով իժև նա համակվել էր զոռոզությունը և ամբարտալանությունը: Նա ամբողջ տերության մեջ իշխանությունը իր ձեռքը վերցնելու հույսերով տարված, որոշեց այսուհետև շլուխ ոչ թագավորներին, ոչ ևս նրանց խնամակալներին: Քանզի նա համոզված էր, թե քանի որ ավելի հզոր բանակ ուներ, ապա ինքը կարող էր տիրանալ Ասիայի գանձերին և ոչ ոք ի վիճակի չի լինի դիմադրելու իրեն: Քանզի նա այդ ժամանակ ուներ վեց բյուր հետևակ և մեկ բյուր հեծյալ զորք ու երեսուն փիղ. այս ամենից բացի նա հուսով էր, որ անհրաժեշտության դեպքում կարող էր պատրաստել նաև այլ ուժեր, քանի որ Ասիան կարող էր անդադար միջոցներ հայթայթել օտար վարձկաններին վճարելու համար: Այսպիսի մտադրություններով նա իր մոտ կանչեց պատմագիր Հիերոնիմոսին, որը Եվմենես կարգրացու բարեկամն էր և համաքաղաքացին և նրա հետ միասին ապաստանել էր նորա կոչված ամրոցում: Առատ նվերներով նրանց պատվելուց հետո, ուղարկեց իբրև ղեսպան Եվմենեսի մոտ, խնդրելով մոռանալ Կապպադոկիայում նրա դեմ մղած սլատերազմը, դառնալ իր ընկերն ու դաշնակիցը և ստանալով առավել բաղմապատիկ ընծաներ քան ինչ ունեցել էր նախկինում և առավել մեծ սատրապություն և ընդհանրապես դառնալով Անտիգոնոսի ընկերների մեջ առաջինը, լինել մասնակից նրա բոլոր ծրագրերին: Անտիգոնոսը նաև գումարեց իր ընկերներին խորհրդի և նրանց իր բոլոր ծրագրերին հաղորդակից դարձնելով, իր առավել կարևոր ընկերներից ոմանց սատրապություններ խոս-

տացալ, մյուսներին՝ դորական պաշտոններ և բոլորին մեծ հույսեր տալով, իր մտադրութիւնների հանդեպ նրանց հոգին լցրեց հոժարութեամբ: Քանզի նա որոշել էր շրջել Ասիայում և արդեն կառավարող սատրապներին հեռացնելով, իր ընկերներին հաստատել (այդ երկրների) իշխանութեան վրա:

- 53,1 Այժմ, քանի որ պատմել ենք Անտիգոնոսի կատարած գործերի մասին, վերադառնանք Եվմենեսի հետ կատարված դեպքերի նկարագրութեան: Սա մեծ և անսպասելի փոփոխութիւնների հանդիպեց, մշտապես մասնակից լինելով և՛ լավին, և՛ վատին, ավելի քան կարելի էր հուսալ: Այսպես, նա այդ դեպքերից առաջ զինակցելով Պերդիկկասին և թագավորներին, ստացավ Կապպադովկիայի և սրան սահմանակից երկրների սատրապութիւնը, որտեղ էլ ձեռք բերելով մեծ պորք և տիրելով շատ հարստութեան, հան-
- 3 րահայտ բարեբախտութիւն ունեցավ: Քանզի նա Կրատերոսին և Նեոսյտոլեմոսին, որոնք հայտնի հրամանատարներ էին և առաջնորդում էին մակեդոնացիների անհաղթ զորքերին, հաղթեց վճեա-
- 4 կան ճակատամարտում և կովի ընթացքում սպանեց նրանց: Ու քանի որ թվում էր, թե արդեն անհաղթելի է, նա ձեռնարկեց այնպիսի փոփոխութեան, որ մեծ ճակատամարտի բռնվելով օկնտիգոնոսի հետ, ստիպված եղավ սակավաթիվ ընկերների հետ ապաստան գտնել բոլորովին փոքրիկ մի ամրոցում: Այստեղ փակվելով նա թշնամու կողմից շրջապատվեց թշնամու զորքերից կրկնակի պարիսպներով և արդեն ոչ մի օգնական չունեց իր սեփական զրծ-
- 5 բախտութեան մեջ: Մեկ տարի պաշարված մնալուց հետո, երբ վրրկութեան ոչ մի հույս չկար, հանկարծ իր դժբախտութիւնը անսպասելի լուծում գտավ: Քանզի Անտիգոնոսը, որը պաշարել էր Եվմենեսին և շոռապում էր ոչնչացնել նրան, փոխեց իր մտադրութիւնը և առաջարկեց համագործակցել, որից հետո հավատարմութեան
- 6 երդումներ ստանալով, վերացրեց պաշարումը: Այսպիսով, որոշ ժամանակ անց անսպասելի փրկվելուց հետո, նա մնաց Կապպադովկիայում, որտեղ կրկին հավաքեց իր նախկին ընկերներին և իր հետ նախորդ արշավանքներին մասնակցածներին, որոնք այդ ժամանակ թափառում էին երկրում: Որովհետև նա առանձնապես սիրելի էր, ուստի և արագ կերպով գտավ շատերին, որոնք պատրաստ էին հաղորդակից դառնալու նրա հույսերին և հոժարութեամբ
- 7 մասնակցելու նրա քննարկումներին: Վերջապես, քիչ օրեր անց, բացի իր հետ ամրոցում պաշարված հինգ հարյուր ընկերներից, նա ունեցավ նաև ավելի քան երկու հազար զինվոր, որոնք կամովին ենթարկվեցին իրեն: Բախտի օգնութեամբ նա այնքան հզորացավ,

- որ իր ձեռքը վերցրեց թագավորական զորքերը և պաշտպանեց թագավորներին այն բոլոր մարդկանցից, որոնք համարձակվել էին փորձել վերացնելու նրանց իշխանությունը: Բայց այդ բուլորի մասին մենք քիչ հետո իր տեղում կպատմենք ավելի մանրամասն:
- 58,1 Երբ Աթենքում արքունտ էր Արքիպպոսը, Հոոմում կոնսուլներ ընտրվեցին Քվինտոսու էլիոսը և Լուկիոս Պապիրիոսը³⁴⁵: Սրանց ժամանակ Եվմենեսը ղեռ նոր էր հեռացել ամրոցից, երբ նամակներ ստացավ Պոլլուպերթոնից³⁴⁶, որոնցում, բացի վերևում հիշատակվածներից, գրված էր նաև, որ թագավորները նրան տալիս են իբրև պարգև հինգ հարյուր սաղանդ, իբրև հատուցում նրա կրած վնասների և որ այդ մասին թագավորները նամակներ են հղել Կիլիկիայում գտնվող զորավարներին և զանձապահներին, որպեսզի տան իրեն այդ հինգ հարյուր սաղանդը և ուրիշ ինչքան դժամ որ պահանջի վարձկաններ հավաքագրելու և այլ անհրաժեշտ կարիքների համար, միաժամանակ (նամակներում) հրահանգված էր նաև երեք հազար մակեդոնական արգիրասպիտներին: Հրամանատարներին, որպեսզի իրենց հանձնեն Եվմենեսին և ամեն ինչում սիրահոժար գործակցեն նրան, քանի որ նա հայտարարված էր
- 2 ամբողջ Ասիայի ինքնակալ զորավար: Սրան նամակ եկավ նաև Օլլումպիասից³⁴⁸, որով խնդրում և աղաչում էր օգնել թագավորներին և իրեն. քանզի (ասում էր), միայն նա է ընկերների մեջ բոլորից հավատարիմ մնացել և միայն նա կարող է թագավորական ընտանիքի մեկուսացումը վերացնել: Օլլումպիասը միաժամանակ խնդրում էր նրան խորհուրդ տալ՝ ինչ է ավելի շահավետ համարում իր համար, մնալ Եպիրոսում և շահավատալ նրանց, ովքեր մշտապես համարվում են (թագավորի) խնամակալներ, բայց իրականում աշխատում են թագավորական իշխանությունը վերցնել իրենց ձեռքը, թե՞ վերադառնալ (Մակեդոնիա): Եվմենեսը իսկույն պատասխան գրեց Օլլումպիասին, խորհուրդ տալով առայժմ մնալ Եպիրոսում, մինչև պատերազմը ինչ-որ կերպ վճռվի: Իսկ ինքը, քանի որ մշտապես ամենահաստատ հավատարմություն է պահպանել թագավորների հանդեպ, որոշեց չենթարկվել Անտիգոնոսին, որն աշխատում էր սեփականել թագավորական իշխանությունը, քանի որ Ալեքսանդրի որդին որքացած լինելու և հրամանատարների ազահույսյան պատճառով օգնության կարիք ուներ, մտածեց, որ իր պարտքն է ամեն մի վտանգի ենթարկվել թագավորների փրկության ի խնդիր:
- 59,1 Այսպիսով, (Եվմենեսը) հրամայելով իր մարդկանց ճանապարհ ընկնել, մեկնեց Կապպադովկիայից, իր հետ ունենալով

շուրջ հինգ հարյուր հեծյալ և ալեիլի քան երկու հազար հետևակ:
 Քանդի նա ժամանակ շուներ սպասելու այն բոլոր ուշացածներին,
 որոնք խոստացել էին մասնակցել իր հետ արշավանքին, որով-
 հետև իշանակալից մի զորամաս Մենանդրոսի հրամանատարու-
 թյամբ, որին ուղարկել էր Անտիոգոնոսը, արդեն մոտենում էր.
 որպեսզի արգելի իրեն մնալ Կապպադոկիայում, քանի որ այժմ
 2 նա դարձել էր Անտիոգոնոսին թշնամի: Բայց քանի որ այս զորքը
 ևրեք օր հետո դալով և ուշացած լինելով իր առաքելությունից,
 շտապեց հետապնդել Եվմենեսի հետ մեկնածներին ու շկարողա-
 3 նալով հասնել նրանց, վերստին արձակվեց Կապպադոկիա: Իսկ Եվմե-
 նեսը շուտափույթ ընթացքով արագորեն անցնելով Տավրոսը, հա-
 սավ Կիլիկիա: Արգիրասպիդների հրամանատարներ Անտիգենեսը
 և Տևտամոսը, հնազանդվելով թագավորների նամակներին, մեծ
 հեռավորությունից եկան դիմավորելու Եվմենեսին և նրա ընկեր-
 ներին: Նրան սիրալիր ողջունելուց և մեծագույն վտանգներից
 անակնկալ փրկված լինելուն համար խնդակցելուց հետո, նրանք
 խոստացան հոժարակամ գործակցել նրան ամեն ինչում: Արգի-
 րասպիդ մակեդոնացիները ևս, որոնք շուրջ երեք հազար էին,
 4 նրանց ընդունեցին սիրալիր և բուռն զգացումներով: Բոլորը գար-
 մանում էին բախտի ալդպիսի անսպասելի արագ փոփոխման
 վրա, երբ իմացան, որ թագավորները և մակեդոնացի (առաջնորդ-
 ները) դեռ քիչ առաջ Եվմենեսին և նրա ընկերներին մահվան էին
 դատապարտել, իսկ այժմ արդեն, մոռանալով իրենց վճիռը, ոչ
 միայն նրան անպարտ ճանաչելով վերացրել էին պատիժը, այլև
 նրան էին հանձնել ամբողջ թագավորության գերագույն իշխանու-
 թյունը: Եվ այս ամենը գոհունակությամբ էին ընդունում բոլոր
 նրանք, ովքեր հետևում էին Եվմենեսի բախտի փոփոխություններին:

62,1 Եվմենեսի այսպիսի անսպասելի և արագ հզորացումից հետո
 Պտղոմեոսը³⁴⁹ նավատորմիղով հասավ Կիլիկիայի Զեփյուռիոնը
 և պասագամավորներ ուղարկեց արգիրասպիդների առաջնորդների
 մոտ, խնդրելով նրանց շնազանդվել Եվմենեսին, որին բոլոր
 2 մակեդոնացիները մահվան են դատապարտել: Նույնպես (մարդ)
 ուղարկեց Կվինգոսում³⁵⁰ գտնվող բերդապահներին, բողոք հայտ-
 նելով, որպեսզի ոչ մեկ դրամ չտան Եվմենեսին, միաժամանակ
 խոստանալով նրանց ապահովություն շնորհել: Բայց ոչ ոք սրան
 ուշադրություն չդարձրեց, որովհետև թագավորները և նրանց
 խնամակալ Պոլյուպերքոնը, ինչպես նաև Ալեքսանդրի մայր Օլյում-
 պիասը գրել էին իրենց, որ ամեն կերպ ծառայեն Եվմենեսին, քանի
 3 որ սա թագավորության ինքնակալ զորավարն էր: Առանձնապես

դժգոհ էր Անտիգոնոսը Եվմենեսի բարձրացման և նրա ձեռքում
 այդքան մեծ ուժի կենտրոնացման պատճառով. քանզի նա են-
 թադրում էր, որ Պոլլուպերքոնը Եվմենեսին դարձնում էր իր (Ան-
 տիգոնոսի) համար մեծագույն հակառակորդ, քանի որ ինքը դար-
 4 ձել էր միապետության հակառակորդը, Հետևաբար, որոշելով դա-
 վադրություն կազմակերպել Եվմենեսի դեմ, նա ընտրեց իր ընկեր-
 ներից Փիլոտասին և հանձնեց նրան մի նամակ, ուղղված արգի-
 րասպիղներին ու Եվմենեսի հետ եղող մյուս մակեդոնացիներին.
 նրա հետ ուղարկեց նաև երեսուն գործունյա և լեզվանի մակեդո-
 նացիների, որոնց հրամայված էր առանձին հանդիպել արգիրաս-
 պիղների առաջնորդներ Անտիգենեսին ու Տևտամոսին և սրանց
 միջոցով Եվմենեսի դեմ դավադրություն կազմակերպել, խոստա-
 նալով մեծ պարգևներ և առավել խոշոր սատրապություններ, միա-
 ժամանակ (պատվիրեց նրանց) հանդիպել արգիրասպիղներից ծու-
 5 նոթներին և համաքաղաքացիներին և կաշառել նվերներով, Եվմե-
 նեսի դեմ դավադրության մասնակցելու համար: Այսուհանդերձ
 նրանք ոչ մեկին չկարողացան համոզել, միայն արգիրասպիղնե-
 րի առաջնորդ Տևտամոսը կաշառվեց և հանձն առավ համոզելու
 իր զորակից Անտիգենեսին, որպեսզի սա ևս հաղորդակից դառնա
 6 այդ ձեռնարկման: Մինչդեռ Անտիգենեսը, որն առանձնապես
 հայտնի էր իր ողջամտությամբ և հաստատուն հավատարմու-
 թյամբ, ոչ միայն հակաճառեց, այլև վերահամոզեց կաշառվածին,
 քանզի նա բացատրեց, որ իր համար ավելի ձեռնտու է Եվմենե-
 7 սի պարելը, քան թե Անտիգոնոսի: Որովհետև Անտիգոնոսը, դառ-
 նալով առավել հզոր, կխլի իրենց սատրապությունները և իրենց
 կփոխարինի իր իսկ ընկերներով: Մինչդեռ Եվմենեսը, լինելով
 օտարերկրացի³⁵¹, երբեք չի համարձակվի գործել իր անձնական շա-
 հերին համապատասխան, այլ մնալով իբրև զորավար, իրենց հետ
 կվարվի որպես ընկերների և, եթե իրենք գործակցեն նրան, կթող-
 նի սատրապությունները իրենց ձեռքին և, հավանաբար, ուրիշ
 (երկրներ) ևս կհանձնի իրենց: Այսպիսով, Եվմենեսի դեմ դավադ-
 րություններ կազմակերպողները այս կերպ ձախողվեցին:

Գիրք 19

12,1 Ասիայում Եվմենեսն իր հետ ունենալով արգիրասպիղ մակե-
 դոնացիներին և սրանց առաջնորդ Անտիգենեսին, ձմեռեց Բաբե-
 լոնիայի այսպես կոչված Կարյան շենքում³⁵²: Նա դեսպաններ
 ուղարկեց Սելևկոսի և Պիթոնի մոտ, խնդրելով նրանց օգնել թա-
 գավորներին և միանալ իր հետ Անտիգոնոսի դեմ կռվելու, Տրի-

2 պարդիոսում, երբ կատարվեց սատրապութիւնների երկրորդ բա-
 ժանումը³⁵³, սրանցից Պիթոնը հայտարարվեց Մեդիայի սատրապ,
 իսկ մյուսը՝ Բաբելոնիայի: Սելևկոսի մարդիկ հայտարարեցին,
 թե իրենք պատրաստ են ծառայելու թագավորներին, սակայն եր-
 բեք չեն հանդուրժի կատարել Եվմենեսի հրամանները, որին մա-
 կեդոնացիներն իրենց դորաժողովում մահվան են դատապարտել:
 Այս որոշման շուրջ շատ վիճելուց հետո իրենց կողմից մեկին դես-
 պան ուղարկեցին Անտիգոնեսի և արգիրասպիդների մոտ, պա-
 3 հանջելով հեռացնել Եվմենեսին դեկավարութիւնից: Բայց քանի
 որ մակեդոնացիները կարևորութիւն չտվեցին այդ խոսքերին,
 Եվմենեսը, գովելով նրանց հավատարմութիւնը, իր զորաբանա-
 կով մեկնեց և հասնելով Տիգրիս գետը, բանակեց Բաբելոնից երեք
 հարյուր ասպարեզ հեռավորութեան վրա: Նրա նպատակն էր ճա-
 նապարհը շարունակել գեպի Սուսա, դրանով իսկ նա ցանկանում
 էր հավաքել վերին սատրապութիւնների զորքերը և թագավորա-
 4 կան գանձարանն օգտագործել հրատապ կարիքների համար: Սա-
 կայն նա ստիպված էր գեստն անցնել, քանզի իր ետին գտնվող
 երկիրը արգեն նախապես ավարի էր ենթարկվել, մինչդեռ հան-
 դիպակաց երկիրը բոլորովին անվնաս էր մնում և կարող էր զոր-
 5 քերին առատորեն պարեն մատակարարել: Երբ, ուրեմն, նա անց-
 ման համար բոլոր կողմերից նավակներ էր կենտրոնացրել, Սելև-
 կոսն ու Պիթոնը նավեցին (գետն ի վար) երկու տրիերաներով ու
 մեծաթիվ լաստանավերով³⁵⁴, քանզի այդ նավերը դեռևս մնացել
 էին այն ամենից, ինչ Բաբելոնի մոտ պատրաստել էր տվել Ալեք-
 սանդրը:

13,1 Այս ամենը բերելով ափհանման վայրը, (Սելևկոսը և Պի-
 թոնը) դարձյալ փորձեցին համոզել մակեդոնացիներին հեռացնել
 Եվմենեսին դորավարութիւնից և իրենց իսկ շահերին հակառակ
 չբարձրացնել մի մարդու, որն օտառ էր և սպանել է բաղմաթիվ մա-
 2 կեդոնացիների: Բայց քանի որ Անտիգոնոսը և նրա մարդիկ ոչ մի
 կերպ չհամոզվեցին, ապա Սելևկոսի մարդիկ մակույկներով մո-
 տեցան մի հին ջրանցքի և մաքրեցին դրա՝ ժամանակի ընթացքում
 արդեն լցված սկիզբը: Այսպիսով, մակեդոնացիների բանակատե-
 ուն շրջափակվեց ջրով և մոտակա բոլոր հողերը ամեն կողմից
 ջրածածկ լինելով, ամբողջ զորաբանակը ողողումից կործանվելու
 3 վտանգի տակ էր: Այդ օրը նրանք սպասեցին անգործ, չիմանալով
 ինչպես վարվել ստեղծված պայմաններում: Բայց հաջորդ օրը
 նրանք մոտիկ բերելով շուրջ երեք հարյուրի հասնող լաստանա-
 վերը, դորքի լավագույն մասը անցկացրին, մինչդեռ ոչ ոք չիւան-

գարեց նրանց ափհանումը, քանդի Սելևկոսի հետ միայն հեծյալ-
 ներ էին, այն էլ հակառակորդից շատ ավելի փոքր քանակությամբ:
 4 Բայց երբ արդեն գիշերն էր իջնում, Եվմենեսը, քանի որ շատ էր
 մտահոգված գումակի համար, մակեդոնացիներին նորից էտ տա-
 րավ գետանցով և տեղաբնիկներից մեկի խորհուրդներով սկսեց
 փորել մի տեղ, որով հեշտ էր շրջել ջրանցքը և մոսիկ վայրը դարձ-
 նել անցանելի: Սելևկոսն ու նրա մարդիկ տեսնելով այդ և ցան-
 կանալով ինչքան հնարավոր է նրանց ավելի շուտ դուրս հանել
 իրենց սատրապությունից, դեսպաններ ուղարկեցին հաշտություն
 կնքելու համար և թույլ տվեցին Եվմենեսին գետն անցնել: Միա-
 ժամանակ, սակայն, թղթատարներ ուղարկեցին Միջագետք, Անտի-
 գոնոսի մոտ, խնդրելով հնարավորին շափ շուտափույթ ժամանել
 իր գորքով, նախքան սատրապները կհասնեն իրենց գորքերով:
 6 Ինչևէ, Եվմենեսը անցնելով Տիգրիսը և հասնելով Սուսիանե, իր
 զորքը, պարենի պակասության պատճառով, բաժանեց Լրեք մա-
 սի: Երկրի միջով նա մասնատված անցնելիս ամբողջովին զրկված
 էր ցորենից, բայց իր զինվորներին բաժանեց բրինձ, քնջութ և
 արմավ, քանի որ երկիրը առատորեն արտադրում էր այդ բերքը:
 7 Նա վերին սատրապությունների առաջնորդներին ևս ուղարկել էր
 թագավորներից ստացված նամակները, որոնցում գրված էր, որ
 նրանք ամեն կերպ սլետք է հնազանդվեն Եվմենեսին, այժմ դարձ-
 յալ թղթատարներ ուղարկեց, պահանջելով բոլոր (հրամանատար-
 ներին) իրենց զորքերով հավաքվել Սուսիանեում: Բայց պատա-
 հեց, որ ճիշտ այդ ժամանակ նրանք արդեն ի մի գումարել էին
 իրենց զորքերը ուրիշ նպատակներով, որոնց մասին անհրաժեշտ
 է դրել ամենից առաջ:

14,1 Պիթոնը հայտարարվել էր Մեգիայի սասւրապ, իսկ երբ դար-
 ձավ բոլոր վերին սատրապությունների զորահրամանատար, նա
 սպանեց Պարթյուեայի նախկին զորահրամանատար Փիլոտասին և
 2 նրա փոխարեն նշանակեց իր եղբորը՝ Եվդամոսին: Այս կատար-
 վելուց հետո, մյուս բոլոր սատրապները միավորեցին իրենց
 ուժերը, վախենալով, որ իրենք ևս կարող են նույն բախտին ար-
 ժանանալ, քանի որ Պիթոնը խռովարար էր և իր մտքում մեծ ծրա-
 գրեր ուներ: Ուստի և ճակատամարտում նրան հաղթելով և նրա
 3 զինակիցներից շատերին սպանելով, նրան դուրս քշեցին Պար-
 թյուեայից: Սա սկզբում մեկնեց Մեդիա, իսկ քիչ անց գնալով Բա-
 բելոն, խնդրեց Սելևկոսին, որպեսզի սա օգնի իրեն և հաղորդակից
 4 դառնա իր բոլոր ակնկալություններին: Ահա այս հանդամանքնե-
 րում վերին սատրապներն իրենց զորքերը համակենտրոնացրել էին,

երբ Եվմենեսի ուղարկած թղթատարները ժամանելով, զորքերը
 պատրաստ գտան: Հրամանատարների մեջ ամենահայտնին և, բո-
 լորի կարծիքով, զորահրամանատարութիւնը ստանձնելու (սրժա-
 նին) Պակեստեսն էր, որը Ալեքսանդրի թիկնապահն էր եղել և ար-
 քայի կողմից բարձրացվել էր (պաշտօնում) իր քաջության համար:
 5 Նա երկար ժամանակ ստացել էր Պերսիսի սատրապութիւնը³⁵⁵ և
 մեծապես վայելում էր տեղաբնիկների հարգանքը: Ասում են, թե
 այդ պատճառով էլ Ալեքսանդրը մակեդոնացիներից միայն սրան
 խույլատրեց պարսկական տարադ հաղնել, ցանկանալով սիրաշահել
 պարսիկներին և կարծելով, թե սրա միջոցով ամեն ինչում կապա-
 հովի այդ ազդի հնազանդութիւնը: Այդ ժամանակ (Պակեստեսն)
 ուներ մեկ բյուր նետաձիգներ և պարսատիկավորներ, մակեդոնա-
 կան դորաշարքերում կռվելու համար զինված երեք հազար մարդ,
 հելլեն և թրակիացի վեց հարյուր հեծյալ և ավելի քան շորս հարյուր
 6 պարսիկ ձիավոր: Մակեդոնացի Տլեպոլեմոսը, որը կարգվել էր
 Կարմանիայի սատրապ, ուներ հազար հինգ հարյուր հետիոտն և
 յոթ հարյուր հեծյալ զինվորներ: Սիբյուրտիոսը, Արաքոսիայի կա-
 ռավարիչը, բերեց հազար հետևակ և վեց հարյուր տասը հեծյալ:
 Պարոսլանիսադեից, որտեղ սատրապության կառավարիչը Օքսյու-
 արտեսն էր, ուղարկվեց Անդրոբադոսը հազար երկու հարյուր հե-
 7 տևակ և շորս հարյուր հեծյալ զինվորներով: Ստասանդրոսը, Արիայի
 և Երանգինեի սատրապը, որն իր հետ վերցրել էր նաև Բակտրիա-
 նեի զորքերը, ուներ հազար հինգ հարյուր հետևակ և հազար հեծ-
 8 յալ: Հնդկաստանից եկավ Եվդամոսը³⁵⁶, բերելով հինգ հարյուր
 հեծյալ, երեք հարյուր հետևակ և հարյուր քսան փիղ, այս գազան-
 ներին նա վերցրել էր Ալեքսանդրի մահից հետո, սպանելով Պորո-
 սին: Այսպիսով, սատրապների հետ գումարվեց ընդհանուր թվով
 ավելի քան տասնութ հազար հետևակ և շորս հազար վեց հարյուր
 հեծյալ զորք:

15,1 Երբ բոլորը հավաքվեցին Սուսիանեում և հանդիպեցին Եվմե-
 նեսին, ընդհանուր զորաժողով գումարեցին, որտեղ մեծ վեճ առա-
 շացավ ընդհանուր հրամանատարության վերաբերյալ: Պակեստեսը
 այն կարծիքին էր, որ իրեն հետևող զինակիրների բազմության,
 ինչպես նաև Ալեքսանդրի կողմից իր ստացած բարձր պաշտոնի
 պատճառով ինքը պետք է ստանձնի բոլորի հրամանատարութիւնը,
 2 քայց Անտիգենեսը, մակեդոնական արգիրասպիդների զորավարը,
 ասում էր, որ իր կարծիքով ընտրելու իրավունքը պետք է տրվի իր
 հետ եղող մակեդոնացիներին, որոնք Ալեքսանդրի հետ միասին
 3 կռվելով (նվաճել են) Ասիան և իրենց քաջության պատճառով ան-

պարտելի են դարձել: Մինչդեռ Եվմենեսը, երկյուղ կրելով, որ իրար հանդեսը թշնամանք ծագելու դեպքում (իրենցից) յուրաքանչյուրը Անտիգոնոսի համար կդառնա հեշտ հաղթահարելի, խորհուրդ տվեց, ոչ թե մեկին ընտրել բոլորի առաջնորդ, այլ գորքերի կողմից ընտրված բոլոր սատրապներն ու գորավարները ամեն օր հավաքվելով արքունի բակում, ատյան դումարեն մտածելով ընդհանուրի

4 շահերի մասին: Քանզի, թեպետե մահացած էր, Ալեքսանդրի համար մի վրան կար խփած ու նրա մեջ գահ էր դրած, որի առաջ, զոհ մատուցելուց հետո, սովորություն ունեին հրատապ հարցերի շուրջ ատյան դումարել: Քանի որ բոլորին թվաց, թե նրա խորհուրդը բխում էր բոլորի շահերից, ուստի և ամեն օր նա ժողով էր հրավիրում, ասես հանրավարական³⁵⁷ քաղաքի նման: Այնուհետև, նրբ նրանք հասան Սուսա, Եվմենեսը գանձերը պահպանողների մոտից ստացավ այնքան դրամ, ինչքան անհրաժեշտ էր իր կարիքների համար, քանզի թագավորները (գանձապահներին ուղղած) իրենց նամակներով պատվիրել էին միայն սրան տալ ինչքան գումար որ ցանկանար: Մակեդոնացիներին վեց ամսվա վարձ վճարելուց հետո նա Եվդամոսին, որը Հնդկաստանից բերել էր փղերին, տվեց երկու հարյուր տաղանդ, իբրև թե գազաններին պահելու վրա ծախսելու համար, բայց իրականում՝ արդ պարգևով ցանկանալով սիրաշահել մարդուն, քանզի եթե սա միանուր ապստամբներին, ապա մեծ բեկում կառաջացներ, քանզի այդ դադանների օգտագործումը սարսափ էր առաջացնում: Իսկ մյուս սատրապներից յուրաքանչյուրը իր հետևորդներին մատակարարում էր իր կառավարած երկրից:

6 Իվ մինչ Եվմենեսը, մնալով Սուսիանեում, կաղմակերպում էր իր ուժերը, Անտիգոնոսը, որը ձմեռել էր³⁵⁸ Միջագետքում, սկզբում որոշել էր հետապնդել Եվմենեսին և նրա գորքերին նախքան սրանք կհասցնեին բաղմանալ, բայց եբբ լսեց, որ սատրապներն իրենց զորքերով եկել ու միացել են մակեդոնացիներին, նա հրաժարվեց շտապելուց և սկսեց իր գորքերին հանգիստ տալ և միաժամանակ հավաքագրեց նոր ղինվորներ: Քանզի նա տեսնում էր, որ պասուրաղմը պետք է մղվեր մեծ ուժերով և ոչ թե սովորական պատրաստությամբ:

17,2 Այդ ժամանակ էլ Անտիգոնոսը մեկնելով Միջագետքից, հասավ Բարելոնիա և այնտեղ Սելևկոսի և Պիթոնի հետ համագործակցության դաշն կնքեց: Նրանց մոտից ևս գինվորներ վերցնելով, Տիգրիս գետի վրա նավերով կամուրջ կապեց և իր գորքերը

3 անցկացնելով արշավեց իր թշնամիների դեմ: Երբ Եվմենեսը և նրա հետ եղողները իմացան այս կատարվածը, Քսենոփիլոսին,

որը Սուսայի բերդապահն էր, պատվիրեցին շտալ Անտիգոնոսին
 ոչ մի դրամ և նրա հետ ոչ մի հարաբերություն չունենալ, այնու-
 հետև վեցնելով իրենց զորքը, արշավեցին դեպի Տիգրիս գետը³⁵⁹։
 այն գտնվում է Սուսայից մեկ օրվա ճանապարհի հեռավորության
 վրա, որտեղ այն դուրս է դալիս լեռնային երկրից, որը բնակեց-
 ված է ինքնավար ցեղերով, որոնց անվանում են ուքսիներ։ շատ
 ալեզերում այդ գետն ուներ երեք, երբեմն նույնիսկ չորս ասպա-
 րեղ³⁶⁰ լայնություն, իսկ խորությունը հոսանքի մեջտեղում հաս-
 նում էր փղերի հասակին, լեռներից դուրս գալուց հետո այն հո-
 սում է մոտ յոթ հարյուր ասպարեզ, մինչև թափվում է Կարմիր
 ծով³⁶¹։ Դրանում կան ծովային բազմաթիվ ձկներ և ծովային գա-
 զաններ, որոնք հայտնվում են ճիշտ Շան համաստեղության ծագ-
 4 ման ժամանակ³⁶²։ Այս գետն իրենց առաջ իբրև պատվար ունե-
 նալով, գետի ափունքներից մինչև ծովը գետափի երկայնքով պա-
 հակակետեր հաստատեցին և սպասում էին թշնամու հարձակման։
 Ու քանի որ գետի երկարության պատճառով պահակության հա-
 մար ոչ քիչ թվով զինվորներ էին հարկավոր, եվմենեսը և Անտի-
 գենեսը խնդրեցին Պեկեստեսին Պերսիսից ուղարկել մեկ բյուր-
 5 աղեղնավորներ։ Ու սկզբում ուշադրություն չդարձրեց նրանց
 իրոսքին, դեռևս դժգոհ լինելով այն բանից, որ ինքը շտապով
 (րնդհանուր) զորավարությունը, բայց հետո, ինքն իր մեջ մտա-
 ծելով, հանգեց այն եզրակացության, որ եթե Անտիգոնոսը հաղ-
 6 թի, ապա ինքը կարող է կորցնել իր սատրապությունը և նույնիսկ
 իր կյանքը վտանգի տակ կլինի։ Ուստի և մտածելով հենց իր մա-
 սին ու ենթագրելով, թե ինքը ինչքան շատ ավելի թվով զինվորներ
 ունենա, այնքան ավելի հեշտ կարող է (րնդհանուր) զորավարու-
 թյան հասնել։ Նրանց պահանջի համաձայն ուղարկեց մեկ բյուր-
 աղեղնավորների։ Թեպետև պարսիկներից ոմանք գտնվում էին
 երեսուն օրվա ճանապարհի հեռավորության վրա, այսուհանդերձ
 հրամայվածը նույն օրն իսկ լսեցին, շնորհիվ պահակակետերում
 7 եղած հնարամտության, մի բան, որը լավ չի լինի լռությամբ անց-
 նել։ Պերսիսը ձորաշատ երկիր լինելով, ունի բազմաթիվ և բարձր
 դիտակետեր, որոնց վրա կանգնեցվել էին տեղաբնիկների միջից
 առավել բարձր ձայն ունեցողները, քանի որ այդ դիտակետերը
 գտնվում էին իրարից ձայնը լսելու հեռավորության վրա, ապա
 հրամանը ստացողները նույն եղանակով այն հաղորդում էին հա-
 ջորդներին, սրանք էլ դարձյալ հաջորդներին, մինչև որ հրամանը
 կհասներ սասուրապության վերջին սահմանը։

18,1 Մինչդեռ եվմենեսը և Պեկեստեսը զբաղված էին այս գործե-

րով, Անտիգոնոսը իր զորքերով առաջ շարժվեց և հասավ Սուսս
 մայրաքաղաքը և նա Սելևկոսին կարգեց այդ երկրի սատրապ, և
 տալով նրան զորամաս, կարգադրեց պաշարել միջնաբերդը, քանի
 որ գանձերի պահապան Քսենոփիլոսը չէր հնազանդվել, իսկ ինքը
 զորքերի հետ դուրս գալով արշավեց թշնամու դեմ, թեպետև եր-
 թուղին կիզող շոգի տակ էր և խիստ վտանգաշատ օտար զորքերի
 անցման համար: Այդ իսկ պատճառով նրանք ստիպված էին գի-
 շերները ճանապարհ գնալ և գետի մոտ: Բանակել նախքան արևի
 2 ծագելը: Այսուհանդերձ, նա շկարողացավ բոլորովին անվնաս
 դուրս գալ և խուսափել այդ երկրին հատուկ շարիքներից ու թե-
 պետև նա հնարավոր ամեն ինչ արեց, բայց չափազանց շոգի
 պատճառով մեծ թվով զինվորների կորցրեց, առավել ևս, որ Շան
 3 համաստեղութիւնն ծագման ժամանակն էր: Հասնելով Կոպրատես
 գետը, նա սկսեց պատրաստություններ տեսնել այն անցնելու հա-
 մար: Այս գետը, բխելով լեռնային մի շրջանից, թափվում էր Պա-
 սիտիգրիս գետը. այն գտնվում էր Եվմենեսի բանակած վայրից
 ութսուն ասպարեզ հեռավորության: Վրա և ուներ գրեթե չորս
 պլեթրոն լայնք և քանի որ ընթացքը արագահոս էր, (անցնելու հա-
 4 մար) անհրաժեշտ էին նավակներ կամ կամուրջ: Չեռք բերելով
 փոքր թվով լաստանավեր³⁶³, դրանցով անցկացրեց հետևակներից
 ոմանց. հրամայեց նրանց խրամատ փորելով և պատնեշ բարձրաց-
 նելով, այնտեղ ընդունել մնացած զորքը: Իսկ Եվմենեսը անմիջա-
 պես որ լրտեսների միջոցով իմացավ թշնամու մոտենալը, ինքը
 անցավ (Պասի) տիգրիսի³⁶⁴ վրա դրված կամրջով, իր հետ ունե-
 նալով չորս հազար հետևակ և հազար երեք հարյուր հեծյալ, և
 հանկարծակի նետվեց (գետն) անցած Անտիգոնոսի ավելի քան
 երեք հազար հետևակ և չորս հարյուր հեծյալ զինվորների, ինչպես
 նաև ոչ պակաս քան վեց հազար այն զինվորների վրա, որոնք սո-
 վորաբար անասնակեր հայթայթելու համար ցրված խմբերով
 5 անցնում էին (գետը): Անակնկալ հարձակվելով նրանց վրա, քանի
 դեռ գտնվում էին անկարգ վիճակում, մյուսներին իսկույն փա-
 խուստի մատնեց, իսկ դիմադրություն ցույց տված մակեդոնացի-
 ներին ուժով և զորքերի բազմությամբ գերազանցելով, բոլորին
 6 ստիպեց փախչել դեպի գետը: Քանի որ բոլորը թափով նետվեցին
 նավակների վրա, ապա բազմության ծանրությունից գրանք ջրա-
 մույն եղան. լռիչալ համարձակվածներից շատերը քշվելով դեպի
 7 հոսանքից, կործանվեցին, իսկ քչերը փրկվեցին: Մինչդեռ լողալու
 դործում անփորձ եղողները դերությունը գերադասելով դետում
 խեղդվելուց, դերի հանձնվեցին. սրանք թվով չորս հազար էին:

Անտիգոնոսը կործանվողների այսքան մեծ բաղձույթուն տեսնելով հանդերձ, անկարող եղավ օգնել նրանց, նախակներ շունենալու պատճառով:

- 19,1 Համոզվելով, որ անկարելի է (գետն) անցնել, Անտիգոնոսը շարժվեց դեպի Բատակես քաղաքը, որը գտնվում է Եվլայոս գետի մոտ⁶⁵, Քանի որ ուղևորությունը խիստ շոգերի պատճառով կիզիչ էր, մեծ թվով դիմվորներ կոտորվեցին և ամբողջ դորքը ընկավ
- 2 հուսահատության մեջ: Այսուհանդերձ, նա մի քանի օր մնալով վերոհիշյալ քաղաքում և զորքին հանգիստ տալուց հետո ենթադրեց, որ ավելի նպատակահարմար է ուղղվել դեպի Մեդիայի Եկրատանա (քաղաքը) և այնտեղից արշավելով, նվաճել վերին սատրապությունները: Մեգիա տանող երկու ճանապարհ կար, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր դժվարությունը. Կոլոնոս (քաղաքով)³⁰ անցնող ճանապարհը լավ էր և արթունի, սակայն կիզիչ էր ու երկար, ձգվելով գրեթե քառասուն օրվա ընթացքի երկարությամբ, իսկ կոսսայների ազգի միջով ընկած ճանապարհը դժվար էր, նեղ և զառիթափներով և անցնում էր թշնամի երկրի միջով. այդ ամենից բացի դուրկ էր անհրաժեշտ սլարենից, բայց կարճ էր և ցուրտ:
- 3 Հեշտ չի զորքերի համար այնտեղով անցնելը առանց համոզելու այդ լեռնային երկրում բնակվող բարբարոսներին. քանզի նրանք հին ժամանակներից անտի ազատ են եղել և ապրում են քարայրներում. նրանք սնվում են կաղիններով և սունկերով, ինչպես
- 4 նաև վայրի գաղանների ասլխտած մսով: Անտիգոնոսը, քանի որ իր հետ ուներ այդքան մեծ թվով զորքեր, կոսսայներին համոզելը, կամ նվերներով սիրաշահելը իր արժանապատվությունից ցած համարելով, իր պելուսոսոններից⁶⁶ լավագույններին ընտրեց և իր աղեղնավորներին ու պարսատիկավորներին և թեթևազեններին երկու մասի բաժանելով, մի մասին հանձնեց Լեարքոսին և հրամայեց նրան առաջ գնալ և նախօրոք գրավել նեղ և դժվարանցանելի վայրերը, մյուս մասին դասավորելով ամբողջ ճանապարհի երկայնքով, ինքը առաջ անցավ փաղանգի հետ միասին, վերջապահների հրամանատար նշանակելով Պիթոնին: Լեարքոսի հետ առաջ ուղարկվածները գրավեցին մի քանի պահակակետեր, բայց առավել կարևորները գրավելու համար ուշացած լինելով, շատ մարդկանց կորցրին և հազիվ կարողացան ճողուսրել, երբ բարբարոսները հարձակվեցին նրանց վրա: Իսկ Անտիգոնոսի հետ մնացած զորքերը ամեն անգամ գժվարանցանելի որևէ վայր հասնելիս անօգնական վիճակում ընկնում էին վտանգների մեջ: Քանզի տեղաբնիկները այդ վայրերին ծանոթ էին և ձորերի վրա կախ-

ված բարձունքները նախապես գրավելով, ճանապարհով անց-
նողների վրա շարունակ գլորում էին խոշոր քարեր, միաժամա-
նակ նրանք մեծ քանակությամբ սլաքներ էին արձակում և վիրա-
վորում մարդկանց, որոնք ոչ կարող էին պաշտպանվել, ոչ իսկ
խուսափել սլաքներից, տեղանքի անհարմար լինելու պատճա-
7 ոով: Քանի որ ճանապարհը զառիթափ էր և դժվարագնաց, ապա
փղերը և ձիավորները, ինչպես նաև ծանրազենները, խիստ վտանգ-
8 վեցին և տանջվեցին, անկարող լինելով օգնել իրենք իրենց: Այս-
պիսի դժվար դրության մեջ ընկնելով, Անտիգոնոսը զղջաց, որ
չլսեց Պիթոնին, որը խորհուրդ էր տվել դրամով գնելու անցման
իրավունքը: Այսուհանդերձ, շատ մարդանց կորցնելուց և ամբողջ
ձեռնարկումը վտանգելուց հետո, նա հազիվ փրկվելով, իններորդ
օրը հասավ Մեդիայի բնակեցված մասը:

20,1 Զորաբանակը (այդ) անվերջանալի շարիքների և վրա հասած
շափից ավելի փորձանքների համար մեղադրում էր Անտիգոնոսին,
ուստի և սկսեցին դժգոհության ձայներ լսվել, քանզի քառասուն
օրվա ընթացքում նրանք ընկել էին երեք խոշոր դժբախտության
մեջ: Այսուհանդերձ, Անտիգոնոսը գինվորների հետ սիրալիոր խո-
սելով և առատորեն ամեն տեսակ պարեն ապահովելով, զորքերին
2 դուրս բերեց փորձություններից: Նա Պիթոնին դուրս ուղարկեց,
պատվիրելով շրջել ամբողջ Մեդիան և հավաքել ինչքան կարող է
ավելի շատ հեծյալներ և մարտական ձիեր, ինչպես նաև մեծ թվով
3 բեռնատար անասուններ: Քանի որ այն երկիրը մշտապես լի է եղել
չորքոտանիներով, ապա հանձնարարությունը հեշտությամբ՝ կա-
տարելուց հետո Պիթոնը վերադարձավ, բերելով երկու հազար հեծ-
յալ, ավելի քան հազար ձի իրենց լծասարքով, ինչպես նաև այն-
քան բեռնակիր անասուններ, որոնք կարող էին բավարարել ամ-
բողջ զորաբանակը: դրանից բացի արքունի գանձարանից բերեց
4 նաև հինգ հարյուր տաղանդ: Անտիգոնոսը հեծյալներին ջոկատ
ների բաժանեց և ձիերը տալով նրանց, ուվքեր (կովելիս) իրենց:
կորցրել էին և բեռնատար անասունները բաժանելով իբրև պարգև,
նա նորից կարողացավ նվաճել զինվորների համակրանքը:

21,1 Իսկ Եվմենեսի հետ եղող սատրապներն ու զորավարները, երբ
տեղեկացան, որ թշնամին բանակել է Մեդիայում, սկսեցին վիճել
հրար միջև: Քանզի Եվմենեսը և Անտիգոնոսը, արգիրասպիդների
առաջնորդը, և բոլոր նրանք, ովքեր ծովափից էին արշավել, այն
կարծիքին էին, որ պետք է դարձյալ վերադառնան դեպի ծովափ,
իսկ վերին սատրապություններից իջածները, մտահոգված իրենց
սեփական գործերի համար, պնդում էին, թե պետք է սլաշուպա-

2. նել վերին երկրները, Քանի որ տարածայնությունը խորանում էր, եվմենեսը, տեսնելով, որ եթե զորաբանակը մասերի տրոհվի, ապա այդ մասերից յուրաքանչյուրն առանձին անրնդունակ կլինի կռվելու, զիջեց (վերին երկրներից) եկած սատրապների պահանջներին: Ուստի և մեկնելով Պասիտիգրիսից, նրանք առաջ ընթացան դեպի Պերսեպոլիս, Պերսիսի մայրաքաղաքը, որն ընկած էր քսանչորս օրվա երթի հեռավորության վրա: Ճանապարհի առաջին հատվածը, որը ձգվում էր մինչև այսպես կոչված Կլիմաքսը³⁶⁸, դաշտային էր, կիզիչ և պարենադուրկ, բայց մնացած մասը բարձրադիր էր, ուներ առողջարար կլիմա և ամենամյա մրգերի առատություն: քանզի այնտեղ կային կանաչապատ: և ստվերաշատ հովիտներ և բազմապիսի բուսականությամբ պարտեզներ, ինչպես նաև զանազան ծառերով բնական բացատներ և հոսող ջրեր, այնպես, որ ուղևորները հանգստանալու համար մեծ բավականությամբ դանդաղում են (այս) հաճելի վայրերում: Այստեղ կային նաև մեծ քանակությամբ ամեն տեսակ անասուններ, դոր բնիկների մոտից հավաքելով, Պեկեստեսը առատորեն բաշխում էր զինվորներին, աշխատելով նվաճել նրանց համակրանքը: Այգ երկրում բնակվում են պարսիկներից ամենառազմունակները, որոնք բոլորը աղեղնավորներ են և պարսատիկավորներ. այդ երկիրը իր բնակչության խտությամբ նույնպես գերազանցում է մյուս սատրասություններին:

2.2,1 Երբ նրանք հասան Պերսեպոլիս մայրաքաղաքը, Պեկեստեսը, լրնելով այս երկրի զորավարը, մեծաշուք գոհեր մատուցեց աստվածներին և Ալեքսանդրին, և Փիլիպպոսին³⁶⁹, այնուհետև, գրեթե ամբողջ Պերսիսից մեծ քանակությամբ դոհաբերելու անասուններ և խրախճանքի ու տոնախմբության համար անհրաժեշտ ամեն ինչ հավաքելով, զորքի համար կերուխում կազմակերպեց: Տոնախմբության մասնակիցներով նա լրացրեց չորս շրջանակ իրար մեջ, 2 որոնցից առավել մեծը պարփակում էր առավել փոքրին: Արտաքին շրջանակի պարագիծը տասը ասպարեզ էր և այն լրացնում էին զարձկանները և դաշնակիցների բազմությունը, երկրորդի (պարագիծը) ութ ասպարեզ էր, որում տեղավորված էին արգիրասպիդ մակեդոնացիները և ընկերներից³⁷⁰ նրանք, որոնք կռվել էին Ալեքսանդրի հրամանատարությամբ. հաջորդ շրջանակի պարագիծը չորս ասպարեզ էր և այն լցրել էին երկրորդական հրամանատարները, ինչպես նաև այն ընկերները և զորավարները և հեծյալները, որոնք չէին պտնվում ռազմաշարքերում, ամենավերջինը, (որը պարագիծը) երկու ասպարեզ էր, իրենց մահիճներով զբա-

զեցրել էին գորավարները և հիպպարքոսի պաշտոն³⁷¹ ունեցողները, ինչպես նաև պարսիկներից առավել պատվավորները³⁷²։

3 Սրանց մեջտեղում կային աստվածների և Ալեքսանդրի և Փիլիպպոսի զոհասեղանները։ Այդ մահիճները պատրաստված էին տերևներից և ծածկված վարագույրներով և ամեն տեսակ ծածկոցներով, քանի որ Պերսիսը առատորեն մատակարարում էր այն ամենը, ինչ անհրաժեշտ էր շքեղության և զվարճության համար։ շրջանակները իրարից այնքան հեռավորության վրա էին, որպեսզի խրախճողները իրար շիանդարեին, բայց և միաժամանակ մոտիկ լինեին իրենց անհրաժեշտ ամեն ինչին։

23,1

Քանի որ բոլորին ըստ արժանվույն ծառայություն էր մատուցվում, բազմությունը հաճոյացավ Պեկեստեսի հոգատարությունից և բացահայտ երևաց, որ նա մեծ հաջողություն ունեցավ (զորքի) համակրանքը շահելու ուղղությամբ։ Բայց Եվմենեսը, այս տեսնելով և մտածելով, որ Պեկեստեսը այդպես է վարվում բազմության հետ, ձգտելով ընդհանուր հրամանատարություն, կեղծ նամակներ հորինեց, որոնց միջոցով զինվորներին համարձակություն ներշնչեց պատերազմների ելքի նկատմամբ և նվաստացնելով Պեկեստեսի հեղինակությունն ու փայլը, բարձրացրեց իր անձնավորությունը և բազմության աչքերին մեծացրեց իր բա-

2

րևհաջող հույսերի ակնկալությունները։ Գրվածների իմաստն այն էր, որ Օլյուսիասը միանալով Ալեքսանդրի որդու հետ, Կասսանդրոսի սպանությունից հետո, դարձել էր Մակեդոնիայի թագավորության տերը և որ Պոլլուպերքոնը իր հետ ունենալով թագավորական զորքերի լավագույն մասը և փղերին, անցել էր Ասիա Անտիոգոնոսի դեմ կռվելու և արդեն մոտենում էր Կասպագոլ-

3

կիային։ Նամակը, որը դրված էր ասորերեն գրերով³⁷³, ուղարկված էր Օրոնտեսի կողմից, որը տիրում էր Արմենիայի յատրապուլյանը և Պեկեստեսի բարեկամն էր³⁷⁴։ Քանի որ նամակին հավատը ընծալվեց, (այդ) սատրապների միջև նախկինում գոյություն ունեցած մտերմության պատճառով, Եվմենեսը կարգադրեց, որ այդ նամակը փոխանցելով ցույց տան հրամանատարներին և մյուս զինվորներից շատերին։ (զրանից հետո) համայն զորաբանակի մտադրությունը փոխվեց, և բոլորն իրենց ակնկալությունները կապեցին Եվմենեսի հույսերի հետ, հավատալով, որ նա թագավորների միջոցով կկարողանա բարձրացնել ում ցանկանա և

4

պատժել բոլոր իրեն վնասողներին։ Խնջույքից հետո Եվմենեսը, ցանկանալով սաստել անհնազանդներին կամ զորավարության ձգտողներին, դատաստանի կանչեց Սիրյուրտիոսին, որը Արաքո-

սիայի սատրապն էր և Պեկեստեսի մտերիմ բարեկամը. նրանից թաքուն Եվմենեսը հեծյալներ ուղարկեց Արաքոսիա, կարգադրելով դրավել նրա ունեցածը և նրան այնպիսի վտանգների ենթարկեց, որ եթե նա թաքուն չփախչեր, բաղմությունը նրան մահվան կենթարկեր:

Այս միջոցներով Եվմենեսը ուրիշներին ահարկեկույց, իսկ իր անձի հեղինակությունն ու փայլը բարձրացնելուց հետո դարձյալ փոխվեց և սիրալիր և մեծաշուք խոստումներով շահեց Պեկեստեսի համակրանքը, որով սա իր հանդեսը դարձավ հոժարակամ և հանձն առավ զինակից դառնալ թագավորների օգտին նրա մղած
2 պայքարին: Նպատակ ունենալով նաև մյուս սատրապներից և գորավարներից երաշխիքներ ստանալ, որդեսդի սրանք իրեն չլքեն, ձևացրեց, թե իբր զրամական կարիքի մեջ է և յուրաքանչյուրից պահանջեց փոխ տալ թագավորներին ինչքան գրամ կարող
3 են: Ստանալով չորս հարյուր տաղանդ այն առաջնորդներից որոնցից նա անհրաժեշտ համարեց, զրանով իսկ նախկինում իր դեմ դավադրություն նյութելու կամ իրեն լրելու մեջ կասկածվողներին դարձրեց իր անձի հավատարմադույն թիկնապահները և պայքարի զինակիցները:

Մինչդեռ Եվմենեսը, ապագայի մասին մտածելով, այդպիսի միջոցների էր դիմում, մարդիկ ժամանեցին Մեդիայից հաղորդելով, որ Անտիգոնոսը դուրս է եկել զորքով և շարժվում է դեպի Պերսիս: Եվմենեսն այդ իմանալով, ինքը ևս զորքը վերցնելով
5 շարժվեց թշնամու դեմ և դնաց վտանգին ընդառաջ, ճանապարհ ընկնելու երկրորդ օրը նա զոհեր մատուցեց աստվածներին և զորքերի համար շքեղ խրախճանք կաղմակերպելով, բաղմությանը կոչ արեց հավատարիմ մնալ իրեն, սակայն ինքը գինարբուքի ժամանակ հետևելով ներկա եղող հյուրերի օրինակին, որոնք թափով հանձնվել էին խմիչքին, հիվանդացավ: Այդ իսկ պատճառով ընթացքը դանդաղեց, քանի զեռ ինքը տառապում էր ախտից, իսկ զորքն ընկավ հուսահատության մեջ, քանի որ թշնամին շուտով կարող էր հարձակվել, իսկ իրենց զորավարներից ամենակաշողը
6 տառապում էր հիվանդությամբ: Այսուհանդերձ, երբ հիվանդությունը տեղի տվեց ու Եվմենեսը փոքր-ինչ ապաքինվեց, նա առաջ շարժվեց իր զորքով, որին առաջնորդում էին Պեկեստեսը և Անտիգոնեսը, իսկ ինքը փոխադրվում էր պատգարակով և հետևում վերջապահներին, որպեսզի աղմուկից և ճանապարհի նեղությունից չանհանգստանա:

25,1 Երբ արդեն (երկու) բանակները գտնվում էին իրարից մեկ օրվա

ճանապարհի հեռավորության վրա, երկուստեք հետախույզներու
 ուղարկեցին և թշնամու թիվն ու նրա մտադրությունն իմանալով.
 սկսեցին պատրաստվել ճակատամարտի, սակայն բաժանվեցին.
 2 առանց կովի. քանդի կողմերը իրենց առաջ ունենալով. ինչ-որ դետ
 և ձոր, կանգնել էին մարտաշարքերով, բայց տեղանքի դժվա-
 րագնաց լինելու պատճառով չկարողացան մարտի բռնվել: Ուստի
 և բանակելով իրարից երեք ասպարեզ հեռու, շորս օր մանր ընդհա-
 րումները շարունակեցին և, քանի որ պարենի պակասություն էին
 զգում, զբաղվեցին երկիրը կողոպտելով, իսկ հինգերորդ օրը Ան-
 տիգոնոսը դեսպաններ ուղարկեց սատրապների և մակեդոնացի-
 ների մոտ, պահանջելով շհնադանդվել Եվմենեսին, այլ վստահել
 3 իրեն: Նա խոստանում էր թույլ տալ սատրապներին պահել իրենց
 իսկ սատրապությունները, մակեդոնացիներից ոմանց պարգևել
 ընգարձակ հողեր, մյուսներին՝ իրենց հայրենի երկիրը ուղարկել
 պատվով ու նվերներով, իսկ իր հետ արշավանքին մասնակցել
 ցանկացողներից յուրաքանչյուրին տալ համապատասխան պաշ-
 4 տոն: Ու քանի որ մակեդոնացիները ուշադրություն չընծայեցին
 նրա խոսքերին ու մինչև իսկ սպառնացին (նրա ուղարկած) դես-
 պաններին, Եվմենեսը հանդես գալով գովեց նրանց և պատմեց մի
 առակ, որը թեպետև ավանդակյան է և հին, բայց ոչ անպատեհ
 5 տվյալ հանգամանքներում: «Պատմեց, որ առյուծը սիրահարվելով
 կույսին, գիմում է աղջկա հորը և առաջարկում ամուսնանալ. հայրն
 ասում է, թե ինքը պատրաստ է աղջկան տալու, բայց վախենում
 է (առյուծի) ճիրաններից ու ժանիքներից, որ չլինի թե ամուսնու-
 6 թյունից հետո մի օր ինչ-որ պատճառով հանկարծ վարանա ու
 աղջկա հետ գազանաբար վերաբերվի: Ինչևիցե, երբ առյուծը հա-
 նեց իր ճիրաններն ու ժանիքները, (աղջկա) հայրը տեսնելով, որ
 առյուծն արդեն զրկվել է այն ամենից, ինչը նրան դարձնում էր
 սարսափելի, լախտով հարվածելով, հեշտությամբ սպանեց նրան:
 7 «Անտիգոնոսը նույնպես, (ասաց նա), ցանկանում է նման մի բան
 անել: Նա իր խոստումները կկատարի մինչև այն ժամանակ, երբ
 կդառնա ամբողջ գորբերի տերը և այդ պահին էլ նա կպատժի (այդ
 գորբերի) առաջնորդներին»: Քանի որ բաղմությունը հավանու-
 թյուն տվեց նրան, գտնելով, որ ճիշտ է ասում, նա արձակեց դո-
 րաժողովր:

26,1 Երբ արդեն դիշերն իջել էր, Անտիգոնոսի զորաբանակից մի
 քանի դասալիք եկան. նրանք հաղորդեցին, թե Անտիգոնոսը սին-
 վորներին հրամայել է գիշերվա երկրորդ պահին³⁷⁵ վերացնել
 2 ճամբարը և մեկնել. Եվմենեսը կշռադատելով դրությունը, ճիշտ

կերպով ենթադրեց, որ թշնամին պետք է նահանջի Գաբենե. քան-
զի այդ երկիրը, որը երեք օրվա ճանապարհի հեռավորության վրա
էր, մնացել էր անվնաս, ուներ առատ ցորեն և անասնախոտ և ընդ-
հանրապես կարող էր առատությամբ բավարարել մեծ բանակի
3 կարիքները: Այս բոլոր բառիքներից բացի այդ երկիրը շատ բա-
րենպաստ էր իր դետերով և ձորերով, որոնք դժվարանց էին,
Շուապելով թշնամուն կանխել, Եվմենեսը վարվեց նույն կերպ,
նա վարձկաններից մի քանիսին դրամի միջոցով համոզեց ն իբրև
դասալիքների ուղարկեց (Անտիգոնոսի մոտ), պատվիրելով ասել,
թե Եվմենեսը որոշել է դիշերով հարձակվել ճամբարի վրա: Իսկ
ինքը նախապես ուղարկեց դումակր և պատվիրեց զինվորներին
4 շուտափույթ ընթրելուց հետո հեռանալ ճամբարից: Այս ամենը
արագ կերպով կատարվեցին, մինչդեռ Անտիգոնոսը դասալիքնե-
րից լսելով, թե թշնամին որոշել է դիշերով հարձակվել, հետաձգեց
5 իր մեկնումը և դորքը դասավորեց ճակատամարտի համար: Գա-
նի որ նա զբաղված էր այս գործերով և մտահոգված էր գալիք ճա-
կատամարտի համար, ապա Եվմենեսը և նրա դորքը առանց նկատ-
փելու կարողացան ճանապարհ ընկնել և շտապել դեպի Գաբենե:
Իսկ Անտիգոնոսը մինչև որոշ ժամանակ զորքը պահեց ի զեն,
բայց երբ հետախույզների միջոցով իմացավ թշնամու մեկնելու
մասին, համոզվեց, որ հակառակորդը ուղիմական հնադանքով
գերազանցեց իրեն, բայց ինքը դարձյալ շհրաժարվեց իր այդ նույն
6 որոշումից: Նա հրամայեց զինվորներին վերացնել ճամբարը և
շարժվեց առաջ այնպիսի արագությամբ, որ (նրա երթը) նման-
վում էր հետապնդման: Բայց Եվմենեսը արդեն երկու պահ առաջ
էր անցել, ուստի և Անտիգոնոսը տեսնելով, որ հեշտ չի ամբողջ
զորքով հասնել այդքան առաջ անցածներին, այսպիսի մի հնար
7 մտածեց: Նա մնացած զորքը հանձնելով Պիթոնին, կարգադրեց
նրան դանդաղորեն հետևել, իսկ ինքը, վերցնելով հեծյալներին,
արշավեց մեծ արագությամբ⁷¹ և առավոտյան հասնելով թշնա-
մու վերջապահներին, որոնք ինչ-որ բլուրներից ցած էին իջնում,
8 կանգնեց բարձունքներում, որտեղից տեսանելի էր դառնում թշնա-
մուն: Եվմենեսը բավական հեռու տարածությունից նկատելով հա-
կառակորդի հեծյալներին և կարծելով, թե թշնամու ամբողջ զորքը
արդեն մոտեցել է, կանգնեցրեց իր ընթացքը և իր ուժերը դասա-
9 վորեց այնպես, ասես անմիջապես ճակատամարտ պետք է սկսվեր:
Երկու զորքերի առաջնորդներն ահա այսպես կարողացան գերա-
զանցել իրար ուղիմական հնարքներով, կարծես թե հնարամտու-
թյան մրցում էին մղում և ցույց էին տալիս, թե իրենցից յուրա-

- քանչյուրը հաղթանակի իր հույսերը կապում է իր իսկ անձի հետ:
- 10 Անտիգոնոսն ահա այս հնարքով խոչընդոտեց թշնամու առաջընթացին, իսկ ինքն իր զորքերը կարգի բերելու համար կարողացավ դադար ստանալ, և երբ իր ամբողջ բանակը տեղ հասավ, բոլորին դասավորեց ճակատամարտի և սարսափազդու մարտաշարքերով իջավ թշնամու վրա:
- 27,1 Ներառյալ նաև Պիթոնի ու Սելևկոսի բերած զորամասերը, Անտիգոնոսն ընդամենը ուներ ավելի քան երկու բյուր և ութ հազար հետևակ, ութ հազար հինգ հարյուր հեծյալ և վաթսունհինգ փիղ: (Հակառակորդ) ղորավարները ռազմաշարքերի տարբեր դասավորություն կիրառեցին, այս դեպքում ևս փորձելով գերա-
- 2 ուանցել իրար: Եվմենեսը, ձախ թևում կարգեց Եվդամոսին, որը Հնդկաստանից փղերն էր բերել, հարյուր հիսուն հոգուց բաղկացած իր հեծյալների վաշտով, իսկ նրանց առաջ կանգնած էին հիսուն հեծյալից բաղկացած ընտրյալ նիզակավորները՝ երկու
- 3 ջոկատ: Արանց տեղադրեց ստորոտի բարձրադիր կետերում, հաջորդաբար նա կարգեց զորավար Ստասանդրոսին, որի հետ էր նրա իսկ սեփական հեծելազորը, թվով ինը հարյուր հիսուն մարդ:
- 4 Արանցից հետո կանգնեցրեց Ամփիմաքոսին, Միջագետքի՝ սատրապին, որին հետևում էին վեց հարյուր հեծյալ, իսկ սրանց կից վեց հարյուր հեծյալ Արաքոսիայից, որոնց նախկինում առաջնորդում էր Սիբյուրտիոսը, բայց սրա փախուստի պատճառով այն
- 5 այժմ առաջնորդում էր Կեփալոնը: Հաջորդը կանգնած էին հինգ հարյուր (հեծյալ) Պարոպանհիսաղեից և նույն թվով թրակիացիներ վերին (սատրապություններում հաստատված) բնակավայրերից: Այս ամենի առջևում (Եվմենեսը) աղեղնաձև դասավորեց փղերից քառասունհինգին, իսկ գազանների միջև եղած տարածություններում կանգնեցրեց բավականաչափ աղեղնավորների և
- 6 պարսատիկավորների: Այս ձևով նա իր ձախ թևը ամրացնելուց հետո նրան կցեց փաղանգը: Փաղանգի եզրը զբաղեցնում էին վարձկանները, որոնք վեց հազարից ավելի էին, այնուհետև՝ հինգ հազար մարդ մակեդոնական ձևով զինված, թեպետև նրանք տարբեր ազգություններից էին:
- 28,1 Արանցից հաջորդաբար դասավորվեցին մակեդոնացի արգիրասպիդները, թվով առավել քան երեք հազար, որոնք անպարտելի էին և իրենց քաջությամբ մեծ սարսափ էին պատճառում հակառակորդին: Ու վերջապես վահանակիրների³⁷⁷ (գունդը), թվով առավել քան երեք հազար, սրանց, ինչպես նաև արդիրաս-
- 2 պիդներին առաջնորդում էին Անտիգենեսը և Տևտամոսը: Ամբողջ

փառանդի առաջ նա դասավորեց քառասուն փիղ և սրանց միջև
 3 Աջ թևում նա դասավորեց հեծյալներին (հետևյալ կերպ)։ փառան-
 գի կողքին ութ հարյուր (հեծյալ) Կարմանիայից, որոնց առաջ-
 նորդում էր սատրապ Տլեպուլեմոսը. այնուհետև (կանգնած էին)
 հետայրոսներ³⁷⁶ կոչվածները, թվով ինը հարյուր (հեծյալ) և Պե-
 կեստեսի ու Անտիգենեսի վաշտը երեք հարյուր հեծյալներով,
 որոնք միացել էին մեկ ջոկատի մեջ, իսկ թևի վերջում՝ Եվմենեսի
 վաշտը նույնքան հեծյալներով և որպես նրանց առաջապահ՝ Եվմե-
 նեսի (երիտասարդ) ստրուկներից (կաղմված) երկու ջոկատ, յու-
 րաբանչուրը բաղկացած հիսուն հեծյալից, մինչդեռ թևից այն կողմ
 (զորամասերի) կողքերը պահպանում էին շորս ջոկատ, որոնցում
 4 կային երկու հարյուր ընտիր հեծյալներ։ Սրանցից բացի, յուրա-
 քանչուր հեծյալ վաշտից³⁷⁹ ընտրելով ամենաարագ և ամենաուժեղ
 ձիավորներին, թվով երեք հարյուր մարդ, կանգնեցրեց իր իսկ
 վաշտի ետևում։ Ամբողջ այդ թևի երկայնքով կանգնեցրեց քառա-
 սուն փիղ։ Այսպիսով, Եվմենեսի զորքերի ընդհանուր թիվն էր երեք
 բյուր և հինգ հազար հետևակ, վեց հազար հարյուր հեծյալ և հար-
 յուր սասնչորս փիղ³⁸⁰։

29,1

Անտիգոնոսն իր հերթին բարձրագիր վայրից դիտելով հակա-
 ոակորդի զորքերի դասավորությունը, իր զորքերը դիրքավորեց
 համապատասխան ձևով։ Այսպես, տեսնելով, որ թշնամու աջ թևը
 ուժեղացված է դադաններով և հեծյալների լավագույն զորամա-
 սերով, նրանց հակադրեց իր հեծյալներից թեթևագույններին,
 որոնք նոսր շարքերով կանգնած լինելով, պետք է խուսափեին
 ճակատային գործողություններից, շրջադարձ կռիվ մղեին և այս
 կողմանակով իսկ անգործունյա դարձնեին թշնամու զորքերի այն
 2 հատվածը, որի վրա նա մեծապես հույս ուներ։ Այս թևում նա
 կանգնեցրեց Մեգիայից և Պարթյունայից (բերված) հեծյալ աղեղ-
 նավորներին ու նիդակավորներին, որոնք թվով հազար էին և լա-
 վագույնս վարժված շրջադարձ գործողություն կատարելու մեջ.
 հաջորդաբար նա կանգնեցրեց ղեռնս ծովափից իր արշավանքին
 հետևած տարանտինացիներին, թվով հազար երկու հարյուր հեծ-
 յալ, որոնք ընտրված էին զարանակալման գործում հմուտ լինելու,
 ինչպես նաև Անտիգոնոսի հանգեպ նրանց ունեցած հավատար-
 3 մություն պատճառով. Փոյուգիայից և Լյուդիայից հազար հեծյալ-
 ներին, Պիթոնի հետ եղած հազար հինգ հարյուրին և Լյուսանիոսի
 չորս հարյուր նիդակավորներին և այս բոլորից բացի երկձիա-
 վոր³⁸¹ կոչվածներին և վերին (երկրներում հաստատված) բնակա-

- վայրերից ութ հարյուր հեծյալներին: Չախ թևն, ահա, լրացված էր այս ձիավորներով, որոնց բոլորին առաջնորդում էր Պիթոնը: Հետևականներից առաջինը դասվեցին վարձկանները, թվով առավել քան ինը հազար. նրանցից հետո երեք հազար լյուկիացիներ և պամփուլիացիներ. այնուհետև այլազան ցեղերից բաղկացած ավելի քան ութ հազար զինվոր մակեդոնական ձևով զինված ու դրանցից բացի մոտ ութ հազար մակեդոնացիներ, որոնց տրամադրել էր նրան Անտիպատրոսը այն ժամանակ, երբ հռչակվել էր
- 4 թագավորութւյան խնամակալ: Աջ թևում փաղանգի շարունակութւյամբ առաջինը կանգնած էին այլացեղ վարձկանները, թվով հինգ հարյուր մարդ. հաջորդաբար՝ հազար թրակիացիներ, դաշնակիցներից հինգ հարյուր հեծյալ, իսկ սրանց շարունակութւյամբ հետայրոս կոչվածներից հազար հեծյալ, որոնց առաջնորդն էր Անտիգոնոսի որդի Դեմետրիոսը, որն այդ ժամանակ առաջին ան-
- 5 գամ պետք է կովեր իր հոր կողքին: Աջ թևի եզրին կանգնած էր երեք հարյուր հեծյալների ջոկատը, որոնց հետ ինքն՝ Անտիգոնոսը մասնակցում էր ճակատամարտին: Սրանց առջևում կանգնած էին իր իսկ սեփական (երիտասարդ) ստրուկներից կաղմված երեք վաշտ և սրանց զուգահեռ նույնքան վաշտ, ուժեղացված հարյուր
- 6 տարանստինացիներով: Ամբողջ թևի երկարութւյամբ նա դասավորեց ուժեղագույն փղերից երեսունին, կաղմելով կորագիծ և սրանց միջև առաջացած տարածութւյունները լրացրեց թեթևազենների ընտիր շարքերով: Մնացած գազաններից մեծ մասին նա տեղադրեց փաղանգի առջևում, իսկ դրանցից մի քանիսին կանգնեցրեց
- 7 թևում գտնվող հեծյալների հետ: Այս ձևով իր զորքերը շարադասելուց հետո, նա բլրից իջավ հակառակորդի վրա, զորքերին տված թեք դասավորութւյուն. քանզի աջ թևը, որի վրա նա առանձնապես հույս ուներ, առաջ էր ձգվում, իսկ մյուս թևը ետ էր մնում, քանի որ այս թևը պետք է խուսափեր ճակատամարտից, իսկ մյուսը պետք է կռիվ մղեր:

30.1 Երբ արդեն հակառակորդ բանակներն ընդհուպ մոտեցան իրար և երկու կողմից տրվեց պայմանական ազդանշանը, զորքերը փոխնիփոխ բաղմակի աղաղակեցին, և շեփորահարները ազդանշան շեփորեցին: Առաջինը Պիթոնի հեծյալները, որոնք իրենց առաջ հիշատակութւյան արժանի որևէ հաստատուն պատվար չուներին ու իրենց դեմ կանգնած հակառակորդին գերազանցում էին և՛ բաղմութւյամբ և՛ թեթևաշարժութւյամբ, փորձեցին օգտվել իրենց

2 այդ առավելութւյուններից: Քանի որ ճակատային գրոհը փղերի դեմ նրանք համարում էին ոչ ապահով, ուստի և ձիավարելով

- (Թշնամու) թևի շուրջը և կողքից հարձակում գործելով, խիտ նետահարումներով հարվածներ էին հասցնում, մինչդեռ իրենք, իրենց թևաշարժության պատճառով, ոչ մեկ կորուստ չէին կրում, միաժամանակ մեծ վնաս էին հասցնում փղերին, որոնք իրենց ծանրության պատճառով ոչ կարող էին հետապնդել, ոչ
- 3 իսկ ետ վերադառնալ, երբ այն անհրաժեշտ էր: Իսկ Եվմենեսը տեսնելով, որ իր (զորքերի) թևը ճնշվում էր հեծյալ աղեղնավորների բազմության կողմից, Եվդամոսից, որը ղեկավարում էր ձախ թևը, պահանջեց նրա հեծյալներից ամենաթեթևներին. այդ ամ-
- 4 բողջ հեծելագունդը տանելով թևային հարվածի, նա իր թևաթևները հետևակով և արագաշարժ հեծյալներով ներխուժեց թշնամու շարքերի մեջ. և քանի որ փղերը ևս հետևեցին նրան, ապա նա հեշտությանմբ կարողացավ Պիթոնին փախուստի մատնել և հալածեց
- 5 նրան մինչև բլրի ստորոտը: Այս դեպքերին միաժամանակ, այնպես պատահեց, որ հետևակ փաղանգները բավական ժամանակ կովեցին իրար դեմ, բայց վերջապես, երբ արդեն երկու կողմից շատեր ընկել էին, Եվմենեսի զորքերը գերազանցեցին հակառակորդին արգիրասպիդ մակեդոնացիների քաջագործությունների
- 6 պատճառով: Քանզի սրանք առաջացած տարիքում էին³⁸² և իրենց մղած բազմաթիվ ճակատամարտերի պատճառով գարձել էին առանձնապես անվեհեր և փորձառու, ուստի և ոչ մեկը չէր կարողանում դիմադրել նրանց անմիջական հարձակմանը: Այդ պատճառով իսկ, թեպետև նրանք միայն երեք հազար էին, այսուհանդերձ դարձան ամբողջ զորքի գլխավոր ուժը:
- 7 Իսկ Անտիգոնոսը տեսնելով, որ իր ձախ. թևը փախուստի էր մատնվել և ամբողջ փաղանգը պարտվել էր, ուշադրություն շղարձեց նրանց (խոսքերին), ովքեր խորհուրդ էին տալիս հեռանալ դեպի լեռները և նորից հավաքել փախչելով փրկվածներին և դրանով իսկ պահպանել իր բանակի մի մասի ամբողջականությունը. ընդհակառակը, օգտվելով ստեղծված իրավիճակի ընձեռած պատեսությունից, նա թե՛ իր զորքի փախած մասին փրկեց և թե՛
- 8 հաղթանակը ապահովեց: Քանզի Եվմենեսի արգիրասպիդները և հետևակների մնացած բազմությունը հեշտությանմբ փախուստի մատնելով իրենց դեմ կանգնածներին, որոնց հալածեցին մինչև
- 9 մերձավորագույն³⁸³ բլուրները: Բայց Անտիգոնոսը, երբ այժմ թշնամու շարքերում խզում էր առաջացել, իր հեծյալների մի մասով սուրաց այնտեղ և կողքից հարձակվեց Եվդամոսի հրամանատարության տակ ձախ թևում կանգնած զորամասերի վրա: Քանի որ հարձակումն անսպասելի էր, ապա նա իր հակառակորդներին

շուտով կարողացավ փախուստի մատնել և շատերին ոչնչացնելուց հետո իր հեծյալներից թեթևագույններին առաքեց ու նրանց միջոցով ետ կանչեց փախչողներին ու բլուրների ստորոսում նորից վերականգնեց նրանց ուղիմաշարքերը: Երբ Եվմենեսն իմացավ իր ղորքերի սպարտության մասին, շեփորի ազդանշանով ետ կանչեց (թշնամուն) հալածողներին և շտապեց օգնության հասնելու Եվդամոսին:

- 37,1 Երբ արդեն ճրագները վառելու ժամանակն էր, երկու ղորավարներն էլ փախչողներին ետ կանչելուց հետո նորից իրենց ղորքերը կարգի բերեցին ճակատամարտ տալու համար, որովհետև իրար հանդեպ անչափ թշնամանքով էին լցված ոչ միայն ղորավարները, այլև կովողների ամբողջ բազմությունը: Քանի որ գիշերը պարզ էր և լիալուսին, իսկ բանակներն էլ ղուգահևոաբար կանգնած էին իրարից շորս պլեթրոն հեռավորության վրա, ապա զենքերի շաշյունը և ձիերի փնչոցը բոլոր հակառակորդներին թվաց հուպ մոտիկ: Բայց մինչև շարքերը հավաքվեցին կովում սպանվածներից գրեթե երեսուն ասպարեղ հեռավորության վրա, կես գիշերը վրա հասավ, իսկ երկու բանակներն էլ արդեն հյուծվել էին թե՛ ճանապարհից և թե՛ ճակատամարտի դաժանությունից, ինչպես նաև անսվաղ մնալուց. այնպես, որ ստիպված եղան
- 3 հրաժարվել ճակատամարտից և ճամբար մտնել: Եվմենեսը որոշել էր շարժվել ու գնալ դեպի դիակները, նպատակ ունենալով իր ձեռքը վերցնել դրանց թաղման գործը³⁸¹ և իր հաղթանակը դարձնել անվիճելի: Բայց քանի որ դինվորները շլսեցին նրան, այլ աղուղակեցին, թե իրենք կվերադառնան հեռվում մնացած իրենց իրերի մոտ, ապա նա ստիպված եղավ զիջել բազմությանը: Քանզի հնարավոր չէր զինվորներին խիստ մեղադրել այն դեպքում, երբ շատերն էին վիճարկում հրամանատարության իրավունքը, ոչ իսկ նա ժամանակը հարմար էր համարում անհնազանդներին պատ-
- 4 ժելու: Անտիգոնոսն, ընդհակառակը, առանց ամբոխավարության, հաստատապես վերցրել էր հրամանատարությունը, ուստի և հարկազրեց իր ղորքերին բանակել սպանվածների մոտ, երբ դրանով իսկ նա իր ձեռքը վերցրեց դրանց թաղման գործը, նա վիճարկեց հաղթանակը, հայտարարելով, թե սպանվածներին տեր դառնալը
- 5 նշանակում է հաղթել ճակատամարտում: Այս կովում Անտիգոնոսի բանակից սպանվեցին երեք հազար յոթ հարյուր հետևակ և հիսունչորս հեծյալ, վիրավորվեցին ավելի քան չորս հազար մարդ. իսկ Եվմենեսի ղորքերից ընկան հինգ հարյուր քառասուն հետևակ

և փոքր թվով հեծյալներ, վիրավորվեցին ավելի քան ինը հարյուր մարդ:

32,1 Անտիգոնոսը տեսնելով, որ ճակատամարտում նահանջելուց հետո իր զինվորների տրամադրությունն ընկել է, որոշեց շուտափույթ կերպով շարժվել և դնալ ինչքան հնարավոր է հակառակորդից հեռու: Մտածելով իր զորքերին նահանջի ճանապարհին արազընթաց դարձնել, նա վիրավորներին և ծանր բեռնատարներին ուղարկեց մոտակա քաղաքներից մեկը, իսկ սպանվածներին լուսադեմին շտապ թաղելուց հետո, նա իր մոտ պահեց հակառակորդի կողմից ժամանած քարողին, որը եկել էր մեռյալներին վերցնելու հարցով, որից հետո կարգադրեց (զորքին) միանգամից

2 ճաշել: Երբ օրն անցավ, նա քարողին ետ ուղարկեց, ասելով, թե թույլատրում է մեռյալներին վերցնել հաջորդ օրը, մինչդեռ ինքը գիշերվա առաջին իսկ պահին ամբողջ բանակով ճանապարհ ընկավ և արագ ընթացքով կարողացավ մեծ տարածությամբ հեռանալ հակառակորդից և ձեռք բերեց անվնաս մնացած մի երկիր՝ իր զորքերը վերակազմավորելու համար: Նա, իրոք որ հասավ մինչև Մեդիայի Գամարգա³⁸⁵ վայրը. այդ երկիրը գտնվում էր Պիթոնի իշխանության տակ և ի վիճակի էր մեծաքանակ զորքերին առատորեն ապահովել ամեն տեսակ պարենամթերքով: Իսկ Եվմենեսը,

3 երբ հետախույզների միջոցով իմացավ Անտիգոնոսի զորքերի հեռանալը, հրաժարվեց (հակառակորդին) հալածելուց, քանի որ իր զորքերը ևս անսվաղ էին և մեծապես հոգնել էին դժվարություններից, բայց ձեռնամուխ լինելով մեռյալները վերացնելու գործին, մեծ շուքով հոգաց գրանց թաղումը:

34,7 Իսկ Եվմենեսը ավարտելով մեռյալների թաղումը, զորքով մեկնեց Պարետակենեից դեպի Գաբենե, որն անվնաս էր մնացել և կարող էր զորքերին առատորեն ապահովել ամեն ինչով: Այդ երկիրը գտնվում էր Անտիգոնոսի (բանակած վայրից) քսանհինգ կայան³⁸⁶ հեռավորության վրա, եթե մարդ գնալու լիներ բնակեցված երկրամասի միջով, իսկ անապատ և ջրազուրկ երկրի միջով գնալիս՝ ինը կայան: Այս վայրերում և իրարից այսքան հեռավորության վրա Եվմենեսն ու Անտիգոնոսը ձմեռեցին և միաժամանակ թարմացրին իրենց զորքերը:

Ասիայում Անտիգոնոսը, որը ձմեռում էր Մեդիայի Գադամալա վայրում³⁸⁷, տեսնելով, որ իր զորքերը ավելի թույլ էին քան հակառակորդի զորքերը³⁸⁸, շտապեց հանկարծակի հարձակումով գերակշռության հասնել նրանց նկատմամբ: Քանզի սրանք ձմեռում էին տաքերը վայրերում ցրված, այնպես, որ դրանց որոշ

- մասերը գտնվում էին իրարից նույնիսկ վեց օրվա ճանապարհի
- 2 հեռավորության վրա: Անտիգոնոսը հրաժարվեց բնակեցված երկրամասերի միջով ընթանալուց, քանի որ այն թե՛ երկար էր և թե՛ հեշտ նկատելի թշնամու կողմից, իսկ անապատ և ջրաղուրկ ճանապարհով գնալ համարձակվելը նա թեև համարում էր շատ սառնասալի, բայց և այնպես առավել պիտանի իր ծրագրած հարձակման համար: Քանզի այդ ճանապարհով ոչ միայն կարող էր արագ սեղ հասնել, այլև հեշտությամբ կիսուսափեր (թշնամու) ուշադրությունից և անսպասելի կհարձակվեր թշնամու վրա, որն անգիտանալով Անտիգոնոսի շարժումները, ցրված մնում էր գյուղերում և
- 3 հանգստանում: Այսպիսի ծրագիր ունենալով նա իր ղինվորներին պատվիրեց պատրաստ լինել ճանապարհվելու և իրենց հետ վերցնել տասը օրվա համար սառը սնունդ, իսկ ինքը լուր տարածելով, թե շարժվում է Արմենիայի վրա, հանկարծակի, հակառակ բոլորի ենթադրության, արշավեց անապատի միջով. այդ կատարվեց
- 4 ձմեռային արևադարձի ժամանակ: Նա կարգադրեց ճամբարններում կրակ վառել միայն ցերեկները, իսկ գիշերները այն ամբողջովին հանգցնել, որպեսզի չլինի թե որևէ մեկը իրենց նկատի լեռնագագաթներից և այդ մասին տեղեկացնի հակառակորդին: Քանզի ամբողջ անապատը համարյա դուշտային էր, բայց այն շրջապատված էր բարձր բլուրներով, որոնց գագաթներից հեշտ էլ կրակի փայլը նկատել մեծ հեռավորությունից: Բանակը հինգ օր դժվարին ճանապարհ անցնելուց հետո, ղինվորները ցրտի պատճառով, ինչպես նաև անհրաժեշտ կարիքից դրդված, ճամբարներում կրակ էին վառում թե՛ ցերեկ ժամանակ և թե՛ գիշերվա:
- 6 ընթացքում: Այդ բանը նկատելով ինչ-որ մարդիկ, որոնք ապրում էին անապատի շրջակայքում, նույն օրն իսկ Եվմենեսին և Պեկեստեսին այդ մասին տեղեկացնելու համար լրաբերներ ուղարկեցին, նրանց տրամադրելով վաղոդ ուղտեր. քանզի այդ կենդանիները կարող են անընդհատ գնալ մոտ հազար հինգ հարյուր ասպարեղ ճանապարհ:

- 38,1 Երբ Պեկեստեսն իմացավ, թե ճանապարհի միջին ուղիակալու ճամբար է հայտնվել, որոշեց մեկնել ձմեռման համար հասկացված ամենահեռավոր վայրերը, որովհետև նա վախեցավ, թե հակառակորդը այդ վայրերը կգրավի նախքան իրենց դաշնակից
- 2 զորքերը բոլոր կողմերից կհավաքվեն այնտեղ: Տեսնելով նրա հուսալքումը, Եվմենեսը խորհուրդ տվեց նրան քաջ լինել և մնալ անապատի սահմանների վրա, վստահեցնելով, թե ինքը հնար է մտածել, որով կարող է երեք կամ չորս օրով դանդաղեցնել Անտի-

գոնոսի ժամանումը: (Նա ասաց, որ) եթե այդպես անի, ապա իրենց
 զորքերը հեշտությամբ կարող են դումարվել, իսկ հակառակորդը,
 3 լինելով հոգնած և ամեն ինչից դրկված, կրնկնի իրենց ձեռքը: Քա-
 նի որ բոլորը զարմանում էին այս տարօրինակ խոստման վրա և
 պահանջում էին իմանալ, թե այդ ի՞նչը կարող էր խանդարել թշնա-
 մու առաջընթացին, Եվմենեսը հրամայեց բոլոր հրամանատարնե-
 րին իրենց ղինվորներով հետևել իրեն, բերելով իրենց հետ կրակով
 լցրած շատ անոթներ: Այնուհետև նա բարձրադիր վայրերից մի կես
 ընտրեց, որն ուղղված էր դեպի անապատը և շատ հարմար էր բոլոր
 կողմերից պարզ երևալու համար և նշաններ դնելով ներդրավեց մոտ
 չոթանասուն ասպարեզ շրջագծով մի տարածություն: Իր հետ եկած-
 ներից յուրաքանչյուրին առանձին տեղ հատկացնելով, պատվիրեց
 նրանց գիշերը կրակ վառել իրարից շուրջ քսան կանգուն հեռավո-
 րության վրա և գիշերվա առաջին պահին իսկ ուժեղ բոց անել, ցույց
 տալու համար, որ իբրև ղեռևս զարթուն են և զբաղված են իրենց
 կարգի բերելով և ընթրիքի պատրաստությամբ. երկրորդ պահին
 պակասեցնել բոցը, իսկ երրորդ պահին թողնել բոլորովին քիչ
 կրակ, այնպես որ հեռու տարածությունից ղիտողներին թվա, թե
 4 այդ իսկապես ռազմական ճամբար է: Երբ ղինվորները կատարեցին
 այդ հրամանը, հակառակադիր բարձունքների վրա հոտեր արածող-
 ներից ոմանք, որոնք Մեդիայի սատրապ Պիթոնին բարեկամ էին,
 կրակները նկատեցին: Կարծելով, որ այդ իրականում ռազմական
 ճամբար է, նրանք շտապեցին իջնել դաշտ և այդ մասին հաղորդե-
 5 ցին Անտիզոնոսին և Պիթոնին: Իսկ սրանք զարմացան այդ անսպա-
 սելի լուրի առթիվ ու կանդնեցնելով իրենց ընթացքը, խորհուրդ
 դումարեցին, թե ինչպե՞ս օգտվեն այս տեղեկություններից, քանզի
 վտանգավոր էր հոգնատանջ եղած և ամեն ինչի կարիք ունեցող
 զորքերին առաջնորդել արդեն իսկ դումարված և ամեն ինչով ապա-
 6 հովված հակառակորդի դեմ: Ենթադրելով, որ դավաճանություն է
 տեղի ունեցել և հակառակորդը, ամեն ինչ նախապես իմացած լինե-
 րով, արդեն գումարվել է, նրանք հրաժարվեցին ուղղակի առաջ
 գնալուց և, թեքվելով դեպի աջ, նրանք գնացին բնակեցված երկրա-
 մասի անվնաս մնացած վայրերով, ցանկանալով այնտեղ կազդու-
 րել հոգնատանջ զորքերին:

39,1 Եվմենեսն այս միջոցով իր ռազմավարությամբ հակառակոր-
 դին գերազանցելուց հետո, բոլոր կողմերից իր մոտ հավաքվելու
 հրաման տղարկեց իր ղինվորներին, որոնք անջատաբար ձմեռում
 էին գյուղերում: Նա պատենշ բարձրացնելով ռազմակայանի առաջ և
 այն ամրացնելով խորունկ խրամատով, սկսեց այնտեղ ընդունել իր

դաշնակիցներին, որոնք ժամանակ առ ժամանակ գալիս էին, և
 2 ուղղմական ճամբարը լցրեց ամեն անհրաժեշտ պարենով: Մինչդեռ
 Անտիգոնոսը անցնելով անսպասարև տեղաբնիկներից իմանալով,
 որ Եվմենեսի մնացած բոլոր զորքերը թեպետև գումարվել են, բայց
 փղերը պետք է նոր դուրս գալին իրենց ձմեռանոցներից, որոնք
 (իրեն) մոտիկ էին և կտրված ամեն տեսակ օգնությունից, նրանց
 դեմ ուղարկեց երկու հազար մեղացի և երկու հարյուր տարանտի-
 նացի հեծյալ նիդակավորների, իսկ հետևակներից՝ բոլոր թեթևա-
 3 զեններին: Քանզի նա հույս ուներ, որ փղերի վրա անջատ հարձա-
 կում գործելով, հեշտություն մեկարդանա դրանց տիրանալ և դրա-
 նով իսկ թշնամուն զրկել նրա բանակի հզորագույն հատվածից:
 Եվմենեսն, իր հերթին, կռահելով կատարվելիքը, օգնության ուղար-
 կեց իր լավագույն հեծյալներից հազար հինգ հարյուր մարդու և
 4 երեք հազար թեթևազեն հետևակի: Քանի որ առաջինը այնտեղ
 հայտնվեցին Անտիգոնոսի զինվորները, փղերի հրամանատարները
 կենդանիներին դասավորեցին քառակուսու ձևով և առաջ շարժվե-
 ցին, մեջտեղ առնելով բեռնատար գումակը, իսկ ետևից գալիս էին
 փղերի հետ կովոդ հեծյալները, թվով ոչ ավելի քան չորս հարյուր
 5 մարդ: Երբ թշնամին իր ամբողջ ծանրությունով հարձակվեց նրանց
 վրա և հետզհետե ճնշեց, հեծյալները պարտվեցին, շղիմանալով
 թվական գերակշռության, իսկ փղերի համար պատասխանատու
 եղողները սկզբում դիմադրեցին և հաստատ մնացին, թեև բոլոր
 կողմերից հարվածներ էին ստանում, իսկ իրենք ի վիճակի չէին
 6 հակառակորդին որևէ վնաս հասցնել: Երբ, արդեն նրանք հյուծվել
 էին, անսպասելի հայտնվեցին Եվմենեսի կողմից ուղարկվածները
 և նրանց դուրս բերեցին վտանգից: Մի քանի օր անց, երբ հակա-
 ռակորդ զորքերը բանակել էին իրար դեմ, իրարից քառասուն աս-
 պարեզ հեռավորությամբ, երկու զորավարներն էլ իրենց զորքերը
 պատրաստեցին ճակատամարտի, ամեն ինչ վճռելու մտադրու-
 թյամբ:

40,1 Անտիգոնոսը իր հեծյալներին տեղաբաշխելով թևերի վրա, ձախ
 (թևը) հանձնեց Պիթոնին, իսկ աջը՝ իր Դեմետրիոս որդուն, որի
 կողքին պետք է կովեր նաև ինքր: Հետևակներին տեղավորելով միջ-
 նամասում, նա, ամբողջ ճակատի երկայնքով, առջևում դասավո-
 րեց փղերին և դրանց միջև եղած տարածությունները լրացրեց թե-
 թևազեն զորակարգերով: Նրա զորքերի ընդհանուր թիվն էր՝ երկու
 բյուր և երկու հազար հետևակ, ինը հազար հեծյալ, ներառյալ նաև
 Մեդիայից հավաքագրվածները և վաթսունհինգ փիղ:

2 Եվմենեսն, իր հերթին, իմանալով, որ Անտիգոնոսը իր լավա-

- գույն հեծյալների հետ տեղ է գրավել աչ թևում, ինքն էլ կանգնեց նրա դիմաց, իր ձախ թևում կարգելով իր զորքերից լավագույններին: Նա այստեղ կենտրոնացրեց սատրապներից մեծ մասին, նրանց ուղեկցույ ընտրյալ ձիավորների հետ, և ինքը նույնպես որոշեց կռվել նրանց կողքին: Նրանց հետ էր նաև Միթրիդատեսը, Արիոբարզանեսի որդին, հետնորդը այն յոթ պարսիկներից մեկի, որոնք սպանել էին մոգ Սմերդիսին³⁸⁹: (Միթրիդատեսը) իր քաջությամբ աչքի ընկած մի այդ էո և մանկույթ դաստիարակվել էր զինվորավայել: Այդ ամբողջ թևի առաջ նա կորագծով կարգեց փղերից վաթսուներեղագույններին և նրանց միջև ընկած տարածությունները լրացրեց թեթևազենների զորակարգերով: Հետևակներից (ձախ թևին մոտիկ) առաջինը նա զետեղեց վահանակիրներին³⁹⁰, այնուհետև՝ արգիրասպիղներին և, վերջապես, վարձկաններին ու մնացած զորքերից նրանց, որոնք զինված էին մակեդոնական եղանակով, իսկ այս բոլորի առջևում կանգնած էին փղերն ու բավական
- 4 Թվով թեթևազեններ: Աչ թևում նա դասավորեց հեծյալներից և փղերից ամենաթույլերին, նրանց բոլորի վրա հրամանատար կարգելով Փիլիպպոսին, որին պատվիրեց խուսափել ճակատամարտից և հետևել մյուս թևում կատարված գործողություններին: Այդ ժամանակ Եվմենեսի բանակում կար ընդամենը երեք բյուր վեց հազար յոթ հարյուր հետևակ, վեց հազար հեծյալ և հարյուր տասնչորս փիղ
- 41,1 Ծակատամարտից փոքր ինչ առաջ Անտիգոնեսը, արգիրասպիղների զորավարը, մակեդոնացի հեծյալներից մեկին ուղարկեց դեպի հակառակորդի փաղանգը, կարգադրելով նրան մոտենալ (փաղանգին) և բարձրաձայն դիմել մարտիկներին: Սա, ձիավարելով, միայնակ մոտեցավ ձայնը լսվելու հեռավորությամբ այնտեղ, ուր կանգնած էր Անտիգոնոսի մակեդոնացիների փաղանգը և բարձր ձայնեց. «Ով անմիտ գլուխներ, դուք ձեր հայրերի՞ դեմ եք մեղանշում, որոնք Փիլիպպոսի և Ալեքսանդրի հետ ամբողջ աշխարհն են նվաճել»: (Շարունակելով ասաց, որ) նրանց քիչ հետո կտեսնեն առժանի թե՛ արքաներին և թե իրենց մղած նախկին մարտիկներին: Քանզի այդ ժամանակ արգիրասպիղներից ամենակրտսերները շուրջ վաթսուներեղական էին, մյուսների մեծ մասը շուրջ յոթանասուն, ոմանք նույնիսկ ավելի տարեց, բայց բոլորն իրենց ռազմական հմտությամբ և արիությամբ անհաղթելի էին, քանզի անվերջ պատերազմների մեջ նրանք ձեռք էին բերել մեծ փորձ և
- 3 համարձակություն: Երբ այս վերոհիշյալ հայտարարությունը եղավ, Անտիգոնոսի զորքերի միջից զժգոհության ձայներ լսվեցին այն

բանի համար, որ նրանք հարկադրվում են կովել իրենց ցեղակից-
ների և ավագների դեմ, իսկ Եվմենեսի զորաշարքերից ձիչեր լսվե-
ցին, որոնք կոչ էին անում շուտափույթ իրենց տանել թշնամու վրա:
Եվմենեսը տեսնելով սրանց ոգևորութունը, նշան տվեց, որ հրա-
մայվում էր փողահարներին հարձակում շեփորել, իսկ բոլոր զոր-
քերին՝ աղաղակել:

42,1

- Առաջինը մարտի բռնվեցին փղերը, այնուհետև հեծյալների
բազմութունը: Քանի որ դաշտը շատ ընդարձակ էր և ամբողջովին
աղով ներծծված լինելու պատճառով բոլորովին անմշակ լքված,
ուստի հեծյալներն այնքան փռչի բարձրացրին, որ ոչ ոք չէր կա-
րողանում հեշտությամբ փոքր տարածութունից իսկ տեսնել, թե
2 ի՞նչ է կատարվում: Անտիգոնոսն այդ նկատելով, մեղական հեծ-
յալներին, ինչպես նաև տարենտինական հեծյալներից բավականին
ուժ ուղարկեց հակառակորդի գումակի վրա: Քանդի նա, շատ իրա-
վացի կերպով, հույս ուներ, որ բարձրացած փոշու պատճառով (իդ
այդ շարժումը) աննկատելի կմնա և դումակը ձեռք բերելուց հետո
3 իր համար դժվար չի լինի թշնամուն հաղթել: Ուղարկված հեծյալ-
ները ձիավարելով իրենց հակառակորդի թևի շուրջը և մնալով ան-
նկատ, հարձակվեցին բեռնատարների վրա, որոնք մարտադաշտից
համարյա հինգ ասպարեզ հեռավորության վրա էին գտնվում: Այս-
տեղ նրանք պատահեցին ամբոխի բազմության, որը պիտանի չէր
կովելու, իսկ նրանց փոքրաթիվ պաշտպաններին էլ շուտով պար-
4 տության մատնելով, մնացած ամեն ինչին տիրացան: Մինչև այս
դեպքերը կատարվում էին, Անտիգոնոսը մարտի բռնվեց իր դիմաց
կանգնած հակառակորդ ղորամասերի հետ և հեծյալների բազմու-
թյամբ հայտնվելով, սարսափի մատնեց Պեկեստեսին, Պերսիսի
սատրապին, որն իր հեծյալների հետ դուրս էր եկել փոշու ամսից,
իր հետ տանելով նաև մյուսներից հաղար հինգ հարյուր հեծյալ:
5 Իսկ Եվմենեսը փոքրաթիվ զինվորներով մնացել էր թևի եզրին,
ամոթալի համարեց անձնատուր լինել բախտին ու փախչել: Նա գե-
րադասեց քաջաբար և հոժարակամ մեռնել, հավատարիմ մնալով
թագավորների՝ իր հանդեպ ցույց տված վստահության, ուստի, և
6 քայլեց իր իսկ Անտիգոնոսի վրա: Սկսվեց դաժան հեծելամարտ,
որի ընթացքում Եվմենեսի մարտիկները գերազանցում էին (հակա-
ռակորդին) իրենց ոգևորությամբ, իսկ Անտիգոնոսի հեծյալները՝
իրենց թվով, այդ իսկ պատճառով երկուստեք շատեր ընկան: Հենց
այդ ժամանակ էլ, երբ փղերն սկսեցին երկուստեք կովել, Եվմենեսի
փղերից ամենաառաջից գնացողը, ընդհարվելով հակառակորդի
7 ամենաուժեղ փղի հետ, ընկավ: Այսպիսով, Եվմենեսը տեսնելով,

որ իր գորքերը ամենուրեք նվազում են, մարտից դուրս բերեց իր մնացած հեծյալներին, և, անցնելով մյուս թևը, իր ձեռքը վերցրեց այդ գորքերի հրամանատարութունը, որոնց (նախապես) հանձնե-
լը Փիլիպպոսի առաջնորդության, պատվիրելով խուսափել ընդհա-
րումից: Հեծյալների կռիվն, ահա, այսպիսի վախճան ունեցավ:

43,1

Ինչ վերաբերում է հետևակներին, ապա (Եվմենեսի) արգիրասս-
պիդները խիստ շարքերով ուժգնորեն հարձակվեցին հակառակորդի
վրա և, ձեռնամարտի բռնվելով, ոմանց սպանեցին, իսկ մյուսներին
ստիպեցին փախուստի գիմել: Նրանք անսանձելի էին իրենց թա-
փով ու, կռվելով հակառակորդի ամբողջ փաղանգի դեմ, այնքան
զերազանցեցին իրենց հմտությամբ և արիությամբ, որ իրենցից ոչ
մեկին չկորցրին, մինչդեռ թշնամուց ավելի քան հինգ հազարին
սպանեցին և մնացած բոլոր հետևակ զորամասերին, որոնք թեև
2 իրենցից բազմապատիկ էին, փախուստի մատնեցին: Եվմենեսու-
րբ իմացավ, թե իր գումակը գրավված է, բայց Պեկեստեսի հեծ-
յալները հեռու չեն, փորձեց բոլորին հավաքել և դարձյալ հեծելա-
մարտ մղել Անտիգոնոսի դեմ: Քանզի նա հույս ուներ, որ եթե այդ
կռվում հաղթի, ապա կկարողանա ոչ միայն փրկել իր գումակը,
3 այլև գրավել հակառակորդին: Բայց քանի որ Պեկեստեսն ու նրա
գորքը շլեցին նրան, այլ ընդհակառակը, ավելի ևս հեռու նահան-
ջեցին մինչև ինչ-որ գետ, միաժամանակ նաև գիշերը վրա հասած
լինելու պատճառով, նա ստիպված եղավ հարմարվել իրավիճա-
4 կին: Մինչդեռ Անտիգոնոսը իր հեծյալներին երկու մասի բաժանե-
լով, մի մասին ինքը վերցրեց և սպասեց, հետևելով Եվմենեսի շար-
ժումներին, իսկ մյուս մասին հանձնելով Պիթոնին, կարգադրեց
հարձակվել արգիրասպիդների վրա, քանի որ սրանք կտրվել էին
5 հեծյալների օգնութունից: Երբ Պիթոնը արագորեն այդ հրամանը
կատարեց, մակեդոնացիները քառակուսի դասավորութուն կազմե-
լով ապահով կերպով նահանջեցին դեպի գետը, որտեղ և մեղադրե-
ցին Պեկեստեսին հեծյալների պարտության պատճառ լինելու մեջ:
Քանի որ Եվմենեսը ևս իր գորքով հասավ նրանց, երբ արդեն ճրագ-
ները վառելու պահն էր, ապա նրանք խորհուրդ գումարեցին, թե
6 ի՞նչ է պետք անել: Սատրապներն այնժամ ասացին, թե անհրաժեշտ
է շուտափույթ նահանջել դեպի վերին սատրապութունները, մինչ-
դեռ Եվմենեսը պնդում էր, թե պետք է մնալ ու կռվել, քանի որ հա-
կառակորդի փաղանգը ջախջախված էր, հեծյալները երկուստեք
7 հավասարազոր էին: Այնուամենայնիվ, մակեդոնացիները ասացին,
թե ոչ մի կողմին չեն լսելու, քանի որ իրենց գումակը գրավվել է և
իրենց երեխաները, կանայք և պետքական շատ ուրիշ անձեր գտնը-

- 8 Վրում են թշնամու ձեռքին: Այնժամ, ուրեմն, նրանք ցրվեցին, առանց որևէ համաձայնեցված կարծիք հաստատելու. դրանից հետո մակեդոնացիները թաքուն բանակցութիւններ վարեցին Անտիգոնոսի հետ և ձեռքակալելով Եվմենեսին, նրան հանձնեցին Անտիգոնոսի ձեռքը, որից հետո ետ բերելով իրենց զուգակր և երաշխիքներ
- 9 ստանալով, մտան նրա բանակի կազմի մեջ: Նույնպես նաև սատրապներն ու մնացած հրամանատարների ու զինվորների մեծազույն մասը, լքելով իրենց զորավարին, մտածեցին միայն իրենց ասլահովության մասին:

44,1 Այժմ, երբ Անտիգոնոսը անսպասելի սիրացել էր Եվմենեսի և իր դեմ կանգնած բոլոր ուժերին, արգիրասպիդների առաջնորդ Անտիգենեսին ձեռքակալելով, կենդանի իջեցրեց փոսի մեջ և այրեց, իսկ Եվզամոսին, Հնդկաստանից փղերին բերողին և Կելբանոսը³⁹¹, ինչպես նաև մի քանի այլոց, որոնք իր հանդեպ միշտ թշնամաբար

2 էին վերաբերվել, սպանեց: Իսկ Եվմենեսին հանձնելով սլահակախմբի հսկողության, մտածում էր ինչպե՞ս նրան լավագույն: օգտագործել: Քանզի նա ցանկանում էր իր հետ ունենալ մի լավ զորավարի, որը շնորհապարտ լիներ իրեն, այսուհանդերձ, նա քիչ էր վստահում Եվմենեսի խոստումներին, Օլլումպիասի և թագավորների հանդեպ վերջինիս տածած սիրո պատճառով: Փաստորեն, անցյալում, երբ Անտիգոնոսը խնայելով փրկել էր Եվմենեսին Փոյուզիայի նորա (ամրոցում), նա ոչ պակաս շահով (շարունակեց) շատ հոժարակամ պաշտպանել թագավորներին: Մյուս կողմից դարձյալ նկատելով, որ մակեդոնացիները բորբոքված պահանջում էին անպայման պատժել Եվմենեսին, Անտիգոնոսը սպանեց մտորուն: Սակայն, նրա հետ իր ունեցած նախկին բարեկամության պատճառով կիզեց նրա զիակր և աճյունը անոթի մեջ

3 դնելով, այն ուղարկեց նրա հարադատներին: Վիրավորների թվում գերի վերցվեց նաև պատմագիր Հիերոնիմոս Կարդիացին, որը մինչ այդ մշտապես պատվի էր արժանացել Եվմենեսի մոտ, բայց նրա մահից հետո վայելեց Անտիգոնոսի հովանավորութունը և վստահութունը:

- 4 Այնուհետև Անտիգոնոսը տիրանալով Մեդիայում գտնված ամբողջ զորքին, ինքը ձմեռեց Եկբատանայի մոտ գտնվող մի գյուղում, որտեղ այդ երկրի արքունիքն էր, իսկ զինվորներին բաժանեց ամբողջ սատրապության մեջ, հատկապես Ռագայ կոչված նահանգում, որն իր այդ անունն ստացել էր այնտեղ անցյալ ժամտնակներում տեղի ունեցած զժբախտութիւնների պատճառով³⁹²:
- 5 Այս երկրում, որտեղ թեև գոյութիւն էին ունեցել բազում և բոլո-

րից առավել բարգավաճ քաղաքներ, բայց այնպիսի երկրաշարժ-ներ են տեղի ունեցել, որ թե՛ քաղաքները և թե՛ զրանց բոլոր բնակիչները ոչնչացել են, իսկ այդ երկիրն ընդհանրապես կերպափոխվել է և նախկինում եղած գետերի ու լճերի փոխարեն նորերն են առաջացել:

46,1

Երբ Անտիգոնոսը ձմեռում էր Մեդիայում, իմացավ, որ Պիթոնը, ձմեռանոցներում գտնվող զինվորներից շատերին խոստումներով և պարգևներով գրավում է իր կողմը և մտածում է ապրտամբել: Սակայն նա իր մտադրությունները թաքցրեց և ձևացնելով, թե իբր չի հավատում Պիթոնին մեղադրողներին, շատերի ներկայությամբ նրանց հանգիմանեց այն բանում, որ քայքայում են իրենց բարեկամությունը, իսկ զրսում գտնվողների համար խոսք տարածեց, թե ինքը մտադիր է վերին սատրապությունների գորավարությունը թողնել Պիթոնին, միաժամանակ ապահովու-
2 թյան համար տրամադրել նրան բավականաչափ զորք: Նա նույնիսկ նամակ հղեց Պիթոնին, խնդրելով նրան շուտափույթ գալ իր մոտ, որպեսզի անհրաժեշտ ամեն ինչի մասին անձամբ խորհրդակցելուց հետո, ինքը շտապի վերադառնալ դեպի ծով³⁹³: Նա այսպիսի մեքենայություններ էր մտածում, որպեսզի խանգարի Պիթոնին ճշմարտությունը կասկածելուց և միաժամանակ, որպեսզի համոզի նրան սատրապությունը ստանձնելու նպատակով գա և ընկնի իր ձեռքը: Քանզի հեշտ չէր բռնությամբ ձերբակալել մի մարդու, որը Ալեքսանդրի կողմից պաշտոնի բարձրացման էր արժանացել իր արիության համար, իսկ այդ ժամանակ էլ Մեդիայի սատրապն էր և հաճոյացել էր ամբողջ բանակին: Պիթոնը այդ ժամանակ ձմեռում էր Մեդիայի ծայրագույն վայրերում և արդեն կաշառել էր բազմաթիվ մարդկանց, որոնք խոստացել էին իր հետ ապստամբել, բայց երբ ընկերները նրան գրեցին Անտիգոնոսի ծրագրերի մասին, ակնարկելով, թե մեծ հույսեր պես:ք է ունենա, ապա նա սին ակնկալություններից խաբված, եկավ Անտիգոնոսի
4 մոտ: Վերջինս տիրանալով Պիթոնին և մեղադրելով նրան ասայանի մասնակիցների առաջ, հեշտությամբ կարողացավ դատապարտել նրան և անմիջապես մահապատժի ենթարկեց: Այնուհետև ամբողջ բանակը մի տեղ գումարելով, նա Մեդիայի սատրապ հայտարարեց մեղացի Օրոնտոբատեսին, իսկ զորավար կարգեց Հիպպոստրատոսին, որն ուներ երեք հազար հինգ հարյուր
6 հետևակ վարձկան³⁹⁴ ...իսկ ինքը, (Անտիգոնոսը), վերցնելով իր զորքը, մեկնեց Եկբատանա: Այստեղ նա վերցնելով հինգ հազար տաղանդ շերոշմած³⁹⁵ արծաթ, շարժվեց դեպի Պերսիս. չվերթը

դեպի այդ երկրի մայրաքաղաքը, որը կոչվում է Պերսեպոլիս, տե-
վում է քսան օր:

- 47,1 Մինչ Անտիգոնոսը ճանապարհին էր, դավադրության մաս-
նակից դարձած Պիթոնի ընկերները, որոնցից ամենահայտնիներն
էին Մելեագրոսն և Մենոյտասը, հավաքեցին Եվմենեսի և Պիթոնի
2 ջրիվ թափառող կողմնակիցներին, թվով ութ հարյուր հեծյալ: Նախ
նրանք սկսեցին կողոպտել այն մեղացիների երկիրը, որոնք չէին
ցանկանում հարել ապստամբներին, այնուհետև տեղեկանալով,
որ Հիպպոստրատոսը և Օրոնտոբատեսը բանակել էին արհամար-
հելով վտանգը, դիշերով հարձակվեցին նրանց ճամբարի վրա:
Նրանք շուտով գրավեցին արտաքին պատնեշը, բայց չդիմանա-
լով (հակառակորդի) թվական գերակշռությանը, դարձյալ հեռա-
ցան, դինվորներից ոմանց համողելով միանալ ապստամբության:
3 Քանի որ նրանք թեթև էին դիմված և բոլորը ձիերով էին, ապա
իրենց հանկարծակի ասպատակումներով երկիրը լցրին անկար-
գությամբ: Այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց նրանք, պա-
շարվելով ինչ-որ վայրում, որը շրջափակված էր գահավեժ ժայ-
ռերով, մասամբ սպանվեցին, մասամբ էլ գերի վերցվեցին: Երանդ
4 առաջնորդներից Մելեագրոսը և մեղացի Օկրանեսը, ինչսլես նաև
ականավոր մարդկանցից ոմանք, դիմադրելիս սսյանվեցին:

Մեղիսյում ապստամբածների վախճանն ահա ալսպիսրն
եղավ:

- 48,1 Անտիգոնոսը շուտափույթ Պերսիս հասնելով, սաելաբնիկ-
ների կողմից արժանացավ արքայական պատվի, ասես արդեն
Ասիայի օրինական տերը ճանաչված լիներ, իսկ ինքը ատյանի
նստելով իր ընկերների հետ, դբաղվեց սատրապությունների հար-
ցով: Նա թույլատրեց Տլեպոլեմոսին պահել Կարմանիան, իսկ
Ստասանորին՝ Բակտրիանեն: Քանդի հեշտ չէր նրանց հեռացնել
սոսկ նամակ ուղարկելով, քանի որ սրանք սիրաշահել էին տեղա-
2 բնիկներին և շատ կուսակիցներ ունեին: Ասիա ուղարկեց Եվիտո-
սին, բայց քանի որ սա քիչ ժամանակ անց մահացավ, ասլա նրա
փոխարեն կարգեց Եվագորասին, մի մարդու, որը հիացնում էր
թե՛ իր քաջությամբ և թե՛ իր խելամտությամբ: Օքսյուարտեսին,
Հոոքսանեի հորը, նա թույլատրեց պահել սատրապությունը Պա-
րոպանիսադեում, որտեղ նախկինում ևս նա տիրում էր. քանզի
սրան ևս հնարավոր չէր դուրս անել առանց երկարատև արշա-
վանքի և մեծ բանակի:

- 3 Արաքոսիայից նա իր մոտ հրավիրեց Սիբյուրտիոսին, որն իր
հանդեպ բարյացակամ էր տրամադրված, ու նրան թույլ տվեց

պահելու սատրապութիւնը, միաժամանակ նաև հանձնեց նրան արգիրասպիգներին ամենախոռովարարներին, իբր թե նրանք կարող էին օգտակար լինել պատերազմում, մինչդեռ իրականում, նրանց կործանելու համար: Քանզի նա սատրապին առանձին կարգադրեց, որպեսզի սրանց փոքր խմբերով ուղարկի այնպիսի գործողութիւնների, որոնց ընթացքում նրանք կարող էին կործանվել...

- 5 ...Այնժամ Անտիգոնոսը տեսնելով, որ Պեկեստեսը մեծ հարգանք է վայելում պարսիկների մոտ, նախ նրանից վերցրեց սատրապութիւնը: Այնուհետև, երբ տեղաբնիկներն ընգվածեցին և նրանց առաջնորդներից մեկը, Թեսպիոսը, նույնիսկ բացարձակ հայտարարեց, թե պարսիկները ուրիշ ոչ մեկին չեն հնազանդվելու, սրան սպանեց և Պերսիսի հյուպարքոս նշանակեց Ասկլեպիոզորոսին, տալով նրան բաւականաչափ զորք: Ինչ վերաբերում է Պեկեստեսին, ապա սրան բաղում այլ հույսերով ու սին խոստումներով օրորելուց հետո, զուրս բերեց այդ երկրից: Երբ Անտիգոնոսը ուղևորվում էր Սուսա, նրան Պասիտիգրիս գետի մոտ դիմավորեց Գսենոփիլոսը, Սուսայի գանձարանի վերակացուն, որն ուղարկվել էր Սելևկոսի կողմից, Անտիգոնոսի ամեն մի հրամանը կատարելու համար: Անտիգոնոսը նրան ընդունեց ու ձևացրեց, թե նրան առատում է իր ամենասերտ ընկերներին հավասար, որպեսզի չլինի:
- 6 Ինչ թե մտափոխվելով, դարձյալ իրեն զրկի (Սուսայի գանձներից): Անտիգոնոսը ձեռք գցելով Սուսայի միջնաբերդը, տիրացավ այնտեղ գտնվող ոսկեծույլ խաղողի փաթաթվող որթին⁹⁶ և բազում այլ կերտվածքների, որոնց ընդհանուր կշիռը կազմում էր մեկ բյուր
- 7 և չինգ հազար տաղանդ: Այս ամենից բացի նրա համար կուտակվեց նաև մեծ քանակութամբ այլ հարստութիւն, բաղկացած թե՛ ոսկեքաներից և թե՛ տարբեր ընծաներից, ինչպես նաև ռազմական ավարներից: Սրանք կազմեցին հինգ հազար տաղանդ, նույնքան ևս կար Մեդիայում, չհաշված Սուսայում գտնվող դանձերը, այնպես, որ ամբողջը միասին կուտակվել էր երկու բյուր և հինգ հար
- 8 և չինգ հազար տաղանդ:

90,1. Ասիայում Սելևկոսը Սիրիայի Գաղա (քաղաքի) մոտ: Դեմետրիոսի կրած պարտութիւնից հետո³⁹⁷ Պտղոմեոսից վերցնելով ոչ ավելի քան ութ հարյուր հետևակ և շուրջ երկու հարյուր հեծյալ³⁹⁸, մեկնեց Բաբելոն: Նա այնքան էր ոգևորված իր հույսերով, որ եթե նույնիսկ ոչ մեկ զորք չունենար, դարձյալ իր ընկերների և իր ստրուկների հետ կձեռնարկեր այդ արշավանքը դեպի վերին երկրները: Քանզի նա ենթադրում էր, թե բաբելոնացիները, իրեն

- նախկին բարեհաճության պատճառով, սիրահոծար Էմիանան իրեն և թե Անտիգոնոսը իր զորքերով հեռու մեկնած լինելով, հար-
2. մար առիթ է ընձեռել իր նպատակները իրագործելու համար: Թեպետև ինքն այսքան եռանդով էր, բայց նրան ուղեկցող լքնկերները շատ անհանգստացան, տեսնելով, թե իրենց հետ արշավանքին մասնակցողները շփազանց փոքրաթիվ են, մինչդեռ թշնամին, որի դեմ իրենք գնում են, իր տրամադրություն տակ ունի մեծաքանակ պատրաստի զորք, հսկայական միջոցներ և բազում
- 3 դաշնակիցներ: Նկատելով, որ նրանք ահաբեկվել են, Սելևկոսը քաջալերում էր նրանց, հորդորելով, որ Ալեքսանդրի հետ արշաված և իրենց քաջագործությունների համար նրա ձեռքով բարձրացած մարդկանց վայել չի դժվարության դեպքում ամբողջովին հենվել ուժի և հարստության վրա, այլ հմտության և խելամտության, որոնցով էլ ինքը (Ալեքսանդրը) կատարեց իր մեծ և բոլորին հիացնող գործերը: Այնուհետև, (ավելացրեց նա), պետք է հավատալ նաև աստվածների պատգամներին, թե այդ արշավանքի վախճանը կլինի արժանի իր մտադրություններին: Քանզի Բրանքիդայում³⁹⁹, երբ ինքը գուշակից պատգամ հարցրեց, աստված իրեն անվանեց «արքա Սելևկոս», իսկ երազում Ալեքսանդրը կանգնելով իր կողքին, պարզորոշ վկայեց ապագա իշխանության մասին, որը ժամանակի ընթացքում պետք է վիճակվեր իրեն:
- 5 Դրանից բացի նա մատնացույց էր անում նաև, ոտ այն ամենը, ինչ լավ է և հիացնում է մարդկանց, ձեռք է բերվում առապանքի ու վտանգների գնով: Նա հաճոյանում էր նաև իր զինակիցներին և իրեն ղնում բոլորի հետ հավասար վիճակում, որպեսզի յուրաքանչյուրը հարգի իրեն և սիրահոծար համակերպվի այդ խելահեղ համարձակության:

- 91,1 Երբ նա առաջ ընթանալիս մտավ Միջագետք, Կարայում բնակեցված մակեդոնացիներից ոմանց համոզեց, մյուսներին բռնի ստիպեց հարել իր արշավանքին: Երբ նա մտավ Բաբելոնիա, տեղաբնիկներից շատերը եկան նրան դիմավորելու և անցնելով նրա կողմը, հայտարարեցին, թե ինչպես իրեն հաճո է, այնպես էլ կգոր-
- 2 ծակցեն: Քանզի նա շորս տարի այդ երկրի սատրապը լինելով, բոլորին լավ էր վերաբերվել, դրանով իսկ շահելով բազմության համակրանքը և դեռ նախապես իր համար ապահովել էր գործակիցներ, եթե իրեն երբևիցե պատեհություն տրվեր իշխանությունը
- 3 վիճարկելու: Նրա կողմն անցավ նաև Պոլիարքոսը, որն. ինչ-որ երկրամասի կառավարիչ էր կարգված, ավելի քան հազար զինվոր-

ներով: Իսկ նրանք, ովքեր հավատարիմ էին մնացել Անտիգոնոսին, տեսնելով, որ բազմության պոռթկումը անսանձելի է, միասին հավաքվելով ապաստանեցին միջնաբերդում, որի պահակա-

4 պետ նշանակված էր Դիփիլոսը: Սելևկոսը միջնաբերդը պաշարելուց հետո այն գրոհով գրավեց և ետ վերցրեց իր այն բարեկամներին և ստրուկներին, որոնք, երբ ինքը Բաբելոնից մեկնել էր Սեդիպտոս,

5 Անտիգոնոսի կողմից հանձնվել էին պահակադրոի հսկողության: Այս գործողությունն ավարտելուց հետո նա ղինվորներ հավաքագրեց և ձիեր գնելով, դրանք բաժանեց նրանց, ովքեր կարող էին դրանցից օգտվել: Բոլորին բարեկամաբար գիմելով և լավագույն հույսեր ներշնչելով, կարողացավ նրանց սիրահոժար մասնակիցներ դարձնել իր ձեռնարկած գործերին: Սելևկոսն ահա այս կերպ վերանվաճեց Բաբելոնիան:

Գիրք 29⁴⁰⁰

22 Երբ Ասիայի թագավորների կողմից ուղարկված դեսպանները հասան Հռոմ, Ատտալոսը⁴⁰¹ և նրա արքունի միջավայրը⁴⁰², մեծ ընդունելության արժանացան: Նրանց ղիմավորեցին մեծ շուքով և առանձնակի սիրալիրությամբ և շնորհեցին առատ ընծաներ: Քանզի այս իշխանները հռոմեասեր էին դարձել⁴⁰³, և բոլոր դեպքերում հնադանդվում էին սենատին և, բացի այդ, իրենց արքունիքը ժամանող հռոմայեցիներին ընդունում էին և հյուրընկալում մեծ սիրով: Սրանց պատճառով էլ սենատը բոլորին ունկնդրեց և ցանկանալով սիրաշահել թագսւվոր Նվմենեսին⁴⁰⁴, նրանց հաճելի սյատասխան տվեց, հայտարարելով, որ սենատը դեսպաններ կոռդարկի Փառնակեսի⁴⁰⁵ հետ ծագած պատերազմին⁴⁰⁵ ամեն կերպ վերջ տալու նպատակով:

23 Լեոկրիտոսը, Փառնակեսի զորավարը, անրնդհատ հարձակումներ գործելով, ստիպեց Տիոսում⁴⁰⁷ գտնվող վարձկաններին քաղաքը հանձնել, իսկ իրենց, պայմանավորվածության համաձայն, հսկողության տակ թույլ տալ հեռանալ անվտանգ: Այս վարձկանները, որոնք կնքված դաշինքի համաձայն պետք է հեռանային քաղաքից, անցյալ ժամանակներում անարդար էին եղել Փառնակեսի նկատմամբ, ուստի և Լեոկրիտոսը, հրահանգ ստացած լինելով Փառնակեսից սպանել բոլոր վարձկաններին, ղրժեց

դաշինքը և, երբ վարձականները մեկնում էին Տիոսից, ճանապարհին հարձակվեց նրանց վրա և, նիզակահարելով, սպանեց բոլորին:

24 Սելևկոսը⁴⁰⁸ նշանակալից քանակությամբ զորքեր վերցնելով, առաջ շարժվեց, որպեսզի Տավրոսն անցնելով օգնության հասնի Փառնակեսին, սակայն նկատի ունենալով հոռոմայեցիների հետ իր հոր կնքած համաձայնագիրը⁴⁰⁹, որի պայմաններով թույլ չէր արվում...⁴¹⁰

Գիրք 31

17 Հայաստանի թագավոր Արտաքսեսը⁴¹¹ ապստամբելով Անտիոքոսից, իր անունով քաղաք հիմնեց և ժողովեց հզոր արանցի, իսկ Անտիոքոսը⁴¹², որն այդ տարիներին հզոր էր, ինչքան ոչ ոք մյուս թագավորներից, արշավեց նրա վրա և հաղթելով ստիպեց նրան հնազանդվել⁴¹³:

19,1 Կապպադովկիայի թագավորներն ասում են, թե իրենց տոհմը վերաբերում է պարսիկների Կյուրոս (արքային) և պնդում են, թե իրենք հետնորդներն են յոթ պարսիկներից մեկի, որոնք սպանել են մոգին⁴¹⁴: Նրանք իրենց ցեղակցությունը Կյուրոսի հետ հաշվում են հետևյալ կերպ: Կամբյուսեսը, Կյուրոսի հայրը, ունեցել է հարազատ մի քույր Ատոսսա (անունով): Ահա սրանից ու Կապպադովկիայի թագավոր Փառնակեսից ծնվել է մի տղա՝ Գալլոսը և սրանից ծնվել է Սմերդիսը, սրանից՝ Արտամնեսը, սրանից՝ Անափասը, որն իր առանձնակի քաջությամբ ու խիզախությամբ

2 դարձել է յոթ պարսիկներից մեկը: Ահա այսպես են նրանք բացատրում իրենց ծագումնաբանական ցեղակցությունը Կյուրոսի, ինչպես նաև Անափասի հետ, որին էլ, ինչպես նրանք ասում են, իր արիության պատճառով շնորհվել է իշխանությունը Կապպադովկիայի վրա, պարսիկներին ոչ մի հարկ չվճարելու պայմանով: Սրա մահից հետո իշխել է համանուն որդին, իսկ սա ևս մահանալով, թողել է երկու որդի՝ Դատամես և Արիմնայոս, իշխանությունը ժառանգել է Դատամեսը, մարդ, որը թե՛ պատերազմում և թե՛ թագավորական իշխանությունը գործադրելիս մեծ գովեստների է արժանացել. սա պարսիկների դեմ պատերազմի ելնելով և փառավորապես կռվելով, մարտում վախճանվել է: Թագավորությունը ժառանգել է նրա որդի Արիամնեսը⁴¹⁵, որն ունեցել է երկու որդի՝

Արիարաթես և Հոլոփեռնես⁴¹⁶, Արիամնեսը հիսուն տարի իշխելուց
3 հետո վախճանվել է հիշարժան ոչ մի գործ չկատարելով: Իշխա-
նությունը ժառանգում է նրա ավագ որդի Արիարաթեսը, որի մա-
սին ասում են, թե առանձնապես գուրգուրանքով սիրել է իր եղբո-
րը և նրան բարձրացրել է ամենասիրելի գիրքերը. այսպես, նա
ուղարկված է եղել դինակցելու պարսիկներին եգիպտացիների
դեմ (պատերազմում) և վերադարձավ մեծ պատիվներով, զոր
Օքոսը⁴¹⁷, պարսից թագավորը շնորհում էր քաջագործության հա-
մար: Նա կյանքից հեռացավ իր հայրենիքում, թողնելով երկու
4 որդի՝ Արիարաթես և Արյուսես: Սրա եղբայրը, որը իշխում էր
Կապպադովկիայում, հարազատ որդի չէր ունեցել, ուստի և որդե-
գրել էր իր եղբոր որդիներից ավագին՝ Արիարաթեսին: Այդ տարի-
ներին էր, որ Ալեքսանդր Մակեդոնացին պարտության մասնեց
պարսիկներին, որից հետո վախճանվեց, ապա Պերդիկկասը, որն
այդ ժամանակ ամբողջ պետության առաջնորդն էր, Եվմենեսին
ուղարկեց որպես Կապպադովկիայի զորապետ: Արիարաթեսը
պարտության մատնվելով, ճակատամարտում ընկավ, որից հետո
թե՛ ինքը Կապպադովկիան և թե՛ նրան սահմանակից երկրներն
5 ընկան մակեդոնացիների (տիրապետության) տակ: Իսկ Արիարա-
թեսը, նախորդ թագավորի որդին, հուսահատվելով այդ ժամա-
նակ ստեղծված դրությունից, քչերի հետ հեռանում է դեպի Հա-
լաստան: Ոչ շատ ժամանակ սինց, երբ արդեն Եվմենեսն ու Պեր-
դիկկասը և նրանց համախոհները մահացել էին⁴¹⁸, իսկ Անտիգո-
նոսն ու Սելևկոսը զբաղված էին այլ գործերով, (Արիսրաթեսը) հա-
յերի թագավոր Արդոատեսից⁴¹⁹ զորք ստանալով, սպանեց մակեդո-
նացիների զորապետ Ամուոնտասին, մակեդոնացիներին անհա-
պաղ դուրս վտարեց երկրից և վերանվաճեց իր հայրենի իշխանու-
6 թյունը: Քանի որ սա ունեցավ երեք որդի, ապա թագավորությունն
ստացավ նրա ավագ որդի Արիամնեսը: Սա հարսնախոս ուղարկե-
լով Թեոս մականվանյալ Անտիոքոսի⁴²⁰ մոտ, սրա դուստր Ստրա-
տոնիկեին ամուսնացրեց իր ավագ որդու՝ Արիարաթեսի հետ: Սա,
լինելով առանձնապես որդիասեր, դիպեմա կապեց իր որդու
(գլխին) և նրան հայտարարեց գահակից, նրա հետ հավասար բա-
ժանելով թագավորական իշխանության բոլոր առավելություննե-
րը: Հոր վախճանվելուց հետո Արիարաթեսը թագավորում է մենակ
և կյանքից փոխվելով, թագավորությունը թողնում է իր որդի
Արիարաթեսին, որն այդ ժամանակ բոլորովին մանկահասակ էր:
7 Սա ամուսնացավ Մեծն մականվանյալ Անտիոքոսի⁴²¹ դստեր հետ:

- որի անունն էր Անտիոքիս⁴²² և որը շափազանց խորամանկ էր: Քանի որ սա երեխաներ չէր ունենում, ուստի ճարպկորեն, մինչ-ղևռ իր ամուսինն անգիտանում էր, իրեն վերագրեց երկու կեղծ որդիների՝ Արիարաթեսին և Հոլոփեոնեսին: Սակայն ինչ-որ ժամանակ հետո նա անսպասելի հղիացավ և ծնեց երկու աղջիկ և միայն մեկ տղա՝ Միթրիդատեսին: Այս ամենից հետո նա ամուսնուն բացահայտեց (ճշմարտությունը) խորթ երեխաների մասին, որոշելով նրանցից ավագին համապատասխան կենսամիջոցներ տրամադրելով Հոոմ ուղարկել, իսկ կրտսերին՝ Հոնիա, որպեսզի նրանք չվիճարկեն թագավորությունը հարազատ որդուց: Սա, ինչպես պատմում են, այր զսոնալով իր անունը փոխեց և դարձրեց Արիարաթես, ստացավ հելլենական դաստիարակություն և գովելի
- 8 դարձավ իր բոլոր առաքինություններով: Արդ, քանի որ սա հայրասեր որդի էր, հայրը ջանադիր եղավ փոխհատուցել իր որդիասեր զգացումով: Նրանց փոխադարձ հոգատարությունը այն ատիճանի հասավ, որ հայրը ձգտում էր ամբողջ իշխանությունից հրաժարվել հօգուտ իր որդու, մինչղևռ որդին հայտարարում էր, թե իր համար անկարելի կլինի ընդունել այդպիսի շնորհ, քանի զևռ իր ծնողները կենդանի են: Բայց երբ իր հոր համար հասավ ճակատագրական օրը, նա ժառանգեց թագավորությունը և իր ամբողջ հետագա կյանքի ընթացքում նա դարձավ երևելի հատկապես իմաստասիրության հանդեպ ցուցաբերած իր հակումներով: Դրա հետևանքով էր, որ հելլեններին հնում անհայտ մնացած Կապպադովկիան այդ ժամանակ դարձել էր կրթված մարդկանց ապրելավայր: Սա վերանորոգեց նաև բարեկամությունը և դաշնակցությունը Հոոմի հետ: Կապպադովկիայում իշխած թագավորների Կյուրոսից սեռած լինելու մասին այսքան:
- 9 Հարյուր վաթսուն տարվա ընթացքում Կապպադովկիայում իշխեցին յոթ թագավորներ, որոնց թագավորությունը, ինչպես Դիոդորոսն է գրում, սկսել է այս ժամանակները:
- 21 Փիլոպատոր մականվանյալ Արիարաթեսը ժառանգելով հայրենի թագավորությունը, նախ իր հորը մեծաշուք թաղեց, այնուհետև պասաշաճ կերպով հոգաց իր ընկերների մասին, ինչպես նաև պաշտոններում կարգավածների և նրանց ստորադրյալների մասին, դրանով իսկ նա արժանացավ բազմության ջերմ համակրանքին:
- 22 Այն բանից հետո, երբ Արիարաթեսը Միթրոբուպանեսին⁴²³ վերականգնեց հայրենի տիրության վրա, Արտաքսիասը, Հայաստանի թագավորը, շհրաժարվելով իշխանության նկատմամբ իր

ունեցած ընչաքաղցությունից, դեսպաններ ուղարկեց Արիարաթեսի մոտ, առաջարկելով նրան համամիտ լինել իր հետ և յուրաքանչյուրն իր մոտ եղող երիտասարդին⁴²⁴ մահվան ենթարկելով, իրար միջև բաժանեն Սոփենեն⁴²⁵: Իսկ Արիարաթեսը, որին շատ էր օտար այդպիսի անազնվությունը, հանդիմանեց դեսպաններին և (նամակ) դրեց Արտաքսիասին, առաջարկելով նրան հեռու մնալ նման գործերից: Հետևաբար, Արիարաթեսն ահա այս գործից հետո իր անձի շուրջ եղած համբավը ոչ քիչ շափով բարձրացրեց, իսկ Միթրոբուդանեսը, իրեն իշխանության վրա վերականգնողի հյուանություն արժանի հավատարմության և ազնվաբարո (վերաբերմունքի) շնորհիվ տիրացավ իր հայրենի իշխանության:

19a Կոմմագենեի կառավարիչ⁴²⁶ Պտղոմեոսը, որը նախկինում իսկ արհամարհել էր Սիրիայի թագավորներին⁴²⁷, այժմ ապստամբեց, քանի որ սրանք դբաղված էին իրենց գործերով, ապա (Պտղոմեոսը) անարգել տիրացավ այդ երկրին, առավելապես ապավինելով այդ վայրերի բնական ամրություններին: Զբաղարարվելով այս հաջողությամբ, նա զորք հավաքեց և ներխուժեց Մելիտենե կոչված (երկիրը), որը պատկանում էր Կապպադովկիային և ենթակա էր Արիարաթեսին, ու գրավեց գերիշխող դիրքերը: Սակայն երբ Արիարաթեսը մեծաթիվ զորքով արշավեց նրա վրա, նա ետ քաշվեց իր սեփական դավառը:

27a Երբ հայտնի դարձավ, թե հռոմայեցիները թշնամաբար են տրամադրված Դեմետրիոսի⁴²⁸ հանդեպ, ապա ոչ միայն մյուս թագավորները նրան արհամարհեցին, այլև նույնիսկ նրան ենթակա սստորապներից ոմանք, որոնցից ամենահայտնին Տիմարքոսն էր: Սա ծագումով միլետացի էր և նախկինում թագավորած Անտիոքոսի⁴²⁹ ընկերը, որը բազմիցս Հռոմ էր ուղարկվել իբրև դեսպան և շատ շարիք էր պատճառել սենատին: Քանզի նա մեծ քանակությամբ դրամ տանելով իր հետ, կաշառում էր սենատորներին, իր ընծաներով առանձնապես ձգտելով գայթակղեցնել նրանց, ովքեր թույլ կարողության տեր էին: Ահա այս եղանակով նա շատերին գրավելով իր կողմը և նրանց տալով հռոմեական կարգերին անհարիր առաջադրանքներ, փշացնում էր սենատը, նրան գործակցում էր եզրայրը՝ Հերակլեյդեսը, որն այսպիսի ծառայության համար օժտված էր ավելի քան որևէ մեկը: Նույն եղանակով վարվեց նաև տվյալ դեպքում, երբ Հռոմ էր եկել արդեն լինելով Մելիտայի սատրապ, նա շատ մեղադրանքներ հարուցելով Դեմետր-

րիոսի դեմ, համոզեց սենատին նրա դեմ ընդունել այսպիսի որոշում. «Քանի որ Տիմարքոսը...⁴³⁰, ապա նա թող լինի նրանց թագավորը»: Տիմարքոսը ոգևորված այս որոշումից, Մեդիայում կազմակերպեց նշանակալից բանակ, միաժամանակ 'Դեմետրիոսի դեմ գաշինք հաստատեց Հայաստանի թագավոր Արտաքսիասի հետ, Ալեքսանդրոսը ահաբեկելով սահմանակից ժողովուրդներին իր գործերի հզորությամբ և նրանցից շատերին հնազանդեցնելով իրեն, արշավեց Զեզմայի⁴³¹ վրա և, վերջապես, դարձավ թագավորութան մեջ հզոր:

28 Հարյուր հիսունհինգերորդ օլիմպիադայում⁴³² Արիարաթեսի մոտից դեսպաններ ժամանեցին Հռոմ, բերելով տուս հազար ոսկուց բաղկացած պսակ, բացահայտելու համար այն համակրանքը, որը թագավորը տաժում է հռոմայեցիների հանդեպ, ինչպես նաև հայտնելու, որ իրենց պատճառով նա մերժել է ամուսնության և բարեկամության (դաշինք) Դեմետրիոսի հետ: Քանի որ այլ նույնը վկայեցին նաև Կրակքոսը⁴³³ և նրա դեսպանության անդամները, ապա սենատը, գովելով Արիարաթեսին, ընդունեց պսակը և միաժամանակ նրան ուղարկեց իրենց ամենաբարձր համարված ընծաները:

32 Օրոփեոնեսը⁴³⁴ իր եղբայր Արիարաթեսին իշխանությունից հեռացնելով, բոլորովին ջանադիր շեղավ պետությունը յսելամիտ կառավարելու և իր բարեգործություններով ու մարդասիրությամբ ժողովրդի համակրանքը շահելու համար: Նա շատերին ոչնչացնելով դրամ կուտակեց և հիսուն տաղանդ ընծայով սլսակեց Տիմոթևոսին, իսկ յոթանասուն տաղանդով՝ Դեմետրիոս թագավորին, բացի այն վեց հարյուր տաղանդից...⁴³⁵ իոստացավ նաև մնացած չորս հարյուր (տաղանդը) ևս շնորհել մեկ այլ ժամանակ: Տեսնելով, որ կապսլադովկիացիները դժգոհություն են արտահայտում, սկսեց բոլորից հարկեր հավաքել և ամենահայտնի մարդկանց ունեցվածքը հարքունի բռնագրավել: Երբ նա արդեն մեծ քանակությամբ դրամ կուտակեց, չորս հարյուր տաղանդ թողեց Պրիեննե⁴³⁶ քաղաքում, հաշվի առնելով բախտի անակնկալները, այդ գումարը Պրիեննեի քաղաքացիները հետագայում վերադարձրին:

32a Թագավոր Եվմենեսը⁴³⁷ դժգոհ Արիարաթեսի գահընկեցությունից, ինչպես նաև Դեմետրիոսին դիմակայելու իր սեփական շահերից մղված, իր մոտ հրավիրեց ինչ-որ պատանու, որն իր դեմքի գեղեցկությամբ և տարիքով չափազանց նման էր Անտիոքոսին⁴³⁸, Սիրիայի վերջին թագավորին: Այդ պատանին ապրում

էր Սմյունայում և հաստատապես իրեն հայտարարում էր թագա-
 վոր Անտիոքոսի⁴³⁹ որդի. շատերը նմանության պատճառով հա-
 վատում էին նրան: Իրք սա ժամանեց Պերգամոն, թագավորը
 նրան զարդարեց դիադեմայով և արքայական հանդերձանքին ար-
 ժանի ամեն ինչով և ուղարկեց Ջենոփանես անունով ինչ-որ կիլի-
 կեցու մոտ: Մա ինչ-որ պատճառով խռովել էր Դեմետրիոսից, իսկ
 գլխար հանգամանքներում ստացել էր այդ ժամանակ թագավո-
 րած Եվմենեսի օժանդակութիւնը, այդ պատճառով էլ թշնամա-
 քար էր տրամադրված Դեմետրիոսի դեմ, իսկ բարեկամաբար՝
 Եվմենեսի հանդեպ: (Ջենոփանեսը) պատանուն ընդունելով կիլի-
 կիայի ինչ-որ վայրում, լուրեր տարածեց Սիրիայում, թե պատա-
 նին իր ժամանակ պետք է վերագրավի իր հայրենի իշխանութիւ-
 նը⁴⁴⁰: Մինչդեռ Սիրիայի բնակչութիւնը նախորդ թագավորների
 օրոք մեղմ վերաբերմունքի արժանացած լինելով, այժմ ծանր էր
 տանում Դեմետրիոսի խստութիւնը և նրա կտրուկ հրամանները:
 Ուստի և նրանք փոփոխության համամիտ լինելով, ոգևորված էին
 հուսալի ակնկալութիւններով, թե շատ շուտով իշխանութիւնը
 պետք է անցնի մեկ ուրիշ, առավել մեղմաբարո թագավորի:

32b Օրոփեոնեսի (ուղարկած) ղեսպանները Հոռմից վերադառնա-
 լիս, նավարկության ընթացքում դավադրութիւն նյութեցին Արիա-
 րաթեսի դեմ, բայց Կորկյուրայի⁴⁴¹ մոտ իրենք վերացվեցին Արիա-
 րաթեսի ձեռքով: Նույնպես նաև Կորնթոսում Օրոփեոնեսի դրածո-
 ները նրա դեմ դավ նյութեցին, բայց այս անգամ ևս նա անակրն-
 կալ իուսափելով փրկվեց և հասավ Պերգամոն, Ատտալոսի մոտ:

34 Քանի որ իրադրութիւնը հետզհետե ավելի էր վատթարանում,
 Օրոփեոնեսը ջանում էր վճարել ոռճիկները, վախենալով, որ նրանք
 ասլստամբութիւն կբարձրացնեն: Բայց այդ ժամանակ դրամի
 կարիք զգալով, ստիպված եղավ սրբաւղղծել Ջեսի տաճարը, որը
 բարձրացած է այսպես կոչված Արիադների լեռան վրա և հին ժա-
 մանակներից ի վեր հայտարարված էր անձեռնմխելի⁴⁴²: Օրոփեո-
 նեսը կողոպտեց այն և վճարեց իր ունեցած բոլոր պարտքերը:

Գիրք 33

18 Արսակես⁴⁴³ արքան մեղմ և մարդասեր քաղաքականութիւն
 կիրառելով, կարողուցեց ձեռք բերել րարիքների ինքնաբեր մի հո-
 սանք և իր թագավորութիւնը առավել ևս ընդարձակեց: Քանզի

նա իր զորքը հասցնելով մինչև Հնդկաստան, առանց պատերազմի տիրացավ նախկինում Պորոսի տիրապետության տակ գտնված երկրին: Իր թագավորական իշխանության այսպիսի հզորացումից հետո իսկ նա շձգտեց շքեղության, ոչ իսկ հպարտության, ինչպես սովոր են անել իշխանավորներից շատերը, այլ հպատակների հանդեպ ցուցաբերեց բարեսրտություն, իսկ գիմադրողների հանդեպ՝ արիություն: Ընդհանրապես նա բազում ազգերի վրա իր իշխանությունը տարածելով, պարթևներին ծանոթացրեց նրանցից յուրաքանչյուրի լավագույն սովորույթների հետ:

Գիրք 34/35

15 Երբ գարնան գաղջից ձյունը հալվում էր և բերքը, երկար սառնամանիքից հետո, սկսում էր ծլել ու աճել, իսկ մարդիկ նորից նետվում էին աշխատանքի, Արսակեսը⁴⁴⁴, ցանկանալով փորձել իր թշնամիներին, խաղաղության բանակցությունների համառ դեսպաններ ուղարկեց: Անտիոքոսը⁴⁴⁵ պատասխանեց նրան, թե կհամաձայնվի հաշտություն կնքել, եթե (Արսակեսը) գերությունից ազատ արձակելով ետ հանձնի իր եղբայր Դեմետրիոսին, եթե ետ գիջի իր գրաված իշխանությունները և եթե տիրելով միայն իր հայրենի իշխանությանը, դառնա իրեն հարկասու: Իսկ Արսակեսը, վիրավորված այդ պատասխանի ծանրությունից, արշավեց նրա դեմ:

16 Անտիոքոսի ընկերները խնդրում էին նրան մարտի շրոնվել բազմապատիկ պարթևների հետ. քանզի նրանք կարող էին ասլաստանել մերձակա լեռնային վայրերը և այդպիսով, դժվարամատույց վայրերի պաշտպանության տակ, ի շիք կդարձնեին հեծելազորի սպառնալիքը: Անտիոքոսը, սակայն, ոչ մի կեռպ չանսաց նրանց խոսքերին, հայտարարելով, թե ամոթալի է, երբ հաղթողները վախենում են նախկինում պարտվածների հանգգնություններից: Այսպիսով, իր զորքերին կռվի կոչելով, նա արիաբար ընդունեց բարբարոսների գրոհը:

17,1 Երբ Անտիոքում՝ հայտնի դարձավ Անտիոքոսի մահը, ոչ միայն քաղաքն ընդհանուր սուղի մատնվեց, այլև ամեն մի առանձին տուն լցվեց սխրությանմբ ու ողորով: Կանանց կականը առավել ևս բորբոքում էր վիշտը: Քանի որ կործանվել էր երեսուն բյուր մարդ, ներառյալ նաև նրանց, որոնք ռազմաշարքերից դուրս մաս-

նակցել էին արշավանքին, ապա հնարավոր չէր գտնել դժբախտությունից անմասն մնացած որևէ տուն: Քանզի ոմանք իրենց կորած եղբայրներին էին ողբում, ուրիշներ՝ ամուսիններին, մյուսներն (իրենց կորած) որդիներին, իսկ որբացած շատ աղջիկներ ու տղաներ իրենց լքվածությունն էին ողբում, մինչև որ ժամանակը, վշտի լավագույն բժիշկը, բթացրեց նրանց սգի սրությունը:

2 Աթենայոսը, Անտիոքոսի զորասլետը, որը բաղում չարիք էր գործել (գորքերին) օթևաններում⁴⁴⁶ տեղավորելիս, առաջինը փախուստի դիմեց, լքելով Անտիոքոսին և իրեն արժանի կործանումը գտավ: Քանզի երբ նա (փախուստի ժամանակ) հասավ իր ձեռքից տուժած ինչ-որ գյուղեր, ոչ ոք նրան չընդունեց իր տունը, ոչ իսկ սնունդ ստամազրեց նրան, ուստի և նա թափառելով երկրով մեկ, սովամահ եղավ:

19 Արսակեսը, պարթևների արքան, թշնամաբար էր տրամադրված սելևկիացիների⁴⁴⁷ հանդեպ ու չէր մոռանում այն չարիքն ու պատիժները, որոնց նրանք ենթարկել էին իր Ենիոս գորապետին: Երբ սելևկիացիները դեսպանություն ուղարկեցին Արսակեսի մոտ, լանդրելով նրան ներումն շնորհել կատարված դեպքերի համար և սպասում էին նրա պատասխանին, արքան դեսպաններին առաջնորդեց անտեղ, ուր գետնին նստած էր աչքերից զրկված կույր Պիտթիդեսը և հրամայեց հաղորդել սելևկիացիներին, որ նրանց բոլորին նույն վիճակն է սպասում: Սրանք, ահաբեկվելով սպասվող դժվարությունների շափաղանցության առաջ, մոռացան անցած հին դժբախտությունները:

21 Եվհեմերոսը, պարթևների արքան⁴⁴⁸, ծնունդով հյուրկանացի էր և իր դաժանությամբ գերադանցում էր մեր հիշատակած բոլոր բռնակալներին. այնպես, որ պատժի ոչ մի միջոց չմնաց, որ նա չկիրառեր: Ամենատարբեր պատրվակներով նա բաբելոնացիներից շատերին, իրենց համայն ընտանիքներով հանդերձ, ստրկացնելով ուղարկեց Մեդիա, կարդադրելով վաճառել նրանց իբրև ոաղմական ավար: Միաժամանակ նա հրկիդեց Բաբելոնի ադորան⁴⁴⁹ և տաճարներից մի քանիսը և ավերեց քաղաքի մեծագույն մասը:

Գիրք 37

2,11 Երբ արդեն հոռմայեցիները հետզհետե ավելի ու ավելի էին գերադանցում⁴⁵⁰, իսալացիները դեսպաններ ուղարկեցին Պոնտո-

սի Թագավոր Միթրիդատեսին⁴⁵¹, որն այդ ժամանակ հզոր բանակ և ռազմական միջոցներ ուներ, խնդրելով նրան իր զորքերը առաջնորդել Իտալիա, Հռոմի դեմ. քանզի իրենց միանալու դեպքում հռոմեական ուժը հեշտությամբ կտապալվեր: Իսկ Միթրիդատեսը պատասխանեց, թե իր զորքերը կառաջնորդի Իտալիա այն բանից հետո, երբ Ասիան հպատակեցնի իրեն, քանզի այդ ժամանակ նա զբաղված էր դրանով: Այս պատճառով էլ ապստամբները ամբողջապես հուսահատվեցին...

26 Միթրիդատեսը Լևսիայում հաղթելով հռոմեական հրամանատարութեանը և շատերին գերի վերցնելուց հետո, բոլորին պատվեց զգեստներով և (ճանապարհի) պարենով ու ետ ուղարկեց իրենց հայրենի երկրները: Երբ Միթրիդատեսի այդ մարդասեր վերաբերմունքի համբավը տարածվեց, քաղաքները համակվեցին արքային միանալու ձգտումով, դեսպանություններ հայտնվեցին բոլոր քաղաքներից, բերելով իրենց հետ (քաղաքային համայնքների) որոշումներ, որոնցով հրավիրում էին նրան իրենց երկրները և կոչում նրան աստված և փրկիչ: Այնուհետև թագավորը որտեղ էլ որ հայտնվում էր, քաղաքները նրան դիմավորում էին ամբողջ համայնքով, դուրս գալով ընդառաջ սլայծառ ու մեծագույն ուրախությամբ:

27 Մինչ Միթրիդատեսը Լևսիայում գերիշխանություն էր ձեռք բերում և քաղաքներն անարգել ապստամբում էին հռոմայեցիներից, Լեսբոսի⁴⁵² բնակիչները որոշեցին ոչ միայն ինքյանք հանձնել թագավորին, այլև Ակվիլիոսին⁴⁵³, որը ապաստանել էր Միտիլենեում⁴⁵⁴ և այնտեղ բժշկական խնամք էր ընդունում, հանձնել Միթրիդատեսին: Ուստի ընտրելով իրենց արիությամբ առավել աչքի ընկած երիտասարդներին, ուղարկեցին նրա իջևանը: Սրանք խմբովին վրա տալով, Ակվիլիոսին ձերբակալեցին: ու կապկույեցին, նրան թագավորին ուղարկելու համար իբրև լավագույն և հաճելի պարգև:

22b Միթրիդատեսը քիչ էր մնացել դավադրության հետևանքով ընկներ կյուզիկոսցիների⁴⁵⁵ ձեռքը: Սրանց հետ ստորգետնյա խորամատային գործողություններին մասնակցում էր նաև հռոմեացի մի հարյուրապետ⁴⁵⁶, որը հանձն առավ այն իրագործելու: Ու քանի որ երկուստեք ևս հաճախակի մարտի էին բռնվում և վեճեր ունենում, ապա նա, հաճախակի վրույցների միջոցով, կարողացավ ծանոթություն հաստատել թագավորի մարդկանց հետ: Պատահեց, որ նա մի անգամ խորամատներում պահակության համար մենակ մնաց ու երբ աշխատանքներին հսկող արքայական վերակացու-

ներից մեկը մոտեցավ նրան, (քաղաքը) մատնելու առաջարկությամբ, նա ձեացրեց, թե իբր համաձայնվում է: Երբ առաջարկությունը հաղորդեցին արքային, վերջինս, ցանկանալով տիրանալ քաղաքին, պարզենք առաջարկեց այդ մարդուն և ժամանակ որոշեց, որում պետք է պայմանավորվեն այդ մասին: Երբ հոռմայեցին նրա խոստումների համար երաշխիք պահանջեց, արքան նրա մոտ ուղարկեց մարդկանց, որոնք պետք է իր անունից պայմանավորվեն: Բայց սա ասաց, թե ինքը ոչ մի կերպ չի համաձայնվի, եթե երդումներ չստանա անձամբ իր իսկ արքայի կողմից: Իսկ թագավորն իր արքայական պատվին արժանի չէր համարում իջնել խրամատները: Բայց քանի որ մատնիչը ուրիշ ոչ մի կերպ չէր համաձայնվում, իսկ քաղաքին տիրանալու խնդիրը շատ էր կարևոր, Բիթրիդատեսը ստիպված եղավ համաձայնվել նրա պահանջներին: Եվ թագավորը կրնկներ նրա ձեռքը, եթե արքայի ընկերներից մեկը ճշտորեն չգուշակեր դավաճանությունը և չպատրաստեր համապատասխան մի հարմարանք, որը կարող էր արագ բացվել ու փակվել: Երբ այդ մեքենան տեղադրեցին ստորգետնյա խրամատում և Միթրիդատեսն իր ընկերների հետ իջավ այնտեղ, հարյուրապետը իր հետ ունենալով նրանց, ովքեր պետք է հարձակվեն թագավորի վրա, ...մերկացրեց սուսերը և նետվեց դեպի արքան: Սա հասցրեց դուռը փակել և խուսափեց վտանգից:

Գլուխ XL

4 Պոմպեոսը⁴⁵⁷ Ասիայում կատարած իր բոլոր գործերը (տախտակի վրա) շարադրելով, այն թողեց իբրև ընծայաբերում. այդ շարադրանքի պատճենը հետևյալն է. «Պոմպեոս Մեծ, Գնայոսի որդի, հմպերատոր, որը օյկումեննեի ծովափը և օվկիանոսում գտնվող բոլոր կղզիները ծովահեններից ազատեց, որը մի ժամանակ փրկեց Արիոբարդանեսի⁴⁵⁸ թագավորությանը պաշարումից, ինչպես նաև Գալատիան և նրանից վերև գտնվող երկրներն ու պրովինցիաները՝ Ասիան և Բիթլունիան, որը պաշտպանեց Պափլագոնիան ու Պոնտոսը, Հայաստանը և Աքայան⁴⁵⁹, ինչպես նաև իբերիան, Կոլխիսը, Միջագետքը, Սոփենեն, Գորդյունենեն, որը հպատակեցրեց Մեդիայի թագավոր Դարեհին, իբերների թագավոր Արտուլեսին⁴⁶⁰, հրեաների թագավոր Արիստոբուլոսին, նաբատեյան արաբների թագավոր Արետասին և Կիլիկիայի սահմանակից Միրիան, Հրեաստանը, Արաբիան, Կյուրենայակ պրովինցիան, արաբացիներին, յոդյուզներին, սուաններին, հենիոքներին և Կոլխի-

սի և Մայրտիս լճի միջև ընկած ծովափին բնակվող Մյուս ցեղերին, նրանց թագավորներով հանդերձ, թվով ինը և Պոնտական ու Կարմիր ծովերի միջև բնակվող բոլոր ազդերին, որը (Հռոմի) գերիշխանութւան սահմանները հասցրեց մինչև երկրի ծայրերը և հոռոմայեցիների եկամուտները պահպանեց և երբեմն էլ դրանք ավելացրեց, որը թշնամիներից գրավելով աստվածների արձանները և պատկերքը և այլ զարդարանքներ, նվիրաբերեց աստվածուհուն⁴⁵՝ մեկ բյուր և երկու հազար վաթսույն տաղանդ ոսկի և երեք հարյուր լոթ տաղանդ արծաթ»:

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Բնագրում՝ Σεσσωσις, Հերոդոտոսի (II, 102 և հաջ.), Ստրաբոնի (XV, c. 687) և այլ հույն հեղինակների մոտ՝ Σεσωσις (Սեսովստրիս)։ Սա եգիպտոսի Ռամ-բես II փարավոնն է (մ. թ. ա. 1283—1217 թթ.), հայտնի իր նվաճումներով ու ուղիղ-կան արշավանքներով, ինչպես նաև խիթերի դեմ մղած պատերազմներով։

2 Չչիոթել այժմյան Կարմիր ծովի հետ։ Այդ անվան տակ անտիկ հելլեններն, ընդ-հանրապես, հասկանում էին Հնդկաց օվկիանոսը, իսկ Դիոդորոսը, մասնավորապես, Պարսից ծոցը։

3 Հնում հույները Տանայիս կոչում էին այժմյան Դուն գետը։

4 Այստեղ, ըստ երևույթին, Դիոդորոսը նկատի ունի պատմահայր Հերոդոտոսի համապատասխան վկայությունը (Herod., II, 103—105)։ Հերոդոտոսը Սեսուստրի-սին չչիոթել է Եգիպտոսի փարավոն Պսամետիքոս 1-ի հետ, որը պատերազմել է սկյութ-ների և թրակիացիների դեմ Պաղեստինում, բայց երբեք չի արշավել սկյութների երկի-րը։ Այս նույն չչիոթը նկատելի է նաև Դիոդորոսի մոտ։

5 Հնում Մայոտիս լիճ էր կոչվում այժմյան Ազովի ծովը։

6 Նինոսը թագավորել է Ասորեստանում մ. թ. ա. XIII դարի առաջին կեսին և, իր կենդ՝ Շամիրամի հետ, համարվում է Ասորեստանի հզորության հիմնադիրը։ Այդ իսկ պատ-ճառով Նինոսի և Շամիրամի կերպարները հնագույն ավանդության մտացել են առաս-տակալի մասին։

7 Դիոդորոսը նկատի ունի Աքեմենյան թագավորներին։

8 Այստեղ խոսքը Սելևկյան թագավորների մասին է, որոնք Ալեքսանդր Մակեդոնա-ցու հետնորդներն էին։

9 Մեծնիա ասելով, անշուշտ, Դիոդորոսը, ինչպես նաև այս անցքերի համար նրան աղբյուր ծառայած Կտեսիաս Կնիդացին, նկատի ունի Հայկական լեռնաշխարհը իբրև աշխարհագրական հասկացություն, որտեղ դեռևս նկարագրվող դեպքերի ժամանակ չկար Արմենիա պետական կազմավորումը։ Հայկական լեռնաշխարհում դեռևս կազմա-վորված չէր նույնիսկ Ուրարտական պետությունը։ Այնհայտ է, որ տվյալ դեպքում Դիոդո-րոսը արդեն բոլորին հայտնի հետազայի անվանումը վերագրում է մ. թ. ա. XIII դարին։ Սա, ինչպես էլ, ընդունված եղանակ է Դիոդորոսի համար, քանի որ նա, խոսելով այլ երկրնե-րի, ինչպես, օրինակ, նույն պարբերության մեջ Բաբելոնիայի մասին, երկրի բնակիչ-ներին անվանում է բաբելոնացիներ, թեպետև, ինչպես ինքն իսկ նշում է, «այս ժամա-նակ այժմյան Բաբելոնը դեռևս չէր կառուցվել»։ Ինչպես տեսնում ենք, այս դեպքում ևս Դիոդորոսը պատմական հետազա շրջանի անվանումով բնորոշում է իր համար առավել տնհայտ հին շրջանը։

10 Սատրապ (σατράπης), հին պրակ. xšatrapa բառի հունականացրած ձևն է և նշանակում է՝ «տեղապահ, աշխարհապահ»։ Ինչպես տեսնում ենք, Դիոդորոսը այստեղ ևս, հնագույն պատմական դեպքերը նկարագրելիս, օգտագործում է ավելի ուշ, ասենք՝ արքայազանների և նրանցից հետո ընկած ժամանակաշրջանին բնորոշ հասկացություններ։

11 Բակտրիա, այժմ՝ բալխ. երկիր՝ Պարսկաստանի ձայր հյուսիսում, Ոքսոս գետի միջին, քարերը հովտում։

12 Կտեսիաս Կնիդացու մասին տե՛ս սույն հատորի առաջաբանը։

13 Այս նշված երկրները, բացի Եգիպտոսից, Փյունիկեից և Կոլլե Սիրիայից, գտնվել են Փոքր Ասիա թերակղզում:

14 Թվարկված այս ցեղերը ընակվելիս են եղել իրանական սարահարթում, դրանց նկատմամբ Հուկական լեռնաշխարհի հարավարևելյան մատույցներից սկսած մինչև Սողոմոն, Բակտրիանն և Արաքսիա ընկած հսկայական տարածությունը:

15 Հայ մատենագրության մեջ համապատասխանաբար՝ Պարսր և Շոշաստան:

16 Օլկումեննե (οὐκὸμηνένε) կոչում էին հույները հին ժամանակ իրենց հայտնի բնակեցված աշխարհամասը Բուռացի նշանակում է՝ «բնակեցված»:

17 Խոսքն այստեղ նինոս թագավորի կառուցած նինվե կամ նինոս քաղաքի մասին է: Ինչպես տեսնում ենք, Դիոդորոսը, ավելի ճիշտ՝ նրա աղբյուրը, որը հավանաբար Կտեսիասն է, սխալմամբ այն տեղադրում է Եփրատ գետի վրա, մինչդեռ, իրականում, նինվե քաղաքը գտնվել է Տիգրիս գետի արևելյան ափին (Strabo, XVI, 1, 3):

18 Ասպարեզ (բնագրում՝ ἄσπασος — ստադիոն). հունական տարբեր քաղաքներում ասպարեզն ունեցել է տարբեր երկարություն, ամենատարածվածը՝ ատտիկյան ասպարեզը, հավասար էր 177 մետրի:

19 Սեմիրամիսը հուկական ավանգուծյան Շամիրամն է: Հին աշխարհում նրա անվան շուրջ ստեղծվել են բազմաթիվ և բազմադան առաստիվներ, որոնց մի ուսույն մասն էլ կապված է հայկական միջավայրի հետ. հիշենք Խորենացու մոտ տղահույանված՝ Շամիրամի մասին պատմող հատվածները: Դիոդորոսի այս և հետագա հատվածներում նկարագրված շատ գեպրեք ևս, հավանաբար, պիտի վերագրել առասպելական Շամիրամին: Այսուհանդերձ, ուսումնասիրողներն իրավացի կերպով գտնում են, որ Շամիրամի առասպելական կերպարի հիմքում ընկած է պատմական Սամմու-րամատի անձնավորությունը, որը թագավորության թագուհի-ինամական էր իր որդու՝ Աղղար-Նիրարի I-ի (811—782 թթ.) գահակալության սկզբնական տարիներին: Հետագա դարերի ընթացքում նրա անվան հետ են կապվել սեմական Ասորգատես (Ասուարուես, Ղշտար) — Էրեկեսո դիցուհուն բնորոշ շատ գծեր:

20 Նույն դիցուհու պաշտամունքի մասին գրում է նաև Քսենոփոնը, որի համաձայն, սակայն, դիցուհու տաճարը գտնվում էր ոչ թե Ասկալոնում, այլ Բոմբիկե քաղաքում, Խալոս գետի մոտ, Եփրատից ոչ հեռու. նա գրում է. «...Կյուրոսն առաջ ընթացավ... մինև Խալոս գետը, մի պլեթրոն լայնքով, հարուստ խոշոր և ագնիվ ձկներով, որոնց սիրիսցիները աստվածներ են համարում և թույլ չեն տալիս ոչնչացնել դրանց, ինչպես և աղավնիններին» (Xenoph., Anabasis, I, IV, 9):

21 Բնագրում՝ ἄσπασος (հյուպարոս) — բառացի նշանակում է՝ ստորագրյալ սլաշտոնյա, տեղապահ, փոխանորդ:

22 Հյուսպատես (Ἰσπασατος) և Հյուդասպես (Ἰνδασπασος) անունները ավելի շուտ իրանական են, միչդեռ, թվում է, թե Սեմիրամիսի որդիները պետք է կրեին սեմական անուններ. այս անհամապատասխանության պատճառը, հավանաբար, Դիոդորոսի օգտագործած աղբյուրն է (այս դեպքում՝ Կտեսիասը), որը շարադրված է եղել իրանական միջավայրում՝ Աքեմենյանների արքունիքում:

23 Այս հատվածում Դիոդորոսի հաղորդումը, հավանաբար, ճիշտ չէ, բանի որ մանգաղակիր մարտակառքերը երևան են եկել շատ ավելի ուշ, քան սովյալ հատվածում նկարագրված դեպքերը: Քսենոփոնը (շուրջ 435—356 թթ.) իր «Կյուրոսպեդիա» երկում (դիրք 6, գլ. 1. 30) պատմում է, թե սովորական ուղղմակառքերը առաջին անգամ Կյուրոս Մեծի ժամանակ (մ. թ. ա. VI դ. կես) վերածվեցին մանգաղակիր սղոմակառքերի, յուրաքանչյուր կողմից ուղղմակառքի առանցքի վրա ամրացնելով մոտ մեկ մետր երկարությամբ երկաթե մանգաղներ:

24 Դարեհ Ա. Վշտասպյանը (521—486 թթ.) համարվում է Արևմտյան Պարսկաստանի գործառնության հիմնադիրը:

25 Դարեհ Ա-ի այս արշավանքը սկյութների դեմ տեղի է ունեցել մ. թ. ա. 512 թ., այն մասնամասն նկարագրել է Հերոդոտոսը (VI, 37), որի պատմելով Դարեհի գործի թիվը հասնում էր 700 հազարի, ներառյալ նաև նավատորմը:

26 Քսերքսեսը, Դարեհի որդին, թագավորել է 486—465 թթ., նրա արշավանքը Հուսաստան տեղի է ունեցել մ. թ. ա. 480 թ., որի ժամանակ մղվեց հայտնի Խերմոպիլեի հակասամարտը:

27 Դիոնիսիոս Սիրակուսացին մ. թ. ա. V դ. վերջին IV դ. սկզբին իշխում էր Սիրակուսա բաղադրում և երկար պայքար է մղել կարթագենացիների դեմ:

28 Բնագրում՝ τετραρεις և πενταρεις. սրանք խոշոր ռազմանավեր էին, որոնց թիակները սեղադրված էին համապատասխանաբար՝ 4 և 5 շարքով, սրանց յուրաքանչյուրի անձնակազմը, ըստ Պոլիբիոսի (մ. թ. ա. II դար) բաղկացած էր շուրջ 300 թիավարներից և 120 սավազներից:

29 Այստեղ խոսքը Պունիկյան 2-րդ պատերազմին (218—201 թթ.) նախորդած տարիների մասին է:

30 Անդացիների և պարսիկների ղգեստը որոշակիորեն տարբերվում էր հին հունաստանից. այն բաղկացած էր գլխի համար կնգուղից, երկառ մի վերնազգեստից, որի թևերն իջնում էին ձեռքերի վրա, տաբատից և երկարաճիտ կոշիկներից: Ստրաբոնը (XI, 13,9) ընդհանրապես այդ զգեստի մասին հույների տաժած արհամարհանքն է արտահայտում, դսելով, որ պարսիկները «հանդուրժում են հագնել կանացի զգեստներ, փոխանակ մերկ կամ թեթև հագնված շրջելու և իրենց սամբոջ մարմինը յղատում են զգեստներով»:

31 Խորենացու (II, 64) մոտ՝ նինասու Գրաբարյան այսպիսի գրությունը և արտառանուխյունը առավել ճիշտ է համապատասխան հունարեն բնագրի Νεῦαζ (Ինյուսս) ձևին:

32 Ելևտարբոսը եղել է Ալեքսանդր Մակեդոնացու ուղեկիցներից և գրել է նրա ազնվական արշավանքների պատմությունը, որը, դժբախտաբար, չի հասել մեզ:

33 Ինիվեի պարիսպների երկարությունը Հերոդոտոսը (I, 178) հաշվում է 480 ասպարեզ, իսկ Ստրաբոնի մոտ (XIV, 1,5) այն 385 ասպարեզ է. հավանաբար այս վերջին թիվը ձեռագրական աղավաղում է և պետք է այն նույնպես ուղղել 365:

34 Գրկաչափ (բնագրում՝ οργυρία) — երկարության չափ, որը հավասար էր ասպարեզի հարյուրերորդ մասին՝ շուրջ 1,85 մ.:

35 Կանգուն (πεγγυς) — հունական երկարության չափ, որը հավասար էր 1¼ դրկաչափի՝ 24 մատնաչափի: Կար նաև «արքունի կանգուն», որը հավասար էր 27 մատնաչափի: Հերոդոտոսի պատմելով (I, 178) այս պարիսպների բարձրությունը եղել է 200 արքունի կանգուն, որը հավասար է շուրջ 100 մետրի:

36 Պլեթրոն — երկարության չափ, որը հավասար է 30,8 մետրի:

37 Ակնհայտ է Դիոդորոսի այս նկարագրության նմանությունը Խորենացու մատյանում պահպանված վան քաղաքի շինարարության նկարագրությանը, որը պատմահայրը լիարժանի նույնպես վերագրում է Շամիրամին: Ահա Խորենացու այդ հատվածը.

«Աստի իմն ակնկառոյց լեալ այրասիրտն այն և կաթոտն Շամիրամ, հրաման տայ իրարուց և երկու հագար արանց անարուեստից գործաւորաց յասորեստանեաց և յայլոց իշխեցելոց, և վեց հազար իւրոյ ընտրելոց յամենայն արուեստաւոր գործաւորագ փայտի և քարի, պղնձոյ և երկաթոյ, որք ամենեքին կատարեալք իցեն ի յարուեստագիտութեան, ածել անխափան ի փափագեալ տեղին. և գործն հաւասար հրամանին առնոյր գկատարումն»:

ն, վաղվաղակի ածեալ լինէին բազմութիւն խառնիճաղանճ գործաւորացն, և բաղմարունս- տից հանձարեղաց իմասանոցն: Եւ հրամայէ նախ դամբարտակ դետոյն ասլառածիւք և մեծամեծ վիմօք շինել, կրով և աւազով մաժուցեսալս, անբաւ լայնութեամբ և բարձրու- թեամբ. որ կաւ հաստատուն, որպէս ասեն, մինչև ցայսօր ժամանակի: ...Եւ թէ զփորն ատնուլ զէպ ումեք լինիցի, և ոչ իբր պարսատիկաց քար մի արժանաւոր ի շինուածոյ ամբար- տակին խլել որ դօրեսցէ: Եւ ի հեղուածս արունստին՝ որ զքարամբ՝ հայեցեալ ուրուք, որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցողացն երևեցուցանէ կարծիս: Եւ այսպէս ընդ բա- զում ասպարէզս անցուցեալ զամբարակն, հասուցանէ ի նկատեալ տեղի քաղաքին:

Անդ հրամայէ զամբոխն ի բաղում դասս որոշել. և ի վերայ իւրաքանչիւրոց դասուց պրն- տիրս ի ճարտարացն վարդապետս կարգել. և սյնպէս ի սաստիկ ճգնութեան պահեալ, լետ սակաւ ամաց կատարէ զհրաշալին ամբադունիւք պարսպօք. հանդերձ դրամբք սլղնձա- կերտիւք: Շինէ և ընտիր ընտիրս և բաղումս ի մէջ քաղաքին ապարանս ի սլէս պէս քարանց և ի գունից զարդարեալս, կրկնայարկս և եռայարկս... և գեղեցիկ գունիւք և ընդարձակ իո- ղոցիւք պկողմանս քաղաքին որոշելով: Շինէ զչընաղս ոմանս և զզարմանալոյ արժանա- տրս ըստ պիտոյից ի միջոցաց քաղաքին լուալիս: Եւ զմասն ինչ դետոյն ընդ մէջ քա- ղաքին բաշիւեալ գնացուցանէ ի պէտս ամենայն պիտոյից, և յարրուցմունս՝ բուրաս- տանաց և ծաղկոցաց. և զայն զեզերք ծովակին յաջմէ և յահեկէ, քաղաքին և բովան- դակ շրջակային յարրուցումն: Եւ զամենայն արևելեան և զհիւսիսային և զհարաւային կողմունս՝ քաղաքին զարդարէ դաստակերտօք, և սաղարթիւք ծառոց վարսաւողաց՝ զա- նազանեալք ի սլաուղս և ի տերևս. և բաղումս բազմարբերս և ի նմա տնկեաց ովիտս: Եւ ամենայնիւ հոյակապ և հոշակաւոր զպարսպեալն յօրինէր. և անթիւ բաղմութիւն մարդկան ի ներքս բնակեցուցանէ» (Մ. Խորենացի, Ա, ԺԶ):

38 Բարեկամ (հուն. *φίλος* — բառացի նշանակում է՝ սիրելի, բարեկամ): Անտիկ աշխարհում, հատկապես հելլենիստական տերութիւններում այդպես էին կոչվում Բա- գավորի անմիջական բարեկամները, մերձավորները, որոնց միջից էլ թագավորն, ընդ- հանրապես, ընտրում և նշանակում էր իր բարձրաստիճան պաշտոնյաներին:

39 Սա գրավոր աղբյուրներում վկայված առաջին քարակերտ կամուրջն է. դրա մնացորդները հայտնաբերվել են հնագետների կողմից: Նաբութադրեղարը իր թողած արձանագրութիւններից մեկում այդ կամրջի կառուցումը վերադրում է իր հորը՝ Նաբուպալասարին (տե՛ս R. Koldwey, The Excavations at Babylon (english trans- lation) pp. 197—199): Այս կարգը առանձնապես ընդունված էր Սելևկյանների ար- քունիքում, բայց նկատելի է նաև հելլենիստական Պերդամոնում, Պոնտոսում և այլն: Այստեղ ևս *φίλος*-ները զբաղեցրել են բարձրագույն պետական պաշտոններ: Այսպես, Ստրաբոնը գրում է. «Միհրդատ Եվպատորը այնքան հղորացավ, որ (կոլ- խիդա) երկիրը նրան անցավ: Որպես երկրի հյուսիսարքոս և կառավարիչ՝ մշտապես ուղարկվում էր ընկերներից (*τῶν φίλων*) մեկը: Սրանցից էր և Մասիսենեսը, մորս հորեղբայրը» (Strabo, XI 2, 18): Այս մասին ան՝ս նաև II, IV. Կրկնաշարյան, Բեղե- խութիւնների առաջացումը Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես» 1966, № 4, էջ 257-262:

40 Ոտնաչափ (հուն. *πῶς* — ոտք) — հավասար 1, 30,8 սանտիմետրի:

41 Բարելոնացիների Բել-Մարդուկ աստվածը հելլեններին հայտնի էր Զես-Բելոս անունով: Որ հայկական Բելն է, Աստվածաշնչի Բաադր:

42 Այս նկարագրութիւնը հիշեցնում է E-temen-ana-ki-ի մեծ դիդորոստրու Հե- բրոդոտոսի պատմելով (1, 181), այն ունեցել է ութ հարկ: Այս կառույցի բարձրութիւնը եղել է մոտ 300 ոտնաչափ և ժամանակի ընթացքում դրա շուրջը հյուսվել է աշտա-

րակաշինության մասին Աստվածաշնչում (գիրք Մենդոց, ԺԱ) հիշատակված գրույց-
առասույնիւր (տե՛ս The Cambridge Ancient History, vol. I, էջ 803 և նետ.),

43 Զևս-հունական դիցարանության գերագույն աստվածը, օլիմպոսյան աստված-
ների հայրը, համապատասխանում է հայկական դիցարանի Արամադդին: Հերա—Չևսի
յուրը՝ Կրոնոսից ու Հոնայից և նրա կինը: Հոնա-աստվածների մեծ մայրը, որը ծնել
էր Զևսին, Պոսեյդոնին, Հադեսին, Դեմետերին, Հերային: Փոքր Ասիայում նա նույ-
նացված էր Կյուրեյեին:

44 Բնագրում՝ $\tau\omicron\ \rho\lambda\gamma\sigma\sigma$ — րառացի նշանակում է՝ երկարութիւնը. մենք թարգ-
մանեցինք՝ բարձրութիւնը, քանի որ այստեղ իրոք խոսքը ոչ թէ արձանի երկարու-
թյան մասին է, այլ բարձրության:

45 Տաղանդը ($\tau\alpha\lambda\alpha\gamma\tau\omicron\nu$) սկզբնապես եղել է ծանրության չափի միավոր: Ատտիկ-
յան տաղանդը կշռել է 26,2 կգ: Հետագայում տաղանդը դարձել է նաև դրամի խոշոր
միավոր, որը հավասար էր 60 արծաթ մինայի: Բաբելոնյան տաղանդը հավասար էր 200
մինայի, այսինքն՝ ատտիկյան տաղանդի նկատմամբ գտնվում էր 5,3 հարաբերության
մեջ և կշռել է մոտ 44 կգ:

46 Բնագրում $\gamma\alpha\rho\gamma\gamma\sigma\iota\sigma\upsilon$ — կարթեսիոն: Այդ տիպի բաժակների իրանը ավելի նեղ
էր, որը լայնանում էր և՛ դեպի բերանի մասը, և՛ դեպի հատակը:

47 Կրատեր (րառացի նշանակում է՝ խառնարան) կոչում էին հելլեններն այն եր-
կունկանի: անոթը, որի մեջ գինին խառնում էին ջրով: Հելլենների մոտ նման անոթները
չատ էին գործածական, քանի որ նրանք գինին անխառն խմելու սովորութիւն չեն ունե-
ցել: Դիոդորոսի այս հատվածում նշված հսկա կրատերները, հավանաբար, ծառայում
էին որպէս կուակի խառնարաններ և օգտագործվել են սլաշտամունքային նպատակներով:

48 Բարելոնը մ. թ. ա. 539 թ. նվաճել է Կյուրոս Մեծը (559—529 թթ.):

49 Բնագրում՝ $\Sigma\upsilon\rho\sigma\upsilon$ — սիրիացու. պետք է, հավանաբար, լինի Ἀσσυρίοισι —
ասորեստանցու: Դիոդորոսը այս դեպքում շփոթել է Սիրիան և Ասսիրիան:

50 Այս կինը, իրականում, ունեցել է ոչ թե սլարսկական, այլ մարսկան ժագու
(տե՛ս Josephi Flavii Contra Apionem, I, 141):

51 Այս «կախյալ պարտեզները» իրականում կառուցել է բաբելոնյան թագավոր
Ներուկադրեգարը (605—562 թթ.) իր կնոջ՝ մարական իշխանուհի Ամյուհիայի համար:
Այս մասին հաղորդում է նաև հրեա մատենագիր Հովսեպոս Փլավիոսը (Jos. Flavii
Contra Apionem, I, 141):

52 Պարետակենն անունով հայտնի են երկու մարդ. առաջինը գտնվում էր Մեդիայի և
Պարսկաստանի սահմանում, իսկ երկրորդը՝ Օքսոս և Յաքսարտես գետերի միջև, ներառ-
նելով հակտրիան և Սոգդիանեն: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է առաջինին:

53 2500 ասպարեզ = շուրջ 450 կմ: Եթե Դիոդորոսի հաղորդումը ճիշտ է, ապա այն
այնտեղ է վերաբերի Եփրատ և Տիգրիս գետերի վերին հոսանքների միջև եղած տարածու-
թյանը:

54 Տես՝ ծանոթ. 2:

55 Այստեղ Դիոդորոսը, մեր կարծիքով, նկատի ունի Հայկական Տավրոսի լեռները:

56 Բնագրում՝ $\sigma\upsilon\lambda\iota\sigma\chi\omicron\sigma$ — օրելիսկ:

57 Հերոդոտոսի (I, 179) պատմելով, այդ վայրը գտնվում էր Բարելոնից 8 օրվա
ճանապարհի հեռավորության վրա, Եփրատի վտակ Իս գետի ակունքի մոտ:

58 1971 թ. հին Արտաշատի պեղումներից բավական քանակությամբ հայտնաբեր-
վեց այդպիսի շորացրած կուպր:

59 Ուս, ինչքան մեղ հայտնի է, այժմյան Բեհիստունի վաղագույն իշատակութիւնն
է մատենագրության մեջ: Դիոդորոսի մոտ պահպանվել է այդ անվան հնագույն ձևը՝

Բագիստան, հունարենին հատուկ «*οὐ* - ոն» վերջավորությամբ Այն քառացի նշանակում է «աստվածների վայր»: Բեհիստունի ժայռ հայտնի է Աքեմենյան Դարեհ I Վշտասայանի՝ 516 թ. այնտեղ թողած եռալեզվյան (հին պարսկերեն, հլամերեն, բաբելերեն) սեպագիր մեծ արձանագրությամբ, որը ոչ միայն ունի խոշոր պատմական նշանակություն, այլև դարձել է բանալի սեպագիր արձանագրությունների վերծանման համար:

60 Ինչպես տեսնում ենք, Դիոդորոսը սեպագրերը համարում է սիրիական տառեր (պետք է լինի՝ «անսիրիական»): Հետաքրքիր է նշել, որ Մովսես Խորենացին ևս (Ա, ԵԶ) վաճում պահպանված ուրարտական սեպագիր արձանագրությունները սխալմամբ վերագրում է նույնպես Շամիրամին: Խորենացին, հավանաբար, իր պատմության այս հատվածները շարադրելիս օգտվել է Դիոդորոսից:

61 Դիոդորոսի այս սխալ հաղորդման աղբյուրը համարվում է հույն մատենագիր Կտեսիաս Կնիդացին: Զարմանալի է, որ վերջինս, թեպետև եղել էր պարսից Արտաքսերքսես II թագավորի (մ. թ. ա. 404—358 թթ.) բժիշկը և ապուել էր նրա արքունիքում, չգիտի ոչ միայն Բեհիստունի արձանագրության բովանդակությունը, այլև այն, որ դրա հեղինակը իրեն հովանավորող Արտաքսերքսես թագավորի նախնին է՝ Դարեհ I Վրշտասայանը:

62 Եկրատանա (այժմ՝ Համաղան) — Մեդական հնագույն քաղաք, որը մ. թ. ա. VII դարում եղել է Դելյոկեսի գլխավորությամբ կաղմակերպված մեդական ցեղերի ուժեղ միավորման քաղաքական կենտրոնը: Հետադաշում դառնում է պարսկական տերության վարչական և առևտրական խոշոր կենտրոններից մեկը:

63 Սա Զագրոսյան լեռնաշղթան է:

64 Պերսիս կոչվում է Պարսկաստանի կենտրոնական մասը:

65 Այս նկարագրություններով Դիոդորոսը պարզապես փորձում է բացատրել այդ վայրերում պահպանված բազմաթիվ հողաթմբերի գոյության փաստը, որոնք, իրականում, հնագույն բնակավայրերի ավերակներն են:

66 Ամմոնի պաշտամունքը տարածված էր Եգիպտոսում և Լիբիայում: Հետադաշում հունական մշակույթի ազդեցությամբ Ամմոնը նույնացվել է հունական Զևսին: Ամմոնի տաճարը հին աշխարհում հայտնի սլատգամասուն էր, որտեղ այցելում էին հին աշխարհի թագավորները պատգամ ստանալու համար: Նույն նպատակով այդ պատգամատունն այցելել է նաև Ալեքսանդր Մակեդոնացին:

67 Խորենացին (Ա, Ժէ) այսպես է պատմում Նինվասի ձեռքով Շամիրամի սպանության մասին. «Իսկ երբ Զրադաշտը տիկնոջ դեմ մի սխալանք գործեց, և մեջտեղը հակառակություն րնկավ, Շամիրամը նրա դեմ պատերազմ սկսեց, որովհետև մարացին մտադրվել էր ամենքի վրա բռնանալ: Երբ պատերազմը սաստկացավ, Շամիրամը փախուստ տվեց Զրադաշտից և դիմեց Հայաստան: Այստեղ Նինվասը վրեժխնդրության համար ժամանակ գտնելով՝ մորն սպանում է և ինքը թագավորում է Ասորեստանի Նինվեի վրա»:

68 Այս Աթենայոսի մասին մեզ ուրիշ ոչինչ հայտնի չէ:

69 Հետերա հին Հունաստանում կոչում էին անառակ կանանց:

70 Խորենացու մոտ (Ա, ԺԹ) Նինվասի և Սարգանասլալոսի միջև թվարկված են 32 թագավորներ:

71 Սարգանասլալոսը հայտնի է նաև Կոնոսկոնկոլեոս (Խորենացու մոտ (Ա, ԺԹ))՝ «Սարգանասլալոս, որ կոչվում էր Քոնոս Կոնկողեոս» անունով: Սա պատմական Ասորբանի-պալ թագավորն է, Աստվածաշնչի Ասենափառը:

72 Դիոդորոսի այս վկայությունը Սարգանասլալոսի՝ ասորեստանյան վերջին թագավորի՝ ցոփ և այլանդակ կենցաղի մասին, չի հաստատվում դրավոր աղբյուրներով, ոչ իսկ իր՝ Դիոդորոսի հետագա պատմածներով: Սսորեստանի վերջին թագավոր Սին-

շար-իշրունը ասորեստանյան հզոր գահակալների արժանի հետևորդն էր, որը մեծ եռանդով պայքարեց կործանվող տերությունը պահանջելու համար (The Cambridge Ancient History, v. III, 128 և 296),

73 Նորենացու մոտ (Ա, ԻԱ) Արրակեսի անունը հանդիպում է Վարրակես ձևով, որի դաշնակիցը պատմահոր մոտ ոչ թև քաղղեացի Բելեսյուսն է, այլ Պարույր Սկայորդին:

74 Այս և հաջորդ հատվածներում Դիոդորոսի պատմածների մեջ պատմական ճշմարտության կորիզն այն է, որ Նինվե քաղաքն ընկավ մեղական թաղավոր Կիաքսարի և Քաղղեաստանի թաղավոր Նաբոպալասարի միացյալ հարվածների հետևանքով:

75 Պափլազոնիա—մարզ Փոքր Ասիայի հյուսիսային ափին, Պոնտոսից արևելք, այժմյան Սինոպի շրջանում:

76 Բնադրում՝ χελωνη χωστρίς : Հունարեն χελωνη նշանակում է «կրիա» (լատիներեն՝ testudo): Սա շարժական հզոր տախտակամած էր, որի ծածկույթի տակ պաշտպանված սակրավորները մոտենում էին պարիսպներին և սկսում իրենց քանդման աշխատանքները:

77 Բնագրում՝ χροῖος (րառացի նշանակում է «խոյ»)։ Սա ևս հարվածող մեքենա էր, բաղկացած հսկա գերանից, որի հարվածող կողմի վրա ամրացված էր խոյի գլխի նման մետաղե հզոր դանդված:

78 Պարիսպներ քանդելու այդ պաշարողական մեքենաները սկսել են կիրառվել Նիլոնիստական և հռոմեական ժամանակներում:

79 Այս դեպքերը նորենացին (Ա, ԻԱ) պատմում է հետևյալ կերպ. «Թողնով զոչ կարևորագույնսն ի բանից, ասասցուք որ ինչ հարկատրն է: Վերջին սոցա՝ որք առ ասորեստանեաց թագաւորութեամբն, և որք ի Շամիրամայ կամ թէ ի Նինոսէ, զմերն յսեմ Պարույր առ Սարղանապալլու: Սա ոչ փոքր ինչ օգնականութիւն գտեալ ի Վարուկայ Մարէ, բառնալով զթագաւորութիւնն ի Սարղանապալլայ:

...Քանդի Վարբակէս գաւառու մեղացի, ի փոքուէ կողմանց ծաղաց գաւառին ամքագունի, խորամանկագոյն ի կենցաղավարութեան և ի մարտն երեսաւոր, ծանուցեալ շանմարդի բարս և զհեշտասէր թուլամտութիւն յուլութեան թուլոյն Կոնկողիոոյ, խտացուցանէ բարուցն և ձեռացն առատութեամբ ի քաջացն և ի պիտանեաց արանց բարեկամս. որով և աշխարհակալութիւնն Ասորեստանի առ այնու ժամանակու վարիւր յայտնապէս մեծաւ հաստատութեամբ: Յինքն և զբաշն մեր նախարար յանդուցանէ ռՊարույր, թագաւորութեան ձև և շուք խոստանալով նմա. և բազմամբոխս յարի արանց, և որ ի տէգ նիզակի և յաղեղն և ի սուսեր աջողածեոք: Եւ այսպէս զթագաւորութիւնն ի Սարղանապալլայ՝ յինքն առեալ, տիրէ Ասորեստանի և Նինուէի: Բայց այլ վերակացուս կարգեալ Ասորեստանի, փոխէ զթագաւորութիւնն ի Մարս»:

80 Բանն այն է, որ Բելեսյուսը, իմանալով, որ Սարղանապալոսի պալատում պատրաստված խարույկի մոխիրների մեջ պետք է մնացած լինեին ամբողջ ոսկին և արծաթը, որոշում է այդ մոխիրը վերցնելով տիրանալ Սարղանապալոսի ամբողջ հարստության:

81 Հույները հնում «քաղղեացիներ» (Χαλδαῖοι) անվան տակ հաճախ հասկացել են Բարելոնի քրմերին, որոնք զբաղվում էին նաև մողղութեամբ և աստղաբանութեամբ: Տվյալ դեպքում Դիոդորոսը ևս այդ բառն օգտագործում է այս նույն իմաստով:

82 Խոսքը Սատուրն մոլորակի մասին է:

83 Այստեղ արևն ընդունված է որպես աստվածություն:

84 Համապատասխանաբար՝ Մարս, Վեներա, Մերկուրիոս, Յուսիտեր մոլորակները:

85 Բնագրում՝ Ζωδιακα — գոգիակ:

86 Խոսքը պարսից Աբեմենյան վերջին թագավոր՝ Դարեհ III Կողմանոսի (մ. թ. ա. 336—320 թթ.) մասին է:

87 Սա Մեծն Ալեքսանդր Մակեդոնացին է (մ. թ. ա. 336—323 թթ.):

88 Խոսքը Անտիգոնոս Միականու մասին է, որը Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո տիրեց նրա նվաճած երկրների մի մասի վրա: Սպանվեց մ. թ. ա. 301 թ. Մակեդոնացու հետևորդների միջև վերջինիս նվաճած ընդարձակածավալ տիրույթները բաժանելու համար մղված Իպսոսի ճակատամարտում:

89 Մակեդոնացու զորավարներից Սելևկոս I Նիկատորը (մ. թ. ա. 312—281 թթ.) նշել է Սելևկյան թագավորության հիմնադիրը:

90 Բնագրում՝ Συστημα (սիստեմա), բառացի նշանակում է՝ դրուճյուն, միավորում, իրավակարգ, կազմակերպություն: Մենք այն թարգմանեցինք «դաս» բառով, քանի որ այստեղ խոսքը իրոք վերաբերում է քրմական դասին:

91 Խոսքը Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների մասին է:

92 Հուլյն խոշորագույն պատմիչ Հերոդոտոսը (485—425 թթ.) առաջինն է, որը հեղինակել է պատմական երկ բառիս իսկական առումով, ուստի և իրավացի կերպով նրան սրվել է «պատմահայր» անունը: Նրա 9 գրքից բաղկացած մատյանը, որն ամբողջությամբ հասել է մեզ, հիմնականում բովանդակում է հելլենական աշխարհի և բարբարոսների հնագույն շրջանի 240 տարվա պատմությունը: Այն սկսվում է հունական ավանդություններից, արագ անցնում է կիդիական թագավորության պատմության, նկարագրում է Կրեսոսի գահակալությունը, սրա պարտությունը Կյուրոս Մեծից: Այնուհետև անցնում է պարսկական տերության, սրա կողմից նվաճված երկրների ու ժողովուրդների պատմությանը, նկարագրում է Պարսկաստանի բարձրագույն ու հզորացումը: Հերոդոտոսի նպատակն է եղել ոչ միայն նկարագրել կողմերի միջև տեղի ունեցած պատերազմները, այլև շարադրել նրանց ամբողջ պատմությունը: Ուստի և նույն աշխատությունը սկյութների, եգիպտացիների, թրակիացիների, փոյուգիացիների, ասորեստանցիների, պարսիկների, և այլ ժողովուրդների մասին ազգագրական և այլ տեղեկությունների անհատնում շտեմարան է: Հերոդոտոսի երկը անգնահատելի նշանակություն ունի հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանն ուսումնասիրելու համար: Այն առաջին պատմական երկն է, որտեղ հավաստի տեղեկություններ կան Հայաստանի և արմենների մասին: Այսպես, նրա պատմության մեջ տեղեկություններ կան Աթեմենյանների գերիշխանության տակ գտնվող Արմենիա սատրապության մասին, Արմենիայից դանձոնող հարկերի մասին (III, 93), պարսկական բանակի կազմում արմենական զորքի, նրա հանդերձանքի մասին (VII, 73), ինչպես նաև Հայկական լեոնսոլիարհի մյուս երկրների հետ ունեցած առևտրական կապերի մասին (I, 194) և այլն:

93 Աբեմենյան թագավոր Քսերքսեսը (մ. թ. ա. 486—464 թթ.), Դարեհ Վշտասպյանի որդին և հաջորդը, հայտնի է 480 թ. Հունաստանի վրա կատարած իր արշավանքով, որի ժամանակ Քերմոպիլի ճակատամարտում և Սալամիսի նավամարտում հելլենները, կովելով հանուն ազատության, իրենց փառքով պսակեցին:

94 Իրականության մեջ Հերոդոտոսի մոտ (I, 95) տարիների զումարը ոչ թե 500 է, այլ 520:

95 Խոսքն այստեղ Փոքր Ասիայի առափնյա հունական պոլիսների՝ քաղաք-պոլիտոնիսների և Մերձավոր արևելքում առաջացած տաճարային քաղաքների մասին է:

որոնք մինչև պարսկական տիրապետությունը ինքնավար միավորներ էին և այդպիսին մնացին հետագայում ևս:

96 Մեր կարծիքով, այստեղ Դիոդորոսը Կյուարսարեսին է վերագրում մարական խազավորության հիմնադիր Դեյոկեսի գործունեությունը (հմմտ. Հերոդոտոս, գիրք I, գլ. 96):

97 Սա հորենացու միջոցով մեղ հասած հայկական ավանդության Աժդահակն է (Մ. Խորենացի, Ա, իդ-իթ):

98 Խոսքը պարսկական տերության հիմնադիր Կյուրոս Մեծի (մ. թ. ա. 550—524 թթ.) մասին է: Սրա փառաբանմանն է նվիրված Քսենոփոն Աթենացու «Կյուրոպեդիա» հայտնի երկը:

99 Հին Հունաստանում թվագրումը կատարում էին օլիմպիադաներով, որոնք տեղի էին ունենում շորս տարին մեկ: Առաջին օլիմպիական խաղերը տեղի են ունեցել մ. թ. ա. 776 թ.: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրող տարեթիվը կլինի՝ $776 - (16 \times 4) + 1 = 776 - 65 = 711$:

100 Արեմենյան թաղավոր Արտաքսերքսես II Մենմոնը գահակալել է մ. թ. ա. 405—359 թթ.:

101 Սա պարսկական գահի հավակնորդ Կյուրոս Կրտսերն է, որի անհաջող արշավանքի առիթով ստեղծվել է մեզ համար բացառիկ նշանակություն ունեցող համաշխարհային պատմագրության գլուխգործոցներից մեկը՝ Քսենոփոն Աթենացու «Անաբասիս»-ը, որի հայերեն ամբողջական թարգմանությունը լույս տեսավ վերջերս (Քսենոփոն, Անաբասիս, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970):

102 Բնագրում՝ Ἰνδία — Ղիփթերա, բառացի նշանակում է՝ մորթի, գրելու մագաղաթ. ունեցել է նաև «ղիրք, տարեգրություն» փոխաբերական իմաստը (հմմտ. պրսկ. «դաֆթար»):

103 Խորենացու մոտ (Ա. իր) մարաց (այն է՝ մեղական) թագավորների շարքը ունի նույն պատկերը՝ Վարրակես, Մոզակիս, Սոսարմոս, Առտիկաս. չեն հիշատակվում վերջին երկուսը՝ Արքիանոսը և Արտայոսը:

104 Կադուսիները ռազմաշունչ ցեղեր էին, որոնք բնակվում էին Ուրմիա լճի և Կասպից ծովի հարավարևմտյան ափերի միջև:

105 Սակերը Միջին Ասիայի տափաստաններում բնակվող վաչկատուն սկյութական ցեղեր էին:

106 Տե՛ս ծանոթ. 3 և 5:

107 Նման մի դրույց հաղորդում է նաև Հերոդոտոսը (IV, 10), որի համաձայն, սակայն, Ջևսի փոխարեն իբրև հայր հանդես է գալիս Հերակլեսը, իսկ որդիներն են՝ Ագաթյուրսեսը, Գելոնոսը և Սկյութեսը:

108 Այստեղ, հավանաբար, Դիոդորոսը նկատի ունի Սև ծովի հարավային ափը:

109 Այս արշավանքի ժամանակ, որը տեղի է ունեցել մ. թ. ա. 630—625 թթ. միջև. սկյութները անցնելով Ուրարտուի և Սիրիայի վրայով, ավերեցին Պաղեստինը, բայց համաձայն Հերոդոտոսի (I, 105), նրանք Յգիպտոսից ետ քշվեցին Պսամմիտիքոս փարավոնի կողմից: Այդ ավերվածությունների նկարագրությունը բերված է առավածաչնչում (Երևմիա, Դ-Ե):

110 Այստեղ նկատի է առնված Հնդկաց օվկիանոսը:

111 Սրանք հայ մատենագրության մեջ հիշատակված մասքութներն են:

112 Ստրաբոնը (XII, 3,9) սրանց անվանում է «ուպիտակ սիրիացիներ» (Λευκοί)

113 Աղբյուրներում մի շարք տարբերակներ կան Կյուրոսի մահվան հանդամանքներին մասին, բայց և բոլոր դեպքերում նշվում է, որ նա սպանվել է իր տերութայն արևելյան սահմաններում պատերազմ մղելիս (հմմտ. Herod, I, 214): Բացառություն է կադմոս՝ Էսենոփոնի «Կյուրոպեդիան», որը ավելի շուտ բարոյախոսական պատմավեպ է, քան զուտ պատմական երկ. այստեղ Կյուրոսը խաղաղ պայմաններում, շրջապատված իր սիրելիներով, Երանության մեջ մահանալուց առաջ զոհեր է մատուցում աստվածներին, իր աստական Երկար ճառով հրաժեշտ է տալիս իր որդիներին և բարեկամներին և փիլիսոփայական վերացականությամբ խոսում հոգու անմահության մասին:

114 Ամազոնները առասպելական կին ռազմիկներ ևն, որոնց մասին հելլենները հյուսիս էն բացմաթիվ զրույցներ: Այդ զրույցները պահպանվել են անտիկ հեղինակների մոտ (Հոմերոս, Պինդարոս, Հեսիոս, Հերոդոտոս, Ստրաբոն): Ամազոնների հիմնական հայրենիքը համարվում էր Կովկասը: Հունական արվեստում (խեցեղենի վրա կատարյալ սկարներում, որմնանկարներում) ամազոնները պատկերված են հատուկ ձևի տակարներով, որոնց նմանները հայտնաբերվում են Փոքր Ասիայում և Անդրկովկասում կատարվող հնագիտական պեղումների միջոցով:

115 Թերմոդոնտ — գետ Փոքր Ասիայում, թափվում է Սև ծով:

116 Արես — Հելլենների դիցարանում ռազմի սաստվածը:

117 Ամազոն (^{Ἄμαζών}) բառը, սովորաբար, ստուգաբանվում է հետևյալ կերպով: Ա = ժիտական մասնիկ, ^{μαζο} ^{μαζο} (նշ. է՝ ստինք) բառի հնագույն ձևը, ուստի ^{Ἄμαζών} նշ. է՝ անստինք:

118 Արտեմիսը հունական դիցարանում որսի աստվածն էր: Ճավրիսյան Արտեմիսի պաշտամունքը հայտնի է հույն ողբերգակ Եվրիպիդեսի «Իֆիգենիան Տավրիսում» ողբերգությունից:

119 Խոսքը Մեծ Մայր աստվածուհի Հոեա-Կյուբելեի մասին է, որի պաշտամունքը լայնորեն տարածված էր Փոքր Ասիայում:

120 Անտիկ հեղինակների վկայությամբ, Ղրիմում և Սև ծովի կովկասյան ծովափին բնակվող բարբարոսները հնագույն ժամանակներում սովորություն են ունեցել իրենց մոտ ափ ընկած օտար նավաբեկյալներին ղոհաբերել իրենց աստվածներին:

121 Հելիոս = Արև. այս անունով պաշտվում էր արևի աստվածությունը:

122 Հնում Կոլխիս էր կոչվում այժմյան արևմտյան Վրաստանը:

123 Տավրիկ — Ղրիմի թերակղզու հնագույն անվանումը:

124 Եթե հավատանք հոմեոսի հեղինակ Սվիդիոսին (Metamorphosi, VII, 408 և հաջ.), բույսը, որից ստացվում էր ակոնիտոն կոչված թույնը, առաջացել էր այն լորձուներից, որ կաթկթել էր դժոխքի պահակ Կերբերոս շան բերանից, երբ Հերակլեսը նրան դուրս էր բերել դժոխքից: Ուստի և Լեթադրոսն են, որ այդ բույսը աճել է Սև ծովի ափին գտնվող Հերակլեսա քաղաքի մոտ, որտեղ հելլենները տեղադրում էին դժոխքի՝ Հադեսի մուտքը:

125 Կիրկեն «Ողիսականի» գործող անձերից է («Ողիսական», Երգ X):

126 Հստ Հոմերոսի (Ողիսական, X, 135—574), էա կոչվող այդ կղզում Կիրկեն զբաղվում էր կախարդությամբ և իր մոտ ափ դուրս եկած նավորդներին փոխակերպում խողբի:

127 Այս հրվանդանը գտնվում էր Լատիումի ամենահարավային մասում:

128 Արգոնավորդներ կոչվեցին Յասոնն ու նրա ուղեկիցներն այն պատճառով, որ ոսկեգեղմ մորթին հափշտակելու համար դեպի Կոլխիս նավեցին Արգո նավով:

129 Յասոն — Թեսսալացի դյուցազն, որը գլխավորել է Արգոնավորդների արշավանքը: Որա ուղեկիցներից մեկի՝ Արմենոսի անվան հետ է կապված հայերի թեսսա-

լուկան ծագման մասին առասպել-վարկածը, որը պահպանվել է Ստրաբոնի մոտ (Strabo, XI, 4, 6 և XI, 14, 12):

130 Աթամասը, հունական ավանդության համաձայն, հողմերի աստված էոլուսի որդին էր և բեովտական Օրգոմենոս քաղաքի տիրակալը:

131 Հելլեսպոնտոս բառացի նշանակում է Հելլեի պոնտոս, Հելլեի ծով:

132 Այստիղ խոսքը Սև ծովի մասին է:

133 Այս դեպքում Դիոդորոսը նկատի ունի *Ἰαπυγία* (տավրոս) բառի երկու իմաստը. մի դեպքում այն նշանակում է Տավրիկեի բնակիչ, մյուս դեպքում՝ ցուլ:

134 *Δρακόν* (դրակոն) — նշանակում է թևավոր վիշապ. Դրակոն եղել է նաև ոսկե-պեղծ մորթին պահպանող անձնավորության անունը:

135 *Κριός* (կրիոս) բառացի նշանակում է խոյ:

136 Հերակլեսը հելլեն դիցաբանության ամենանշանավոր հերոսն է, որի շուրջը հյուսվել են բազմաթիվ առասպելներ, որոնցից ամենատարածվածի էությունը հետևյալն է. Հերակլեսը մոլեղնության պահին սպանում է իր որդիներին. իր ծանր մեղքը քաղելու համար աստվածները կարգադրում են նրան գնալ Եվրիսթեսի մոտ և ծառայել նրան 12 տարի: Այդ տարիները ընթացքում Հերակլեսը իր տիրոջ հրամանով կատարում է իր հայտնի 12 սիրազորությունները, որից հետո աստվածները նրան շնորհում են ազատություն:

137 Էգեսը, հերոս Թեսեսի հայրը, եղել է Աթենքի առասպելական թագավորներից մեկը:

138 Դիոդորոսի աշխատության այս 9-րդ գրքից մեզ հասել են սոսկ հատվածներ, որոնք հանդիպում են ավելի ուշ հեղինակների երկերում, այդ իսկ պատճառով Դիոդորոսը այս հատորումները որոշ չափով կրում են կցկտուր բնույթ:

139 Բնագրում *Κροίσος* — Կրոյսոս: Մենք վերցրել ենք հորենացու միջոցով ավանդարար մեզ հասած այդ անվան Կրեսոս ձևը: Թագավորել է մ. թ. ա. 560—546 թթ.:

140 Լյուդիա երկիրը գտնվում էր Փոքր Ասիայի արևմտյան հատվածում, Մյուսիայից հարավ. Կարիայից հյուսիս: Արեմենյան տիրապետության ժամանակ դարձավ սատրապուխյուն, որի կենտրոնն էր Սարդես հայտնի քաղաքը:

141 Նոլոնը (մ. թ. ա. շուրջ 638—559 թթ.) եղել է արեմենյան պոետ, օրենսդիր և պետական խոշոր դործիչ, որի անվան հետ են կապված Աթենքում անցկացված մի շարք քաղաքական ուղիղություններ: Սոլոնը համարվել է հին աշխարհի «չորս իմաստուններից» մեկը:

142 Սա Կյուրոս Մեծն է (մ. թ. ա. 559—529 թթ.): Կրեսոսի գերեզմանը տեղի է ունեցել մ. թ. ա. 546 թ.:

143 Այս մասին առավել մանրամասն պատմում է Հերոդոտոսը (I, 53 և հաջ.):

144 Հին հույները որևէ մեծ դոքս ձեռնարկելուց առաջ սովորաբար դիմում էին պատգամախոսին, աստվածների կամքն իմանալու:

145 Ալյուս — գետ Փոքր Ասիայում (այժմ՝ Կրզըլ ըրմաք):

146 Հերմոս — գետ Լյուդիայի և Մյուսիայի միջև:

147 Դելփյան սրբավայրը, որը գտնվում էր Հելլադայի Փոկիս գավառում, Պաոնաս լեռան ստորոտին, նվիրված էր Ապոլլոնին և հայտնի էր իր պատգամատունով, որն ամենանշանավորներից մեկն էր:

148 Հստ ավանդության, Կրեսոսի որդին ի ծնե համը է եղել:

149 Պյուսիա բնակավայրը անունով կոչվում էին Դելփյան տաճարում գուշակություններ անող քրմուհիները:

150 Հերոդոտոսի հաղորդած ավանդության համաձայն (Herod., I, 85), Կրեսոսի համը որդու լեզուն բացվել է Սարդես քաղաքի գրավման օրը, երբ քաղաք ներխուժում էր:

պարսիկներից մեկը, Կրեսոսին հալածելիս, պատրաստվում էր մերկացրած սուրբ իջեցնել թագավորի զլխին: Հորը սպառնացող մահվան վտանգին ի տես, տղայի լեղուն բացվում է և նա հանկարծ աղաղակում է. «Անօրեն, այդ ո՞ւմ ես սպանում. շե՛ս տեսնում, որ առաջգ Կրեսոս թագավորն է»: Այս գրույցը գեղարվեստական ընդհանրացման մեծ ուժով օգտագործել է հայ նոր գրականության հիմնադիր Խ. Արովյանը իր «Վերը Հայաստանի» վեպի հայտնի առաջարանում:

151 Կրեսոսի և Կյուրոսի մասին Դիոդորոսի այս հաղորդումները բացառիկ նշանակություն ունեն խորենացու «Պատմության» Բ գրքի ԺԴ գլխում սլատմածները ճիշտ բնութագրում են մեկնարանելու համար: Այս հարցին մենք կանդրադառնանք առանձին: Այստեղ բաժարարվում ենք համեմատության համար մեջբերելով պատմահոր համապատասխան հատվածները.

«Ջայս ասացեալ պատմագրացն Յունաց, ոչ միոյ կամ հրկուց, այլ բազմոց. ընդ որ տարակուսեալ մեր՝ բազում խոյղ խնդրոյ արսւրաք: Քանզի լսէաք ի պատմութեանց՝ ոմանց՝ Կիրոսի սպանեալ գԿրեսոս, և բարձեալ զթագաւորութիւնն լիւղացւոց: ...Բայց քանզի բազումք են, որ ասեն գԿիրոս մերոյ Արտաշիսի կալեալ, և ոճով իմն պատմեն, ես հաւանիմ: Քանզի ասէ Պոլիկրատէս այսպէս. Վեհ ինձ Արտաշէս տարթե քան զՄակեդոնացին Աղեքսանդր, զի կալով յիրում աշխարհին, իշխեաց Թերայ և Բարսիլոնի. և շև ընդ Ալիսոս գետ անցեալ, զլիւղականն սատակեաց զգորս, և կալաւ զԿրեսոս. և առաջ քան իՄասիայ հասանելն՝ յԱտտիկէ զղեկին բարոզեցաւ Աւաղ բախտին. միայն թէ ի տէրութեանն և ոչ ի փախստեան էր վախճանեալ:

Հանգոյն դմին ասէ Եւագորոս. Փոքր Աղեքսասդրի և Դարեհի սլատերագմ առ Արտաշիսին բաղդատեալ. քանզի նոցայն ոչ փոշոյն մաքուր երևէր լոյս տուրնջեանն, այլ սա ծածկեաց նհտաձգութեամբն և ստուերացսլց զարնգակն, ձեռադործ գիշիր դմբօրէի: արարեալ: Ոչ փախստեայ համբաւարեր լիւղացւոցն թողեալ, այլ և զթագաւորն շոցին գԿրեսոս ի տապակի հրամայեաց կացուցանել: ...Ընդ այս ոչ հայարտացեալ, այլ արսուստեաց սսելով. Աւաղ փառացս անցաւորի:

Դրէ և Սկամադրոս այսպէս. Խարկանք լինէին հայարսացելոցն լիւղացւոց. Կրեսեալ Պիլթիայ հարցուկն պատասխանելով. Կրեսոս անցեալ ընդ Ալիսոս գետ թակեսցէ զիշխանութիւնս: Զոր նորա զօտարաց կարծեցեալ, զինքն բակէ. քանզի կալեալ զնա պարթևին Արտաշիսի, հրամայեաց հանել յերկաթեղէն տապակ: Իսկ Կրեսոսի յիշեալ գբան Սողոմի աթենացւոյ, ասե յիւր լեղուն. Ով Սողոն, գեղեցիկ բարբառեցար, ոչ երանել գբարեբախտութիւն մարդոյ մինչև ցվախճան: Եւ լուեալ որ մերձն կային, սլատմեցին Արտաշիսի, և թէ զնոր ոմն աստուած կարդայ Կրեսոս: Եւ զթացեալ Արտաշիսի, հրամայեաց սծել. և հարցեալ և ուսեալ, թէ զինչ է որ աղագակեացն, հրամայեաց ներել դտանջանսն:

Գրէ և Փգեգոնիոս. Ամենայն թագաւորաց հուժկու եղեալ պարթևն Արտաշէս, և ոչ միայն զլիւղացիս վանեալ և զԿրեսոս կապեալ, այլ յԵլէսպոնտոս և ի Թրակլ գտարեբացն փոխեաց զրնութիւն. ծովագնաց ընդ երկիր բերեալ լինէր, և ընդ ծով հետևակելով. թետաղացւոցն սպառնալով, և համբան հիացուցանէր զհելլենականն: Կործանեաց զկակեղեմոնացիս, փախոյց զփոկէացիս, զովկրացիք անձնատուրք եղեն, Բիտացիք մասն են ի կազմածոյ նորա. առ հասարակ նմա Ելլադայ մատուցանէր զահն: Յետ փոքու ժամանակի աղէտք անցին զամենեքումբք, ոչ այնքան թշուառացաւ Կիրոս ընդ Մասքութս պատերազմելով, ոչ այսպիսի կիրս կրեաց Դարեհ ի սկիւթացւոցն սլահուստ. և ոչ Կամբիսէս յեթովպացիս. փոքր և Քսերքսին յԵլլադայ զօրու երթալն, թողլով նոցա զդանձաւ և զխորանս, միայն կենդանի փախուցեալ մագապուր: Այլ սա մեծամեծ յաղթականօք սլանծուցեալ, ի յիրոց զօրացն խողխողի:

Արտես հաւատարմութեան արժանի համարիմ դալսոսիկ պատմութիւնս. և զայն
Պրեսոս. ու առ Կիրոսի և կամ Նեքտաներան պատմին. կամ սուտ լեալ և կամ միով
անուամբ քաղում թագաւորաց վարեալ. որոյէս յոլովից է սովորութիւնս»:

152 Օյկումենն (Տե՛ս ծանոթ. 16):

153 Խոսքը մ. թ. ա. 465 թ. մասին է:

154 Արեւմտեան Արտաքսերքսես I-ը, Քսերքսեսի որդին, գահակալել է մ. թ. ա.
165—425 թթ.:

155 Սա Արեւմտեան Դարեհ II Նոթոսն է (423—404 թթ.):

156 Խոսքը Պելուպոնեսոսյան պատերազմից (431—404 թթ.) հետո Սպարտայի և
Աթենքի միջև կնքված հաշտութեան մասին է:

157 Արտաքսերքսես II Մնեմոն (404—358 թթ.):

158 Դիոդորոսի դրքի այս ամբողջ ընդարձակ հատվածը (գլուխներ 19—31) համա-
նոտ պատմում է այն նույն ղեկավարի մասին, ինչ Քսենոփոն Աթենացու «Անարասիս»
հայտնի երկը: Բայց քանի որ Դիոդորոսն օգտվել է նաև այլ աղբյուրներից, ապա նրա
հաղորդած որոշ տեղեկություններ ոչ միայն լրացնում են Քսենոփոնին, այլև երբեմն
տարրերով են նրա պատմածներից:

159 Դա մ. թ. ա. 401 թ. էր:

160 Սա Կյուրոս Կրտսերն է (տե՛ս ծանոթ. 101):

161 Այս սատրապությունները կազմված էին Փոքր Ասիայի Միջերկրածովային ափա-
մերձ մարզերից:

162 Խոսքը պելուպոնեսոսյան պատերազմի մասին է:

163 Նավարրոս (Ναυαρροσ) նշանակում է ծովակալ, նավապետ: Այսպես էր
կոչվում Սառատայում և Աթենքում նավատորմի պետը:

164 Տ-հերս— հին հունական ռազմանալ: Եոնք շարքի վրա տեղավորված թիակ-
ներով: (Հմմտ. ծանոթ. 28):

165 Էփեսոս— հին հունական խոշոր քաղաք և նավահանգիստ՝ Փոքր Ասիայի հո-
նիական ծովափին:

166 Քսենոփոնի «Անարասիս» երկում (I, IV, 2) Խեյրիսոփոսի բերած զինվորների
թիվը յույց է տրված 700:

167 Այս վարձկանները կազմված էին հույն ծանրազենների՝ հոպլիտներից: Սրանց
արշավանքն ու վերադարձը, որը հայ ավանդութեան մեջ հայտնի է որպես «Նահանջ
Ելուրուն», կազմում է «Անարասիս» բովանդակությունը: Հայերեն թարգմանությունը
տե՛ս Քսենոփոն. Անարասիս, Երևան, 1970, թարգմ. Ս. Մ. Կրկյաշարյանի:

168 Եարդես— ամրացված քաղաք արևմտյան Փոքր Ասիայում, որը հանդիսանում
էր պարսկական սատրապի նստավայրը:

169 Մեմփիս— հնագույն քաղաք Եգիպտոսում: Քսենոփոնը ևս (Անարասիս, I, IV,
2) Տամոսի համարում է Եգիպտացի:

170 Պիսիդիա— լեռնային երկիր Փոքր Ասիայի հարավային մասում, Լիկիայի և
Իլիկիայի միջև: Պիսիդիացիները, իրենց հարևան լիկոնացիների, իսավրիացիների և
պամփիլիացիների նման, ապրում էին Տավրոսում գտնվող բնակավայրերում ու քաղաք-
ներում: Մինչև 5-րդ դարի կեսերը (մ. թ. ա.) նրանք պարսկական տիրապետության տակ
էին, իսկ հետագայում, օգտվելով Պարսկաստանում կենտրոնական իշխանության թուլա-
ցումից, անկախացան և սկսեցին արշավել պարսիկներին ենթակա հարևան մարզերը:
Պարսիկներին այնուհետև հնարավոր չեղավ նրանց լրիվ հնազանդեցնել:

171 Սա, ամենայն հավանականությամբ, Ագանայի դաշտն է:

172 Բնագրում՝ ἡθυστασιων (չինաստ եղող)։ Քսենոփոնը (Անաբասիս, I, 12 և հաջ.) Սյուննեսիսին անվանում է «թաղավոր»։

173 Դեկատի է առնված Արտաքսերքսես 11-րո

174 Իսսոս— առաինյա քաղաք Կիլիկիայում, Ասորիքի սահմանին մոտ։ Պատմության մեջ հայտնի է այն բանով, որ այստեղ մ. թ. ա. 333 թ. Աքեմենյան արքայից արքայի բազմահազար զորքը գլխովին ջախջախվեց Ալեքսանյոր Մակեդոնացու կողմից։

175 էֆորոսների կուլեզիան, թվով 5 մարդ, Սպարտայի քաղաք-պետության բարձրագույն ղեկավար իշխանությունն էր, որն ամեն տարի ընտրվում էր համայնքի ընդհանուր ժողովում։

176 Բնագրում՝ Πύλαι, նշանակում է՝ դարբասներ, դռներ. գտնվում էր Կիլիկիայի և Սիրիայի միջև։ Հերոդոտոսը (V, 52 և հաջ.) պատմում է, որ Աքեմենյան Պարսկաստանի կարևորագույն ճանապարհների վրա, առանձնապես սատրապությունների սահմաններին և դժվարամատույց վայրերում, պարսիկները կառուցել էին ամրություններ, որոնք հույն պատմագիրը կոչում է «դարբասներ»։ Այնտեղ մշտապես կանգնած էին կայսրները։ Կայսր արքայից արքային հնարավորություն էր տալիս վերահսկելու ճանապարհները և, անհրաժեշտության դեպքում, ուժ գործադրելու Կիլիկիայից Ասորիք տանող այս դարբասի մասին հիշատակում են նաև Քսենոփոնը (Անաբասիս, I, IV, 4) և Ստրաբոնը (XIV, 5, 18 և XV, 2, 8)։ Այդ դարբասը, որը կոչվում էր նաև Ամանոսյան դարբաս, գտնվում էր այն վայրում, որտեղ Ամանոս լեռը ճյուղավորվում է Տավրոսից ու ձգվում Կիլիկիայի արևելյան սահմանով մինչև ծով։

177 Մինա— հունական գրամի միավոր (տե՛ս ծանոթ. 45)։

178 Եփորոս— մ. թ. ա. 4—րդ դ. հույն մատենագիր։

179 Քսենոփոնի «Անաբասիսում»՝ Արիաոս։

180 Քսենոփոնն իր «Կյուրոպեդիա» երկում (IV, 1 30) պատմում է, թե սովորական ռազմակառուցող առաջին անգամ Կյուրոս Մեծի ժամանակ վերածվեցին մանգաղակիր ռազմակառուցողի։ Առանցքի վրա ռազմակառուցող յուրաքանչյուր կողմից ամրացվում էին երկաթե մանգաղներ. մոտ մեկ մետր եռկարուստամր։

181 Քսենոփոնը (Անաբասիս, I, VII, 10) հաղորդում է, որ արքայի զորքը բաղկացած էր 1 միլիոն 200 հազար մարդուց և 200 մանգաղակիր ռազմակառուցողից։ Այս թիվը սլոնի համարել իրիստ շափազանցված է։ Տարնը W. W. Tarn, Cambridge Ancient History, vol. VI, էջ 7) գտնում է, որ ոչ միայն Քսենոփոնի, այլև Դիոդորոսի հաղորդած թվերը նույնպես շափազանցված են։ Նա ենթադրում է, որ երկու հակառակորդների բանակները թվով մոտավորապես իրար հավասար էին, բաղկացած շուրջ 30 հազար մարդուց, ըստ Արտաքսերքսեսի 6.000 հեծյալների դիմաց Կյուրոսն ուներ 2.500։ Այս հանգամանքն էլ վճռեց ճակատամարտի ելքը հօգուտ Արտաքսեսի։

182 Ոկզրնասլիս պեան կոչվում էր խմբերդի մի տեսակը, որը կապված էր Ապոլլոնի պաշտամունքի հետ։ Արդեն «Իլիական»-ում այդպիսի պեան երգվում է, ուղղված Ապոլլոնին, որպեսզի սա վերացնի իր իսկ ուղարկած ժանտախտը։ Պեան երգում են նաև Հեկտորի սպանությունից հետո, որպես հաղթանակի խորհրդանիշ։ Հետագայում պեանը երգում էին Հակատամարտից հետո, որպես հաղթության երգ, կամ, դրանից առաջ, որպես ռազմերգ։

183 Ետեոկլեսը և Պոլինիկեսը էդիպ արքայի որդիներն էին, որոնք հայրենի երկրում թեքե քաղաքում իշխանությունը զրավելու համար իրար միջև մենամարտեցին և սպանեցին իրար։ Այս գրույցը դարձել է նյութ Էսքիլեսի «Յոթը թերեթի դեմ» և մասամբ՝ Սոփոկլեսի «Անտիգոնե» ողբերգությունների համար։

184 Հելլենների զորքում գիշերը բաժանված էր 3 կամ 4 պահի՝ հերթափոխությամբ:

185 Զարինթոս— կղզի Հունաստանի արևմուտքում, Հոնիական ծովում:

186 Թերմոպիլեի կիրճը ղտնվում է Հունաստանում, Թեսսալիայի հարավում, և միացանցումն է հյուսիսից կենտրոնական Հունաստան: Այստեղ մ. թ. ա. 480 թ. սիլարտացիների բասիլևս Լիոնիդասն իր 300 բաջերով մինչև վերջին մարզը դիմադրեց Աքեմենյան Քսերքսեսի բազմահազար զորքերին: Նրա օրինակը դարձել է քաջադործության շափանիչ:

187 Քսենոփոնի մոտ (Անաբասիս, I, I, 11 և հաջ.) Սովալյնետոս ստյումփալացի:

188 Դիոդորոսի ձեռագիրն այս մասում թերի է: Մեր թարգմանության մեջ անկյունաձևը փակագծերում առնված նախադասության իմաստը հեշտ է լրացվում Քսենոփոնի «Անաբասիս»-ի համապատասխան հատվածից:

189 Հունական զորքերին մթերքով օրապահիկ չէր տրվում: Զինվորներն իրենց որական պարենը գնում էին զորքին ուղեկցող առևտրականներից, եթե զորքը գնում էր ոչ իշնամական երկրի միջով: Թշնամու երկրում զորքը ապրում էր կողոպուտի հաշվին: Զորահրամանատարի կարևոր հոգսերից մեկն էլ բանակի իջևանած վայրին մոտիկ մթերքի շուկայի առկայության հարցն էր:

190 Կարդուխների բնակեցրած երկրի սահմանները բավական ճշտորեն որոշվում են Վսենոփոնի (Անաբասիս, գիրք 4-րդ, դր. 1—3) հաղորդած տվյալներով: Հարավում այն եզերված էր Խուրդիստանի լեռներով, հյուսիսում՝ Տիգրիսի վտակ Կենտրիտեսը (Բոնտան-սու) այն բաժանում էր Հայաստանից: Քսենոփոնի հաղորդած վկայություններից կարելի է հետևել, թե կարդուխներն այդ ժամանակ ունեցել են հարուստ գյուղեր, սրահվել էն երկրագործությամբ, գինեգործությամբ, անասնապահությամբ, ինչպես և արհեստագործությամբ. հատկապես զարգացած է եղել պղնձագործությունը: Կարդուխներն արդեն գտնվում էին սոցիալ-տնտեսական զարգացման այն ստատիճանի վրա, երբ քայքայվում են համայնական կարգերը: Քսենոփոնից շուրջ շորս հարյուրամյակ հետո Ստրաբոնն արդեն վկայում է, որ զորդիները (իմա՝ կարդուխները— Ս. Կ.) ունեին ամրացված քաղաքներ և հայտնի էին որպես լավագույն շինարարներ և պաշարողակույն զործիքների հմուտ վարպետներ (Strabo, XVI, 1, 24):

191 Հոնիա կոչվում էր Փոքր Ասիայի արևմտյան ծովափը:

192 Կենտրիտես կոչվում էր վերին Տիգրիսի արևելյան թևը (այնժամ Բոնտան-սու):

193 Քսենոփոնի պատմելով (Անաբասիս, III, V, 17) Արմենիայի սատրապն էր Օրոնտասը (երվանդը), իսկ Տիրիբազոսը՝ Արևմտյան կոչված Արմենիայի հյուպարքոս (Անաբասիս, IV, IV, 4):

194 Այս հատվածում Դիոդորոսի բնագիրն ունի ոչ մեծ բացթողում:

195 Փասիս անվան տակ պիսի հասկանալ Արաքսի վերին հոսանքը:

196 Բնադրում Մաուսուսի և Սուսի քաղաքները, ընդհանրապես, այս անունը համարել են Քսենոփոնի մոտ (Անաբասիս, V, V, 17; IV, IV, 18 և այլն) հիշատակված և Տայքում ապրող տառիների (հունարեն՝ ταιχτοι) ցեղանվան աղավաղված ձևը: Բաղադրված չէ, սակայն, որ այս դեպքում մենք զուրդ ունենք հայերի «հայ-խայ» ինքնանվանման հետ: Տառիները եղել են լեռնաբնակ ցեղեր, որոնք մ. թ. ա. V—IV դդ. ապրել են Հարպսոսոս գետի ակունքների շրջանում: Ասուրական սեպագիր արձանագրություններում հիշատակվում է Դայասնի (ուրարտերեն՝ Դիաուսի) երկիրը, որն իրավամբ նույնացվում է տառիների երկրի հետ: Ուրարտական թագավորները (Մենուա, Արգիշտի, Սարգուրի) երկար պատերազմներ են մղել տառիների դեմ և հարկադրել նրանց վճարել տուրք ոսկով, արծաթով, պղնձով և անասուններով (Ե. Բ. Плотровский, О происхождении армянского народа, Ереван, 1946, էջ 8; П. Н. Ушаков, К походу урартийцев в Закавказье, ВДИ, 1946, № 2, էջ 32; Г. А. Меликишвили, Диархи,

ВДИ, 1950, № 4, էջ 26—42): Տառխների անունից ծագել է պատմական Հայաստանի «Տայք» գավառի անունը (Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 1, Երևան, 1944, էջ 72):

19. Այս փաստանները, հավանաբար, վերին Արաքսի շուրջն ապրող ցեղեր են եղել: Փաստանների ցեղանունից էլ ծագել է պատմական Հայաստանի «Փասնյան» գավառի անունը (Հ. Մանանդյան, նույն տեղում):

198 Այս խալդայներին (չալնաճու) շակտք է շփոթել հարավային Միջագետքի նույնանուն ցեղի հետ: Սրանք բնակվում էին Սև ծովի հարավարևելյան ծովափից ոչ հեռու (տե՛ս Ե. Բ. Пустровскии, Урарту, Ереван, 1944, էջ 328), իսկ Յ. Մարկ-վարաշ ենթադրում է, որ այս խալդայները ուրարտացիներն էին, որոնց մի ժամանակ Հեհաման-Հաուպտի ազգեցուժյան տակ դիտուժյան մեջ անվանում էին «խայկեր» (J. Markwart, Südarmanien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 229—230 Հմմտ. նաև Հ. Մանանդյան, քննական տեսություն..., հ. 1, էջ 68—69):

199 Քսենոփոնի մոտ՝ (Անաբասիս, IV, VII, 18) Հարպասոս:

200 Սկյուտիները (բնագրում՝ Շաշուճու, Անաբասիսում (IV, VII, 18 և IV, VIII, 1)՝ սկյութիները) այդ ժամանակ բնակվում էին Տրապիզոնից հարավ գտնվող լեռնային վայրերում: Սրանք հետնորդներն են VIII դարի վերջին Հյուսիսային Կովկասից Փոքր Ասիա ներխուժած սկյութական այն ցեղերի, որոնց հարվածներից մեծապես տուժել է Ուրարտու պետությունը: Փոքր Ասիա ներխուժած սկյութական ցեղերի ցասին տե՛ս Ե. Բ. Пустровскии, Урарту, Ереван, 1944, էջ 295—324: Հմմտ. նաև՝ Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. 1, էջ 73:

201 Գյումնասիա (Անաբասիսում (IV, VII, 19) Գյումնիաս): Այս քաղաքի տեղագրությունը վիճելի է: Ուսումնասիրողների մեծ մասը ենթադրում է, որ այն գտնվում էր Բայբուրտյան գոգավորությունում, Ճորոխ դեղի ակունքների շրջանում: Բոլսրովին այլ կարծիք է Հ. Մանանդյանը, որը Հարպասոս գետը նույնացնելով Արաքսի հետ, ուղենում է, որ Գյումնիաս քաղաքը, հետևաբար նաև սկյութիների երկիրը, գտնվում էր այժմյան Լենինականի վայրում (Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի միջանի պրոբլեմների մասին, Երևան, 1944, էջ 13—17: նույնի՝ Քննական տեսություն..., հ. 1, էջ 64): Ավելի հավանական պիտի համարել առաջին տեսակետը, քանի որ, ինչպես պատմում է Քսենոփոնը, ուղեցույցը հայտարարում է, թե հելլեններին «հինգ օրվա ընթացքում կառաջնորդի այնպիսի մի վայր, որտեղից կտեսնեն ծովը» (Anabasis, IV, VIII, 20):

202 Բնագրում՝ Միլուճու, Քսենոփոնի մոտ՝ (Անաբասիս, IV, VII, 21) Թեքես (Յիլդու): Այս լեռան տեղագրությունը վերջնականապես չի որոշվել:

203 Մակրոնների ցեղն ապրում էր Պոնտոսում: Նրանց հիշատակում է դեռևս մ. թ. ա. VI—V դդ. մատենագիր Հեկատեոս Միլետացին: Մակրոններին և նրանց երկիրը առաջել մանրամասն նկարագրել է ականաբես Քսենոփոնը, իր «Անաբասիս» երկում (IV, VIII, 1—8):

204 Սև ծովի հարավարևելյան ափերին պատահող նման թունավոր հատկություններով ռմտված մեղրի մասին հաղորդում են անտիկ այլ հեղինակներ ևս: Վնասակար այդ հատկությունները կապված են տեղի թունավոր բուսականության հետ: Հանապարհորդները պատմում են, թե այդպիսի մեղր մինչև օրս էլ պատահում է այդ վայրերում: Ինչ մեղրը վնասազերծելու նպատակով բնակիչները նորից այն եռացնում են ու խառնում շաքարով, որից հետո մեղրը դառնում է օգտագործելի:

205 Տրապեզունտ քաղաքը հունական հնագույն քաղաքներից էր Սև ծովի հարավային ափին, այժմյան Տրապիզոն քաղաքի վայրում: Հունական ավանդության համաձայն, այն հիմնվել է մ. թ. ա. VIII դարի կեսերին Միլետի գաղութ Սինուպի կողմից:

206 «Արդո» — առասպելական նավ, որով, ըստ հունական ավանդության, կատարվեց առաջին հեռավոր ծովագնացությունը. «Արգո» նավով ճամփորդել են հունական հերոսները դեպի Կոլխիդա, ոսկեգեղմ մորթին ձեռք բերելու համար: Եւպի անունով նրանք կոչվել են արգոնավորդներ: Արգոնավորդների մասին առասպելը ավելի հին է, քան Հոմերոսի պոեմները: Արգոնավորդների արշավանքը կատարել է հոմերոսյան հերոսներին նախորդած սերունդը: Յասոնի և նրա ուղեկիցների անվան հետ օկայված գրուցները առանձին նշանակություն ունեն հայ ժողովրդի կազմավորման խնդրի հետ կապված: Ի՞նչ շարք հարցերի ուսումնասիրման համար:

207 Կերասունտ քաղաքը հին հունական գաղութ էր Տրապեզունտ քաղաքից արևմուտք: Այժմ էլ Աև ծովի հարավային ափին կա նույնանուն քաղաք, սակայն, հավանաբար, ոչ հին քաղաքի վայրում:

208 Մոսինոյկներ — հունարեն բառացի նշանակում է փալտե կառույցներում ապրողներ: Խերես սա տեղական անվան՝ հույների կողմից արված ժողովրդական ստուգաբանություն է: Ստրաբոնը նույն այդ ցեղերին անվանում է դարձյալ հունարեն «Նպտակոմիտներ» բառով, որը նշանակում է՝ յոթ գյուղերում ապրողներ: Մոսինոյկների մասին հետաքրքիր դիտողություններ ունի Մ. Ի. Մաքսիմովան հարավարևելյան Աև ծովի ափի հնագույն ցեղերին նվիրված իր հոդվածում (Մ. И. Максимов, Местное население юго-восточного Причерноморья по «Анабасису» Ксенофонта, ВДИ, 1951, № 1): Մոսինոյկներին հիշատակում են մի շարք հնագույն մատենագիրներ, սկսած Հեկատեյոս Միլետացուց: Այդ ցեղերը ապրելիս են եղել Կերասունտից արևմուտք, մերձափնյա անտառախիտ լեռներում:

209 Բնագրում՝ *γεννη*, բառացի նշանակում է՝ ընկույղ, բայց այս դեպքում խոսքը շուգանակի մասին է, մի բան, որ պարզորոշ է Քսենոփոնի «Անաբասիս»-ի համապատասխան հատվածից (V, IV, 29):

210 Տիրարենե երկիրը գտնվում էր մոսինոյկների երկրից արևմուտք: Հերոդոտոսի վկայությամբ (III, 94), տիրարենեների երկիրը Դարեհ I-ի ժամանակ ընդգրկված էր պարսկական պետության 19-րդ սատրապության մեջ: Բայց Քսենոփոնի վկայություններից հետևում է, որ նրանք ևս, իրենց հարևան մոսինոյկների, կոլխերի խալչուրների նման, ինքնուրույնություն էին ձեռք բերել: Այս հանդամանքը պիտի վերագրել մի կողմից Արեմենյանների կենտրոնական իշխանության թուլացման, մյուս կողմից լեռնային տեղանքի անմատչելիության և բնակիչների ռադմատենչ ոգուն: Տիրարենեներն, ընդհանրապես, նույնացվում են սեպագիր արձանագրություններում հիշատակված տարալների հղոր ցեղի հետ (И. Д. Джавахишвили, Основные историко-экономические проблемы истории Грузии, Кавказа и Ближнего Востока древнейшей эпохи, ВДН, 1939, № 4; В. А. Куфтин, К вопросу о древнейших корнях грузинской культуры на Кавказе по данным археологии, Вест. муз. Груз., XII, 9, 1941 г.):

211 Կոտյուորա քաղաքի ճշգրիտ տեղը դեռևս հայտնի չէ: Ենթադրում են, որ այն գտնվում էր ժամանակակից Օրդու բնակավայրի տեղում W. Hamilton, Researches in Asia Minor. Pontus and Armenia, I, London, 1842, էջ 251): Մ. Թ. Հեմին Կոտյուորան արդեն կորցրել էր իր նշանակությունը և վերածվել էր ոչ մեծ գյուղի (Strabo, XII. c. 548):

212 Հերակլեան Աև ծովի հարավային ափին գտնվող հունական խոշորագույն քաղաքներից էր: Գտնվում էր այժմյան էրեյլի («Հերակլեա» անվան աղավաղված ձևը) քաղաքի տեղում: Սինոպե — խոշորագույն հունական քաղաք Փոքր Ասիայի հյուսիսային ծովափին, այն հիմնել էին միլետացիները մ. թ. ա. VIII դարում:

213 Խոսքը պոնտական թագավոր Միհրդատ VI Եվպատորի մասին է (մ. թ. ա. 111—63 թթ.):

214 Հստ ռունական դիցաբանության, Հեռակլեսը 12 գերմարդկային սիրանքսեր կատարեց Դրանցից մեկն էլ այն էր, որ նա կարողացավ իջնել ստորերկրյա աշխարհ, Հադեսի թագավորության սահմաններից ներս և առևանգել Հադեսի անքուն սլահակ երեքգլխանի շուն Կերբերոսին:

215 Քրյուսոպոլիս (Χρυσόπολις) քաղաքը գտնվում էր Բոսփորի ասիական ափին, Բյուզանդիոնի դիմաց:

216 Խոսքը մ. թ. ա. 396 թ. հելլեններից պարսիկ սատրապ Տիստափեոնեսի կրած մի շարք պարտությունների մասին է:

217 Ազեսիլոս — լակոնոնացիների բասիլևսը մ. թ. ա. 399—358 թթ.:

218 Այսինքն՝ մ. թ. ա. 386 թ.:

219 Այս Օրոնտեսը Արմենիայի նախկին սատրապն էր, որը սմուսնացած էր սլար-սից ս.բքա Արտաքսերքսեսի դստեր հետ:

220 Ուա, հավանաբար, նույն Տիրիբագոսն է, որը Քսենոփոնի մոտ (Անաբասիս, IV, IV, 4) հիշատակված է որպես արևմտյան Արմենիայի Հյուպարքոս:

221 Փոկայա և Կյումե — պարսից տիրապետության տակ գտնվող հունական քաղաքներ Փոքր Ասիայի արևմտյան ծովափին:

222 Կարիա — երկիր Փոքր Ասիայի ծայր հարավարևմտյան հատվածում:

223 Կիտիոն — ծովափնյա քաղաք Կիպրոսում:

224 Նալամբոս — նավահանգիստ Կիպրոսում, ալթմյան նույնանուն բնակավայրի մոտ:

225 Պյութո — Էբլիփյան տաճարի պատգամախոս քրմուհին:

226 Այս խոսքերի իմաստն այն է, որ ինքը՝ Տիրիբագոսը շեր կարող պատգամախոսին հարցրած լինել ապստամբության մասին, որը, հաջողության դեպքում, կհանգեցներ նաև արքայի սպանության:

227 Եկարագրված դեպքերը կատարվել են մ. թ. ա. 362/1 թթ.:

228 Մավսոլոսը հայտնի է իր կառուցած դամբարանով, որն իր անունով կոչվել է Մավսոլոսում:

229 Այս Օրոնտեսը նույն անձն է, որը Քսենոփոնի «Անաբասիս»-ում հիշատակված է իբրև Արմենիայի սատրապ. պիտի ենթադրել, որ նա այդ ժամանակ արդեն ղրկվել էր Արմենիա սատրապուխոնից:

230 Այս Արտաբագոսը որդին էր Փոյուզիայի սատրապ Փառնաբուդոսի և Ասյամեհի՝ Արտաքսերքսեսի դստեր:

231 Միթրոբարզանեսը Դատամեսի աներն էր, որը դավաճանել էր իր փեսային:

232 Նախորդ հատվածներում Դիոդորոսը պատմում է 352/1 թթ. Հունաստանում պոլիսների միջև մղված քաղաքական սուր պայքարի մասին:

233 Այսինքն՝ 337/6 թ.:

234 Այսինքն՝ 336/5 թ.:

235 Խոսքը Մակեդոնիայի թագավոր, Ալեքսանդր Մակեդոնացու հոր, Փիլիպպոս 11-ի մասին է (մ. թ. ա. 360—336 թթ.):

236 Ատտալոսը և Պարմենիոնը Փիլիպպոս Մակեդոնացու զորավարներից էին: Այս երկուսին հետագայում սպանեց Ալեքսանդր Մակեդոնացին. Ատտալոսին 336 թ., իսկ Պարմենիոնին՝ 330 թ.:

237 Փոքր Ասիայի հելլենական քաղաքների աղատության կարգախոսը Փիլիպպոս Մակեդոնացու, իսկ հետագայում՝ Ալեքսանդր Մակեդոնացու համար նախ և առաջ ունեցր

բաղաբան նշանակութիւնն Այդ պատմութիւնը նշանակում էր ոչ ավելի, քան քաղաքական ազատագրում պարսկական լծից (տե՛ս Ս. Մ. Կրկյաւարչյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմութեան դրվագներ, Երևան, 1910, էջ 50—78) :

238 Հնչլիները տնասունը զոհարելուց առաջ նրա դուխը դարձարում էին պսակով :

239 Հաղարուպետը (𐎧𐎡𐎴𐎠𐎷𐎫𐎡) պարսկական տերութեան բարձրաստիճան պաշտոններէրից մեկն էր և ուներ առավելագոյն վարչատնտեսական, քան թէ ռազմական ընդունելի : Հ' տագայում այդ պաշտոնին հանդիպում ենք Արշակունիաց Հայաստանում : Բացառաւ չէ, որ հայարապետի պաշտոնը գոյութիւն է ունեցել նաև Արտաշեսյան Հայաստանում :

240 Սա Դարեհ III Կողմանոսն է (մ. թ. ա. 336—330 թթ.), որը թագավոր դառնալուց առաջ, ինչպես հաղորդում է Հուստինոսը, եղել է Արմենիայի սատրապ (M. Juniani Justini Epitoma historiarum Philippicarum Pompeii Trogi, X, 3 4—5) :

241 Խոսրը Արտաքսերքսես II-ի (մ. թ. ա. 405—359 թթ.) մասին է :

242 Պեստեղ նկատի է առնված Արտաքսերքսես III Օրոսը (359—338 թթ.) :

243 Հին հունական խոշոր և վաճառաշահ Կուրիկոս քաղաքը դտնվում էր Հելլենապոնտոսի (Մարմարայի ծով) ասիական ափին :

244 Իդա լիւր գտնվում էր պատմական Տրոյայի շրջանում :

245 Մակեդոնացիների անվան տակ Դիոդորոսը այս հատվածներում նկատի ունի Ալեքսանդր Մակեդոնացու զորքերին :

246 Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների պատմութեան հեղինակ Արրիանոսը (Arriani, De expeditione Alexandri, Lipsiae, 1873, I, 13) տարբեր ձևով է պատմում այդ հակատամարտի մասին : Հստ նրա, հարձակումը տեղի է ունեցել Երեկոյան մոտ և Տրանիկոսի ստորին հոսանքում, որտեղ գետը հոսում է հարթավայրով : Նա, ինչպես և Պլուտարքոսը Ալեքսանդրին նվիրված կենսագրութեան մեջ (Plutarchi vitae, Alexandri, XVI) գրում է, որ մարտը տեղի է ունեցել գետը անցնող մակեդոնացիների և գետափին կանգնած պարսիկների միջև, մինչդեռ Դիոդորոսի այս նկարագրութեան մեջ այն տեղի է ունենում լուսաբացին, այն բանից հետո, երբ մակեդոնացիները առանց դժվարութեան անցնում են գետը :

247 Արսամենեսը Արրիանոսի (De exped. Alexandri, II, 4, 5) և Կուրտիոս Ռուփոսի (Historiae Alexandri Magni, Lipsiae, 1816, III, 4, 3) մոտ՝ Արսամես այդ ժամանակ Կիլիկիայի սատրապն էր : Սա, մեր կարծիքով, պետք է լինի այն նույն Արսամեսը, որը Աքեմենյան տիրապետութեան տապալումից հետո դառնում է Սելևկյանների ենթակա Կոմմագենեի ոչ մեծ թագավորութեան հիմնադիրը : Սրա անունը հիշատակված է նեմրոզ լեռան հայտնի հուշարձանում, որպես Անտիոքոս I Կոմմագենացու նախնի (K. Humann und O. Puchstein, Reisen in Kleinasien und Nord-syrien, Berlin, 1890) :

248 Արսիտեսը Հելլենապոնտյան Փոյուգիայի սատրապն էր :

249 Հուստինոսը (Justini Juniani Epitoma historiarum Philippicarum Pompeii Trogi, Lipsiae, 1915, XI, 6, 11) պարսկական զորքի թիվը հասցնում է 600 հազարի, իսկ ըստ Արրիանոսի (De exped. Alexandri, I, 14, 4) պարսիկներն ունեցել են 20 հազար հետևակ և նույնքան շեժյալ :

250 Քնազրում՝ ΣΥΓΓΕΝΕΙΣ, բառացի նշանակում է՝ տոհմակիցներ : Այդպես էին կոչվում Աքեմենյան (հետագայում նաև Արշակունյաց) Պարսկաստանում բարձր ազնվականութեան ներկայացուցիչները. ավելի ուշ հելլենիստական միապետութիւններում

ևս այդ պատվավոր տիտղոսը շնորհվում էր արքային մոտիկ մարդկանց:

251 Կլեյտոսը Ալեքսանդր Մակեդոնացու թիկնապահներից էր:

252 Խոսքը Սպիթրիդատես և Հուսակես էդրայրների մասին է:

253 Դիոդորոսը նախորդ հատվածներից մեկում (XVII, 18, 1) սյատմում է, որ Ալեքսանդրը պատգամախոսի գուշակութունից հետո զուհեր է մատուցում Աթենասին և յուր զրահը նվիրարբերելով դիցուհուն, փոխարենը վերցնում է նրա տաճարում գտնված դրահներից լավագույնը:

254 Արրիանոսի մոտ (I, 16, 3) պարսկական սպանված առաջնորդների ցուցակն ավելի երկար է, սակայն այնտեղ բացակայում է Դարեհի կնոջ եղբոր Ատիդյուեսի անունը:

255 Ալեքսանդրը, բնական է, թաղում է ոչ թե պարսիկ սպանվածներին, այլ իր բանակի զոհերին, որոնց թիվը փոքր էր:

256 Իր այս ծառայության դիմաց Միթրինեսը, իբրև հատուցում, Ալեքսանդրից ստանում է դեռ շնվաճված Արմենիայի սատրապութունը:

257 Խոսքը Ալեքսանդր Մակեդոնացու զորահրամանատարների մասին է, որոնց երիտասարդ արքան իր զորքերի մի մասով ուղարկել էր Փոյուգիայի վրայով, մինչդեռ ինքը զբաղված է առափնյա քաղաքները նվաճելու գործով:

258 Կար երկու Փոյուգիա. 1) Մեծն Փոյուգիա կամ, պարզապես, Փոյուգիա, որը գտնվում էր կենտրոնական Փոքր Ասիայում և 2) Հելլեսպոնտյան Փոյուգիա կամ Փոքր Փոյուգիա, որը գտնվում էր Հելլեսպոնտոսի փոքրասիական ափին:

259 Խոսքը պարսից արքա Դարեհ III-ի մասին է:

260 Հուստինոսը նույնպես (XI 9, 1) այդ զորքի թիվը համարում է 400 հազար, իսկ Արիանոսը (II, 8, 8)՝ 600 հազար:

261 Պյուլայ (Πύλαι) բառացի նշանակում է «դռներ, դարբասներ»: Բնագրից պարզ չէ, թե դրանք ո՞ր դարբասներն են՝ Կիլիկյան, թե՞ Սիրիայի: Հավանաբար այստեղ նկատի է առնված վերջինը, որը գտնվում էր Իսսոս քաղաքից հարավ, Արրիանոսը (II, 5, 1) պարզապես ասում է՝ «մյուս դարբասները»: Հերոդոտոսը (V, 52 և հաջ.) պատմում է, թե Աքեմենյան Պարսկաստանի կարևորագույն ճանապարհների վրա, առանձնապես սատրապութունների սահմաններին և դժվարամատույց վայրերում, պարսիկները կառուցել էին ամրություններ՝ «դարբասներ»: Այնտեղ մշտապես կանգնած էին յինում կույազորերը: Սա արքայից արքային հնարավորություն էր տալիս վերահսկելու ճանապարհները և անհրաժեշտության դեպքում ռազմական ուժ գործադրելու:

262 Այս տեսարանը պատկերված է Պոմպեյ քաղաքի ավերակների մեջ հայտնաբերված խճանկարներից մեկում (Diodorus of Sicily, in twelve volumes, vol. VIII, Loeb Classical Library, London, 1963, էջ 213, ծան. 1)

263 Կուրտիոսի մոտ (III, 11, 10) սպանվածներն են՝ Ատիդյուեսը, Հոնոմիթրեսը և Եգիպտոսի սատրապ Սաբակեսը, իսկ Արրիանոսի մոտ (II, 11, 8)՝ Արսամեսը, Հոնոմիթրեսը, Ատիդյուեսը, Եգիպտոսի սատրապ Սաբակեսը և Բուրակեսը:

264 Եփտոն — ներքնազգեստ, որը հագնում էին մերկ մարմնի վրա:

265 Դիոդորոսի ձեռագրի այս հատվածում նկատելի է ինչ-որ բացթողում, անկյունավոր փակագծերի մեջ առնված նախադասությունը C. Bradford Welles-ի առաջարկած վերականգնման թարգմանությունն է (տե՛ս Diodorus of Sicily, v. VIII, Loeb Classical Library, London, 1963, էջ 219):

266 Բնագրում՝ οὐκ ἀπὸ τῆς (բառացի նշանակում է՝ տղաներ, պատանի ստրուկներ):

267 Հևտայրոս (ἑταῖρος) բառացի նշանակում է՝ ընկեր, ուղեկից, մերձավոր Սովորաբար հետայրոսների հեծելազոր կոչվում էր մակեդոնական թագավորի արքունի

հեծյալ թիկնապահ գունդը: Հետագայում այսպես կոչվում էին մակեդոնացիների ընտրանի հեծյալ գնդի մարտիկները:

268 Սիսյունգամբրիսը (կա նաև Սիսիդամբրիս ձևը) Դարեհ III-ի մայրն էր:

269 Հելլենիստական պետություններում մեծ դեր են խաղացել թագավորի ընկերները (φίλοι), որոնք կազմելով թագավորի անմիջական շրջապատը, զբաղեցնում էին պետական տարբեր պաշտոններ: Բացի սովորական ընկերներից, կաին առաջին ընկերներ (πρωτοί φίλοι), հարդված կամ պատվավոր ընկերներ (τεταωμενοι φίλοι) և նախամեծար (πρωτεταωμενοι), կամ առավել պատվավոր (αξιωτετα τεταωμενοι) ընկերներ: Այս հարցի մասին տե՛ս II. V. Կրկյաշարյան, Բղեջխությունների առաջացումը Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 260—261:

270 Դիոդորոսը միակ հեղինակն է, որը խոսում է այդ նամակը կեղծելու մասին: Աղբյուրներից հայտնի է, որ Դարեհը երեք անգամ դիմել է Ալեքսանդրին հաշտության առաջարկով: 1) Իսսոսի ճակատամարտից հետո: Հուստինոսը (XI, 12, 1—2), Արրիանոսը (II, 14) և Կուրտիոս Ռուֆոսը (IV, 1, 7—14) հաղորդում են, թե Դարեհն իր աչսուսակոզ պահանջում էր Ալեքսանդրից հեռանալ Ասիայից և վերադարձնել բոլոր գերվածներին՝ փրկագին ստանալով (Հուստինոս, Կուրտիոս) կամ առանց փրկագնի (Արրիանոս): 2) Ալեքսանդրի կողմից Տյուրոս քաղաքի դրավումից հետո: Դարեհն այս անգամ արդեն առաջարկում էր կնուսթյան տալ իր աղջիկներից մեկին և զիջել Ալլուս դեոից արևմուտք ընկած ամբողջ երկիրը (Կուրտիոս, IV, 5, 1—8) կամ թագավորության մի մասը (Հուստինոս, XI, 12, 3—4): Սա մոտավորապես նույնն է, ինչ Դիոդորոսի հիստորիկոս նամակի բովանդակությունը: 3) Եգիպտոսից Ալեքսանդրի վերադառնալուց և Գալգամեկայի ճակատամարտից առաջ: Այս անգամ Դարեհն առաջարկում է կնուսթյան տալ իր մյուս աղջկան և Եփրատ գետից արևմուտք ընկած ամբողջ երկիրը, ինչպես նաև 10 հազար (Արրիանոս, II, 25) կամ 30 հազար (Դիոդորոս, XVII, 54, 1—6, Կուրտիոս IV, 11; Հուստինոս, IX, 12, 7—6) տաղանդ հատուցում:

271 Կիրին սատրապություններ կամ վերին երկրներ ասելով, անտիկ հեղինակները ենթադրել են Հայաստանը, Սեդիան, Պարսկաստանը և այլն:

272 Հստ Հուստինոսի (XI, 2, 5) պարսկական գորգերի ընդհանուր թիվը եղել է 500 հազար, ըստ Արրիանոսի (III, 8, 6)՝ մեկ միլիոն հե.և.ևակ և 40 հազար հեծյալ, իսկ ըստ Կուրտիոսի (IV, 12, 13)՝ 200 հազար հետևակ և 45 հազար հեծյալ:

273 Այլ ձևազրբերում՝ երկու կամ հինգ հազար տաղանդ:

274 Այլ ձևազրբերում՝ երեք հազար տաղանդ:

275 Պարսիկների մոտ (ինչպես նաև հետագայում Սելևկյանների սլետություն մե) ընդունված: կարգ էր, որ թագավորն իր ընդարձակ տերության իշխանությունը բաժանում էր թագաժառանգի հետ:

276 Տե՛ս ծանոթ. 16:

277 Ինչպիսիք՝ ἀρχυραρχαίους (αρχυρα = արծաթ, αρα = վահան). Սրանք Ալեքսանդր Մակեդոնացու քանակում 3. 000 հոգուց բաղկացած թագավորի հետևակ թիկնապահների հատուկ զորագունդն էին կազմում, որոնք կրում էին արծաթե թերթիկով ծածկված վահաններ և հոշակված էին իրենց բաշտությամբ և մարտունակությամբ: Այդ անունը կրող զորագնդի հանդիպում ենք նաև հետագայում՝ Սելևկյան թագավորության ժամանակ: Այլ դեպքերում, հատկապես Ալեքսանդրի ժառանգներին վերաբերող հաղորդումներում, արծաթ՝ վահանակիրները՝ արգիրասպիդները, անվանված են հյուսպասպիտաներ՝ ὑπασπισται (W. W. Tarn, Alexander the Great, v. II, London 1948 թ. 216):

278 Մակեդոնական փաղանգը կազմակերպված էր տերիտորիալ հատկանիշով և օրաբանչյուր զորամաս կոչվում էր այն տեղանունով, որի բնակիչներին էր այն կազմված:

279 Փթիոտիս — երկրամաս Թեսսալիայում:

280 Մալիս — երկրամաս հյուսիսային Հելլադայում:

281 Լոկրիս և Փոկիս — կենտրոնական Հելլադայի գավառներ:

282 Սարիսա կոչվում էր մակեդոնական հետևակի նիզակը, որի երկարությունը հասնում էր 5—6 մետրի:

283 Սա, հավանաբար, արքունի թիկնապահ հեծելագունն էր, որը, ըստ երևույթին, պլևափորու էր հազարապետը: Սասանյան արքունիքում հազարապետության բարձրագույն պաշտոնի արժանատիները, հավանաբար, պիտի փնտրել այստեղ, (Էթեմենյանների արքունիքում: Եթե այդպես է, ապա նկատելի է, որ այն սկսելով իրրև զինվորական պաշտոն, հետագայում դառնում է ամենակարևոր վարչատնտեսական սխտական պաշտոնը պարսկական արքունիքում, որի նմանությամբ այդ պաշտոնը առաջանում է նաև Հայաստանում, Արշակունի թագավորների արքունիքում:

284 Բնագրում *μηλοφοροι*. այս անունը կրում էին արթայի հետևակ թիկնապահները, որոնց նիզակի ծայրին կար մետաղե խնձորածե (հուն. *μηλον-խնձոր*) ղնդիկ:

285 Հերոդոտոսի (I, 125) պատմելով, մարդերը եղել են իրանական վաշկատուն ցեղեր: Քսենոփոնը (*Anabasis, IV, III, 4*) մարգերին հիշատակում է Արմենիայի սատրապ Օրոնտասի և Սրտուխասի զորքերի կազմում: Ստրաբոնը (*XI, 13,3, հմմտ. նաև XI, 7,1 և 8,1*) հաղորդում է, որ մարդերը ապրում էին հայկական լեռնաշխարհի հարավում: Աշխարհագիր Պտղոմեոս Կլավդիոսի վկայությամբ (*Ρτολ., V 12,9*) մարդերը բնակվում էին Տիգրիսի ակունքներից արևելք: Մարգերի մասին տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. I, Երևան, 1944, էջ 69—70:

286 Կոսսայների իրանական ցեղը ապրում է Ջագրոսյան լեռների շրջանում:

287 Այս դեպքը տարբեր հեղինակներ տարբեր ձևով են սլատմում: Լստ Դիոդորոսի Ալեքսանդրը չէր ստացել Պարմենիոնի խնդրանքը օգնության մասին և վերջինս ինքր կարողացավ դուրս գալ ստեղծված ծանր վիճակից: Ըստ Կուրտիոսի (*IV, 15, 6—8; 15, 1—4*) և Պլուտարքոսի (*Alexander, XXXII, 3—4*), Ալեքսանդրը ստանում է նրա խնդրանքը, բայց ետ չի դառնում, իսկ ըստ Արրիանոսի (*III, 5,1*), Ալեքսանդրը ստանում է նրա խնդրանքը և վերադառնալով օգնում Պարմենիոնին:

288 Կուրտիոսի մոտ (*IV, 16, 26*) 40 հազար, Արրիանոսի մոտ (*III, 15,6*) 300 հազար:

289 Ըստ Կուրտիոսի (*IV, 16, 26*) սպանվել է 300 մակեդոնացի, իսկ ըստ Արրիանոսի (*III 15,6*)՝ 100 մակեդոնացի:

290 Արմենիան Միթրինեսին հանձնելը, պարզապես, կրում էր ձևական բնույթ, քանի որ այդ երկիրը դեռևս չէր նվաճվել և Լորեթ էլ չնվաճվեց Ալեքսանդրի կողմից, ուստի և Միթրինեսը Երբեք չտիրեց Արմենիային:

291 Մինա-կշոի և դրամական միավոր, կազմում էր տաղանդի 1/60 մասը և հավասար էր 100 դրախմայի:

292 Սիտտակենեն գտնվում էր Բարելոնիային զուգահեռ դեպի արևելք, Տիգրիս գետի ձախ ափին:

293 Բնագրում՝ *ἀστυς* — բառացի նշանակում է՝ առանց դրոշմի, առանց նշանի:

294 Դահեկան (ընագրում՝ *δαραίχθες*, նշանակում է՝ դարեհական) — պարսկական ոսկեդրամ, մոտ 5,40 գուլար արծեքով, որի գնողունակությունը, սակայն, եղել է ավելի բարձր: Այն կշռում էր 8,40 գրամ: 3000 դահեկան = 1 տաղանդ = մոտ 26 կգ:

295 Բնագրում՝ *παῖδες* — նշանակում է՝ տղաներ, ծառաներ:

296 Փիլոտասը Պարմենիոնի որդին էր, Ալեքսանդրի մտերիմ ընկերներից:

297 Ուա Պասիտիդրիս գետն է Սուսիանն երկրում, այն չպետք է շփոթել բուն Տիգրիս գետի հետ:

298 Մադետեսի անունը Կուրտիոսի մոտ (V, 3, 4) հանդիպում է Medates կամ Madates ձևով, որը կարելի է հասկանալ իբրև Մարատուր, կարելի է նաև դիտել որպես Ապպիանոսի մոտ (Appian., Syr., 48) հանդիպող Μεγαδάτης (Մագադատես) անվան ազգավաղված ձևը: Այս վերջին անունը կրում էր Տիգրան Բ-ի զորավար-կուսակալներից մեկը: Մարկվարտը (Eranšahr nach der Geographie des Ps. Moses Chorenaci, Berlin, 1901, էջ 174) Մագադատես անունը ուզողում է Բագադատես, այն նույնացնելով Բագարատ անվան:

299 Պերսիս — Պարսկաստանի կենտրոնական մարզերից մեկը Պարսից ծոցի ավազան (այժմ՝ Ֆարսիստան):

300. Ուա Պերսիսի սատրապն էր, Արտաբազանի եղբայրը:

301 Այս գետը գտնվում էր Պերսիսում. շփոթել հայկական Արսաքսի հետ:

302 Զիթենու ճյուղերով բռն է մեկին դիմավորել՝ նշանակում էր նրան ընդատուջ գնալ որևէ խնդրանքով:

303 Մեդիմնոս — տարողության չափ, որն օգտագործում էին հին Հունաստանում: Աատիկյան մեդիմնոսը հավասար էր մոտ 52,5 լիտրի:

304 Կեդ-Կալիոթենեսի «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, երկում (գիրք 2, գլուխ 18) նույն դեպքի մասին պատմվում է այնպես. «Այստեղ, Քսերքսեսի դամբարանում, կային խնդված հելլեն այրեր, ոմանք ձեռքներից, ոմանք ոտքերից, ոմանք օթից, ոմանք ականջներից. նրանք, աթենացի այրերը, շղթայված էին կապանքներով, ու գերեզարված: Արգ, նրանք բազմություն մը հավաքվելով, աղաղակեցին Ալեքսանդրին, որպեսզի փրկի իրենց: Իսկ Ալեքսանդրը, տեսնելով նրանց, արտասվեց. քանզի տեսառանը ահավոր էր: Նա ծանր տառապեց դրանից և հրամայեց արձակել նրանց կապանքները և տալ նրանց հաղար երկդրամյա և յուրաքանչյուրին վերահաստատել իր հայրենիքում: Նրանք, ստանալով արձաթր, խնդրեցին Ալեքսանդրին այդ վայրերում իրենց երկիր տրամադրել և շուղարկել իրենց հայրենի երկիրը, որպեսզի դրանով իսկ յուրայինների համար աղետ չդառնան: Եվ հրամայեց հող հատկացնել նրանց և ցորեն տալ և յուրաքանչյուրին հավասարաչափ սերմացու և ոչխարներ և այն ամենը, ինչ պիտանի է երկրագործության համար, և այլ ունեցվածք»:

305 Անտիկ սշխարհում ոսկու և արծաթի արժեքային հարաբերությունը սովորաբար եղել է 1:12-ից մինչև 1:15:

306 Ատտիկա — կենտրոնական Հունաստանի առավել զարգացած մարզերից մեկը, որի կենտրոնն էր Աթենք քաղաքը:

307 Ակինարկությունը պարսից արքաներ Դարեհի (490 թ.) և Քսերքսեսի (480 թ.) Հունաստան կատարած արշավանքների ժամանակ հունական բնակավայրերի և սրբավայրերի կործանման մասին է:

308 Դիոնիսոսը (Բաքոս) գինարբուքի աստվածությունն էր:

309 Այսինքն՝ 329—328 թ.:

310 Արրիանոսի (III, 25, 3) և Կուրտիոսի (VI, 6, 13) մոտ՝ նարարգանես և Բարսանես (կամ Բարշանես):

311 Բնագրում՝ ἐκκλησία (էկկլեսիա):

312 Սա հայ մատենագրության մեջ հիշատակված Վրկանաց երկիրն է:

313 Հեկատոնտապյուլոս (Կաև Հեկատոնտապյուլոս) բառացի նշանկում է՝ հարյուր տարրասանի:

314 Ուա, հավանաբար, այժմյան Չեսմե-ի-Այի գետն է:

315 Մետրետե (μετρητης) հին հունական հեղուկների չափ, որը հավասար էր

32,5 լիտրի:

316 Մեդիմնոս — տե՛ս ծանոթ. 303:

317 Ուա, հավանաբար, հայկական դապրե կոչված հյուսիս է:

318 Քնազրում՝ ἀνιζοζήων, որը, հավանաբար, բոռի նման էր:

319 Նույնը համարյա բառացի կրկնում է Ստրաբոնը, պրելով. «Ասում են, թե Հյուրկանիայում որթատունկը տալիս է մեկ մետրեոս գինի, թղենին՝ վաթսուն մեդիմնոս (Դիոդորոսի մոտ՝ տասը — Ս. Կ.), իսկ հասկից ընկած ցորենը նորից ծլում է և (մեդուները) ծառերի մեջ պարսավորվում են ու տերևներից մեղր է ծորում. այսպես է լինում նաև Մեդիայի Մատիանեում և Արմենիայի Սակասենեում և Արաքսենեում» (Strabo, II, 14, նաև XI, 7, 2, հմմտ. նաև C. Plinii Secundi, Naturalis Historiae, XII, 18):

320 Անտիկ հեղինակները մի շարք անդամներ հիշատակում են մարդերին: Այսպես, Հերոդոտոսը (I, 125) խոսելով մարդերի մասին, նրանց համարում է իրանական վաշկատուն ցեղի Դիոդորոսի այս հատվածում հիշատակված մարդերը, հավանաբար, միևնույն ցեղերն են: Սրանց, սակայն, չի կարելի նույնացնել Քսենոփոնի (Anabasis, II, 111, 4) և Ստրաբոնի (XI, 13,3 և XI, 7,1) մոտ հիշատակված մարդերի հետ, որոնք սպորում էին Հայկական լեռնաշխարհում: Աշխարհագիր Պտղոմեոս Կլավդիոսի վկայությունները (Ptol. V, 12.9) մարդերը բնակվում էին Տիգրիսի ակունքներից արևելք: Մարդերի մասին տե՛ս Ն. Ն. Մանասյան, Քննական տեսություն հայ մոդոլոգի պատմության, Խ. 1, Երևան, 1944, էջ 69—70:

321 Խոսքը Ալեքսանդր Մակեդոնացու հայտնի ձիու՝ Բուկեփալոսի մասին է:

322 Եփտոն — մի տեսակ շապիկ, առանց թևերի:

323 Անաքսիրիդ — պարսկական երկար ու նեղ անդրաՎարտիր:

324 Կանդիս — պարսկական թևավոր վերնազգեստ:

325 Արեյա (նաև՝ Արիա) — մարդ կենտրոնական Պարսկաստանում:

326 Ռատիրարգանեսը եղել է Դարեհին սպանողներից մեկը:

327 Բորտականա (Χερσακτα) քաղաքը սովորաբար կոչվել է նաև Արտակոանա ('Αρτακτα):

328 Այստեղ ձևագրում նկատելի է բացթողում, քանի որ պակասում է լեռան անունը:

329 Ավելի ճիշտ ձևը՝ Դրանգիանե:

330 Էվերգետես բառացի նշանակում է բարեղործ:

331 Արրիանոսը (III, 27,5) հաղորդում է, թե այս ցեղերը անկախ թողնվեցին Հավանաբար հիշյալ Տիրիդատեսը նախապես ևս այս ցեղերի առաջնորդն է եղել Ալեքսանդրը նրան թողել է իր նախկին պաշտոնում:

332 Ալեքսանդրի գորահրամանատարների այս խորհուրդը դումարվել է մ. թ. ա. 323 թ., Բարելոնում:

333 Կովկաս անվան տակ այստեղ պետք է հասկանալ Հինդու-բուշ լեռնաշղթան:

334 Սա Մեդիա Ատրուպատենն է, կամ՝ Փոքր Մեդիան, մինչդեռ Պիթոնին հատկացվածը Մ. Ս. Մեդիան էր:

335 Հատկանշական է, որ Ալեքսանդրի հրամանատարների միջև բաժանված սատրապությունների թվում չի հիշատակված Հայաստանը: Հետևաբար, կասկած չի կարող լինել, որ Հայաստանը նվաճված չի եղել մակեդոնացիների կողմից, ուստի և երկիրը, ինչպես այս հատվածում նշում է Դիոդորոսը Ասիայի մյուս սատրապությունները մասին խոսելիս, թողնվեց նախկին կառավարչի իշխանության տակ:

336 Կովկասն այս դեպքում ևս Հինդու-Քուշն է, իսկ Արևելյան օվկիանոսը՝ Բնե-
զալյան ծոցը:

337 Տանայիս գետն, ընդհանրապես, Դոնն է, բայց այս դեպքում Դիոդորոսի մոտ
էս շփոթութիւնն. այստեղ պիտի հասկանալ Ամու-Դարիան կամ Սիր-Դարիան:

338 Հիբրոնիմոս Կարդիացու վկայութեամբ (K. Müller, Fragmenta graecorum
historicorum, 151, 4) Արիարաթեան ապրել է 82 տարի:

339 Դիոդորոսը հաշորդ գլուխներից մեկում (XXXI, 19, 3—5) հաղորդում է, թե
Արիարաթեան ընկել է ճակատամարտում և ազատվել է նրա որդեգիրներից մեկը, որը և
հետագայում վերագրավում է գահը:

340 Այստեղ խոսքը վերաբերում է մ. թ. ա. 321 թ., երբ Ալեքսանդրի զորավարնե-
րից Անտիպատրոսը հռչակվել էր Մակեդոնացու ստեղծած տերութեան ղեկավարը:

341 Արքելիտիս կոչվում էր վերին Տիգրիսի հովտում գտնվող Արքելիս քաղաքը
չուրջն ընկած երկիրը:

342 Բնագրում՝ Νωρα. այս նորա ամրոցի ճիշտ տեղագրությունը հայտնի չէ. հա-
վանաբար այն գտնվում էր Տավրոսի հյուսիսային մասում:

343 Սա Հիբրոնիմոս Կարդիացին է (մ. թ. ա. 350—260 թթ.). Ալեքսանդր Մակե-
դոնացու հետնորդների՝ դիադոխների պատմության վերաբերող հիմնական աշխատություն-
ներից մեկի հեղինակը: Նա գերազանց տեղյակ էր դեպքերին, քանի որ եղել էր հիմնական
մերձավորագույն ընկերը և գինակիցը, իսկ նրա մահից հետո Անտիգոնոս Միականու և
սրա որդի Դեմետրիոսի մտերիմը: Նրա արժանահավատ պատմությունն ընդգրկել է
Մակեդոնացու մահից մինչև Պիոսի մահն ընկած ժամանակամիջոցը (323—272 թթ.) և
ընկած է Դիոդորոսի «Պատմական գրադարանի» 18—20-րդ գրքերի, ինչպես նաև ան-
ուշան քաղվածքներում պահպանված Արրիանոսի «Հետալեքսանդրյան» երկի հիմքում:
Հիբրոնիմոսի դործը միաժամանակ Պլուտարքոսի հեղինակած մի շարք կենսագրություն-
ների սկզբնալրջուրն է:

344 «Դիադոխներ» պատմագրության մեջ կոչվել են Ալեքսանդրի զորավարները.
որոնք նրա մահից հետո տերութեան տարբեր մասերում իշխանությունը վերցրին իրենց
ձեռքը: Դիադոխների հաշորդ սերունդը արդեն հայտնի է «էպիգոններ» անունով:

345 Դիոդորոսի մոտ պատմական ժամանակագրությունը հիմնված է Աթենքի ար-
յունտ-էպոնիմի և Հոմերի կոնսուլների անունների հիշատակման վրա, որոնք ընտրվում էին
մեկ տարի ժամանակով: Դիոդորոսի ժամանակագրական այս մեթոդի մասին տե՛ս մեր
առաջաբանում: Տվյալ պեպքում Դիոդորոսի խոսքը վերաբերում է մ. թ. ա. 318 թ.:

346 Պոլիպերքոնը այդ ժամանակ մակեդոնական թագավորի խնամակալն էր:

347 Տե՛ս ծանոթ. 277:

348 Օլյումպիասը Ալեքսանդր Մակեդոնացու մայրն էր, Փիլիպպոս II թագավորի
առաջին կինը, որն իր որդու մահից հետո երկար պայքար մղեց իշխանության համար:
317 թ. սպանվեց Ալեքսանդրի խորթ եղբայր, թագավոր Արրիդայոսին, բայց թիչ անց
Պասանդրոսը գերի վերցրեց նրան և 315 թ. մահապատժի ենթարկեց:

349 Սա Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո նգիպտոսում իր տիրապետությունը
հաստատած Կոնդոնոս լագոսն է:

350 Կլիդոսը գտնվում էր Կիլիկիայում, այնտեղ պահվում էր մակեդոնացիների ար-
քունի գանձերի մի մասը: Այս բերդի ճշգրիտ տեղագրությունը դեռևս հայտնի չէ:

351 Այստեղ մակեդոնացի հրամանատարը նվաճեցին լամարում և օտարերկրացի,
ձկատի ունենալով այն, որ սա մակեդոնացի չէր, այլ հույն, ծնված Կարդիա քաղաքում:

352 Բնագրում՝ Καρών χωρα. այս վայրը ոչ մեկ անունություն չունի Կարրա (Խա-
սան) հայտնի քաղաքի հետ:

353 Այդ բաժանումը տեղի է ունեցել 321 թ.:

354 Բնագրում՝ *αὐτὸν* (Կոնտոտոս). սա հարթ հատակով դետանավ էր, որ կառավարվում էր երկար ձողերով:

355 Պեկեստեսը Պերսիսի սատրապ էր նշանակվել իր իսկ Ալեքսանդրի կողմից (Αγγλ., V, 30, 2—3) և այդ պաշտոնում շարունակեց մնալ նաև Պերդիկասի և Անտիպատրոսի խնամակալության տարիներին:

356 Այս Եվդամոսին շախտի նույնացնել սույն դիտի սկզբում հիշատակված Պիթոնի նույնանուն հղորդ հետ:

357 Բնագրում՝ *ὁ ἄρχων* բառացի նշանակում է՝ հանրապետական կարգի ունեցող:

358 Աս մ. թ. ա. 318/317-ի ձմեռն էր:

359 Այստեղ Դիոգորոսը դարձյալ Տիգրիսը շփոթում է Պասիտիգրիս գետի հետ, որը գտնվում էր Սուսիանե երկրում (տե՛ս ծանոթ. 291): Որ խոսքը այստեղ Պասիտիգրիսի մասին է, պարզ երևում է հաջորդ 18-րդ գլխում սլատմվածներից:

360 Այսինքն՝ մոտավորապես 550—730 մետր:

361 Կարմիր ծով ասելով պիտի հասկանալ Պարսից ծոցը (տե՛ս ծան. 2): Այժմ Պասիտիգրիսը թափվում է Շատ-էլ-արաբ գետը, որը կաղմվում է Եփրատ և Տիգրիս գետերի միախառնումից:

362 Այսինքն՝ հունիս ամսի վերջերին:

363 Տե՛ս ծանոթ. 354:

364 Բնագրում՝ *Τίγρις* — Տիգրիս. այստեղ դարձյալ շփոթ կա, քանի որ նախորդ տողերում պարզապես նշված է Պասիտիգրիս գետը, որը և ճիշտ է Այստեղ հավանաբար ձևագրական սխալ է:

365 Բատակես քաղաքի ճիշտ տեղը հայտնի չէ, քանի որ ստորին Միջագետքի գետային ցանցը դարերի ընթացքում բաղում փոփոխությունների է ենթարկվել և հնարավոր չէ որոշել Եվրատոս գետի հունը: Այն պետք է դտնված լինե՞ր Տիգրիս և Պասիտիգրիս գետերի միջև:

366 Կոլոնոս քաղաքը, հավանաբար, Կալլոնիտիս (Polvb., V, 54,7) կամ Քալլոնիտիս (Strabo, XVI, 1,1) կոչված մարզի կենտրոնն էր: Կոչվում էր նաև Կալլոնիս:

367 Պելտաստները հունական բանակում զորքի այն տեսակն էր, որը մեծանկյալ տեղ էր զբաղում հույլիտների՝ ծանրազենների՝ մերկերի՝ թևեղենների միջև: Նրանց տարրերությունը մերկերից այն էր, որ կրում էին թևեղ կլոր վահան, որը հունարեն կոչվում էր *πέλιος* — պելտե (այստեղից էլ նրանց անունը՝ պելտաստներ):

368 Կլիմաքս — *κλίμαξ*. բառացի նշանակում է՝ աստիճան:

369 Մակեդոնիայի Փիլիպպոս II թագավորը (մ. թ. ա. 360—336 թթ.) այդ պետության հզորության հիմնադիրն էր ու կազմակերպիչը, Ալեքսանդր Մակեդոնացու հայրը:

370 Բնագրում՝ հետայրներ — *επιστροφή*. Տե՛ս ծանոթ. 267:

371 Բնագրում՝ հիպպարքիա — *ἵππαρχία*. այս պաշտոնն ունեցող հրամանատարը առաջնորդում էր 500 հեծյալից բաղկացած մի դորագունդ:

372 Բնագրում՝ *ὁ ἄρχων* այս տերմինի սոցիալական բովանդակության մասին տե՛ս Ս. Մ. Կրկյաշաբյան, Իդեոլոգիաների առաջացումը Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 257—262: Հմմտ. նաև ծանոթ. 269:

373 Բնագրում՝ *ὁ ἄρχων* իր շարադրանքի մեկ այլ հատվածում ևս (II, 13 1—3) Դիոգորոսը, նկարագրելով Բեհիստունի հայտնի արձանադրությունը, սեպագրերը սխալմամբ համարում է ասորերեն գրեր: Մինչդեռ Օրոնսուսյն վերագրվող այս նամակի

առթիվ նրա «ասորերեն գրերով» արտահայտությունը պիտի համարել ճիշտ նամակը : չետք է գրված լինել այդ ժամանակ արևելքում լայն տարածում դտած արամեական առերով: Տե՛ս նաև ծանոթ. 60:

374 Կվմենեսի այս հնարանի մասին Դիոդորոսի հաղորդումից ելնելով, ուսումնասիրողները, ոչ առանց հիմքի, ենթադրում են, որ սատրապական շրջանի Հայաստանում, ինչպես նաև մյուս սատրապություններում, գոյություն է ունեցել դիվան, գրասենյակ իր զրազիր դպիրով և համապատասխան անձնակազմով (տե՛ս Դ. Ա. Турцияч. Некоторые аспекты внутренней организации Армянской сатрапии. «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 2, էջ 106—109):

375 Հույների վորրում գիշերը բաժանված էր 3 կամ 4 պահ՝ հերթա՛դոթություն:

376 Բնագրում՝ ἀπὸ ρυτῆρος. բառացի նշանակում է՝ սսնձերն աղատ թողա՛, սանձարձակ:

377 Բնագրում՝ ὑπαυσιμα — հյուպաստիստներ: Ուսումնասիրողների համար դեռևս պարզ չէ այս վահանակիրների և ինչպես հուպիստների՝ ծանրագեներների միջև հոյուժյուն ունեցող տարբերությունը:

378 Բնագրում՝ ἐταίρος (տե՛ս ծանոթ. 267):

379 Բնագրում՝ ἰππαρχία — հիպպարքիա, այս անունը կրող գործաձան ընդհանրապես բաղկացած էր հինգ հարյուր հեծյալից:

380 Դիոդորոսի տված այս ընդհանուր Խիվը չի համապատասխանում վերևում բերված թվերի դումարին: Այստեղ պիտի ենթադրել կամ ինչ-որ բացթողում, կամ բնագրի ձեռագրական աղավաղում:

381 Բնագրում՝ ἀγροπαιῶν. Եթե սա ձեռագրական աղավաղում չէ, ապա սխտր են՝ հաղրել, որ այս հեծյալները կովի ժամանակ իրենց հետ ունեցել են մի երկոորդ մի կա:

382 Ըակեղոնացի այս արգիրասսիդներից և ոչ մեկը վաթսույնից սակաս տարե շուներ: Այդպես է հաղորդում Դիոդորոսը հաջորդ գլուխներից մեկում (XIX, 41,2): Եվ դա լիովին հասկանալի է, քանի որ նրանք հավաքագրված էին դեռևս Ալեքսանդրի : որ՝ Երկրիսպոս II Մակեդոնացու ժամանակ:

383 Այլ ձեռագրի համաձայն՝ հեռավորագույն:

384 Կովում սպանվածներին հողին հանձնելը հույները համարում էին սրբազան գործ: Անտիկ աշխարհի մի շարք գրական հուշարձաններում («Իլիական», «Ոդիսական», «Անտիգոնե») այս երևույթը դարձել է հիմնական կոնֆլիկտներից մեկը:

385 Կամարգա տեղանունը հաջորդ գլուխներից մեկում (37.1) հիշատակվում է Կամարգա ձևով: Այս վայրի ոչ տեղադրությունն է մեզ հայտնի, ոչ իսկ դրա ձգգրիտ անվանումը:

386 Բնագրում՝ ἑταίρος — ստաթմոս: Կայանը բանակելու վայր էր: Այսպիսի կայանները պարսկական տերության մեջ տեղաբաշխված էին իրարից մոտավորապես մեկ օրվա ճանապարհի հեռավորության վրա:

387 Տե՛ս ծանոթ. 385:

388 Այսինքն՝ Կվմենեսի գորքերը:

389 Կյուրոս Մեծի որդու, պարսից արքա Կամբյուսեսի (մ. թ. ա. 529—522 թթ.) մահից ընդ առաջ, նրա նա երկրից բացակայում էր. պարսկական գահին բոնատիրեց ինչ-որ մոգ, որը հանդես էր գալիս իրրև Կամբյուսեսի Բարդիյա կամ Սմերդիս անունով եղբայրը, որին դեռևս Կամբյուսեսը սպանել էր իր եգիպտական արշավանքից սուաջ: Կամբյուսեսի մահից հետո գահի այս հավակնորդը սպանվեց յոթ անվանի պարսիկների կողմից, որոնցից մեկը ապագա արքայից արքա Դարեհ Վշտասպյանն էր, մեկն էլ Հյուդարնեսը, որին Հայաստանի Երվանդունիները համարում էին իրենց նախահայր: Այդ կա-

ռեորագույնի դեպքերի մասին կես վիպական ձևով պատմում է Հերոդոտոսը (III, 61 և հաջ.): Հելլեն Պատմահոր հաղորդած վկայությունները էապես լրացվում են Դարեհ Վշտասպյանի թողած Բեհիստունյան արձանադրության տվյալներով:

390 Բնագրում՝ Ἰπταναῖοι (տե՛ս ծանոթ. 377):

391 Այս Կելթանոսը (այլ ձևագրերում՝ Կելթալոս) ուրիշ ոչ մի դեպքում չի հիշատակվում, ուստի և դժվար է նրա իսկությունը որոշել:

392 Հունարեն ῥαχίς (ռագաս). նշանակում է ճեղք, ճաք: Ռագայ վայրի անվան այսպիսի ստուգաբանության հանդիպում ենք նաև Ստրաբոնի մոտ (I, 3, 19 և XI 9, 1):

393 Այստեղ բնագրի γαλαξίας (կատարասիս) բառը, որը նշանակում է վայրէջք, մենչ թարգմանել ենք՝ վերադարձ: Հելլենները Փորր Ասիայի արևմտյան ծովափից դեպի երկրի խորքը կատարած արշավանքը անվանում էին ἰσθμιαῖος - անարասիս (այս բառից է առաջացել Քսենոփոնի հայտնի երկի վերնադիրը), որը բառացի նշանակում է՝ վերելք, մինչդեռ հակառակ ուղղությամբ Պարսկաստանից դեպի փոքրասիական ծովափ վերադառնալը անվանում էին γαλαξίας կամ γαλαξίας—վայրէջք:

394 Գևոագրի այս հատվածում ենթադրվում է որոշ բացթողում, որտեղ պետք է նշված լիներ հեծելազորի ինչ-որ քանակի մասին:

395 Տե՛ս ծանոթ. 293:

396 Մաքուր ոսկուց պատրաստած այդ շքեղ հրաշալիքի մասին դեռևս իր ժամանակ պատմել է Հերոդոտոսը, գրելով. «Կելենեում Քսերքսեսին արդեն սպասում էր լիդիացի Պիթիասը, Ստիսի որդին, որը արքայի պատվին և նրա ամբողջ զորքի համար կազմակերպեց մեծածախս ընդունելություն: Պիթիասը հայտարարեց, թե պատրաստ է արքային դրամ տրամադրել սլատերագմի համար: Նրբ Պիթիասը այսպես առաջարկեց Քսերքսեսին, արքան իր ուղեկից պարսիկներին հարցրեց, թե ով է այս Պիթիասը և մի՞թե նա այնքան հարուստ է, որ կարող է այդպիսի առաջարկություն անել: Պարսիկները պատասխանեցին. «Ով արքա, սա այն մարդն է, որը Դարեհին, թո ծնողին ընծա բերեց մաքուր ոսկուց պատրաստած սոսին և խաղողի որթը: Նա այժմ ևս, թեզանից հետո, մեղ հայտնի ամենահարուստ մարդն է» (Herob., VII, 27):

397 Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո, ինչպես հայտնի է, նրա զորավարները իրար միջև գինվաճ պայքար սկսեցին տերության մեջ գերիշխող դիրք գրավելու համար: Այդ պայքարի կարևորագույն դրվագներից մեկն էլ մ. թ. ա. 312 թ. հարավային Պաղեստինում գտնվող ծովամերձ Գազա քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտն էր, մի կողմից Անտիգոնոս Միականու որդու՝ Դեմետրիոսի և մյուս կողմից՝ Պտղոմեոսի և սրա մոտ ապաստանած Սելևկոսի միջև: Ճակատամարտում հաղթեց Պտղոմեոսը, որը և Սիրիան ու Փյունիկիան գրավելուց հետո, 312/311 թ. ձմռանը Սելևկոսին հաստատեց սատրապ Բաբելոնում: Այս թվից էլ, սովորաբար, սկսում են հաշվել Սելևկյան թվագրությունը Մերձավոր արևելքում:

398 Ապպիանոսի հաղորդմամբ (Syr., IX, 54)՝ 1000 հետևակ և 300 հեծյալ:

399 Բրանքիդայ (Βραχχιδαι) անունով հայտնի էր քրմական մի տոհմ, որը գուշակություններ էր անում Միլետի մոտ գտնվող Դիոյուսեյան Ապոլլոնի հայտնի պատգամատանը: Բրանքիդայ անունը կրում էր նաև այդ պատգամատան շուրջ գտնվող բնակավայրը:

400 Դիոդորոսի «Պատմական գրադարանի» վերջին՝ 21—40-րդ գրքերից մեկ հասել է սուսվել կամ պակաս ամբողջականություն ներկայացնող հատվածներ, որոնք բաղկացած են կամ ընդօրինակության ձևով պահպանվել են բյուզանդական հեղինակների երկերում (այդ մասին տե՛ս սույն հատորի առաջարկում): Ուստի այս և հաջորդ

քաղվածքներն ընթերցողին կարող են թվալ շատ հատվածային, իսկ ոճական առումով նույնիսկ իյարից տարրեր:

401 Սա Պերգամոնի թագավոր Ատտալոս 1-ի կրտսեր որդին էր, Եվմենես 11-ի եղբայրը, որին և մ. թ. ա. 159 թ. փոխարինեց Պերգամոնի գահի վրա: Այս հատվածում նկարագրված դեպքերը տեղի են ունեցել մ. թ. ա. 181—180 թթ.:

402 Բնագրում՝ Ξαγίλεις. — Թագավորներ. մենք թարգմանելիս նկատի ենք ունեցել ենթատեքստի իմաստը:

403 Այստեղ, հավանաբար, նկատի է առնված այն, որ Պերգամոնի թագավոր Եվմենես 11-ը 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում հանդես էր եկել հռոմայեցիների կողմից:

404 Խոսքը Պերգամոնի թագավոր Եվմենես 11-ի մասին է (197—159 թթ.):

ՉՅՃ Սա Պոնտոսի թագավոր Փաոնակես 1-ն է (184—157 թթ.), Միհրդատ VI Եվպատոր Պոնտացու պապը:

406 Այստեղ խոսքը 183—180 թթ. Փոքր Ասիայում տեղի ունեցած այն պատերազմի մասին է, որին մասնակցում էին երկու հակադիր կողմից. մի կողմից՝ Հռոմին հարած Կասյադրոսի և Պերգամոնը, մյուս կողմից՝ Սելևկյանների դաշնակից Պոնտոսը և Փոքր Հայքի սատրապ Միհրդատը: Այդ պատերազմին վերջ տրվեց Հռոմի միջնորդությամբ, որից հետո 179 թ. կնքվեց հաշտության (Ս. Մ. Կելյադարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 102—105; «Հայ ժողովրդի սյամություն», հ. Ա, Երևան, 1971, էջ 544—545): Այդ սյամանագրի բովանդակությունը մեզ հասել է Պոլիբիոսի միջոցով: Շահեկան է Պոլիբիոսի հաղորդման վերջին հատվածը, որտեղ կարդում ենք. «Պայմանագրին մասնակից դարձվեցին Ասիայի իշխաններից՝ Հայաստանի մեծագույն մասի տիրակալ Արտաքսիասը (Արտաշեսը՝ Ս. Կ.) և Ակուսիլոքոսը, Եվրոպայի իշխաններից՝ սարմատ Գաթսիոսը, ինքնավար քաղաքներից՝ հերակլեացիները, մեսեմբրիացիները, խերսոնեսցիները և սրանց հետ՝ Կիլիկիացիները» (Polyb., XXV, 2):

407 Տիոս ոչ մեծ քաղաքը գտնվում էր Բիթանիայի սեփական ափին և սույ ժամանակ Պերգամոնի թագավորը այն խլել էր Բիթանիայից:

408 Սա Սելևկոս IV Փիլոպատերն է (Հայրասեր), թագավորել է մ. թ. ա. 187—175 թթ.:

409 Այստեղ նկատի է առնված 189 թ. կնքված Էպամեայի պայմանագիրը, որով մեծ հարված էր հասցվում Սելևկյան պետության:

410 Այստեղ Գիոդորոսի հատվածն ընդհատվում է:

411 Բնագրում՝ Ἀρταξίας. ընդհանրապես անտիկ պատմագրության մեջ ընդունված է հայոց Արտաշես թագավորի անվան Ἀρταξίας — Արտաքսիաս ձևը, սակայն առաջինը ավելի մոտ է այդ անվան հայկական ձևին: Գիոդորոսի հաջորդ հատվածներում հանդիպում է արդեն Ἀρταξίας — Արտաքսիաս ձևը:

412 Այս հատվածում նշված են երկու տարրեր Անտիոքոսներ, առաջին դեպքում՝ Անտիոքոս III Մեծը (224—187 թթ.), երկրորդ դեպքում՝ Անտիոքոս VI Եսլիփանեսը (175—164 թթ.):

413 Այս հատվածում նկարագրված դեպքերի գիտական ուսումնասիրությունը աշխուրհակապես նորագույն տվյալների հիման վրա կատարել է Գ. Խ. Սարգսյանը (Հիլինիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 242—247):

414 Այստեղ խոսքը կեղծ-Սմերդիսի մասին է (տե՛ս ծանոթ. 359):

415 Սա նաև այս անվան Ἀρταξίας — Արտաքսիաս ձևը:

416 Այս անվան առավել ճիշտ ձևն է՝ Օրոնիեոնես, որը հանդիպում է նաև իր՝ Դիոգորոսի մոտ:

417 Սա Արեմենյան թագավոր Արտաքսերքսես III Օրոն է (358—338 թթ.), որն արշավել է Եգիպտոս 351 և 343 թվականներին:

418 Սերգիկասը մահացել է 321 թ., իսկ Եվմենեսը՝ 316 թ.:

419 Հայոց թագավորի անվան այս Արդոատես (*Ἀρδοάτης*՝ ձեր վեճերի առիթ է տվել: Վեճեր կան ոչ միայն նրա անձնավորության, այլև նրա Փոքր կամ Մեծ Հայքի թագավոր լինելու շուրջ: Թ. Ռեյնաքը (*Mithridate Eupator, roi de pont, Paris, 1890, էջ 31, ծան. 6*) այն համարում է ձեռագրական աղճատում և առաջարկում է ուղղել՝ *Ἀρταξουάτης* (= Արտավազդ), վերջինիս համարելով Փոքր Հայքի թագավոր, իսկ Յ. Մարկվարտը (*Untersuchungen zur Geschichte von Eran, I, Göttingen, 1896, էջ 27, ծան. 123*) և Հ. Մանանդյանը (*«Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Ա, Երևան, 1944, էջ 98*) առաջարկում են այն կարգալ *Ἀρταξουάτης* (= Օրոնտես—Երուանդ), նրան, իրավացիորեն համարելով Մեծ Հայքի թագավոր: Ի. Դրոյզենը ևս (*История эллинизма, т. II, М., 1893, էջ 311*) Գավգամելայում արմենական զորքի հրամանատար՝ սատրապ Օրոնտեսին նույնացնում է Դիոգորոսի հիշատակած հայերի թագավոր Արդոատեսի հետ: Մեր կարծիքով, բացառված չէ որ *Ἀρδοάτης* գրությունը *Ἀρταξουάτης—Օրոնտես*-ի աղճատված ձևն է, եթե նկատի առնենք մանավանդ, որ Դիոգորոսի այս հատվածը մեզ հասել է ոչ թե ուղղակի, այլ միջնորդարար, բյուզանդական մատենադիր Փոտիոս պատրիարքի «Իրադարանում»: Միաժամանակ, սակայն, դժվար կլինի Գավգամելայում արմենական զորքի հրամանատար սատրապ Օրոնտեսին նույնացնել այս Արդոատեսի հետ, քանի որ առաջինը հիշատակված է 331 թ., իսկ երկրորդը՝ մ.թ.ա. 250-ական թվականներին կատարված ղեպքերի առնչությամբ (տե՛ս *H. Bengston, Die Strategie in der hellenistischen Zeit, II, 1941, München, էջ 77-78*), ղեպքեր, որոնք իրարից բաժանված են ավելի քան 70 տարով:

420 Սելևկյան թագավոր Անտիոքոս II Թեոսը իշխել է 262—247 թթ.:

421 Սելևկյան թագավոր Անտիոքոս III Մեծը իշխել է 224—187 թթ.:

422 Այս Անտիոքիսն է, հավանաբար, որ հետագայում ամուսնանում է Մոսիքի թագավոր Քսերքսեսի հետ, որին և, իր հոր՝ Անտիոքոս III ցուցմունքով, սպանում է (*«Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 521*):

423 Այս Միթրոբուզանեսը նույն Մեհրուժանն է, Մոսիքի Զարեհ (*հուն. Ζαριάδης — Զարիադրիս*) թագավորի ավագ որդին (տե՛ս Հ. Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 1, Երևան 1944, էջ 120*: *«Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 548—550*):

424 Այստեղ ակնարկությունը Մոսիքի մահացած թագավոր Զարեհի հրկու որդիների մասին է, որոնցից ավագը՝ Մեհրուժանը ապաստանել էր Կապպադոկիայի թագավոր Արիարաթես V-ի, իսկ կրտսերը, որի անունը մեզ հայտնի չէ, հայոց Արսաշես թագավորի մոտ:

425 Բնագրում՝ *Σωφρον*, հունական աղբյուրներում Մոսիքը կոչվում է Դոսիեննե Դժվար չի նկատել, որ հունարենը պահպանել է այդ անվան առավել հին՝ ուրարտական Մուփանի ձևը:

426 Ինագրում՝ *ἐπισητάτης*, բառացի նշանակում է՝ «վերակադու»:

427 Այստեղ պիտի հասկանալ Սելևկյան թագավորներին:

428 Սա Սելևկյան Դեմետրիոս I Սոտեր թագավորն է (162—150 թթ.):

429 Իոսքը Սելևկյան թագավոր Անտիոքոս IV Եպիփանեսի մասին է (175—164 թթ.):

- 430 Այստեղ ձևագիրը թերի է:
- 431 Ձեզմա ղևտանցը գտնվում էր վերին Եփրատի աջ ափին, Սամոսատ քաղաքի մոտ. իր անունը ստացել էր այստեղ գետի վրա կառուցված կամրջանավից:
- 432 Այսինքն՝ մ. թ. ա. 160 թ.:
- 433 Սա հայտնի Տիրերիոս և Գայոս Գրակոս եղբայրների հայրն էր. Տիրերիոս՝ Ռեմպրոնիոս Գրակոսը, որի գլխավորությամբ սենատի կողմից մի հանձնախումբ էր ուղարկվել Արևելք 162 թ.:
- 434 Նախորդ հատվածներից մեկում (XXXI, 19,7)՝ Հուլիոսն է:
- 435 Ձևագիրն այստեղ վնասված է թվում:
- 436 Պրիննեն Հոսիական ափի հունական քաղաքներից մեկն էր:
- 437 Francis R. Walton-ը նկատում է, որ այստեղ Եվմենեսի փոխարեն պետք է լինի Ատտալոս, քանի որ Պերգամոնի թագավոր Եվմենես II-ը այդ ժամանակ արդեն մահացել էր: Մյս սխալը, հավանաբար, դալիս է բյուզանդական բանաբաղից (Diodorus Siculus, vol. XI, London—Cambridge, 1957, էջ 395, ծան. 1):
- 438 Խոսքը Սելևկյան թագավոր Անտիոքոս V Եվպատորի մասին է:
- 439 Այն է՝ Անտիոքոս IV Եպիփանեսի:
- 440 Հետագայում, 150 թ., նա իրոր Սելևկյան գահի վրա հաջորդեց Դեմետրիոսին Ալեքսանդր Բալաս անունով:
- 441 Կորկյուրա կամ Կերկիրա. կղզի Հոնիական ծովի հյուսիսային հատվածում, Հունաստանի և Իտալիայի միջև:
- 442 Բնագրում՝ Ἰσουλόν. նշանակում է՝ անձեռնմխելի ապաստարան: Հին աշխարհում մի շարք հայտնի սրբարաններ և նրանց շուրջ առաջացած տաճարային քաղաքներն ունեին անձեռնմխելիության իրավունք. այդ մասին տե՛ս Ս. Մ. Կրկյաշաբյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 71—76:
- 443 Սա Պարթև Արշակունիների արքայատոհմի Միհրդատ I Արշակ VI թագավորն է (170—138 թթ.), որի գահակալության տարիներին պարսկական տերությունը մեծապես ընդարձակվեց:
- 444 Սա Պարթև Հրահատ II Արշակ VII թագավորն է (138—128 թթ.):
- 445 Սա Սելևկյան Անտիոքոս VIII-Եվերգետես (Սիդետես) թագավորն է (139—129 թթ.): Այս հատվածում նկարագրվող պայքերը վկայված են նաև Մովսես Կորենացու հետևյալ տողերում. «...Այլ իմացեալ... սիդիացոյ Անտիոքայ գգնալն Արշակայ, գայտնի զՍուրիս: Իսկ Արշակ երկոտասան ըրեբաւ անդրէն դարձեալ, և Անտիոքոս ի սուստիկ ձմերայնոյ հերթեալ, պատահի նմա պատերազմա յանձուկ տեղիս, և կորնչի հանդերձ զօրօքն. և Արշակ տիրէ երրորդ մասին աշխարհիս» (Մ. Խորենացի, Բ, Բ):
- 446 Բնագրում՝ Ἐπισημόγρια — օթևան տրամադրելի Սելևկյան թագավորության մեջ բառաքնելը պարտավոր էին օթևան տրամադրել արքունի զորամասերին, այս պարտավորությունը ծանր էր անդրադառնում քաղաքային համայնքի վրա (տե՛ս Ս. Մ. Կրկյաշաբյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 76—77):
- 447 Խոսքը Տիգրիսի աջ ափին գտնվող Սելևկիա քաղաքի մասին է: Այս քաղաքը Հրահատը Անտիոքոս Սիդետեսին հաղթելուց հետո, վերագրավել էր:
- 448 Եվհեմերոս (Εὐσημερος) անունով Պարթև թագավոր մեզ հայտնի չէ: 1634 թ. II. Valesius-ի հրատարակած Դիոդորոսի բնագրում Եվհեմերոսը ոչ թե պարթևների արքա է, այլ «պարթևների արքայի սատրապ», որը մեզ ավելի հավանական է թվում:
- 449 Հին հույները ագորա (ἀγορά) կոչում էին քաղաքային հրապարակը, որտեղ

դումարվում էր ժողովրդական ժողովրդ: Ազարա կոչվում էր նաև քաղաքային շուկան:

450 Այս հատվածը վերաբերվում է 90—88 թթ. Իտալիայում ծայր առած դաշնակցային պատերազմին: Որը մղվում էր մի կողմից Հռոմի, մյուս կողմից Հռոմի դաշնակիցները համարվող Իտալիկ քաղաքների միջև: Պատերազմը ծագել էր այն պատճառով, որ Հռոմին դիմադրող Իտալիկ քաղաքների բնակիչները, թեպետև պարտավոր էին ծառայել հռոմեական բանակում և ենթարկվել հռոմեական օրենքներին, բայց զրկված էին քաղաքական իրավունքներից: Դաժան պայքարը վերջացավ նրանով, որ Հռոմը ստիպված եղավ մասնակի զիջումներ կատարել և դաշնակից քաղաքների ազատ բնակիչներին շնորհել հռոմեական քաղաքացու իրավունք:

451 Ուա Միհրգատ VI նվազագույն Պոնտացին է (111—63 թթ.):

452 Լեսրոս— հունական կղզի էգեյան ծովում, Փոքր Ասիայի Միջերկրական ծովափին մոտիկ:

453 Ակվիլիոս (բնագրում՝ Ἀκίλλιος, յատին. Manius Aquillius) մ. թ. ա. 89 թ. սենատի կողմից ուղարկված էր Ասիա, Էթիոպիայի և Կապպադովկիայի թագավորներին իրենց գահերի վրա վերահաստատելու հանձնարարությամբ: Նրան իր ձեռքը գցելուց հետո Միհրգատը սաանեց Պերգամոնում, նրա կոկորդը լցնելով հալած ոսկի, դատապարտելու համար հռոմեական ընչաքաղցությունը (Appian., Mithr., 21)

454 Միտիլենե քաղաքը Լեսրոս կղզու վարչական կենտրոնն էր:

455 Հելլենական Կյուզիկոս քաղաքը, որը գտնվում էր Պրոպոնտիս (Մարմարա) ծովի ափին, Միհրգատյան 3-րդ պատերազմի ընթացքում (73—71 թթ.) երկար պաշարման հետևանքով Միհրգատի կողմից, բայց ուժեղ դիմադրություն ցույց տվեց և վճռական դեր ունեցավ պատերազմի ելքի վրա, նժարը թեքելով հռոմայեցիների կողմը:

456 Բնագրում ἐξαιετιεσργης. հունարեն այս տերմինը ուղղակի թարգմանությունն է յատիներեն ցենտուրիոն (centurio) բառի:

457 Գնայոս Պոմպեոսը, որը հայտնի է «Մեծ մականունով, եղել է Հռոմում կառված առաջին եռասյուսակա (մ. թ. ա. 60 թ.) անդամներից մեկը:

458 Կոսրը Կապպադովկիայի Արիորարգանես I Հռոմեասեր թագավորի մասին է, որը մ. թ. ա. 95 թ. սենատի կողմից ճանաչվեց Կապպադովկիայի թագավոր, 93 թ. Տիգրան Երկրորդի կողմից. վտարվեց իր երկրից, 92 թ. նորից հաստատվեց հռոմեացի գորավար Ուլլայի կողմից, 91 թ. դարձյալ փախավ Հռոմ, 89 թ. Հռոմի միջոցով վերահաստատվեց Կապպադովկիայի գահի վրա: Մինչև Լուկուլլոսի հայկական արշավանքը (69 թ.) նա մերթ: վտարվում էր Տիգրանի կողմից, մերթ վերականգնվում հռոմեական զինվորական ուժերի օգնությամբ: Պոմպեոսի արևելյան արշավանքից հետո մինչև իր կյանքի վերջը մնաց Կապպադովկիայի թագավոր, կատարելով Հռոմի հրահանգները (Հ. Հ. Մանանդյան, Տիգրան երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 30 և հետ., Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի, հ. 1, Երևան, 1944, էջ 140 և հետ.):

459 Սա Ակյութական կոչված Աբայան է (տե՛ս Appian., Mithr., 102; Strabo, XI, 2, 12):

460 Դիոն Կասսիոսի (XXXVII, 2) և Ապպիանոսի (Mithr., 103) մոտ՝ Արտոկես: Պատմագրության մեջ իրավամբ ընդունված է «Արտոկես» ձևը:

461 Պլինիոս Ավագը (Naturalis Historiae., VII, 97—98) հաղորդում է, որ նվիրաբերումը կատարվել էր Միներվա դիցուհուն:

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

- Աբրիանոս 42
Աբուլկասեա 98
Ազաթոն սյուղնադի 97
Ազենոր 113
Ազեսիաոս 70
Աթամաս 49
Աթենայոս սլատմիչ 30
Աթենայոս զորավար 159
Աթենաս 82
Աւքսանդր Մակեդոնացի, 15, 22, 40, 41, 79—85, 87—112, 119, 121, 123, 124, 129, 130, 143, 147, 150, 153
Ալկեստաս 113
Ալկեստաս 115, 116
Ակորիս 71, 72
Ակվիլիոս 160
Ամմոն աստված 29, 30
Ամունտաս 153
Ամիմարոս 112, 134
Այետես 47—51
Անափաս 152
Անաքսիրիոս 69
Անդրորադոս 123
Անտիգենես 112, 119, 120, 123, 125, 126, 128, 131, 134, 135, 143, 146
Անտիդոնոս 40, 110, 113—117, 119—122, 124—128, 130—151, 153
Անտիոքիս, Անտիոքոս Մեծի դուստր 154
Անսիոքոս Բ Խեոս 153
Անտիոքոս Գ Մեծ 152, 153
Անտիոքոս Դ Սիգիփանես 152, 155, 157
Անտիոքոս Ե Սվսլատոր 156
Անտիոքոս Է Սվերգետես 158, 159
Անտիպատրոս 98, 111, 112, 114—116, 136
Անտիքսյուես 85
Ապոլլոդորոս ամփիսյուլսէցի 97
Ապոլլոնիդես 113, 114
Ասանդրոս 110, 113
Ասկլեպիոդորոս 149
Ասպանդաս 44
Աստիրարաս 43, 44
Աստուադես 41, 44, 52
Ավտոփրադատես 75
Ասոսոսա 152
Ատտալոս 77, 115, 116
Ատտալոս Բ Պերգամոնի թագավոր 151, 157
Ատրոպատես 111
Արրակես 32—35, 37, 38, 42
Արդաառես, Նայերի թագավոր 153
Արես աստված 39, 46, 49, 50
Արեսաս 161
Արիամնես 152, 153
Արիայոս, արարնների թագավոր 16
Արիայոս, սատրապ 70
Արիարաթես 112, 153, 154
Արիարաթես, Արիարաթեսի որդի 153—156
Արիդայոս 60, 62, 64, 65, 113
Արիմնայոս 152
Արիոբարդանես 75, 77, 100, 101, 143, 161
Արիստոբուլոս 161
Արկեսիաոս 111
Արյուսես 153
Արսակես Զ, պարթևների թագավոր 157
Արսակես Է, պարթևների թագավոր 158, 159
Արսամենես 80

- Արսանես 78
 Արսես 78
 Արսիտես 80
 Արտաբազոս 76, 77
 Արտաբանոս 54, 55
 Արտամնես 152
 Արտայոս 42, 43
 Արտաքսերքես Բ Մնեմոն 42, 55, 56, 58, 60, 62, 63, 65, 70, 72, 73, 75—78
 Արտաքսես, նաև՝ Արտաքսիաս, Հայաստանի թագավոր 152, 154—156
 Արտեմիս գիցուհի 46, 48
 Արտիդուես 82
 Արտյուկես 42
 Արտյունես 43
 Արտուես, իրերնների թագավոր 161
 Արքիպպոս 118
 Արքոն 111
 Ափրոզիտե գիցուհի 18, 39
- Բազոաս 78
 Բալակոս 93
 Բարզանես 16
 Բարքսանես 105
 Բելեսյուս 32—34, 37
 Բելոս 24, 25, 37
 Բեսսոս 105, 109
- Գալայմենես 35
 Կալլոս 152
 Գլոս 71
 Կնայոս 161
 Կրակթոս 156
- Դատամես 76, 152
 Դարեհ Ա 20, 54
 Դարեհ Բ 55, 56
 Դարեհ Գ 40, 78, 79, 81—85, 87—91, 93—101, 105—107, 109, 110, 112
 Դարեհ, մեզական թագավոր 161
 Իեմարատոս կորնթացի 108
 Իեմետրիոս, Անտիգոնոսի որդի 136, 142, 149
 Դեմետրիոս Ա Սոտեր, Սելևկյան թագավոր 155—158
- Դերկետո 18
 Դինդյումե 47
 Դիոգորոս 154
 Դիոնիսիոս 20
 Դիոնիսոս 105
 Դիփիլոս 151
 Դրակոն 50
- Ենիոս զորապետ 159
 Եվագորաս 70—74, 148
 Եվգամոս 122—124, 134, 137, 138, 146
 Եվիտոս 148
 Եվճեմերոս 159
 Եվմենես Կարգիացի 110, 112—126, 128—135, 137—146, 148, 153
 Եվմենես՝ Բ, Պերգամոնի թագավոր 151, 156, 157
 Եվրիսթես 51
 Ետեոկլես 61
 Երիզյուոս միտիլենացի 93, 110
 Եփորոս 60
- Ջարինա 43
 Ջենոփանես 157
 Ջոպիրոս 54
 Ջևս 24, 25, 28, 39, 44, 68, 157
- Էգալես, 48
 Էզես 51
- Թաիս 104, 105
 Թալլեստիս 108
 Թեսպիոս, 149
- Իփիթոս 51
- Լազոս 110
 Լամեզոն միտիլենացի 110, 112
 Լեոկրիտոս 151
 Լեոնիզես 63
 Լեոննատոս 88, 111
 Լյուսանիոս 135
 Լյուսիթևոս 54
 Լյուսիմաքոո 111
 Լուկիոս Պապիրիոս 118
 Լուկիոս Վալերիոո Պոպլիկոլաս 54

- Խեյրիօփոս 57, 59, 65, 68, 69
 Կամբյուսես, Կյուրոսի հայր 52, 152
 Կասսանդրոս 113, 130
 Կելբանոս 146
 Կերբերոս 70
 Կեփալոն 134
 Կիրկե 48
 Կլեարքոս լակիդեմոնացի 57, 60—65
 Կլեյտարքոս 22
 Կլեյտոս 81, 93, 113
 Կյուաքսարես 41, 42
 Կյուբեյե 47
 Կյուրոս Մեծ 41, 43—45, 52—54, 103, 152—154
 Կյուրոս Կրտսեր 42, 56—64 70, 110
 Կոյնոս 93, 97
 Կոտտաս 36
 Կվինդոս 119
 Կտեսիաս Կնիդացի 17, 19, 22, 24, 30 31, 42
 Կրատերոս 93, 117
 Կրեսոս 51—54
 Կրիոս 50
 Կրոնոս 39
 Հելիոս 47, 49
 Հելլե 49, 50
 Հեկատե 47, 48
 Հուրա 25
 Հերակլեյդես 155
 Հերակլես 51, 68, 70
 Հիրկատոմնոս 71
 Հիրմես 39
 Հերոդոտոս 41, 42
 Հեփեստիոն 88, 97
 Հիերոնիմոս Կարդիացի 115, 116, 146
 Հիպպոստրատոս 147, 148
 Հյուապատես 19
 Հյուդասպես 19
 Հյուստասպես 55
 Հոլոփիեռնես, տէ՛ս նաև Օրոփեռնես 153, 154
 Էւսա աստվածուհի 25
 Հոնոմիթրես 80, 85
 Հոսսակես 81
 Հոռքսանե 111, 112, 148
 Մաղեսես 100
 Մազայոս 92, 94—96
 Մանդանե 52
 Մավսոլոս 75
 Մեդարյուզոս 54
 Մելևոսդրոս 51, 93, 148
 Մեդոս 51
 Մելեագիոս 51, 93, 148
 Մեմնոն Հոռոսցի 79, 80
 Մելյոն 47
 Մենանդրոս 110, 119
 Մենես պելլացի 97
 Մենիդաս 97
 Մենուտաս 148
 Մենոն լարիսացի 57, 65
 Միթրիդատես, Արիարաթեսի որդի 154
 Միթրիդատես, Արիորարզանեսի որդի 77, 143
 Միթրիդատես, Քսերքսեսի ներքինի 55, 75
 Միթրիդատես 2 Եվպատոր (Պոնտացի) 69, 160
 Միթրինես 82, 98
 Միթրորազանես 76, 82
 Միթրորուզանես, Նոփքի թագավոր 154, 155
 Մոդակես 42
 Յասոն 49, 51, 68
 Ծաբառնես 105
 Նապես 44
 Նեարքոս 127
 Նեսոստոլեմոս 117
 Նիկանովր 93, 113
 Նինոս 15, 16, 18—22, 24, 30—32, 38
 Նինվաս 22, 30
 Պալոս 44
 Պամմենես 77
 Պարիսատիս 70
 Պարմենիոն 77, 80, 83, 91—93, 96
 Պարսոնդես 42
 Պերդիկկաս 93, 97, 110, 112, 113, 115, 117, 153
 Պերսես 47, 51
 Պիթոն 110—113, 120—122, 124, 127, 128, 133—137, 139, 141, 142, 145, 147, 148

- Պիթոն, Ազենորի որդի 113
 Պիտիդես 159
 Պյութիա 53, 77
 Պյութո 73
 Վնիտազորաս 72
 Պոլիարթոս 150
 Պոլինիկես 61
 Պոլյուպերթոն 93, 118—120, 130
 Պոմպեոս 161
 Պորոս 111, 113, 123, 158
 Պտղոմեոս 110, 112, 119, 149
 Պտղոմեոս, Կոմմագենեի թագավոր 155
 Պրոքսենոս թերեւոյի 57, 63
 Պեկեստես 111, 112, 123, 125, 129—131, 140, 144, 145, 149

 Սամոս 57
 Սասիրարզանես 109, 110
 Սարդանապատոս 31, 33, 34, 36, 37, 42
 Սելեկոս Ա նիկատոր 40, 112, 120—122, 124, 126, 134, 149, 150, 151, 153
 Սելեկոս Դ Տիդուպատոր 152
 Սեմիրամիս 18, 19, 21—30
 Սեսոփսիս 15
 Սիրյուրտիոս 111, 123, 134, 148
 Սիմաս 19
 Սիսյունգամբրիս 88, 95
 Սկյութես 44
 Սմերդիս 143, 152
 Սլուրարիս 50
 Սյունենեսիս 58
 Սոզդիանոս 56
 Սոլոն 51, 52, 54
 Սոկրատես աքայացի 57, 63
 Սոսանե 21
 Սոփարմոս 42
 Սոփիլոս 63
 Սպիթրորատես 80, 81
 Ստասանդրոս կիսրացի 112, 123, 134
 Ստասանոր սոլիացի 110—112, 148
 Ստրատոնիկե 153

 Տամոս 57
 Տասիակես 85
 Տավրոսյոլոս (Արտեմիս) 46

 Տաբոս, Եգիպտոսի թագավոր 75
 Տաքսիլիս 111, 113
 Տիթրատես 70
 Տիմարթոս 155, 156
 Տիմոթեոս 156
 Տիսսափեոնես 61, 64—66, 70
 Տիտոս էմիլիոս Մամերկոս 54
 Տիրիրագոս 66, 71—75
 Տիրիդատես 101, 110
 Տրևպոլեմոս 11, 112, 123, 135, 148
 Տետաոնոս 119, 120, 134

 Փալիոս 63
 Փաոնարպոս 60
 Փանակես 82
 Փաոնակես Ա, Պոնտոսի թագավոր 151, 152
 Փանոս 16
 Փիլիպպոս, Ալեքսանդրի հայր 77—79, 129, 130, 143
 Փիլիպպոս, Ալեքսանդրի որդի 112
 Փիլիպպոս, Բալակոսի որդի, հորավար 93, 111, 112, 143, 145
 Փիլոտաս 93, 99, 110, 120, 122
 Փիլոքսենոս 112
 Փոյնիքս տենեղոսցի 113
 Փրատասփեոնես 111
 Փրիկսոս 49—50

 Քարես, զորավար 77
 Քսենոփիլոս 124, 126, 149
 Քսերքսես 20, 41, 54—56, 63, 105
 Քվինտոս-էլիոս 118

 Օլյոմպիաս 118, 119, 130, 146
 Օկրանես 148
 Օնես 19, 21
 Օստանես 78
 Օրոնտես 71—75, 130
 Օրոնտորատես 147, 148
 Օրոփեոնես, նաև՝ Հոլոփեոնես 156, 157
 Օրոս 77, 78, 153
 Օրսաթրես 84, 109
 Օրսյուարտես 20, 111, 112, 123, 148

- Աթենք 54, 105, 118
 Այլքսանդրիա 90
 Այլուս գետ 53, 89, 91
 Ամանոս լեռ 59
 Անտիոք քաղաք 158
 Ասիա 15, 16, 20—22, 27, 29, 30, 37, 41, 42, 45, 46, 49, 51, 54, 56—58, 70, 75, 77, 81, 87, 103—105, 108, 109, 111, 113, 114, 116—118, 120, 123, 130, 139, 148—151, 160, 161
 Ասկալոն 18
 Ասորիստան 16, 17, 22, 30, 32, 41, 42
 Ատտիկա 104
 Արարիա 16, 33, 161
 Արաքոսիս 110, 111, 123, 130—131, 134, 148
 Արաքոս գետ 44, 101
 Արբելա 90, 97
 Արբելիտիս 112
 Արեյա 109, 110
 Արեկյան օվկիանոս 111
 Արիա 111, 112, 123
 Արիադենի լեռ 157
 Արայա 93, 161
 Արևրուսիս 70
 Բաբելոն 16, 23, 26, 37, 38, 54, 59, 64, 83, 89, 90, 97, 98, 103, 121, 122, 149, 151, 159
 Բաբելոնիա 22, 24, 27, 28, 33, 34, 38, 59, 60, 100, 111, 112, 120, 121, 124, 150, 151
 Բագիստանոն 28
 Բակտրա 20, 21
 Բակտրիա 22, 55, 58, 97, 105
 Բակտրիանն 17—22, 35, 105, 110—112, 123, 148
 Բատակես քաղաք 127
 Բեոփոիա 57
 Բիթյունիա 17, 70, 161
 Բուզանդիոն 69
 Բրանրիդա 150
 Կարենն 133, 139
 Գաղամալա 139
 Կաղա 149
 Կալասիա 161
 Գամարգա 139
 Կանգես 15, 27
 Կյումնասիա քաղաք 67
 Կորդյուենն 161
 Կրանիկոս գետ 80
 Կամասկոս 8
 Կելփի 53
 Կրանգիանն, նաև Կրանգինն 110—112, 123
 Կփպտոս 17, 29, 38, 45, 71, 72, 75, 85, 110, 112, 151
 Կիրատանա 29, 38, 44, 60, 97, 146, 147
 Կաիրոս 118
 Կվայոս գետ 127
 Կվրոպա 15, 20, 45, 49, 54, 79, 111
 Կվրսինյան Պոնտոս 11
 Կվեսոս 57, 59
 Կփրատ 17, 22, 23, 27, 36, 37, 59, 60, 90, 91
 Զարկայոս 29
 Զաքինթոս 63
 Զևփյուտիոն 119
 Զեզմա 156
 Էոլիս 57
 Էափսակոս քաղաք 59
 Էնմիսկյուրա 46
 Էսեսալիա 5
 Էերմոդոնտ 45, 46, 108
 Էերմոպիլ 63
 Էրակիա 45, 46, 98, 1
 Իրերիա 161
 Իդա լեռ 79
 Ինդոս գետ 113
 Իսսոս 58, 83, 87, 89, 90
 Իտալիա 20, 48, 160

- Հեսրոս 160
 Հիրիա 29
 Հյուդիա 17, 47, 53, 57, 60, 75, 82, 110, 112, 113, 135
 Հյուկիա 17, 110, 112, 113
 Հյուկաոնիա 111

 Կապպադոզիկիա 17, 53, 76, 110, 112, 113, 116—119, 130, 152—155
 Կասպիանն 17
 Կասպից ծով 45, 105, 111
 Կասպյան դոններ 17
 Կարա 150
 Կարիա 17, 71, 75, 110, 112, 113
 Կարմանիա 111, 112, 123, 135, 148
 Կարմիր ծով 15, 27, 111, 125, 162
 Կարյան շեններ 120
 Կեդրոսիա 111
 Կենտրիտես դետ 66
 Կերասունտ 69
 Կիլիկիա 17, 56—58, 71, 72, 82, 83, 87, 90, 97, 110, 112, 118, 119, 157, 161
 Կիլիկյան դարբասներ 57
 Կիպրոս 70—73, 112
 Կիտիոն քաղաք 72
 Կիրկեոն 48
 Կլիմաքս 129
 Կյուբելոն լեռ 47
 Կյուզիկոս քաղաք 79
 Կյումն 71
 Կյուրենայկե 161
 Կոլխիս 47, 49, 51, 161
 Կոլոնոս քաղաք 127
 Կոլոսոս քաղաք 70
 Կոյլե Սիրիա 17
 Կոմմադենն 155
 Կոպրատես դետ 126
 Կովկաս 111
 Կովկասյան լեռներ 44
 Կոտյուորա քաղաք 69
 Կորնթոս 157
 Կորկյուրա կղզի 157

 Հադես 70
 Հալիկաոնասոս 75

 Հայաստան, նաև Արմենիա 152, 153, 154, 156, 161
 Հայկական լեռներ 27
 Հարսլագոս դետ 61
 Հելլադա, նաև Հունաստան 20, 49, 57
 Հելլեսպոնտոս 49
 Հեկատոնտապոլիոս 106
 Հերակլես 69
 Հերմոս գետ 53
 Հյուդասպես 113
 Հյուսիսային օվկիանոս 111
 Հյուրկանիա 106—108, 110, 111
 Հյուրկանյան ծով 111
 Հնդկաստան 15, 30, 44, 113, 124, 134, 146, 158
 Հնդկաց ծով 111
 Հոնիա 57, 66, 81, 154
 Հոմ 54, 118, 151, 154—157, 160, 162
 Հրեաստան 161
 Հունաստան, նաև Հելլադա 38

 Մալիս 93
 Մակեդոնիա 79, 98, 111, 113, 118, 130
 Մալոտիս լիճ 15, 44, 45, 162
 Մեդիա 16, 27—29, 34, 38, 43, 45, 51, 60, 97, 110—112, 121, 122, 127, 128, 131, 135, 139, 141, 142, 146, 147, 149, 150, 155, 156, 159, 161
 Մելիտենն 155
 Մեմփիս 57
 Միչագետք 27, 103, 111, 112, 121, 124, 134, 150, 161,
 Միտիլենն 160
 Մյուսիա 75

 Նեղոս 16, 27, 45
 Նինոս քաղաք 18, 32—34, 36
 Նինվե 32, 90
 Նորա ամրոց 114, 116, 146

 Պամփլյուկիա 17, 110
 Պասիտիգրիս դետ 126, 129, 148
 Պարեսուկենն 27, 139
 Պարթյունես 111, 112, 122, 135
 Պարոպանիսաղե, 111—113, 123, 134, 148

Պարսից ծոց 100
Պափլագոնիա 36, 45, 60, 64, 65, 69,
110, 161
Պելեպոննեսոս 57, 93, 98
Պերգամոն 157
Պերսեպոլիս 101—104, 129, 148
Պերսիս 17, 29, 100, 105, 111, 112,
123, 125, 129—131, 144, 147—149
Պիսիդիա 57, 112, 116
Պյուլայ 59, 83
Պոնտական ծով, 111, 162
Պոնտոս 17, 45, 48, 49, 51, 159—161
Պրիեննե քաղաք 156
Պրոպոնտիս 17

Իւուգայ 146

Սալամիս (քաղաք Կիպրոսում) 72, 73
Սարդես 57, 82, 98
Սիկիլիա 20
Սինոպե 69
Սիտտակեննե 98
Սյւլակուսա 20
Սիրիա 18, 19, 46, 58, 59, 83, 90, 110,
112, 149, 155, 157, 161
Սկյութիա 45
Սմյուռնա 157
Սողդիաննե 111, 112
Սոփեննե 155, 161
Սուսա 98, 99, 103, 121, 124—126,
149, 150

Սուսիական ժայռեր 100
Սուսիաննե 17, 98, 112, 122—124
Տանայիս 15—17, 44—46, 111
Տավրիկե 47, 49
Տավրոս 111, 119, 152
Տարսոս 58
Տիրարեննե 69
Տիգրիս 27, 90, 92, 99, 100, 121, 122,
124, 125
Տիոս քաղաք 151, 152
Տրապեզունտ 68, 69
Տրիպարադիսոս 120—121
Տրովադա 17

Ուքսիաննե 99, 100

Փասիս դետ 67, 108
Փթիոտիս 93
Փյունիկիա 17, 59, 71
Փոկայա 71
Փոյուզիա 17, 47, 57, 60, 75, 80, 112,
135, 146
Փոյուզիա Հելլեսպոնտյան 17, 111—113
Փոյուզիա Մեծն 82, 110, 112, 113
Քաղկեդոնիա 70
Քավոն 28
Քենիոն լեռ 67
Քերսոնեսս 70
Քորտականա 109
Քրյուսոպոլիս 70

ՅԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ամազոններ 45, 46, 108
Ասորեստանցիներ 15, 18, 20, 30, 31,
33—35, 41, 44
Ասսիրիացիներ 45
Արարներ 16, 17, 33, 71, 161
Արիմասպներ 45, 110
Աքայացիներ 57, 161

Դերբիկներ 17
Իրանցներ 17

Իգիպտացիներ 15, 153

Թեսսալացիներ 82, 84, 96
Թրակիացիներ 70, 134, 136

Բարբելոնացիներ 16, 32—34, 149, 159
Բակտրիացիներ 17, 19, 20, 35
Բորկաններ 17

Իրերներ 161
Իտալացիներ 159

- Լակեդեմոնացիներ 56—58, 61, 62, 73—
 75
 Լյուդիացիներ 51
 Լուկիացիներ 75, 136
- Խալդայներ 67
 Խալոյներ 66
- Կադուսիներ 17, 42, 43, 73, 78, 95
 Կապպադոկիացիներ 82, 156
 Կարդուխներ 65, 66
 Կարմաններ 17
 Կեդրոսիներ 110
 Կիլիկեցիներ 58, 75
 Կոլխեր 15, 50, 51, 68
 Կոսսայներ 95, 127
- Հայեր 153
 Հելլեններ 39, 40, 42, 44, 49, 51, 60—
 70, 74, 77, 79, 102, 107, 154
 Հենիոզներ 161
 Հյուրկաններ 17, 80
 Հնդիկներ 17, 60, 95
 Հոնիացիներ 75
 Հոմայեցիներ 20, 69, 151, 152, 155,
 156, 159, 160, 162
 Հրեաներ 161
- Մակեդոնացիներ 16, 79—87, 92—97,
 100, 102, 103, 106, 107, 109, 112,
 113, 115, 117, 119—124, 126, 129,
 132, 136, 137, 143, 145, 146, 150,
 153
 Մակրոններ 68
 Մասսադեթներ 45
- Մարդեր 95, 107
 Մեդացիներ 21, 22, 31—33, 38, 41—44,
 52, 53, 80, 110, 1
 Մոսինոլկներ 69
- Յոգյուզներ 161
- Նապեր 45
- Պալեր 45
 Պամփյուլիադիներ 75, 136
 Պարթևներ 17, 43, 158, 159
 Պարսիկներ 16, 25, 33, 41, 42, 53, 54,
 56, 57, 60, 71, 72, 75, 77—81, 83—
 86, 91, 95, 101, 110, 123, 125, 129,
 130, 149, 152, 153
 Պիսիդիացիներ 75
- Սակեր 43, 45
 Սալրոմատներ 45
 Սարմաթներ 48
 Սիրիացիներ 18, 19, 26, 75
 Սկյութներ 20, 41, 45, 48, 50, 95
 Սկյուտիներ 67
 Սուաններ 161
- Տարյուրներ 17
 Տալրյաններ 50, 51
- Ուրսիացիներ, նաև Ուրսիներ 100, 125
- Փասիաններ 67
 Փյունիկեցիներ 75
- Գորոմնաներ 17

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Դիողորոս Սիկիլիացի (Կյանքն ու գործը)	5
Դիողորոս Սիկիլիացի «Պատմական դրաղարան» (Հատվածներ)	13
Մանրագրություններ	163
Յ ա ն կ ե ռ	195
Անձնանուններ	195
Տեղանուններ	199
Յեղանուններ	201

ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

Բ

Գիտղորտս Արևիկազի

Հրատ. խմբագիր՝ Զ. Խ. Օրմանյան
Նկարիչ՝ Կ. Կ. Ղաֆաղարյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ն. Գործակալյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Մ. Մանուսյան
Սրբագրիչ՝ Ա. Ա. Մուրադյան

ИБ № 1095

Հանձնված 1, շարվածքի 29. 10. 1984 թ.: Ստորագրված 1, տպագրության 7. 05. 1985 թ.:
ՎՅ 05202, Չափը 60×90¹/₁₆ թուղթ № 1, Տառատեսակ «Իրքի սովորական», բարձր
տպագրություն: Պայմ. 11,85 մամ., տպագր. 12,75 մամուլ: Ներկ. մամուլ 11,85:
Հրատ.-հաշվարկ. 11,85 մամուլ: Տպաքանակ 1000: Պատվեր 913: Հրատ. № 6242:

Գինը 2 ռ. 05 կոպ.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.:
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.
ՀՍՍՀ ԳՊ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24.

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպագած է	Պետք է լինի
7	վ. 18	դեպքերը	դեպքերի
11	վ. 15	Loed	Loeb
30	վ. 18	կենդիացին	կենդացին
42	վ. 5	կյուսքսարեն	ն. ո. արսարեն
103	վ. 15	հանդեցնել	հաղեցնել
108	վ. 7	կորթնացին	կորնթագին
108	վ. 10	ալև	ալլ
166	31-39	տողերը կարգավ	38-րդ ծանոթագրության շարունակությամբ
187	ն. 37	սպանվեց	սպանեց